

ԷԶՄԻԱԾԻՆ



Ե.
2022



ՀԹ. ՏՆԻԻ


ԲԱՊՐԵՐԻՆ

ՊԼՇՏՕՆԵԱՆ ԼԻՐԱՂԻՐ
ԼԻՐԱՆԵՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ՄԼՅՐ ԼԹՈՒՄՅՈՒՆ ՄԻԲՈՅ ԷԶՐԻԼԵՐՆԻ

Մայիս

2022

Լ. ԷԶՐԻԼԵՐՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բօգոյեան,
Խաչիկ Ռաֆի Գազեր,
Վարդան Դերիկեան,
Աբրահամ Տէրեան,
Գեորգ Տէր-Վարդանեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Abraham Terian,
Gevorg Ter-Vardanyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав


Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекиан,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Абраам Терян
Геворг Тер-Варданиян**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ
ԲԱՆԿԱՆԵԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ
ՀԱՏԱՏՄԱՆ ԱՌԹԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Քոհութիւն եւ փառք երկնաւորին, որ Իր Ամենախնամ Սուրբ Աջի ներքոյ զօրացնում է առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին եւ երկնառաք թիւր շնորհներով լուսազարդում հայոց հոգեւոր-եկեղեցական կեանքը ի Հայրենիս եւ ի Սփիւռս:

Այսօր տէրունաւանդ հոգեխնամ առաքելութեան բարուօք իրագործումով մեր Սուրբ Եկեղեցին շարունակում է մեր հաւատացեալ զաւակներին Տիրոջ կենարար խօսքը մատուցել եւ նրանց առաջնորդել Տէր Յիսուս Քրիստոսի պարգեւած փրկութեան ճանապարհով: Տէրունապատուէր այս ծառայութիւնն արգասաւորուում է նաեւ եկեղեցավարչական կեանքում բարեկարգումների իրականացումով, եկեղեցական կառույցների ներքոյ համայնքների վերակազմակերպումով:

Բալկանեան երկրներում վերջին տասնամեակների ընթացքում հաստատուած հայորդեաց հոգեւոր կարիքների խնամատարութեան, հայ համայնքների ազգային-եկեղեցական կեանքի առաջընթացի համար ներկայիս հրամայական է դարձել Հայրապետական Պատուիրակութեան

հաստատումը: Առաջնորդուելով առկայ իրավիճակից բխող անհրաժեշտություններ՝ հռչակում ենք Բալկանեան երկրների Հայրապետական Պատուիրակության հաստատումը եւ տուեալ տարածաշրջանի հայ համայնքները միաւորում Պատուիրակության հովանու ներքոյ: Բալկանեան երկրների Հայրապետական Պատուիրակության կազմում ընդգրկում ենք Ալբանիայի, Սլովենիայի, Սերբիայի, Բոսնիա եւ Հերցեգովինայի, Հիւսիսային Մակեդոնիայի, Չերնոգորիայի, Խորվաթիայի հայկական համայնքները: Հայրապետական պատուիրակի պաշտօնում ծառայութեան ենք կոչում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Գերշ, Տ. Տաթեւ եպիսկոպոս Յակոբեանին: Հաւատաւոր Մեր զաւակներին հայրաբար յորդորում ենք աշակից ու զօրակից լինել Հայրապետական Պատուիրակին, միասնական ջանքերով լծուել Պատուիրակութեան առաքելութեան արդիւնաւորմանը:

Պատուիրակութեան հովանու ներքոյ եկեղեցական կառույցների եւ հաւատաւոր Մեր զաւակների համախմբումով առաւել պիտի ամրապնդուի հայորդիների հաւատքը եւ հաւատարմութիւնը ազգային-եկեղեցական ասանդներին: Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Բալկանեան երկրների Պատուիրակութեան սահմաններում ապրող հայորդիներն իրենց հիւրընկալած երկրների եւ եղբայր ժողովուրդների հետ բարեկամութեան ամրապնդմամբ, ստեղծագործ կեանքով, ազնիւ աշխատանքով բարի նպաստ են բերում այդ պետութիւնների առաջընթացին: Նորաստեղծ Պատուիրակութեան հովանու ներքոյ մեր ժողովրդի զաւակները շարունակելու են իրենց աստուածահաճոյ ընթացքը՝ զօրացեալ հաւատքով եւ եկեղեցանուիրումով: Նորահաստատ Պատուիրակութեան հանգամանքը խթան պիտի լինի նաեւ նոյն տարածաշրջանում գործող Քոյր Եկեղեցիների հետ գործակցութեան եւ փոխյարաբերութիւնների ամրապնդման, մեր հաւատակից ժողովուրդների միջեւ սիրոյ եւ եղբայրութեան զօրացման:

Մաղթում ենք, որ հոգեւորականաց եւ հաւատացելոց ջանքերով եւ քաջեռանդ գործունէութեամբ բարգաւաճեն Պատուիրակութեան հովանու ներքոյ հայ համայնքները: Այս ուրախ առիթով Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Հայրապետական Պատուիրակին, Պատուիրակութեան հոգեւոր դասին եւ բարեպաշտ հաւատացեալներին: Հաւատում ենք՝ բարեպաշտ Մեր զաւակների աշակցութեամբ եւ ազգայինների զօրակցութեամբ, պիտի արգասաւորուի հոգեւոր դասի առաքելութիւնը,

եւ նոր իրագործումներով վերընձիւղուի ու ծաղկի Մեր սիրելի զաւակներին ազգային-եկեղեցական կեանքը:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ նորաստեղծ Պատուիրակութեան ներքոյ շէն պահի հայ կեանքն ու համայնքները՝ բարօրութիւն եւ յաջողութիւններ շնորհելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին: Թող Աստուած հանապազ օրհնութեամբ իր Ամենախնամ Սուրբ Աջով պահպանի աշխարհասփիւռ մեր ժողովրդին, եւ թող յաւէտ պայծառ ու անսասան լինի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:


«Հաստատո՞ւն կացէք ի հաւատս, ժրացարո՞ւք, զօրացարո՞ւք: Ամենայն ինչ ձեր սիրո՞վ լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13—14):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն մայիսի
յամի Տեառն 2022 եւ ի թուին Հայոց ՌՆՀԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1186



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԽՈՐԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԻ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(28–29 մայիսի, 2022 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր Մեր ժողովրդին՝ Խորանաշատի վանքի 800-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումների առիթով:

Խորանաշատը մեր հուշակավոր վանական համալիրներից է, որը եղել է հայոց հավատքի լուսավոր կենտրոններից մեկը՝ կրթական ու գիտամշակութային նշանակալի գործունեությամբ: Վանական Վարդապետի կողմից հիմնադրված այս վանքը կարեւոր ներդրում է բերել հայ իրականության մեջ աստվածաբանության, իմաստասիրության, պատմագիտության, մատենագիտության, երաժշտագիտության եւ գիտության այլ ճյուղերի զարգացման գործում: Վանքերում հիմնադրված համալսարաններում, վարդապետարաններում ուսանած հոգեւորականները դարձել են մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու մեծանուն եւ շնորհաշատ ազգային ու եկեղեցական գործիչները, որոնք մեծ ջանքեր են ներդրել Սուրբ Եկեղեցու պայծառության, ազգի ու հայրենիքի առաջընթացի համար: Խորանաշատի վանքում ուսանել են այնպիսի նշանավոր եկեղեցական գործիչներ, որպիսիք են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արեւելցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Աղթամարցին, Գրիգոր Աղթամարցին եւ շատ ուրիշներ: Խորանաշատում ընդօրինակված ձեռագրերն իրենց եզակիությամբ Մատենադարանում պահվող մեր թանկարժեք գոհարներից են: Մեր վանքերում ստեղծված աշխատությունները, թարգմանական մեծարժեք գործերը, ձեռագրերի ընդօրինակումը, նոր սերունդներին կրթության շարունակաբար ջամբումը եղել են ամուր հիմնասյուներից մեր ժողովրդի կենսունակության ու հարատեւության: Հայոց վանքերը դարձել են մեր հավատի ու ինքնության յուրօրինակ վկայագրեր, մեր աստվածասիրության ու հավատքի պայծառ վկայարաններ, գիտության, դպրության ու մշակույթի կենտրոններ:

Պատմության հորձանուտներում, սակայն, հայոց վանքերը մեր ժողովրդի պես ենթարկվել են բազում փորձությունների, քանզի թշնամյաց հարձակումներն ուղղվել են նաեւ այս սրբավայրերի դեմ, որտեղ հավաքված են եղել մեր հոգեւոր արժեքները, մեր ժողովրդի հոգեմտավոր ձեռքբերումները: Հատկապես Հայոց ցեղասպանության շրջանում, երբ եղեռնի ենթարկվեցին մեկ եւ կես միլիոն հայորդիներ, նաեւ մեր շատ վանքեր ու եկեղեցիներ կործանվեցին: Յավով ենք անդրադառնում նաեւ, որ արցախյան 44-օրյա պատերազմի հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում այսօր նույնպես պղծվում եւ ոչնչացվում են հայկական վանքեր ու եկեղեցիներ, կոթողներ եւ հուշարձաններ: Մենք ամեն ջանք ի գործ պիտի դնենք՝ միջազգային հանրության ուշադրության ներքո պահելու այդ վայրագությունների փաստը՝ դրանք դատապարտելու եւ հետագա բարբարոսությունները կանխելու համար եւ կարելվույնս արժեւորելու ու պահպանելու մեր ժողովրդի հոգեւոր գանձերը, մեր հայրերից մեզ փոխանցված ժառանգությունը:

Այս առաքելության մեջ գովարժան նպաստ են խորանաշատի վանքի 800-ամյակի միջոցառումները: Խորանաշատի վանքը, լինելով հայոց ճարտարապետության յուրահատուկ, գեղեցկակերտ կոթող եւ Մեր հավատացյալ զավակների սիրելի ուխտավայր, առանձնահատուկ կերպով վկայում է մեր ինքնության, հայրենի երկրում մեր ժողովրդի դարավոր գոյության ու կենսագործունեության, առ հայրենիքը սիրո եւ հավատարմության մասին: Եւ խորանաշատի վանքի 800-ամյակի նշանավորումը նաեւ հռչակում է մեր նվիրումի ու նախանձախնդրության՝ հանդեպ մեր հոգեւոր արժեքները եւ մեր սրբազան երկիրը: Ներկայիս Հայաստանի սահմաններին ադրբեջանական կողմի սադրանքների ու ոտնձգությունների պատճառով եւ անվտանգության նկատառումներից ելնելով՝ սակավ են դեպի խորանաշատի վանք ուխտագնացությունները, եւ հարկ է՝ մեր սահմաններն ամուր պահելով՝ հնարավորություններ ստեղծել նաեւ վանքի ապահովության եւ ուխտավորների հաճախակի այցելությունների համար: Վանքն այսօր կարիքն ունի ամենքիս հոգածության եւ ուշադրության: Մաղթում ենք, որ հոբելյանական այս հանգրվանը նոր շունչ հաղորդի վանքի պատմական առաքելությունը:

Այս առիթով Մենք Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս


Գալստանյանին, Խորանաշատի վանքի 800-ամյակի միջոցառումների նախաձեռնող խմբի անդամներին, բոլոր կազմակերպիչներին:


Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ խաղաղություն, ապահովություն ու բարօրություն պարգևի մեր երկրին ու աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին՝ միշտ ապրելու ազգասիրությամբ, եկեղեցասիրությամբ, առ հայրենին անսակարկ նվիրումով: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, ողորմությունն ու շնորհները լինեն ձեզ հետ եւ ամենքի, այսօր եւ միշտ, ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԿԱՅԱՅԱԷ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Մայիսի 17–20-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ Գերագոյն հոգեւոր խորհրդի ընդլայնուած կազմով ժողովը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյնի եւ օրհնութեան խօսքից յետոյ ժողովի նիստերն ատենապետեցին Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ եւ Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամեանը եւ Տաւուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանեանը:

Ժողովի ընթացքում քննութեան առնուեց Մայր Տաճարի հիմնանորոգութեան եւ Միւռոնօրհնութեան կազմակերպական աշխատանքների ընթացքը: Այս ուղղութեամբ կատարուածի վերաբերեալ համապարփակ տեղեկութիւններ փոխանցեց Մայր Աթոռի Վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայեանը:

Ընդունելով զեկոյցն ի գիտութիւն՝ ԳՀԽ անդամները մասնաւոր իրենց գոհունակութիւնը յայտնեցին, որ Մայր Տաճարի հիմնանորոգութիւնը եւ շրջափակի բարեկարգման աշխատանքները մօտենում են աւարտին՝ գնահատանք փոխանցելով սրբազան այս առաքելութեան արդիւնաւորման գործում իրենց նպաստը բերող բոլոր կառոյցներին եւ անհատներին: Քննարկելով առաջիկայ Միւռոնօրհնութեան արարողութեանն առնչուած հարցերը՝ Գերագոյն հոգեւոր խորհուրդը որոշեց Միւռոնօրհնութիւնը կազմակերպել 2023 թուականին, երբ լրանում է նաեւ Մայր Տաճարի հիմնադրման 1720-ամեակը:

Ժողովին Արցախում տիրող իրավիճակի մասին զեկոյց ներկայացրեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանը՝ մասնաւորապէս անդրադառնալով առկայ մարտահրաւէրներին եւ դրանց յաղթահարմանն ի նպաստ՝ հոգեւոր, բարոյահոգեբանական, մարդասիրական եւ ընկերային աջակցութեան ծրագրերի կարեւորութեանը: Վրթանէս

եպիսկոպոսը տեղեկություններ փոխանցեց թեմում սպասաւորող քահանաների հովուական ծառայութեան ու առաքելութեան վերաբերեալ՝ իրազեկելով երիտասարդութեան հոգեւոր դաստիարակութեանն ուղղուած ծրագրերի վերաբերեալ:

Զեկույցում Արցախի թեմի առաջնորդն անդրադարձ կատարեց Ադրբեջանի վերահսկողութեան տակ յայտնուած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան պղծման, իւրացման եւ ոչնչացման դէպքերին՝ Ադրբեջանի որդեգրած այս քաղաքականութեան կանխման գործում կարեւորելով միջազգային հանրութեան դերակատարութիւնը:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը գնահատանքով ընդունեց Արցախի թեմի հոգեւոր սպասաւորների՝ տարբեր ոլորտներում իրականացրած խնամատար նուիրեալ գործունէութիւնը: Ժողովականները յորդորեցին Հայաստանի եւ Սփիւռքի թեմակալ առաջնորդներին շարունակել ջանքեր ներդնել՝ զանազան ծրագրերի միջոցով զօրակցելու Արցախի ժողովրդին, ինչպէս նաեւ հայաստանեան թեմերի կողմից պարբերաբար ուխտագնացութիւններ կազմակերպել դէպի Արցախ: ԳՀԽ-ն նաեւ կարեւոր նկատեց Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանմանը նուիրուած միջազգային գիտաժողովների կազմակերպումը՝ ընդգծելով խնդրի հետեւողական արծարծման անհրաժեշտութիւնը միջազգային, միջեկեղեցական ու միջկրօնական հարթակներում:

Հայաստանի եւ Արցախի թեմերում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կրթադաստիարակչական առաքելութեան առաւել զօրացման վերաբերեալ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռ Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի տնօրէն Տ. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեանը: Վերջինս խօսեց հանրակրթական դպրոցներում «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկայի դասաւանդման, առկայ խնդիրների եւ առարկայի ուսուցիչների ժրաջան ու նախանձախնդիր աշխատանքի մասին:

Հայր սուրբը ժողովականներին տեղեկացրեց Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի կողմից «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկայի ուսուցիչների հետ կանոնաւոր կազմակերպուող հանդիպումների, ինչպէս նաեւ թեմերի քրիստոնէական դաստիարակութեան պատասխանատուների հետ առկայ գործակցութեան եւ նախանշուող համատեղ ծրագրերի մասին:



ԳՀԽ անդամները, կարեւորելով հոգեւոր դաստիարակութեան ծրագրերի խթանումը եւ ազգային-հոգեւոր արժէքների պատշաճ ջամբումը մատաղ սերնդին, թելադրեցին շարունակել այս ուղղութեամբ աշխատանքները: Խորհուրդը մասնաւորապէս ողջունեց թեմերում քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնների եւ կիրականօրեայ դպրոցների առաւել համակարգուած գործունէութեան կրթական ծրագրի նախապատրաստման նախաձեռնութիւնը՝ յորդորելով համապատասխան մասնագէտների ներգրաւմամբ ամբողջացնել ծրագիրը եւ հրատարակութեան պատրաստել անհրաժեշտ կրթական ձեռնարկներն ու տեղեկատուական նիւթերը:

Անդրադառնալով աշխարհաքաղաքական զարգացումներին, 44-օրեայ աղէտալի պատերազմից յետոյ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած արտաքին ու ներքին մարտահրաւէրներին՝ տիրող մտահոգիչ իրավիճակի առնչութեամբ Գերագոյն հոգեւոր խորհուրդը հանդէս եկաւ առանձին յայտարարութեամբ:

Ժողովի ընթացքում քննարկուեցին նաեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարչական, կանոնական ու հովուական կեանքին առնչուող հարցեր:



ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Քերագոյն հոգեւոր խորհուրդը, նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիէլ Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, անդրադառնալով 44-օրեայ աղէտալի պատերազմից յետոյ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած արտաքին ու ներքին մարտահրաւէրներին, աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային զարգացումներին, արձանագրում է՝

— Ադրբեջանական իշխանութիւնները շարունակում են իրենց դատապարտելի թշնամական վերաբերմունքը Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի հանդէպ: Եռակողմ յայտարարութեան ստորագրումից յետոյ Ադրբեջանը պարբերաբար սադրանքներ է հրահրում Հայաստանի եւ Արցախի սահմաններին, թիրախաւորում նաեւ խաղաղ բնակչութեանը, շարունակում է պահել ռազմագերիներին, իր վերահսկողութեան տակ յայտնուած տարածքներում ոչնչացնում եւ իւրացնում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնը,

— Աշխարհաքաղաքական իրադարձութիւնների համատեքստում ՀՀ իշխանութիւններին եւ համազգային կառույցներին հարկ է զգօնութիւն դրսեւորել, որպէսզի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը սակարկման առարկայ չդառնայ,

— Խաղաղութիւնը չի կարող հաստատուել ազգային արժանապատուութեան նուաստացման հաշուին, հայրենի պետութեան տարածքային ամբողջականութեան հանդէպ չդադարող ոտնձգութիւնների, ռազմագերիների առկայութեան, Ադրբեջանի շարունակական սպառնալիքների եւ հայատեացութեան քարոզչութեան պայմաններում: Խաղաղութիւնը պէտք է հիմնուի արդարութեան, արժանապատուութեան եւ իրաւունքների յարգման սկզբունքների վրայ,

— Անկախ առկայ ճնշումներից եւ արտաքին սպառնալիքներից, առաւել եւս ներհասարակական բեւեռացուածութեան պայմաններում, ՀՀ եւ ԱՀ իշխանութիւնները հարկ է, որ չձեռնարկեն հայոց անկախ պետականութիւնը եւ Արցախի ապագան վտանգող քայլեր, չդրսեւորուի զի-

ջողականությունն ազգի հիմնարար իրաւունքների եւ պատմական արդարութեան հետապնդման յանձնառութեան մէջ:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը, խիստ մտահոգուած ստեղծուած բարդագոյն իրավիճակով, հայրենիքում տեղ գտնող ներքաղաքական զարգացումներով եւ ապաւինելով Բարձրեալ Տիրոջ ողորմութեանը եւ մեր ժողովրդի իմաստութեանը, յորդորում է՝

— Առաջնային նկատել ազգային եւ պետական շահը, գործել խղճի մտօք եւ պատասխանատուութեամբ, խնդիրների արժանապատիւ լուծումները փնտրել բացառապէս մեր համընդհանուր կամարտայայտման ու համախոհութեան մէջ,


— Հայրենիքում թէ Սփիւռքում ամենայն ջանք ի գործ դնել զօրացնելու մեր ազգային միաբանությունը՝ վերացնելով պառակտող հատուածականությունը, լծուելու հայրենիքի հզօրացմանը, միջազգային հարթակներում եւ ամէնուր հետեւողականօրէն բարձրաձայնելու մեր ժողովրդի իրաւունքների ոտնահարման մասին, հետամուտ լինելու Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը եւ հատուցմանը, պայքարելու յանուն մեր ինքնութեան ու հոգեւոր-ազգային արժէքների պահպանութեան,

— Ներքաղաքական գործընթացներում, խաղաղ հաւաքներին, անկախ քաղաքական հայեացքներից կամ պաշտօնական գործառնություններից, դրսեւորել հանդուրժողականություն, օրինապահություն, յարգանք միմեանց իրաւունքների նկատմամբ՝ բացառելով որեւէ տեսակի բռնություն, անհամաչափ ուժի կիրառում, սադրանք եւ օրինախախտություն: Ատելութեան խօսքը, վիրաւորանքը եւ թշնամանքի հրահրումը երբեք բարիք չեն կարող լինել:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը կոչ է անում հաւատաւոր մեր աշխարհասփիւռ ժողովրդին շարունակել աջակից ու սատար լինել Արցախի մեր քոյրերին եւ եղբայրներին եւ պատրաստակամ յանձնառություններով նպաստ ու ներդրում բերել Արցախի Հանրապետութեան զօրացմանը, խաղաղ ու ապահով կեանքին:

Աղօթում ենք մեր երկրի խաղաղութեան ու առաջընթացի համար եւ հայցում Բարձրեալն Աստուծոյ օրհնությունն ու զօրակցությունը մեր ժողովրդին:

Թող հայրենիքի համար աղօթքը մշտահունչ լինի մեր ազգի զաւակների շուրթերին:



**Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԽԱՉԻ ԵՐԵԽԱՆ ՏՈՆԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ
ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(15 մայիսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր.
հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան»
(Շարական):

Հավատավոր քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Հինանց այս օրհնաբեր շրջանում մեր եկեղեցիներում առավել ուժգին եւ ավետաբեր է հնչում Քրիստոսի հրաշափառ հարուստ ավետիսը, իսկ հարուստ հավատը մեր սիրտն ու հոգին լցնում է վաղվա օրվա հանդեպ կենսատու հույսով եւ ակնկալիքներով: Տիրոջ հարուստ պայծառացավ եկեղեցին, մահը պարտվեց, շարչարանքներն ու խաչելությունն իմաստավորվեցին, իսկ քրիստոնյաներս առաքյալների նման առավել զորացանք առաքելական հավատի մեջ՝ ապրելու եւ արարելու, վերափոխվելու եւ վերանորոգվելու, մեր բաժին սերն ու բարությունը տարածելու այս աշխարհում: Գարնանաբույր լուսավոր այս օրը Հայոց եկեղեցում Ս. Խաչի երեւման տոնն է, որի առիթով շարականագիրն ասում է. «Այսօր երկնքից երեւաց հաղթության նշանը, հեթանոսների համար ծագեց ողորմության լույսը»:

Ընդհանրական եկեղեցում եւ քրիստոնյա ազգերի կյանքում բազում են խաչի երեւումները, որոնք մարդկանց հավատքի են բերել կամ զգուշացրել վերահաս վտանգների, փորձությունների մասին: Եւ այսօր անդրադառնում ենք պատմական մի իրադարձության, որ տեղի է ունեցել դարեր առաջ: Սա մի ժամանակաշրջան էր, սիրելի՛ հավատացյալներ, երբ արիոսականությունը գլուխ էր բարձրացրել, իսկ ճշմարիտ քրիստո-

նյաները պայքարում էին ուղղափառության համար: Եւ այսպէս՝ 351 թ. մայիսի 7-ին՝ Երուսաղեմի Ս. Կյուրեղ հայրապետի օրոք՝ առաւոյտյան ժամը 9-ին, երկնքում երեւում է փրկչական խաչը՝ տարածվելով Գողգոթայից մինչեւ Զիթենյաց լեռը: Այն այնքան պայծառ էր, որ անգամ արեգակն էր մթագնել: Տերունական նշանը շողարձակում էր ծիածանի երփներանգ գույներով, իսկ մարդիկ ապշահար դուրս էին եկել իրենց տներից եւ զարմացած նայում էին երկնային հրաշքին: Առաւոյտյան խաչի երեւումը պատճառ դարձավ շատերի դարձի գալուն եւ ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին հավատալուն: Մարդիկ շտապում էին Ս. Հարության տաճար՝ գոհություն հայտնելու Աստծուն հրաշքի համար, ոմանք էլ մկրտվեցին՝ դառնալով Եկեղեցու անդամ եւ քրիստոնյա: Ս. Կյուրեղ Երուսաղեմացին մի նամակ գրեց Մեծն Կոստանդինոսի որդի Կոստանդին Բ. կայսրին՝ հորդորելով դարձի գալ եւ հավատարիմ մնալ նիկիական ուղղափառ դավանութեանը: Այս թուղթը մեր հայրերը դեռեւս Ե. դարում թարգմանել են հայերեն, որն ընթերցվում է տոնի օրը՝ Առաւոյտյան ժամերգության ժամանակ:

Անհրաժեշտ իրողութիւն է, որ խաչի հայտնութիւններն ուղեկցել են նաեւ մեր ժողովրդին ու սրբակյաց մարդկանց հայոց պատմութեան ընթացքում: Երբ մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչն Արածանիում մկրտեց արքունական ընտանիքին եւ բազմահազար նորադարձներին, գետի ջրերը կանգնեցին եւ հետ դարձան, երկնքում հայտնվեց տերունական խաչի պատկերը, որի լուսավորութիւնից անգամ արեգակի ճառագայթները թուլացան: Խաչի նշանը հայտնվեց նաեւ Ս. Մեսրոպ Մաշտոցի վախճանման ժամանակ՝ ուղեկցելով մարդկանց թափօրը մինչեւ թաղման վայրն Օշականում: Հաղթական խաչի նշանի երեւման հրաշքն օգնեց նաեւ Սմբատ Օրբելյան բարեպաշտ քրիստոնյա իշխանին՝ շահելու Մանգու խանի բարեհաճութիւնը, նվերներով վերադառնալու Հայոց աշխարհ եւ շենացնելու Օրբելյան նշանավոր տոհմը: Այս օրինակները, որոնք ակնհայտ վկայութիւնն են խաչի եւ Տիրոջ հանդեպ մեր ազգի հավատարմութեան եւ նվիրումի, կարելի է շարունակել:

Սիրելիներ, Ս. Խաչի երեւման տոնը եւս մեկ հրաշալի առիթ է քրիստոնյաներիս համար՝ խորհելու խաչի խորհրդի եւ Խաչալի մասին, անդրադառնալու եւ մեր կյանքում արժեւորելու այն մեծ գոհաբերութիւնը, որ Տերն իրականացրեց խաչի վրա՝ հանուն մարդկութեան փրկութեան: Խաչն այլեւս ոչ թե մահվան գործիք է, այլ կյանքի, հաղթանակի, մեր

հանդեպ Աստծու անսահման սիրո նշանը: Ուստի Եկեղեցին եւ սուրբ հայրերը դարեր շարունակ ուսուցանում են, որ խաչը նախեւառաջ մեր փրկության նշանն է: Խաչով են զարդարված մեր եկեղեցիների գմբեթները, խաչով են կատարվում եկեղեցական բոլոր արարողությունները, խաչին ենք երկրպագում, այն համբուրում, եւ վերջապես նույն խաչով են կնքվում մեր գերեզմանները մինչեւ Տիրոջ երկրորդ գալուստը, որին պետք է նախորդի Մարգու Որդու նշանի՝ խաչի երեւումը երկնքում: Որտեղ խաչն է, այնտեղ նաեւ խաչյալ եւ հարուցյալ Տերն է՝ հաղթանակած Աստված, որ անսահման սիրում է մեզ: Իսկ Նրա հանապազ նախախնամությունն օգնում է մեզ այս կյանքում ապրելու եւ արարելու, զգալու եւ վայելելու արարչագործության բարիքները:

Խաչակնքմամբ եւ խաչը մեզ վրա կրելով՝ հեռացնում ենք մեզանից չարը, դիվական զորությունները եւ վերստին հաստատվում հավատի մեջ: Այլ խոսքով՝ խաչը թալիսման կամ գեղեցիկ զարդ չէ, այլ քրիստոնյա լինելու եւ Քրիստոսին պատկանելու ակնհայտ վկայությունը: Եւ խաչակրությունը զորավոր եւ իմաստալից է միայն այն դեպքում, երբ կա այս գիտակցությունը, երբ մեր կյանքն արժեւորված է հավատի կենդանի գործերով եւ Քրիստոսով նոր մարդ լինելու անհագ ցանկությամբ: Ուզենք թե չուզենք՝ մեր կյանքը խաչի ճանապարհ է՝ լի անկումներով եւ վերելքներով, փորձություններով եւ խոչընդոտներով, որի վերջակետը հարությունն է՝ հաղթանակը: Ինչպես մեր Տերը հարություն առավ եւ հաղթանակ տարավ, այնպես էլ մենք կարող ենք այս կյանքում մեզ բաժին ընկած խաչը սիրով եւ համբերատարությամբ տանել, բարի պատերազմը մղել, չվախենալ եւ չընկճվել, այլ խաչին եւ հարուցյալ Հիսուսին ապավինած՝ փրկել մեր հոգիները, մեր կյանքի օրինակով նաեւ ճշմարիտ ճանապարհը ցույց տալ մյուսներին: Այսպես ապրեցին եւ գործեցին Տիրոջ առաքյալները, նրանց աշակերտներն ու Քրիստոսի Եկեղեցու բյուրավոր մարտիրոսներն ու վկաները, որոնք ոչ թե ճանապարհներ փնտրեցին՝ խուսանավելու խաչից, այլ խոնարհաբար եւ աներկբա հավատով իրենց կյանքով վկայեցին Քրիստոսի մասին: Ուրեմն՝ խաչի խորհուրդն այսօր մեզանից պահանջում է նաեւ հավատարմություն եւ քաջություն՝ առանց վախենալու վկայելու քրիստոնեական մեր ինքնության մասին եւ ուրախանալու իրական արժեքների վրա: Ս. Պողոս առաքյալի խոսքի նմանողությամբ նրանք պարծենում էին Տեր Հիսուսի փրկարար խաչով, իսկ ինչով ենք մենք կամ մեզանից շատերը պարծենում այս կյանքում՝

պաշտոնով, հարստությամբ, շքեղ մեքենաներով, ժամանակակից հեռախոսներով, սոցցանցերի հավանումներով...

Եկեղեցու հայրերը խաչի մեջ տեսել են նաեւ սիրո խորհուրդը, որ միավորող եւ կյանքը քաղցրացնող հատկություն ունի: Եթե բաբելոնյան աշտարակաշինության պատճառով ազգերի լեզուները խառնվեցին եւ բաժանվեցին, ապա խաչի խորհրդով նրանք միացան: Հետեւաբար, ով այդ սիրո մեջ է, հավատարիմ է նաեւ խաչին եւ միաբանությանը: Իսկ խաչի խորհրդից հեռանալն առաջացնում է երկպառակություններ, անհաշտություններ, թշնամանք եւ ատելություն:

Մենք գրեթե ամեն օր խոսում ենք մեր խաչապաշտ լինելու եւ ազգային-հոգեւոր միասնականության կարեւորության մասին, բայց իրականում ապրում ենք այլ արժեքներով եւ գիտակցությամբ: Վիրտուալ (երեւակյական աշխարհ համակարգչային տիրույթում,- խմբ.) հայրենասիրությունից, ճոխ բաժակաճառերից եւ խոսքերից չենք կարողանում ձերբազատվել, մեր անձնական եսը մի կողմ դնել, փորձել հասկանալ դիմացինին եւ իսկապես ամեն մեկս մեր տեղում դառնալ հայրենապաշտ ու աստվածասեր: Սերն է պակասել մեր կյանքից, իսկ սուտը, կեղծիքը եւ նյութապաշտությունը դարձել են արժեքներ: Ապրում եւ գործում ենք այնպես, ասես մի օր հոգի չենք տալու, չենք կանգնելու արդար Դատավորի առաջ, ի՞նչ ենք Նրան պատասխանելու մեր արած անխոհեմ քայլերի համար, ինչպե՞ս ենք Նրա առաջ արդարանալու...


Այսօր բազմադարյա մեր պատմության ոչ բարվոք օրերի ականատեսն ու վկաներն ենք: Զարմանալի է եւ ապշեցնող, բայց նաեւ փաստ, որ ոչ միայն դասեր չենք քաղել նախորդ դարասկզբին մեր ժողովրդի գլխով անցած դժնդակ եւ մղձավանջային դեպքերից՝ ցեղասպանություն, պետականության վերականգնում, ապա կորուստ եւ այլն, այլեւ հենց այսօր գործում ենք նույն սխալները, անիմաստ երազային պատրանքներով եւ ինքնախաբեությամբ ապրում: Ցավալի է, որ մեր հայրենակիցներից շատերի սրտում հայրենի հողի գործության զգացողությունը պակասել է, Հայկ Նահապետի զավակի ոգու ամրությունը՝ թուլացել, սկսել ենք չհավատալ մեր ուժերին, թերեւս նաեւ հոգնել ենք պայքարելուց:

Սթափվել է պետք, լրջանալ ու հասկանալ մի պարզ եւ անհերքելի ճշմարտություն. այսօր չպետք է արվեն քայլեր, ընդունվեն որոշումներ, որոնք կվնասեն մեր պետականությանը, իսկ հետագա սերունդները տասնյակ, գուցե նաեւ դարեր շարունակ չկարողանան դրանք շտկել: Հի-

մա հայրենիքից նեղանալու, առավել եւս արտագաղթելու, մեր բախտն անիծելու, իրար հետ հաշիվներ մաքրելու, սեփական եսն առաջ տանելու պահը չէ, այլ ժամն է համահայկական միասնականության, ստեղծված իրականությունը սթափ գնահատելու, արժանապատիվ լուծումներ եւ ելքեր գտնելու՝ հանուն հայոց պետականության եւ գալիք սերունդների պայծառ ապագայի: Մի՛ մոռացեք՝ անձերն անցողիկ են, իսկ հայրենիքը՝ մնայուն:

Ուրեմն՝ եկե՛ք մեզանից վանենք այս պահի տկարությունը, ընկճվածությունը, զանազան վախերն ու բաժանումները, հիշենք մեր քաջ նախնիներին ու սուրբ նահատակներին, եւ ապավինած հարուցյալ Տիրոջն ու Ս. Խաչի զորությանը՝ կրկին հավատանք մեր ուժերին, բազկի ու մտքի զորությանը՝ երբեք չմոռանալով, որ խաչելությանը հաջորդեց հրաշափառ հարությունը՝ հաղթանակը:

Թող Ս. Խաչը միշտ պահապան լինի հայոց աշխարհին եւ մեր ազգին, իսկ Տերը բազում հաղթանակներ պարգևի մեզ:



**Տ. ՄԻՆԱՍ ԱՐԵՂԱ ՀԱՆՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ
ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(29 մայիսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Բացառապէս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին է, որ այսօր մեծ ցնծութեամբ նշում է Երկրորդ Ծաղկազարդի տոնը: Ամեն տարի այն նշվում է Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը:

Դեռեւս ԺԱ. դարում Գրիգոր Բ. Վկայասեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի սահմանած այս տոնը կապված է զուտ ազգային մի սքանչելի ավանդության հետ: Ըստ այդմ՝ երբ մեր հավատքի հայր սուրբ Գրիգոր Լուսավորիչը բանտարկված էր խոր Վիրապում, մի հրեշտակ ամեն օր այցելում էր նրան: Սակայն մի օր հրեշտակը չի այցելում Աստծու երանելի ծառային, եւ երբ հաջորդ օրն է գալիս, պատմում է, որ Տիրոջ համբարձումը տոնելու համար հրեշտակների ինը դասերը հաջորդաբար տոնախմբություն են կատարում: Ահա այդ օրը չորրորդ դասի հրեշտակների հերթն էր՝ իրենց փառահեղ Արքային դիմավորելու, եւ հենց այդ պատճառով ամեն տարի նույն օրը նրանք նշում են այդ տոնը:

Փա՛ռք ամենակալ Աստծուն, որ մենք եւս՝ Քրիստոսի երկրային Եկեղեցու անդամներս, այսօր հնարավորություն ունենք միավորվելու երկնային դասերի հետ ու մեր միասնական աղոթքն ու փառաբանությունը հղելու համբարձյալ անհաղթ Արքային ու ասելու. «Օվսաննա՛, օրհնյալ լինես Դու, որ գալիս ես Տիրոջ անունով» (Հովհ. ԺԲ. 13):

Այս օրվա խորհուրդը շատ նմանություններ ունի Ծաղկազարդի հետ, որովհետեւ ընթերցում ենք նույն Ավետարաններն ու աղոթքները: Սակայն եթե բուն Ծաղկազարդը խորհրդանշում է Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ, ապա Երկրորդ Ծաղկազարդը, խորհրդական կերպով, հրեշտակների ուղեկցությամբ դեպի Վերին Երուսաղեմ Տեր Հիսուսի մուտքի հիշատակությունն է:

Տիրոջ՝ Երուսաղեմ հաղթական մուտքի պատմությանը, անշուշտ, քաջածանոթ ենք բոլորս. գարնանային այսպիսի մի օր էր, երբ մեր Տերը, նստած ավանակի վրա, ժողովրդի խուռներամ բազմության ուղեկցությամբ մտնում էր քաղաք։ Մարդկանց շուրթերից հնչում էին ուրախության, գոհաբանության, հարգանքի բացականչություններ։ Օվսաննաներով եւ արմավենու ոստերով էին դիմավորում խոստացված Արքային, եւ շատերը մինչեւ իսկ իրենց հանդերձներն էին փռում Քրիստոսի առջեւ։

Բազմաթիվ հալածանքներից ու կեղեքումներից հոգնած ժողովուրդն սպասում էր իր Փրկչին եւ հանձին Քրիստոսի՝ նրան էր գովաբանում ու մեծարում։ Իսրայելի ժողովուրդը, մարդկային ընկալմամբ, հաղթանակած արքա էր ցանկանում ունենալ, իսկ Քրիստոս ասաց. «Իմ արքայությունն այս աշխարհից չէ»։ Մարդիկ մարմնական փրկություն էին փափագում, Քրիստոս հոգիների փրկություն էր բերել։ Ժամանակավորի տենչը կուրացրել էր Իսրայելի ժողովրդին, ու իրենց առջեւ չէին տեսնում հավիտենությունը տնօրինողին։

Այո՛, սիրելիներ, պիտի փառավորվեր Մարդու Որդին, սակայն ոչ այդ մոլորյալ հոգիների կողմից, որոնց կարճատեւ ցնծությունն ու փառաբանություններն ընդամենը մի քանի օր անց պիտի վերափոխվեին մահապատժի կոչերի, այլ Հոր կողմից՝ իրական ու հարատեւ փառքով։ Ամեն անգամ յուրաքանչյուր քրիստոնյա ընտրության առջեւ է կանգնում եւ որոշում, թե ով է ինքը՝ Իսրայելի ժողովուրդը, որ խնդրվածքով դիմավորեց Աստծու Որդուն Երուսաղեմի դարպասների առջեւ, բայց կարճ ժամանակ անց մահվան դատապարտեց, թե՛ Աստծու նոր ժողովուրդը, որ ամեն պարագայում հավատարիմ է Նրան եւ պատրաստ է, իր խաչը վերցրած, հետեւել Նրան դեպի Գողգոթա։

Սա լրջագույն ընտրություն է, անմնացորդ սիրո, նվիրումի, խոնարհության ու անդադրում պայքարի ընտրություն։ Եւ երանի՜ նրան, ում միտքն ու հոգին առողջ են ճշմարիտ հավատքի մեջ, մաքուր է Քրիստոսի թափված կենարար արյամբ եւ առ Աստված ու մերձավորի սիրով լցված Քրիստոսի մեջ տեսնում է երկնային փառապանծ Թագավորին։ Մարմնականը, աշխարհիկը դադարում են նրա համար հոգս լինելուց եւ հոգեւոր հայացքը Երկինք հառած՝ հաստատուն ու վստահ քայլերով Երկնային արքայություն է ուղղվում։ Փառապանծ, հաղթանակած, անսահման բարի ու արդարամիտ Տերը երկնային բարձունքներից նայում է Իր զավակներին, ուրախանում նրանց հաջողություններով, տրտմում անկման պահին, սա-

կայն ոչ մի վայրկյան չի դադարում հոգալ նրանց մասին: Նա ամեն ժամ մոլորյալ զավակի վերադարձին է սպասում: Բարոյթյամբ լի սիրող Հոր աչքերը սպասում են Իր մոլորված ու տառապած զավակի հայացքին, որ աշխարհի ունայն գործերից կտրվի մի պահ, կանգ առնի կործանման ճանապարհին ու տեսնի փրկության համար մեկնած ամենագոր Աշը:

Տեսե՛ք, սիրելի՛ հավատացյալներ, թե եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը վիրապում միայնակ էր, բայց քանի որ հավատքի աչքերը բաց էին, եւ խորապես հավատում էր Նրան, որ Լույս էր Լույսից, կարողացավ զգալ ներկայությունն Աստծու եւ Նրա հրեշտակի:

Կան մարդիկ, որ ծնված են ձրի ստացված ավանդական ժառանգությունամբ եւ այսօր ապրում են՝ վայելելով նրա հոգեւոր բարիքները, սակայն, ցավոք, ոչինչ չեն տեսնում, որովհետեւ իրենց հոգիները զգայուն չեն, չգիտեն իրենց ժառանգած սրբության արժեքը: Այսօր ասում ենք, թե քրիստոնյա ենք, քանի որ 1700 եւ ավելի տարի առաջ քրիստոնեությունը պաշտոնապես ընդունած ազգի զավակներն ենք: Իրականությունն այն է, սակայն, որ մեզնից շատերն ապրում են Քրիստոսին անծանոթ մնացած հեթանոսների նման: Զգույշ պիտի լինենք, որ առօրյա մեր կյանքում չանտեսենք սրբությունները՝ Աստծու ներկայության եւ ներգործության նշանները: Եթե տեսնել ուզենք, ապա նրանցով շրջապատված ենք: Լուսավորիչ հայրապետը վիրապի մեջ հավատքի կատարյալ գորությունամբ զգում էր Աստծու ներկայությունը: Մեծ սուրբը գիտեր, որ Աստված կարող է իրեն այդ վիճակից էլ դուրս հանել: Հավատաց եւ տեսավ: Վիրապի իր առանձնության մեջ զգաց Աստծու անտեսանելի, սակայն հոգով շոշափելի ներգործությունը:

Հոգու սրբություն, աստվածային իմաստություն, ճշմարիտ սեր ու անկեղծ նվիրում եմ մաղթում ամենքիս: Յուրաքանչյուրիս շուրթերից բխած փառաբանությունները թող այսուհետ Քրիստոսով մաքրված հոգիների խնդության արձագանքը լինեն: Բացենք մեր սրտերն անհաղթ Թագավորի առջեւ, որպեսզի այնտեղ բնակվելով՝ սրբի դրանք Իր անաղարտ լույսով, զարդարի առաքինության քաղցր պտուղներով, ամրացնի մեր հավատքն ու ընտրած ճանապարհը, Իրեն անդադար փառաբանող հրեշտակների դասերի օրինակն անմար պահի մեր հոգիներում, որպեսզի ոչ միայն մեր խոսքերով փառաբանենք Փրկչին, այլ աստվածահաճո մեր ընթացքն անխոս օրհնություն ու փառաբանություն լինի Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այսուհետեւ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



Ա. ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ՝
ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԱՆՏՈՆԻՈՍ ԲԱՐԵՊԱՆՏԻՆ՝
Ի ՊԱՆՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ

Սկիզբը՝ թիվ Դ.

ԻԱ. Սակայն Հիսուս անվանվող Աստծու Որդին, թեկուզեւ պարզապես լոկ մարդ լիներ, Իր իմաստութեամբ արժանի է Աստծու Որդի կոչվելու, քանզի ձեր բոլոր մատենագիրները Աստծուն եւ մարդկանց, եւ աստվածների Հայր են անվանում: Իսկ եթե մենք ասում ենք, որ Նա՝ Աստծու Խոսքը, ծնվել է Աստծուց, յուրահատուկ եւ սովորական ծնունդից գերիվեր կերպով, ապա, ինչպես եւ վերն արդեն ասել ենք, թող մեր այս տեսակետը ձեր տեսակետի հետ ընդհանրության եզր ունենա, երբ դուք Հերմեսին Աստծու Խոսք-Լրաբեր եք անվանում: Իսկ եթե մեկն առարկի, որ Քրիստոսը խաչվել է, ապա դա էլ ընդհանրության եզր ունի վերը թվարկված, ըստ ձեզ, Զեւսի որդիների հետ, որոնք կտտանքների էին ենթարկվել: Իհարկե, մահվան պատճառ դարձած նրանց տառապանքները, ըստ պատումների, նույնական չէին, այլ տարբեր էին, այնպես որ Նա, Իր տառապանքների առանձնահատկությամբ, թվում է, ոչ մի բանով չի զիջում, այլեւ նույնիսկ կապացուցեմ, ինչպես հանձն առա դա անել իմ ջատագովության սկզբում, կամ արդեն իսկ ապացուցել եմ, որ այս առումով նրանցից բարձր է, քանզի գործերից է երեւում, թե ով է ավելի լավը: Իսկ երբ ասում ենք, որ Նա ծնվել է Կույսից, ապա դա էլ համարե՞ք, որ ընդհանրության եզր ունի Պերսեւսի՝¹ հետ: Երբ պատմում ենք, որ Նա բուժում էր ի ծնե կաղերին, հիվանդներին ու կույրերին² եւ հարույն

^{1*} Երբ Ակրոսիոս արքային գուշակում են, որ թոռն սպանելու է իրեն, վերջինս իր դստերը բանտարկում է, սակայն Զեւսը ոսկե անձրեւի տեսքով այցելում է նրան, եւ Դանաւյան ծնում է Պերսեւսին:

² Բնագրում πονηρούς բառն է, սակայն գիտնական-հրատարակիչները (Մառանն ու այլք) ենթադրում են, որ սույն բառի փոխարեն պիտի լինի πηρούς բառը, որը Հուստինոսն օգտագործում է ստորեւ Կ. գլխում եւ «Երկխոսություն Տրիփոնի հետ» երկի ԿԹ. գլխում:

տալիս մեռյալներին, ապա այս դեպքում էլ հարկ է հիշել, որ նման պատմություններ պատմում են նաեւ Ասկլեպիոսի գործերի մասին:

ԻԲ. Նաեւ ասենք, եւ թող սա ձեզ հայտնի լինի³, որ ճշմարիտ է միայն այն, ինչ մենք ենք պնդում՝ Քրիստոսից եւ Նրան նախորդող մարգարեներից սովորած, որոնք ժամանակագրորեն ավելի հին են, քան ձեր բոլոր հեղինակները: Իսկ մեր խոսքերին հարկ է հավատալ ոչ թե այն բանի համար, որ դրանք նման են նրանց խոսքերին, այլ, որ ճշմարիտն ենք ասում: Սույն վարդապետությունը մեզ ավանդել է Հիսուս Քրիստոսը՝ Աստծու միածին Որդին՝ Նրա Խոսքը եւ անդրանիկն ու զորությունը, Որը Նրա կամքով մարդկային մարմին առավ՝ ի վերափոխումն ու ի վերականգնումն մարդկային ցեղի: Վերջապես, նախքան Նրա՝ մարդկանց աշխարհում մարդեղանալը՝ ոմանք, ես նկատի ունեմ վերոբերյալ շար այսերին⁴, բանաստեղծների միջոցով նախապես, իբրեւ իրական պատմություններ, հրամցրին այն, ինչ նկարագրում էին մտացածին ավանդազրույցներում: Նույն կերպ էլ հորինեցին արատավոր եւ ամբարիշտ ստեր, որոնք բարդեցին մեզ վրա. սրանք անհիմն են եւ վկաների, եւ ապացույցների առումով: Սույն դրույթները հաստատենք հետեւյալ փաստարկներով:

ԻԳ. Առաջին⁵ թեպետ մեր ասածները նման են հելլենականներին ասածներին, բայց միայն մեզ են ատում Քրիստոսի անվան պատճառով, եւ առանց որեւիցե մեղքի՝ իբրեւ հանցագործների՝ մահվան մատնում: Մինչդեռ այլք տարբեր տեղերում երկրպագում են ծառերին ու գետերին, մկներին, կատուններին ու կոկորդիլոսներին եւ բազմաթիվ այլ անբան անասունների, ընդ որում՝ պաշտամունքի առարկաները նույնը չեն բոլորի համար, այլ տարբեր են ազգից ազգ, այնպես որ բոլորն էլ հաշտ մեկը մյուսի անաստված են, որովհետեւ նույն բանը չեն պաշտում: Եւ հենց սա է այն մեղքը, որը կա-

³ Հստ Մառանի՝ Հուստինոսն աստ հանձն է առնում բացահայտել երեք դրույթ. 1) որ քրիստոնեական վարդապետությունը միակ ճշմարիտն է. սա տրամաբանական հետեւություն է այն բանի, ինչ Հուստինոսն ասում էր վերը հեթանոս փիլիսոփաների եւ բանաստեղծների կարծիքների հետ քրիստոնեական ուսմունքի նմանության մասին. 2) ապացուցում է, որ Աստծու Որդին մարդացել է. 3) որ նախքան Նրա մարդեղությունը դեւերը բանաստեղծների հերյուրանքների միջոցով փորձում էին մարդկանց հետ պահել առ այդ խորհուրդը հավատից:

⁴ Հստ Մառանի՝ διὰ τοῦ προειρημένου κακοῦ δαίμονος-ի փոխարեն խոսքի հստակության եւ ստուգության համար պիտի ընթերցել λέγω δε τοῦ προειρ...

⁵ Ապացուցելու համար, որ ճշմարտությունը միայն քրիստոնյաներին է (նրա հանձնառած եռամասնյա հետազոտության առաջին կետը)՝ Հուստինոսն ասում է, որ միայն քրիստոնյաներն են իրենց կրոնի պատճառով հալածվում, մինչդեռ այլք օգտվում են աստվածապաշտության կատարյալ ազատությունից (Մառան):

րող եք բարդել մեզ վրա՝ որ մենք չենք երկրպագում ձեր աստվածներին, մեռյալների համար ձոնումներ եւ ծխանյութեր չենք մատուցում, ոչ ծաղկեպսակներ նրանց արձանների համար⁶ եւ ոչ զոհաբերություններ: Ինքներդ էլ քաջ գիտեք, որ միեւնույն առարկաները ոմանց կողմից պաշտվում են իբրեւ աստվածներ, իսկ այլոց համար պարզապես գազաններ են համարվում, մյուսների համար էլ ծառայում են որպես օրինական զոհաբերություններ:

ԻԴ. Երկրորդ⁷՝ մենք՝ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներս, նախկինում նույնպես երկրպագում էինք Դիոնիսոսին՝ Սեմելեի որդուն, Ապոլլոնին՝ Լետայի որդուն, որոնց սիրային արկածների մասին պատմելն իսկ ամոթալի է, ինչպես եւ Պրոզերպինայի ու Ափրոդիտեի մասին՝ Ադոնիսի պատճառով կատաղության հասած, որոնց նվիրված խորհրդավոր ծիսակատարություններ եք դուք կատարում, կամ Ասկլեպիոսին, կամ էլ ինչ-որ մեկ ուրիշ այսպես կոչված աստվածներից մեկին: Իսկ հիմա, եթե նույնիսկ մեզ մահ սպառնա, մենք Հիսուս Քրիստոսով նրանց բոլորին էլ քամահրել ենք եւ մեր անձերը նվիրել անեղ եւ անկիրք Աստծուն, Որը, համոզված ենք, անմաքուր կրքով բռնված չի այցելել Անտիոպեին եւ այլ կանանց, ոչ էլ Գանիմիդեսին, ոչ էլ կարիք է ունեցել Թետիսից օգնություն ստացած հարյուրաձեռն հսկայի⁸ միջոցով ազատվելու եւ այդ բանի համար չի նպաստել, որ Թետիսի որդի Աքիլլեսն իր սիրունի Բրիսեիդայի պատճառով վրեժ լուծի՝ բազում հեղինակների կոտորելով⁹:

ԻՅ. Երրորդ¹⁰՝ Քրիստոսի՝ երկինք համբարձվելուց հետո դեւերը մեջտեղ բերեցին որոշ մարդկանց, որոնք իրենք իրենց աստվածներ էին կոչում. դուք ոչ միայն չհետապնդեցիք սրանց, այլեւ մեծարանքի արժանացրիք: Դրանցից մեկը Սիմոն Սամարացին էր՝ Գիթթոն կոչվող գյուղից: Սա Կլավդիոսի օրոք, իր մեջ գործող դեւերի զորությունմբ, ձեր վեհաշուք Հռոմ քաղաքում կախարդական հրաշքներ էր գործում, ինչի համար

⁶ Ἐν γράφαις. Մառանն անհրաժեշտ չի համարում փոխել այս ընթերցվածքը, քանի որ γράφαι բառը նշանակում է ոչ միայն գեղեցիկ պատկեր, այլեւ արձաններ:

⁷ Մյուս ապացույցն այն բանի, որ միայն քրիստոնյաներին է հայտնի ճշմարտությունը՝ Հուստինոսը փոխառում է այն իրողությունից, որ նրանք այլասերված աստվածների պաշտամունքից դարձել են առ Մի Աստծու ծառայությանը՝ չնայած մահվան սպառնալիքին (Մառան):

⁸ Հուն. առասպելաբանության մեջ հարյուր ձեռքով և հիսուն գլխով օժտված հսկաներ՝ Ἑκατοχρείρες հեկատոնքելր:

⁹ ՀՈՒՍՏԻՆՈՍ, Իլիական, Բ. 3 եւ հաջորդ համարները:

¹⁰ Երրորդ ապացույցն այն է, որ քրիստոնյաները հետապնդվում են ճշմարտության համար, այնինչ հալածանքի չի ենթարկվում նա, ով դեւերի ներշնչանքով աղավաղում է քրիստոնյաների ուսմունքը (Մառան):

աստված ճանաչվեց եւ իբրեւ այդպիսին՝ ձեր կողմից արձանով մեծարվեց: Այս արձանը կանգնեցվեց Տիրո գետի ափին՝ երկու կամուրջների միջեւ՝ լատիներեն հետեւյալ գրությամբ՝ Սիմոնին՝ սուրբ աստծուն¹¹: Եւ գրեթե բոլոր սամարացիները եւ ոմանք տարբեր ազգերից նրան որպէս առաջին աստված են ընդունում ու երկրպագում, իսկ նրա հետ նաեւ ոմն Հեղինեի, որն ամենուր նրա հետ էր, իսկ մինչ այդ հասարակաց տանն էր ապրում¹²: Մեկին էլ գիտեմ՝ ոմն Մենանդրոսի, որը նույնպէս սամարացի էր եւ Սիմոնի աշակերտը. սա Անտիոքում եղած ժամանակ այսերի ներգործությամբ շատերին գայթակղեցրեց իր կախարդական արվեստով՝ մինչեւ իսկ իր հետեւորդներին համոզելով, որ մահ չեն ճաշակելու: Այսօր էլ նրա աշակերտներից ոմանք նման կարծիք ունեն: Պոնտոսից ոմն Մարկիոն¹³, որն այսօր էլ դեռ սովորեցնում է իրեն հավատացողներին, ընդունում էր ինչ-որ մեկ այլ աստծու՝ Արարչից գերիվեր: Այսերի ներգործությամբ նա տարբեր ազգերի պատկանող մարդկանց ստիպում էր հայհոյել եւ մերժել Աստծուն՝ բովանդակ աշխարհի Արարչին, եւ դավանել ինչ-որ մի ուրիշ աստծու, որը [իբրեւ թե] բարձր է նրանից եւ արարել է ավելին, քան Նա: Այսպիսի մարդկանց միջից ելածները, ինչպէս եւ ասել եմ, քրիստոնյաներ են կոչվում, իսկ եւ իսկ փիլիսոփաների մեջ նրանք, որոնց ուսմունքները տարբեր են, եւ որոնք, այդուհանդերձ, փիլիսոփաներ ընդհանուր անունն են կրում: Արդյոք նրանք անո՞ւմ են այն զազրելի բաները, որոնց մասին ասեկոսեաներ են շրջանառվում ժողովրդի մեջ, զորօրինակ՝ կանթեղների շիջում, փոխադարձ սեռական հարաբերություններ, մարդկային մսի ճաշակում. չգիտեմ, բայց գիտեմ, որ դուք նրանց չեք հետապնդում, մահվան չեք մատնում, համենայն դեպս, նրանց ուսմունքների համար: Ի դեպ՝ բոլոր այս հերձվածների դեմ գրված մի աշխատություն ունեմ, եթե կամենաք, այն ձեզ կհասցնեմ:

¹¹ Այս արձանի մասին Հուստինոսը հիշատակում է նաեւ ԾԶ. գլխում, իսկ նրանից հետո՝ Իրինեոսը («Ընդդեմ հերձվածողաց», Ա., 23), Տերտուլիանոսը («Ջատագովություն», Գ.), Եւսեբիոսը («Եկեղեցական պատմություն», Բ., 13), Կյուրեղ Երուսաղեմացին («Կոչումն ընծայության» Զ. ճառում) եւ ուրիշներ:

¹² Եւսեբիոսը, այս խոսքը մեջբերելով Հուստինոսից («Եկեղեցական պատմություն» Բ., 13), հավելում է «Փյունիկյան Տյուրոսում», ինչի հետ համահունչ են Իրինեոսի («Ընդդեմ հերձվածողաց», Ա., 20) եւ Եպիփանեսի («Ընդդեմ հերետիկոսաց», Ի., 2) վկայությունները:

¹³ Երեւութական ուղղության գնոստիկներից մեկը՝ Մարկիոնը, ուսուցանում էր երկու աստվածների մասին, որոնցից մեկին՝ աշխարհի արարչին, համարում էր չարի մեղավոր, իսկ մյուսին՝ գերազույն աստված՝ բարու սկիզբ:

ԻԶ. Որպեսզի ոչ մեկին չանհանգստացնենք եւ ինքներս էլ մեղք չգործենք, համոզմունք ունենք, որ նորածին մանկանց լքելը ստոր մարդկանց է բնորոշ: Նախեւառաջ՝ որովհետեւ բոլոր այս ընկեցիկները՝ աղջիկ լինեն թե տղա, ինչպես տեսնում ենք, մարդակերության համար են օգտագործվում, եւ ինչպես հնում մարդիկ ցուլերի նախիրներ, այծերի, ոչխարների հոտեր եւ արածող ձիերի երամակներ ունեին, այդպես էլ ներկայումս երեխաներին օգտագործում են միմիայն այդ զագրելի նպատակով: Բացի այդ՝ բոլոր ժողովուրդների մեջ էլ կան բազմաթիվ կին արուէգեր (հերմոֆրոդիտներ) եւ այլասերվածներ, որոնք այդ քստմենլի գործին են ծառայում: Դուք նրանցից պարզեւնենք, ընծաներ եւ հարկեր եք վերցնում, այնինչ պետք էր նրանց արմատախիլ անել ձեր երկրից: Դրանցից ոմանք, բացի անաստված, ամբարիշտ ու պիղծ խառնակություններից, առիթի դեպքում կենակցում են իրենց զավակների, բարեկամների կամ եղբայրների հետ: Այնպիսիք էլ կան, ովքեր այդ գործի համար իրենց երեխաներին ու կանանց են տալիս, իսկ ոմանք էլ այս հակաբնական անառակության համար բացահայտ այլանդակում են իրենց մարմինները եւ այսօրինակ խորհրդավոր ծեսերը ձեռնում աստվածների մորը: Ի շարս այլոց, ձեր պաշտած աստվածների կողքին պատկերվում է օձ՝ իբրեւ մեծ ու առեղծվածային խորհրդանիշ: Եւ հենց այսպիսի անպատկառություններն էլ, որոնք դուք անթաքույց գործում եք ու պատվում, մեզ եք վերագրում՝ իբրեւ թե մենք ենք այդպիսի գործեր կատարում, երբ աստվածային լույսը մայր է մտնում ու անհետանում: Սակայն այդպիսի զրպարտությունները չեն վնասում մեզ՝ նման հանցանքների մեջ բացարձակ անմեղներիս, ավելի շուտ վնասում են նրանց, ովքեր դրանք գործում են եւ մեզ ամբաստանում դրանց մեջ:

ԻԷ. Մենք չար ոգիների պարագլխին օձ, սատանա եւ սագայել ենք անվանում. դուք դա կարող եք պարզել նաեւ մեր գրքերը քննելով: Նա իր ողջ զինվորությամբ եւ նրանց հետեւող մարդկանց հետ կրակը կգցվի, որ հավիտյանս տանջվի, ինչպես այդ մասին կանխասել էր Քրիստոսը: Իսկ որ Աստված հապաղում է դա ի կատար ածել, ապա դա արվում է հանուն մարդկային ցեղի, քանզի Նա կանխատեսում է, որ ոմանք կփրկվեն ապաշխարությամբ, նույնիսկ նրանք, ովքեր, կարող է պատահել, դեռ չեն էլ ծնվել: Նա ի սկզբանե խոհեմ, ճիշտն ընտրելու եւ բարի գործելու ունակ ստեղծեց մարդկային ցեղը, որպեսզի ոչ մեկն Աստծուց ներում ստանալու կարիք չունենա, քանզի բոլորն են խելամիտ ու հայեցողու-

թյանն ընդունակ էին ստեղծվել: Իսկ եթե մեկը չի հավատում, որ Աստված այդ մասին հոգ է տանում, այդպիսին, թեեւ ոչ ուղղակի, մերժում է նրա գոյությունը կամ ստիպված պիտի ասի, որ թեեւ գոյություն ունի, բայց հաճույք է ստանում շարունակության, եւ գոյություն ունի չարը, եւ որ ոչ մի առաքինություն, ոչ մի արատ գոյություն չունեն, այլ միայն մարդկանց կարծիքով են դրանց մի մասը բարի, մյուսը՝ չար համարվում. հենց դա է մեծագույն սրբապղծությունը եւ անօրենությունը:

ԻԸ. Մեկ ուրիշ պատճառ էլ կա, թե ինչու ենք մենք հրաժարվում որեւիցե տեղ երեխաներ ծածուկ թողնելուց. որպեսզի ընկեցիկներից եւ ոչ մեկը չմահանա, եթե անմիջապես չգտնվի մեկի կողմից, եւ որպեսզի մենք մարդասպան չդառնանք: Մենք կամ ամուսնանում ենք ոչ այլ բանի համար, քան երեխաներ դաստիարակելու նպատակով, կամ ամուսնությունից հրաժարվելով՝ մշտապես ապրում ենք ժուժկալ ու զսպված կյանքով: Իսկ որպեսզի ապացույցեմ ձեզ, որ մեզ համար ամոթալի կենակցությունը որեւիցե առնչություն չունի խորհրդավոր ծիսակատարություն հետ, պատմեմ, թե ինչպես մեզանից մեկը Ալեքսանդրիայի ոստիկանապետ Ֆելիքսին խնդրագիր ներկայացրեց՝ թույլ տալու բժշկին իրեն ամորձատել, քանզի տեղի բժիշկներն ասում էին, որ առանց ոստիկանապետի թույլտվության չեն կարող այդ բանն անել: Իսկ երբ Ֆելիքսը չցանկացավ ընթացք տալ այդ խնդրագրին, ապա երիտասարդը կույս մնաց եւ բավարարվեց իր իսկ եւ իր հետ համամիտների գիտակցությամբ: Աստ, կարծում եմ, տեղին է նաեւ հիշատակել վերջերս մահացած Անտինոսին, որին բոլորը երկյուղածությամբ¹⁴ սկսեցին պաշտել որպես Աստծու, թեպետ գիտեին, թե ով էր եւ որտեղից էր սերում:

ԻԸ. Իսկ որպեսզի որեւիցե մեկը շառարկի մեզ, ինչը խոչընդոտում է մեր կողմից Քրիստոսին մարդկանցից մեկը համարել, ով գործում էր այն, ինչը մենք հրաշք ենք կոչում՝ [պնդելով իբրեւ թե] դա մոգության միջոցով էր անում, որի պատճառով էլ Աստծու Որդի երեւաց, եւ հիմա ապացույցներ կբերեմ ոչ թե բանավոր հավաստիացումների վրա հիմնվելով, այլ հարկ եղած ձեւով համոզմունքի գալով նրանց խոսքերով, ովքեր կանխասել էին ապագան՝ նախքան դրա կատարվելը, քանզի մեր սեփական աչքերով ենք տեսնում, որ դեպքերը կատարվեցին եւ կատար-

¹⁴ Երկյուղածությամբ (δὴ φόβου): Այսպես ընթերցելը Մառանի համար գերադասելի է Եւսեբիոսի δὴ φόβου տարբերակից, ըստ որի պնդման՝ մարդիկ սկսեցին աստվածացնել Անտինոսին ոչ թե Ադրիանոս կայսեր վախից, այլ կարծեցյալ մեծ աստծու առաջ ունեցած երկյուղից:

վում են ըստ կանխասացությունների. այսպիսի ապացույցը, կարծում եմ, ձեզ էլ մեծագույն եւ ճշմարտագույն կթվա:

Լ. Հրեաների մեջ որոշ մարդիկ կային՝ Աստծու մարգարեներ, որոնց միջոցով մարգարեական Հոգին կանխասում էր գալիք իրադարձությունները՝ նախքան դրանց կատարվելը: Ժամանակ առ ժամանակ Հուդայի երկրում նրանց ազդարարած մարգարեությունները թագավորները հավաքում ու խնամքով պահպանում էին անաղարտության մեջ, երբ մարգարեները բարբառում էին եւ իրենց իսկ ձեռամբ էլ գրի առնում գրքերում՝ մայրենի եբրայեցերեն: Իսկ երբ Եգիպտոսի թագավոր Պտղոմեոսը գրադարան էր հիմնում՝ ջանալով հավաքել բոլոր մարդկանց ստեղծագործությունները, ապա լսելով այդ մարգարեությունների մասին՝ [մարդ] ուղարկեց հրեաների թագավոր Հերովդեսի¹⁵ մոտ՝ խնդրելով նրանից իրեն ուղարկել մարգարեական գրքերը: Հերովդես թագավորն ուղարկեց այդ գրքերը, ինչպես եւ վերն ասել ենք, եբրայեցերեն գրված: Բայց քանի որ եգիպտացիք չգիտեին, թե ինչ կա դրանց մեջ, Պտղոմեոսը նորից մարդ ուղարկեց եւ խնդրեց հունարեն թարգմանելու համար թարգմանիչներ տալ: Այդպես էլ եղավ: Այսպիսով՝ այդ գրքերը դարձան նաեւ եգիպտացիների սեփականությունը ցայսօր: Բացի այդ՝ սույն գրքերն ամենուր են, ուր որ հրեաներ են ապրում: Ի դեպ, հրեաները կարդում են այդ գրքերը, բայց չեն հասկանում դրանց մեջ ասվածը, իսկ մեզ թշնամի ու հակառակորդ են համարում եւ, ինչպես դուք, սպանում ու տանջում են մեզ առաջին իսկ հնարավորության դեպքում: Սրանում ինքներդ էլ կարող եք համոզվել: Այն էլ ասենք, որ վերջին հրեական պատերազմի ժամանակ հրեական ապստամբության առաջնորդ Բարքոքբեբան հրամայել էր միայն քրիստոնյաներին սոսկալի կտտանքների ենթարկել, եթե վերջիններս չուրանային Հիսուս Քրիստոսին եւ չհայհոյեին Նրա անունը: Այդ մարգարեական գրքերում մենք կանխասացություններ ենք գտնում Հիսուսի՝ մեր Քրիստոսի մասին, որ Նա [աշխարհ] կգա, կծնվի Կույսից

¹⁵ Սա ակնհայտ ժամանակավերացություն է, քանզի Պտղոմեոս Փիլադելփոսն ապրել է Հերովդեսից շատ առաջ: Գիտնականներից ոմանք (Ֆաբրիցիուսն ու Ուսսերիուսը) դա վերագրում են Հուստինոսի անփութությանը, որն իրար էր խառնել Փիլիդելփոսի եւ Կլեոպատրայի օրոք գործող գրադարանների պատմությունները: Մյուս գիտնականները (Մառանն ու Գրաբեն) դա գրչի սխալին են վերագրում եւ առաջարկում են 'Ηρῳδης-ի փոխարեն կարդալ ἱερῆς, քանզի ըստ Փիլոնի («Մովսեսի կյանքը», Բ., 6)՝ քահանայապետը, որի մոտ որ Պտղոմեոսը մարդ էր ուղարկել, հոգեւոր իշխանության հետ միասին նաեւ թագավորական իշխանություն էր վայելում:

եւ հասակ կառնի, կբուժի ամենայն հիվանդությունն ու ամենայն տկարություն, մեռելներին հարություն կտա, նախանձի թիրախ կդառնա, չի ճանաչվի, կխաչվի, կմահանա եւ հարություն կառնի, երկինք կհամբարձվի, կլինի եւ կանվանվի Աստծու Որդի, նաեւ ոմանց Նա կուղարկի քարոզելու հանուր մարդկությանը, եւ հեթանոսներից շատերը կհավատան Նրան: Այդ բանը կանխասվել էր նախքան Նրա հայտնությունը նախ՝ հինգհազարմյակ առաջ¹⁶, ապա՝ երեքհազարամյակ, ապա եւ՝ երկու, ապա եւ՝ մեկ, ապա եւ՝ 800 տարի առաջ, քանզի ամեն սերնդի միշտ ուղեկցել են մերթայա, մերթ այն մարգարեները:

Ա. Մովսեսը՝ մարգարեներից առաջինը, բառ առ բառ ասել է. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից. մինչեւ որ գա Նա, Ում պատկանում են հանդերձյալները¹⁷: Նրան են սպասում ժողովուրդները: Իր ավանակին կկապի որթից, իսկ որթի ոստից՝ էշի քուռակին: Իր պատմուճանը կլվա գինով եւ իր հագուստը՝ խաղողի արյամբ»¹⁸: Այժմ ձեզ մնում է մանրագնին քննել եւ իմանալ, թե մինչեւ որ ժամանակները հրեաները սեփական իշխան ու թագավոր ունեին: Մինչեւ Հիսուս Քրիստոսի՝ մեր ուսուցչի եւ չհասկացված մարգարեությունների մեկնիչի հայտնությունը, ինչպես Մովսեսի միջոցով կանխասվել էր աստվածային Սուրբ մարգարեացող Հոգու կողմից. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչեւ որ չգա Նա, Ում պատկանում են հանդերձյալները: Հուդան հրեաների նախահայրն է, ումից էլ նրանք ստացել են իրենց անվանումը: Քրիստոսի հայտնությունից հետո դուք իշխեցիք հրեաների վրա եւ տիրեցիք նրանց ողջ երկրին: Իսկ «Նրան են սպասում ժողովուրդները» խոսքով ցույց է տրվում, որ բոլոր ժողովուրդների մարդիկ սպասելու են Նրա երկրորդ գալստյանը, ինչպես ինքներդ էլ կարող եք տեսնել եւ հավաստիանալ բուն իրողությամբ: Արդ, աշխարհի բոլոր

¹⁶ Հստ գիտնականների կարծիքի՝ Հուստինոսի հայտնած առաջին մարգարեն, որ մարգարեացել էր Քրիստոսից 5000 տարի առաջ, Ադամն էր:

¹⁷ ὁ ἀπόκειται: Որ Հուստինոսը հենց այսպես էր հասկանում ընթերցվածը եւ ոչ այլ կերպ, երեսում է այն բանից, որ քիչ անց նա ἀπόκειται բառից հետո գետեղել է τὸ βασιλείον (թագավորություն) բառը, իսկ «Տրիփոնի հետ զրույցում» (գլ. ձի.) ուղղակի պնդում է, որ 70 թարգմանիչները հենց այդպես են թարգմանել, իսկ հրեաներն այլ ընթերցված են հորինել՝ τὸ ἀποκείμενα αὐτῶ: Այն, որ հին քրիստոնյաներն առավելապես օգտագործել են Հուստինոսի ընթերցվածքը, վկայում է Հուլիանոսի (տե՛ս ԿՅՈՒՐԵՂ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻ, Յուլ. գր. Ը.) հանդիմանությունը քրիստոնյաներին, իբրեւ թե վերջիններս, այս ընթերցվածքը (ὁ ἀπόκειται) ներմուծելով, աղավաղել են Գիրքը (Մառան):

¹⁸ Ծննդ. ԽԹ. 10:

ազգերն էլ սպասում են Նրան, Ով խաչը հանվեց Հրեաստանում, եւ Ում մահից հետո անմիջապես հրեական երկիրը ձեզ հանձնվեց՝ իբրեւ պատերազմի ավար: «Իր ավանակին կկապի որթին, իսկ որթի ոստից՝ էշի քուռակին: Իր պատմուճանը կլվա գինով եւ Իր հագուստը՝ խաղողի արյամբ» խոսքերը խորհրդանշներ են՝ Քրիստոսի հետ կատարված իրադարձությունները ցույց տվող, որոնք իրականում պիտի կատարվեին Նրա հետ: Այնժամ ավանակի քուռակը գյուղի մուտքի մոտ էր կանգնած՝ որթի ոստից կապված, երբ Քրիստոս պատվիրեց Իր աշակերտներին բերել Իր մոտ: Իսկ երբ բերեցին, հեծնեց եւ այդպես Երուսաղեմ մտավ, ուր որ գտնվում էր հրեաների մայր տաճարը, որը դուք հետագայում ավերեցիք: Այնուհետեւ նա խաչվեց, որպեսզի կատարվեն նաեւ մարգարեության մյուս խոսքերը: Քանզի «Իր հագուստը կլվա խաղողի արյամբ» խոսքով մարգարեանում էին այն տառապանքների մասին, որոնք Նա պիտի կրեր՝ Իր արյունով մաքրագործելով Իրեն հավատացողներին, քանզի այն, ինչ Աստծու Հոգին մարգարեի շուրթերով հագուստ է անվանել, Նրան հավատացող մարդիկ են, որոնցում ապրում է Աստծու սերմը՝ Խոսքը: Իսկ «խաղողի արյուն» արտահայտությունն ակնարկում է, որ Նա, Ով հայտնվելու է, թեեւ արյուն կունենա, բայց ոչ մարդկային ցեղից, այլ Աստծու զորությունից: Իսկ ամենայնի Հոր եւ Տեր Աստծու առաջին Զորությունն ու Որդին Բանն է, Որը մարդկային մարմին առավ եւ մարդացավ, իսկ թե ինչպես, այդ մասին կխոսենք հետագայում: Ինչպես որ խաղողի արյունը մարդը չի ստեղծել, այլ Աստված, այդպես էլ ակնարկվում է, որ այս արյունն էլ մարդկային ցեղից չէ, այլ Աստծու զորությունից, ինչպես եւ այդ մասին ասել ենք վերը: Մեկ ուրիշ մարգարե՝ Շապին, նույն բանի մասին մարգարեանալով, այսպես է ասում. «Ծագելու է Հակոբի աստղը, եւ Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից, եւ այն օրը հեթանոսները իրենց հույսը դնելու են Հեսսեի արմատի վրա»¹⁹: Պայծառ աստղը, որը ծագեց, եւ ծաղիկը, որը բուսնեց Հեսսեի արմատից, Քրիստոսն են: Քանզի Նա Աստծու զորությամբ ծնվեց Կույսից, որ սերում էր Հակոբի ցեղից՝ Հուդայի հորից, որը, ինչպես եւ վերն արդեն նշել ենք, հրեաների նախահայրն էր, իսկ Հեսսեն, ըստ մարգարեական խոսքի, Նրա նախապապն էր եւ Հակոբի ու Հուդայի զավակը՝ ըստ սերնդափոխության:

¹⁹ Աստ Հուստինոսը, այս խոսքերը հիշողությամբ վերարտադրելով, երկու մարգարեություններից՝ Բաաղամի (Թվեր ԻԳ. 17) եւ Շապու, կազմում է մեկը:

ԼՔ. Այն էլ լսեք, թե ինչպես Եսային հստակ խոսքերով մարգարեացավ, թե Քրիստոս Կույսից է ծնվելու: Իսկ ասում է այսպես. «Ահա Կույսը պիտի հղիանա եւ որդի ծնի, եւ Նրա անունը պիտի լինի Աստված մեզ հետ է»²⁰: Այն, ինչ մարդկանց հասկացողության համար անհավատալի ու անհնարին է, հենց այդ էլ կանխասաց Աստված մարգարեական Հոգով, որպեսզի երբ այն կատարվի, մարդիկ անհավատության չմատնվեն, այլ հավատան, որ դա ըստ մարգարեության է: Իսկ որպեսզի ոմանք, չհասկանալով վերոբերյալ մարգարեությունը, չսկսեն մեզ հանդիմանել, ինչում որ մենք ենք հանդիմանում բանաստեղծներին, երբ պատմում են, թե ինչպես էր Զեւսը մարմնական հաճույքների համար այցելում կանանց, եւ կաշխատեմ բացատրել այդ արտահայտությունները: «Ահա Կույսը պիտի հղիանա» խոսքը նշանակում է, որ Կույսն առանց զուգավորման կհղիանա: Քանզի եթե մեկի հետ զուգավորված լիներ, կույս չէր լինի. արդ, Աստծու Զորությունը, հանգչելով Կույսի վրա, հովանի եղավ նրան, եւ արդյունքում նա, կույս լինելով, հղիացավ: Իսկ Կույսի մոտ ուղարկված Աստծու հրեշտակն օրհնեց նրան այս խոսքերով. «Եւ ահա դու կհղիանաս Սուրբ Հոգուց եւ կծնես մի որդի, եւ Նա Բարձրալի Որդի կկոչվի: Եւ Նրա անունը Հիսուս պիտի դնես, քանզի Նա պիտի փրկի մարդկանց իրենց մեղքերից»²¹: Այսպես պատմում են նրանք, ովքեր նկարագրեցին այն ամենը, ինչ վերաբերում է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին, իսկ մենք հավատում ենք նրանց, որովհետեւ նաեւ վերոհիշյալ Եսայու միջոցով մարգարեական Հոգին կանխասաց, որ Քրիստոս ծնվելու է, ինչպես եւ ես վերը շարադրել եմ: Հոգու եւ Աստծու զորության անվան ներքո պիտի հասկանանք միմիայն Բանը, Որն Աստծու անդրանիկն է, ինչպես այդ մասին խոսել էր վերը հիշատակված Մովսես մարգարեն²², իսկ այս Հոգին, որ հանգավ կույսի վրա եւ հովանի եղավ նրան, ոչ թե զուգավորությանմբ, այլ զորությանմբ նրա արգանդում մանուկ կրելու պատճառ դարձավ: Իսկ Հիսուս անունը, եթե եբրայեցիներին թարգմանենք հունարենի, նշանակում է Σωτηρ (Փրկիչ), որի համար հրեշտակն ասաց Կույսին. «Եւ Նրա անունը Հիսուս պիտի դնես,

²⁰ Եսայի է. 14:

²¹ Ղուկ. Ա. 30, Մատթ. Ա. 21:

²² Աստ Հուստինոսը նկատի ունի մարգարեներից առաջինն անվանած (զլ. ԼՔ.) Մովսեսի մարգարեությունը Քրիստոս-Թագավորի գալստյան մասին (Մենդ. ԽԹ. 10). սույն մարգարեությամբ Մովսեսը ցույց տվեց, որ Բանն անդրանիկ Որդին է, քանզի թագավորությունը սովորաբար փոխանցվում է առաջնեկին (Օտտո):

քանզի Նա պիտի փրկի մարդկանց իրենց մեղքերից»։ Իսկ այն, որ մարգարեացողները ներշնչվում են ոչ այլ կերպ, քան Աստծու Խոսքով, կարծում եմ՝ սրա հետ դուք եւս համամիտ կլինեք։

ԼԳ. Լսեցե՛ք, թե ինչպես մեկ ուրիշ մարգարե՝ Միքիան, կանխասաց այն վայրի մասին, որտեղ Նա պիտի ծնվեր։ Նա այսպես ասաց. «Եւ դու, Բեթղեհեմ, Հուդայի երկիր, Հուդայի քաղաքների մեջ փոքրագույնը չես. քեզնից մի իշխան պիտի ելնի ինձ համար, որ պիտի հովվի իմ ժողովրդին»²³։ Հուդայի երկրում մի գյուղ²⁴ կա՝ Երուսաղեմից 35 ասպարեզ հեռու, որտեղ էլ ծնվեց Հիսուս Քրիստոսը, ինչը կարող եք նաեւ իմանալ Հրեաստանի ձեր առաջին կուսակալի՝ Կվիրինիոսի օրոք կազմված մարդահամարի ցանկերից։

ԼԴ. Իսկ որ Քրիստոս իր ծննդից հետո՝ մինչեւ տղամարդու հասակ առնելը²⁵, անճանաչելի պիտի մնար մարդկանց համար, ինչը եւ պատահեց, այդ մասին լսեցե՛ք հետեւյալ մարգարեությունները։ Զորօրինակ՝ «Մեզ համար մի մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի»²⁶։ Սույն բառերը նախացուցում էին խաչի զորությունը, որին խաչալը պրկեց իր ուսերը, ինչը պարզ ցույց կտրվի իմ հետագա խոսքում։ Եւ դարձյալ այդ նույն Եսայի մարգարեն մարգարեական Հոգու ներշնչանքով ասաց. «Ամեն օր իմ ձեռքերը երկարեցրի դեպի անհնազանդ ու թշնամի ժողովուրդը, որ ընթանում էր ոչ թե բարի ճանապարհով, այլ իր մեղքերի հետեւից. ահա նրանք էլ եկել եւ իրավունք ու արդարություն են որոնում. փափագում են մերձենալ Աստծուն»²⁷։ Դարձյալ այլ խոսքերով մի ուրիշ մարգարեի միջոցով ասվում է. «Ծակեցին ձեռքերն ու ոտքերն իմ... Հագուստներս բաժանեցին իրար մեջ եւ պատմուճանիս վրա վիճակ գցեցին»²⁸։ Այս բանն ասած Դավթի՝ Թագավորի եւ մարգարեի հետ որեւիցե նման բան չի պատահել, բայց հրեաները, որոնք, հակառակվելով Նրան, ասում էին, թե Քրիստոսը չէ, ձեռքե-

²³ Միք. Ե. 2, հմտ. Մատթ. Բ. 6։

²⁴ Տես ՀՈՒՍՏԻՆՈՍ ՎԿԱ, Երկխոսություն Տրիփոնի հետ, գլ. ՀԸ.։

²⁵ Աստ խոսքը Քրիստոսի՝ մինչեւ Նրա մկրտությունն անհայտ կյանքի մասին չէ, այլ հրեաների ատելության մասին առ Նա, որոնք Նրան իրենց թագավոր ու Աստված չճանաչեցին. ըստ այդմ՝ «մինչ տղամարդու հասակ առնելը» արտահայտությունը չի բացառում Քրիստոսի կյանքի վերջին շրջանը, հընթացս որի Նա հալածվեց ու մահվան մատնվեց (Մառան)։

²⁶ Եսայի Թ. 6։

²⁷ Եսայի ԿԵ., ԾԸ. 2։

²⁸ Սաղմ. ԻԱ. 18, 19։

րը տարածած, խաչել էին Նրան: Ընդ որում, ինչպես ասաց մարգարեն. «Հայհոյելով Նրան՝ նստեցրին ատյանում եւ ասում էին. «Դատիր մեզ»²⁹: Իսկ «ծակեցին ձեռքերն իմ ու ոտքերն իմ»-ը մատնանշում էին մեխերը, որոնցով խաչին գամեցին Նրա ձեռքերն ու ոտքերը: Իսկ խաչելու թյունից հետո նրանք, ովքեր խաչը հանեցին նրան, վիճակ գցեցին եւ իրար մեջ բաժանեցին Նրա հագուստները: Իսկ որ իրականում հենց այդպես էլ եղել է, կարող եք իմանալ Պոնտացի Պիղատոսի օրոք կազմված վավերագրերից³⁰: Մեկ ուրիշ մարգարեի՝ Սոփոնիայի³¹ մարգարեական խոսքերից էլ մեջբերում կանեմ, որոնցում պարզիպարզո մարգարեանում է, որ Քրիստոս, հեծած ավանակի քուռակին, Երուսաղեմ կմտնի. «Ուրախացիր ցնծությամբ, դճուտորդ Սիոնի, կանչիր ցնծությամբ, դճուտորդ Երուսաղեմի, ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը՝ հեծած էշի, ավանակի քուռակի վրա»³²:

ԼՆ. Երբ լսում եք մարգարեների խոսքերը՝ ասես ինչ-որ մեկի կողմից արտասանված, ապա մի՛ կարծեք, թե դրանք հենց այդ խանդավառված ալրերի կողմից են բարբառվում, այլ նրանց ներշնչող Աստծու խոսքի կողմից: Խոսքը երբեմն մարգարեաբար բարբառում է այն մասին, ինչ լինելու է, երբեմն ասես ամենայնի Տիրոջ եւ Հայր Աստծու անունից է բարբառում, երբեմն էլ Քրիստոսի անունից, իսկ երբեմն էլ՝ [տարբեր] մարդկանց անունից, որոնք պատասխանում են Տիրոջը կամ Նրա Հորը. այս նույն բանը կարելի է տեսնել նաեւ ձեր գրողների գործերում, երբ մեկն է հեղինակը՝ ամեն ինչ ասողը, սակայն [տարբեր] խոսող անձինք է ներմուծում [երկի մեջ]: Այս ամենը չհասկանալով, չնայած որ մարգարեական գրքեր ունեն, հրեաները չճանաչեցին Քրիստոսին, երբ Նա եկավ: Ասենք, որ մեզ էլ են ասում, երբ ասում ենք՝ Նա եկավ, եւ ապացուցում ենք, որ խաչեցին Նրան, ինչպես որ կանխասված էր:

ԼԶ. Եւ որպեսզի այս բանն էլ պարզ լինի ձեզ համար, ահա թե ինչ խոսքեր է ասում վերոհիշյալ Եսայի մարգարեն Հոր անունից. «Եզն իր տիրոջն է ճանաչում, եւ էշը՝ իր տիրոջ մսուրը, բայց Իսրայելն ինձ չճա-

²⁹ Աստ, հավանաբար, ակնարկվում էր Եսայու վերոբերյալ խոսքը. «...այժմ ինձանից դատ են պահանջում», տե՛ս Մատթ. Իէ. 26–30:

³⁰ Տե՛ս ստորեւ, գլ. ԽԸ.: Հմմտ. ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍ, Զատագովություն, ԻԱ.:

³¹ Հուստինոսի կամ գրչի սխալն է, քանզի սույն խոսքերը Զաքարիա մարգարեին են պատկանում, որը կրկնվում է նաեւ «Երկխոսություն Տրիփոնի հետ» աշխատությունում, գլ. ԾԳ.:

^{32*} Զաք. Թ. 9:

նաչեց, Իմ ժողովուրդն Ինձ չհասկացավ: Վայ մեղավոր ազգին, մեղքերով լի ժողովուրդ, չարագործ սերունդ, անօրեն ծնունդներ, թողեցիք Տիրոջը»³³: Նույն մարգարեն նաեւ Հոր անունից մեկ այլ տեղ ասում է. «Երկինքն Իմ աթոռն է, երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը: Ինչ տուն պիտի կառուցեք Ինձ համար,— ասում է Տերը»³⁴: Դարձյալ մեկ այլ տեղ ասում է. «Իմ ինչին պետք են ձեր բազմաթիվ զոհերը, ես կշտացեմ եմ ձեր խոյերի ողջակեզներից. ձեր գառների ճարպը, ցուլերի ու նոխազների արյունը չէ, որ ուզում եմ, եւ ոչ էլ այն, որ կանգնեք Իմ առաջ: Ո՞վ խնդրեց դա ձեզանից: Եթե ազնիվ ալյուրի հաց մատուցեք Ինձ՝ զուր է լինելու. ձեր խնկերն էլ պիղծ են Ինձ համար. ձեր ամսամուտները, շաբաթները եւ տոնական մեծ օրը եւս անընդունելի են Ինձ. ձեր պահեցողությունն ու հանգիստը, ձեր ամսամուտներն ու տոները ատեց Իմ Հոգին: Երբ աղոթքի համար դեպի վեր բարձրացնեք ձեր ձեռքերը, երես եմ դարձնելու ձեզանից, եւ եթե բազմապատկեք ձեր աղոթքները, չեմ լսելու ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը լի են արյունով»³⁵: «Փանդիր անիրավության հանգույցը, խորտակիր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը, ներիր եւ արձակիր նեղյալներին եւ պատուիր բոլոր անիրավ մուրհակները: Քաղցածներին բաժանիր քո հացը եւ անօթեւան աղքատներին տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան»³⁶: Այժմ կարող եք կարծիք կազմել նաեւ այն մասին, թե ինչ ուսմունք են Աստծու անունից առաջարկում մարգարեները:

Ա. Մարգարեական Հոգին Քրիստոսի անունից խոսելիս ազդարարում է. «Ամեն օր Իմ ձեռքը երկարեցրի դեպի անհնազանդ ու թշնամի ժողովուրդը, որ ընթանում էր ոչ թե բարի ճանապարհով, այլ իր մեղքերի հետեւից»³⁷: Դարձյալ. «Թիկունքս հարվածների տվեցի, ծնոտներս՝ ապտակի, եւ երեսս շուռ շտվի նախատինքից ու թքից: Տեր Աստված եղավ Ինձ օգնական, դրա համար էլ ամոթ չզգացի, այլ Իմ երեսը դարձրի ինչպես կարծր քար: Գիտեմ, որ չեմ ամաչելու, քանզի մոտ է Նա, Ով արդարացնելու է Ինձ»³⁸: Դարձյալ ասում է. «Ծակեցին ձեռքերն ու ոտքերն իմ... Հագուստներս բաժանեցին իրար մեջ, եւ պատմուճանիս վրա վիճակ գցե-

³³ Եսայի Ա. 3–4:

³⁴ Եսայի ԿԶ. 1:

³⁵ Եսայի Ա. 11–15:

³⁶ Եսայի ԾԸ. 6–7:

³⁷ Եսայի ԿԵ. 2:

³⁸ Եսայի Ծ. 6:

ցին», «Ես ննջեցի ու քուն մտա. զարթնեցի, եւ Տերն իմ ապավենն է»³⁹: Եւ կրկին ասում է. «Բոլոր Ինձ տեսնողներն արհամարհում էին Ինձ, խոսում շրթունքներով եւ շարժում գլուխներն իրենց՝ ասելով. «Հույսը դրել է Տիրոջ վրա, դե թող փրկի ինքն իրեն»⁴⁰: Այս ամենը Քրիստոսի դեմ արեցին հրեաները, ինչպես ինքներդ էլ կարող եք իմանալ: Բանն այն է, որ երբ Նա խաչվեց, նրանք, շարժելով շուրթերն ու տարուբերելով գլուխները, ասում էին. «Ուրիշներին փրկեց, ինքն իրեն չի կարողանում փրկել»⁴¹:

ԼՂ. Իսկ երբ մարգարեական Հոգին խոսում է իբրեւ ապագան կանխասող, ապա այսպես է բարբառում. «Օրենքները Սիոնից են դուրս գալու, եւ Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից: Եւ Նա դատաստան պիտի տեսնի հեթանոսների մեջ ու պիտի հանդիմանի բազում ժողովուրդների: Նրանք իրենց սուսերներից խոփեւ պիտի ձուլեն ու իրենց սվիններից՝ մանգաղներ, ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել»⁴²: Որ հենց այսպես էլ եղել է, ինքներդ կարող եք համոզվել: Երուսաղեմից տասներկու այր աշխարհ մտավ, ընդ որում՝ անուս, խոսել չիմացող մարդիկ, բայց Աստծու զորությամբ հանուր մարդկային ցեղին ազդարարեցին, որ Քրիստոսի կողմից են առաքված՝ բոլորին Աստծու խոսքն ուսուցանելու առաքելությամբ: Եւ մենք, որ առաջ սպանում էինք մեկս մյուսին, ոչ միայն թշնամություն չենք անում մեր ախոյանների հետ, այլեւ, որպեսզի չստենք ու չխաբենք հարցաքննողներին, ուրախությամբ դավանում ենք Քրիստոսին ու մահ ընդունում: Անշուշտ, այս դեպքում կարելի կլիներ օգտվել բառերից. «...երգվում էր լեզուն, իսկ միտքը չէր երգվում»⁴³: Բայց զավեշտական կլիներ, եթե մենք՝ հավերժություն փափագողներս, չտանեինք այս ամենը՝ ցանկալին ստանալու համար Նրանից, Ով դա ի զորու է մեզ տալու, մինչդեռ ձեզ հավատարմության երդում տվող եւ ձեզ մոտ ծառայության անցնող ռազմիկները պահում են այդ խոսքն ու գերադասում դա եւ սեփական կյանքից, եւ ծնողներից, եւ հայրենիքից, եւ բոլոր տնեցիներից՝ չնայած որ դուք նրանց չեք կարող հավիտենական պարգեւների արժանացնել:

ԼԹ. Լսեցե՛ք, թե ինչ կանխասացություն կա նաեւ նրանց մասին, ովքեր քարոզում էին Նրա վարդապետությունը եւ ավետում Նրա հայտնությունը:

³⁹ Սաղմ. ԻԱ. 18–19, Գ. 6:

⁴⁰ Սաղմ. ԻԱ. 8, 9:

⁴¹ Մատթ. ԻԷ. 42:

⁴² Եսայի ԺԱ. 3, 4:

⁴³ ԵԻԲԻՊԻԳԵՍ, Հիպոլիտոս, 607, ՅԻՑԵՐՈՆ, Պարտականությունների մասին, Գ., 29:

նը: Վերոհիշյալ մարգարեն ու թագավորը մարգարեական Հոգով այսպես ասաց. «Օրը օրվան միտք է հաղորդում, եւ գիշերը գիշերվան գիտություն է ցույց տալիս: Չկան բառեր, ոչ էլ խոսքեր, դրանց հնչյունները լսելի չեն: Ողջ երկիրն է բռնել ձայնը նրանց, եւ մինչեւ աշխարհի ծայրն են հասել խոսքերը նրանց: Արեւի մեջ նա վրանն իր խփեց, իսկ ինքն ասես փեսա լինի, որ ելնում է իր առագաստից. ցնծում է նա որպես հսկա՝ ընթանալով իր ճանապարհով»⁴⁴: Սրանից բացի՝ հոգեշահ ու վայելուչ եմ համարում հիշատակել նաեւ այդ նույն Դավթի այլ մարգարեությունների մասին եւս: Սույն մարգարեությունից դուք կարող եք իմանալ, թե ինչ կյանքով է ապրել պատվիրում մարդկանց մարգարեական Հոգին, ինչպես է հայտնում, որ Քրիստոսի դեմ կընդվզեն Հերովդեսը՝ հրեաների թագավորը, ու իրենք՝ հրեաները, Պոնտացի Պիղատոսը՝ հրեաների կուսակալը՝ իր զորքով հանդերձ. որ Նրան կհավատան մարդիկ՝ բոլոր ժողովուրդներից. որ Աստված Նրան Իր Որդին է կոչում՝ խոստանալով հնազանդեցնել Նրա առաջ բոլոր թշնամիներին, ինչպես նաեւ այն, որ դեւերը, ինչքան որ կարող են, ջանալու են խուսափել ամենայնի Հոր եւ Տեր Աստծու իշխանությունից, նաեւ Քրիստոսի իշխանությունից, եւ ինչպես է Աստված բոլորին հորդորում ապաշխարել նախքան դատաստանի օրվա գալուստը: Ասված է այսպես. «Երանելի է այրը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում, մեղավորների ճանապարհին ոտք չի դնում եւ ժանտերի աթոռին չի նստում, այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է, եւ գիշեր-ցերեկ խորհում է Նրա օրենքի մասին: Նա նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամանակին կտա, իսկ նրա տերերը չի թափվի, ու ամեն բան, ինչ էլ որ անի, կհաջողվի նրան: Այսպես չեն ամբարիշտները, այսպես չեն, այլ նման են հողմափոշու, որ հոսում է երկրի վրա: Ուստի ամբարիշտները չպիտի հառնեն դատաստանին, ոչ էլ մեղավորները՝ արդարների հավաքի մեջ, քանզի Տերը գիտե արդարների ճանապարհները, իսկ ամբարիշտների ճանապարհները կորստյան են տանում»⁴⁵:

«Ինչո՞ւ խռովություն արեցին, եւ ժողովուրդները դատարկ»⁴⁶ բաներ խորհեցին: Հավաքվեցին երկրի թագավորները, եւ միավորվեցին իշխաններն ընդդեմ Տիրոջ եւ նրա Օծյալի՝ ասելով. «Քանդենք նրանց կապանք-

⁴⁴ Սաղմ. ԺԸ. 3—6:

⁴⁵ Սաղմ. Ա.:

⁴⁶ Օտտոն, ալեքսանդրյան թարգմանության ութ ձեռագրերի հիման վրա, կողմնակից է καὶνὰ (նոր) ընթերցվածքին:

ները եւ թոթափենք նրանց լուծը մեզանից»։ Երկնքում բնակվողը կծիծաղի նրանց վրա, եւ Տերը կարհամարհի նրանց։ Այնժամ կիսոսի նրանց հետ բարկությամբ եւ իր սրտամտությամբ կսարսափեցնի նրանց։ Ես Թագավոր կարգվեցի Նրանից իր սուրբ լեռան՝ Սիոնի վրա, որ հռչակեմ Տիրոջ հրամանները։ Տերն ասաց ինձ. «Դու իմ Որդին ես, ես այսօր ծնեցի Քեզ։ Խնդրիր Ինձնից եւ հեթանոսներին կտամ քեզ որպես ժառանգություն ու իշխանություն երկրի բոլոր ծագերում։ Նրանց կհովվես երկաթյա գավազանով ու բրուտի անոթի պես կփշրես նրանց»։ Արդ, թագավորներ, ո՛րչ դարձրեք սրան եւ խրատվեցե՛ք ամենքդ, որ դատում եք երկիրը։ Ծառայեցե՛ք Տիրոջը երկյուղով եւ ցնծացե՛ք Նրա առջեւ դողալով։ Ընդունեցե՛ք Նրա խրատը, որ Տերը չբարկանա, որ դուք չկորչեք արդարության ճանապարհներից, երբ Նրա զայրույթը բորբոքված լինի։ Երանի՛ր բոլոր նրանց, ովքեր հույսը դրել են Տիրոջ վրա»⁴⁷։

Խ. Դարձյալ մեկ այլ մարգարեությունում մարգարեական Հոգին նույն Դավթի միջոցով հայտնում է, որ Քրիստոս իր խաչելությունից հետո թագավորելու է. «Օրհնեցե՛ք Տիրոջն ու օրհնեցե՛ք անունը Նրա, օրըստօրե ավետեցե՛ք փրկությունը Նրա։ Մեծ է Տերն ու անչափ օրհնյալ, ահարկու է Նա բոլոր կուռքերից առավել։ Հեթանոսների բոլոր կուռքերը դեւեր են, իսկ Տերն արարիչն է երկնքի։ Խոստովանություն եւ վայելչություն կա Նրա առջեւ, սրբություն եւ մեծափառություն՝ Նրա սրբարանում։ Մատուցեցե՛ք Տիրոջը, ազգատոհմեր, մատուցեցե՛ք Տիրոջը փառք ու պատիվ։ Մատուցեցե՛ք Տիրոջը փառքն իր անվան, ընծաներ՝ վերցրեք ու մտե՛ք սրահները Նրա։ Երկրպագեցե՛ք Տիրոջն իր սրբարանի գավիթներում, եւ ամբողջ երկիրը խռովվելու է Նրա ներկայությունից։ Թող ուրախություն հաստատվի ժողովուրդների մեջ, Տերը թագավորեց փայտի վրայից»⁴⁸։

ԽԱ. Սակայն երբ մարգարեական Հոգին ապագայի մասին խոսում է որպես արդեն կատարվածի, ինչը կարելի է նկատել արդեն իսկ վերոբերյալ խոսքերում, կբացատրեմ նաեւ այդ հանգամանքը, որպեսզի ընթերցողներին թյուրիմացության տեղիք չտա։ Քանի որ ապագան լիովին հայտնի է Նրան, ապա Նա նախապես խոսում է դրա մասին իբրեւ արդեն կատարվածի։ Իսկ որ իրականում հենց այդպես էլ պետք է ընդունել,

⁴⁷ Սաղմ. Բ.։

⁴⁸ Սաղմ. ՂԵ. 1—10, Ա. Մնաց. ԺԶ. 23—31։ Երկխոսություն Տրիփոնի հետ երկում (գլ. 2Գ.) Հուստինոսը մեղադրում է հրեաներին վերջին բառերը վերացնելու մեջ, որոնք բացակայում են ներկայիս սուրբգրային բնագրում։

մտքով խորամո՞ղիս եղեք հետեւյալ իրողության մեջ: Դավիթը վերոբերյալ խոսքերն ասել է 1500⁴⁹ տարի առաջ՝ նախքան Քրիստոսի մարգանալն ու խաչվելը, եւ նախկիններից եւ ոչ մեկը առաջ, ասենք նաեւ հետո էլ Նրա խաչելութեամբ ժողովուրդներին ուրախություն չի պատճառել: Իսկ մեր Հիսուս Քրիստոսը, խաչվելով ու մահանալով, հարություն առավ եւ թագավորեց՝ երկինք համբարձվելով. եւ այն, ինչ Նա Իր առաքյալների միջոցով ավետեց բոլոր ժողովուրդներին, ուրախություն է Նրա խոստացած հավերժական կյանքն ակնկալողների համար:

ԽԲ. Բայց որպեսզի իմ՝ վերն ասածից ոչ ոք հետեւություն չանի, թե իբրեւ մենք ասում ենք, որ իրադարձությունները կատարվում են ըստ ճակատագրի անհրաժեշտության, քանի որ դրանք կանխասված են ըստ կանխագիտության, ապա այս հարցի լուծումն էլ կտամ: Մենք մարգարեներից սովորել ենք, որ յուրաքանչյուրին ըստ իր գործերի կհատուցվի կա՛մ պատիժ եւ տառապանք, կա՛մ պարգեւներ, եւ դա մենք որպես ճշմարտություն ենք հռչակում: Իսկ եթե այդպես չէ, ապա ամեն ինչ կատարվում է ըստ ճակատագրի, ուրեմն մենք բացարձակապես ազատություն չունենք: Եթե ճակատագիրը նախասահմանել է, որ մեկը բարի լինի, մյուսը՝ արատավոր, ապա մեկն արժանի չէր լինի դրվատանքի, իսկ մյուսը՝ պախարակման: Դարձյալ, եթե մարդկային ցեղն ունակ չլիներ կամքի ազատ արտահայտմամբ խուսափելու արատավորից եւ բարին ընտրելուց, ապա նա իր գործած եւ ոչ մի բանի համար մեղավոր չէր լինի: Իսկ այն, որ նա, կամքի ազատ արտահայտմամբ, մերթ արդար է վարվում, մերթ մեղանշում, դրանով իսկ ապացուցվում է մեր ասածը, քանզի տեսնում ենք, որ միեւնույն մարդը հակոտնյա բաներ է կատարում, իսկ եթե արատավոր կամ ազնիվ լինելը ճակատագիրը նախասահմանած լիներ, ապա այսօրինակ հակադրությունների ունակ չէր լինի եւ չէր կարողանա բազմիցս փոխվել: Այն էլ ասենք, որ ոմանք լավը, մյուսները վատը լինել չէին կարող: Արդ, այդժամ մենք կպնդեինք, որ ճակատագիրն է արատների պատճառը, այնինչ ինքն իր դեմ հակառակն է գործում: Կամ էլ հարկ կլիներ իբրեւ ճշմարտություն ընդունել վերոբերյալ այն դրույթը, որ ո՛չ առաքինություն կա, ո՛չ արատ, այլ բարին ու չարը միայն կարծիքներում են տարբեր, իսկ դա, ինչպես վկայում է

⁴⁹ Գրաբեն սույն թվի սխալը ոչ թե Հուստինոսին է վերագրում, այլ գրիչներին, ովքեր ՁԲ-ն (=1100) կարող էին դարձնել Ա:

ճշմարիտ միտքը, մեծագույն պղծությունն ու անօրենսությունն է: Մինչդեռ անխուսափելի ճակատագրի գոյությունն ընդունում ենք այն իմաստով, որ բարին ընտրողներին սպասում է արժանի պարգև, իսկ հակոտնյան ընտրողներին՝ համապատասխան պատիժներ: Բանն այն է, որ Աստված մարդուն ստեղծել է ոչ այնպիսին, ինչպիսին մյուս արարածներն են, գործիքնակ՝ ծառերն ու շորքոտանիները, որոնք ի վիճակի չեն ազատ գործելու: Այլապես եթե այդպիսին ստեղծված լինեք, եթե չկարողանար ազատ ընտրել բարին, պարգևների եւ դրվատանքի էլ արժանի չէր լինի, իսկ եթե վատը լինեք, չէր կարող ըստ արդարության պատժվել. այդ-ժամ այդպիսին կլինեք ոչ թե ինքն իր կամքով, այլ որովհետեւ չէր կարող ուրիշ լինել, քան որ է ի ծնե:

ԽԳ. Այս բանը մեզ մարգարեական Սուրբ Հոգին է սովորեցրել, Որը Մովսեսի շուրթերով վկայում է, որ Աստված նորաստեղծ մարդուն այսպես ասաց. «Քո առջեւ եմ դնում բարին ու չարը, ընտրիր բարին»⁵⁰: Իսկ մեկ ուրիշ մարգարեի՝ Եսայու միջոցով ասես ամենայնի Հոր եւ Տեր Աստծու անունից այս մասին ասված է. «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք, Իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափեցե՛ք ձեզանից, վերջ տվե՛ք ձեր չարագործություններին: Սովորեցե՛ք բարիք գործել, արդարություն փնտրեցե՛ք, փրկեցե՛ք զրկվածին, արդարադատ եղե՛ք որբի հանդեպ. իրավունք տվե՛ք այրուն: Եկե՛ք խոսենք իրար հետ,— ասում է Տերը,— եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա Ես ձյան պես ճերմակ դարձնեմ, եթե որդան կարմիր լինեն, կսպիտակեցնեմ ինչպես բուրդ: Եւ եթե հոժար լինեք եւ լսեք ինձ, դուք կճաշակեք երկրի բարիքները. իսկ եթե չկամենաք Ինձ լսել, սո՛ւրբ պիտի ուտի ձեզ, քանզի Տիրոջ շուրթերն ասացին այս»⁵¹: «Սուրբ պիտի ուտի ձեզ» խոսքը չի նշանակում, որ անհնազանդները սրերով կընկնեն, այլ Աստծու սուրը հոր է, որը հրո ճարակ է դարձնում չարիք գործել որոշողներին: Ուստի եւ ասում է. «Սո՛ւրբ պիտի ուտի ձեզ, քանզի Տիրոջ շուրթերն ասացին այս»: Եթե մարգարեն սուրը նկատի ունենար, որը թրատում եւ իսկույնեւեթ պատյանն է դրվում, ապա չէր ասի «պիտի ուտի»: Պլատոնը եւս ասելով, որ «մեղքը ընտրություն կատարող մարդունն է, իսկ Աստված անմեղ է»⁵², այս խոսքերը փոխառել է Մովսես մարգարեից: Քանզի Մովսեսը ժամանակագրորեն ավելի վաղ է, քան բոլոր

⁵⁰ Բ. Օրինաց Լ. 15, 19:

⁵¹ Եսայի Ա. 16—20:

⁵² ՊԼԱՏՈՆ, Հանրապետություն, Ժ.:

հույն մատենագիրները: Այն էլ ասենք, որ այն ամենը, ինչ փրկիսոփաներն ու բանաստեղծներն ասում էին հոգու անմահության, հետմահու պատիժների, երկնայինի հայեցողության եւ նման բաների մասին, մարգարեներից են քաղված. նրանց միջոցով կարող էին հասկանալ ու շարադրել այդ ամենը: Ուստի բոլորի ստեղծագործություններում, թվում է, ճշմարտության սերմեր կան, բայց նրանք ստույգ չէին հասու եղել դրանց, ինչի խոստովանումն ավելի խրատական է: Այսպիսով՝ երբ ասում ենք, որ գալիք իրադարձությունները կանխասված են, նկատի չունենք, որ դրանք իբրեւ թե կատարվում են ըստ ճակատագրի անհրաժեշտության, այլ այն, որ Աստված, նախապես իմանալով բոլոր մարդկանց գործերն ու ինքն իր մեջ որոշելով, որ ամենայն մարդ հատուցում կստանա ըստ իր գործերի արժանիքի, մարգարեական Հոգու միջոցով կանխասում է, որ նրանք իրենց գործերի համար ըստ արժանվույն կստանան: Այսու Նա միշտ մարդկային ցեղին կոչ է անում նորացնել ուշադրությունն ու լարվածությունը եւ ցույց տալիս իր խնամքն ու հոգատարությունը նրանց նկատմամբ: Սակայն չար այսերի ներգործությամբ մահապատիժ է սահմանված Իստասպոսի, Սիբիլայի եւ մարգարեների գրքերն⁵³ ընթերցողների համար, որպեսզի այսպես վախեցնելով՝ հետ պահեն ընթերցողներին բարի բաներ սովորելուց եւ նրանց իրենց ստրկության մեջ պահեն, ինչը, ի դեպ, չէին կարող մեկընդմիջտ անել, որովհետեւ մենք ինքներս ոչ միայն աներկյուղ ենք կարդում այդ գրքերը, այլեւ, ինչպես տեսնում եք, ձեր հայեցողությանն ենք ներկայացնում՝ համոզված, որ դրանք հաճո կլինեն ձեզ: Եթե նույնիսկ այդ բանում սակավաթիվ մարդկանց համոզենք, ապա, այդուհանդերձ, շատ մեծ օգուտ կստանանք, քանզի, իբրեւ բարի գործողներ, Տիրոջից պարգև կստանանք:

ԽՆ. Իսկ այն մասին, որ ամենայնի Հայր Աստված մեռյալների հարությունից ու համբարձումից հետո Քրիստոսին երկնքում կհաստատի եւ կպահի մինչեւ որ չոչնչացնի Նրա հետ թշնամություն անող դեւերին, մինչեւ որ իր լրումին չհասնի արդարների եւ առաքինիների թիվը, որոնց Նա նախապես էր տեսել եւ որոնց համար Նա դեռ ի կատար չի ածել իր որոշումը⁵⁴, լսեցե՛ք Դավիթ մարգարեի խոսքերը: Ահա սրանք. «Տերն

⁵³ Հատ Մառանի՝ աստ խոսքը Կեսարի կամ պետության վերաբերյալ գուշակություններ անելու, ապագան իմանալու եւ առհասարակ մարգարեություններ պարունակող գրքերի արգելքի մասին է:

⁵⁴ Խոսքը Քրիստոսի երկրորդ գալստյան մասին է:

իմ Տիրոջը ասաց. «Նստիր Իմ աջ կողմում, մինչեւ որ Քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ»: Տերը քեզ իշխանության գավազան կուղարկի Երուսաղեմից, եւ դու կիշխես Քո թշնամիների մեջ: Քեզնով է սկսվում զորացումն Իմ օրերի, Քո սրբերի վայելչությամբ. Քեզ արշալույսից առաջ ծնեցի արգանդից»⁵⁵: «Քեզ իշխանության գավազան կուղարկի Երուսաղեմից» խոսքով կանխանշվում է այն զորավոր վարդապետությունը, որը Նրա առաքյալները Երուսաղեմից դուրս գալուն պես քարոզեցին ամենուր, չնայած որ մահ է սահմանված նրանց համար, ովքեր ուսուցանում կամ առհասարակ դավանում են Քրիստոսի անունը, մենք, սակայն, ամենուր ենք՝ եւ ինքներս ընդունելով, եւ այլոց ուսուցանելով: Եթե դուք էլ սույն խոսքերը թշնամաբար տրամադրված կարգաք, ապա, ինչպես եւ վերն արդեն ասել եմ, սպանելուց բացի, ոչինչ առավել անել չեք կարող. դա մեզ ամենեւին վնաս չի պատճառի, իսկ ձեզ եւ բոլորի համար, ովքեր հանիրավի հալածում են մեզ ու չեն ապաշխարում, [Տերը] հավիտենական տառապանք է պատրաստել հրի մեջ:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Ռուսերենից թարգմանեց եւ ծանոթագրեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ



⁵⁵ Սաղմ. ՃԹ. 1—3:

ԳԱՔՐԻԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՈՐԳԻ ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ՝

ՄՈՒՏՔ

Բյուզանդագիտությունում «պատկերամարտություն» կոչված դարաշրջանը, լինելով համաշխարհային նշանակություն ունեցող իրադարձություն, եղել է եւ մինչ օրս մնում է ոչ միայն պատմաբանների, այլեւ աստվածաբանների, արվեստաբանների, փիլիսոփաների ու այդ հարցով հետաքրքրվող այլ հետազոտողների սեւեռուն ուշադրության կենտրոնում:

Բյուզանդական կայսրությունում Լ. դարի սկզբին սկսված այս շարժումը մեկ դարից ավելի փոթորկել է այս պետության հոգեւոր եւ հասարակական-քաղաքական կյանքը՝ իր նշանակությամբ դուրս գալով ներբյուզանդական միջավայրից: Այն իր յուրօրինակ դրսեւորումներն է ունենում ոչ միայն հիշյալ դարաշրջանի Բյուզանդական կայսրությունում, այլ նաեւ հետագա դարերում՝ թափանցելով կայսրության տարբեր ժողովուրդների եկեղեցական, հասարակական-քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանք՝ խոր հետք թողնելով պատմական ողջ գործընթացի վրա: Սրբապատկերների նկատմամբ վերաբերմունքն իր կնիքն է դրել եկեղեցական արարողակարգի, ազգային սովորույթների եւ ավանդությունների, ծիսական պատկերացումների վրա: Այս ամենից անմասն չեն մնացել նաեւ Հայոց Եկեղեցին եւ հայագիտությունը¹: Թեեւ բազում ուսումնասիրողների հետաքրքրել են պատկերամարտության

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A286 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Հայագիտության մեջ սրբապատկերներին վերաբերող հարցը հետաքրքրության առարկա է դարձել սկսած հայր Գ. Զ. Սահակյանից, որը հրատարակել է «Յաղագս բարեխոսութեան սրբոց եւ զնշխարս նոցա եւ զպատկերս մեծարելոյ» աշխատանքը, որտեղ հեղինակը գրքի հավելվածում առաջին անգամ լույս է ընծայում Վրթանես Քերթովի «Յաղագս պատկերամարտից» երկը: Հարցի հետազոտությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ, որոնց շարքում՝ Արիստակես եպս. Սեդրակյանը, հայր Ն. Ակինյանը, Նղիշե պատրիարք Դուրյանը,

առաջացման պատճառները³, սակայն դեռեւս սպառիչ եւ համընդգրկուն բացատրություն չի տրվել այն հարցին, թե ինչով էր պայմանավորված այս երեւույթի առաջ գալը հենց այդ ժամանակաշրջանում, եւ ինչու այն այդքան երկարատեւ ընթացք ունեցավ եւ այդպիսի մեծ արձագանք գտավ Բյուզանդական կայսրությունում Ը.—Թ. դարերում, իսկ հետագայում նաեւ ողջ քրիստոնեական աշխարհում: Այս հարցերի պատասխանները գտնելու գործում կարեւոր է անդրադարձ կատարել բյուզանդական պատկերամարտության ուսումնասիրության մեջ մեծ հետք թողած գիտնականներին, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Գեորգի Օստրոգորսկին⁴:

Գեորգի Օստրոգորսկին, լինելով Ի. դարի ամենահեղինակավոր բյուզանդագետներից մեկը, իր նշանակալից հետքն է թողել ոչ միայն Բյուզանդական կայսրության քաղաքական պատմության, այլեւ առանձին վերցրած՝ պատկերամարտության ուսումնասիրման բնագավառում: Այս ոլորտում Գ. Օստրոգորսկու կատարած ուսումնասիրություններին անդրադարձը կարեւոր է նրանով, որ հեղինակը, լինելով այս բնագավառում աչքի ընկնող գիտնականներից մեկը, իրենից հետո թողել է շատ կարեւոր հետազոտությունների մի շարք, որոնք եղել են ու մինչ օրս էլ մնում են քննարկման առարկա ոլորտի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների համար:

Եթե հակիրճ ներկայացնենք պատկերամարտության ուսումնասիրության մեջ զբաղվող հետազոտողների մեջ այդ երեւույթի առաջացման շուրջ

Ս. Տեր-Ներսեսյանը, Ն. Ադոնցը, Ե. Մելքոնյանը, Հ. Քյոսեյանը, Եգնիկ արք. Պետրոսյանը, Ա. Սահակյանը, Ա. Բ. Շմիդտը, Մ. վան էսբրուկը, Ա. Ռամազյանը եւ այլք:

³ Տե՛ս այս ուղղությամբ կատարված մեզ ծանոթ աշխատանքներից առավել ուշադրության արժանի հետազոտությունները. H.—G. BECK, Von der Fragwürdigkeit der Ikone, München, 1975, “Iconoclasm”, Papers given at the 9th Spring Symposium of Byzantine Studies, Edited by Anthony Bryer and Judith Herrin, Birmingham University, 1977, P. Schreiner Der Byzantinischer Bilderstreit: kritische Analyse der zeitgenössischen Meinungen und das Urteil der Nachwelt bis heute, “Bizancio, Roma e l’Italia nell’alto Medioevo (Settimane di studio del Centro Italiano di studi sull’alto Medioevo)”, 34), Spoleto, 1988, էջ 319—407. H. G. THÜMMEL, Bilderlehre und Bilderstreit. Arbeiten zur Auseinandersetzung über die Ikone und ihre Begründung vornehmlich im 8. und 9. Jahrhundert, Augustinus, Würzburg, 1991. H. G. Thümmel, Die Konzilien zur Bilderfrage im 8. und 9. Jahrhundert. Das 7. Ökumenische Konzil in Nikaia 787, Schöningh, Paderborn u. a. 2005. J. HALDON, L. BRUBAKER, Byzantium in the Iconoclast Era, a History, Cambridge University Press, 2011, էջ 680—850. T. G. HUMPHREYS, Law, Power, and Imperial Ideology in the Iconoclast Era: էջ 680—850, Oxford University Press, 2014:

⁴ Գ. Օստրոգորսկու պատկերամարտությանը նվիրված աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Священник Игорь Иванов, Югославский академик Г. А. Острогорский (1902—1976) и его работы о византийском иконопочитании (к 115-летней годовщине со дня рождения), «Христианское чтение», 2017. №2. էջ 20—36:

տարածված մոտեցումները⁵ մինչ Գ. Օստրոգորսկու աշխատանքների ի հայտ գալը, ապա պետք է նշենք, որ առկա էր հիմնականում երկու տեսակետ: Տեսակետներից առաջինի համաձայն՝ պատկերամարտությունը դիտարկվում էր զուտ աստվածաբանական հարթակում՝ ներկայացվելով կամ որպես հերձված, կամ սնահավատության դեմ պայքար, կամ էլ ներեկեղեցական բարեփոխում:

ԺԹ. դարի երկրորդ կեսից սկսած՝ հետազոտողների շրջանակում տարածում է գտնում մյուս տեսակետը, եւ պատկերամարտության հարցը կապվում է Բյուզանդական կայսրության սոցիալ-տնտեսական եւ ներքաղաքական պատմության հետ: Իսավրյան հարստության ներկայացուցիչներն սկսում են դիտվել որպես սոցիալական բարեփոխիչներ, որոնք ձգտում էին սահմանափակել հոգեւոր իշխանության դերակատարությունը երկրի ներքին կյանքում՝ դրանով առավել բարձրացնելով քաղաքական իշխանության նշանակությունը: Գ. Օստրոգորսկին իր առջեւ խնդիր է դնում ցույց տալ, որ սրբապատկերների շուրջ ծավալված իրադարձություններն ամենեւին էլ հասարակական կամ զուտ կրոնական բարեփոխումներ չէին:

Բյուզանդագետը պատկերամարտությամբ զբաղվող հետազոտողների շարքում առաջիններից մեկն էր, որն այս երեւույթի ակունքներում տեսավ ոչ թե Եկեղեցու եւ պետության միջեւ ընթացող պայքար, ոչ թե սոցիալ-քաղաքական շարժում, ոչ թե լոկ աստվածաբանական բանավեճ, իսլամական կամ հուդայական ազդեցություն, Լեւոն Գ. (717–741 թթ.) կայսեր իրականացրած բարեփոխումների շարունակություն, այլ հարցը դիտարկեց որպես քրիստոսաբանական հիմքով աշխարհայացքային երկու հակամետ կրոնա-փիլիսոփայական հայեցակարգերի եւ մշակութային տարբեր ուղղությունների պայքար, որը, իր նշանակությամբ բարձրանալով քաղաքակրթական մակարդակի, պայմանավորել էր բյուզանդական պետության պատմական զարգացման հետագա ընթացքը:

Մեր այս հոդվածում, ըստ ժամանակագրական հաջորդականության, կանդրադառնանք հեղինակի՝ պատկերամարտությանը նվիրված աշխատանքներին:

⁵ Այդ մոտեցումների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս М. Я. Сюзюмов, Основные направления историографии истории Византии иконоборческого периода, «Византийский временник», Москва, 1963, т. 22, էջ 199–214:

ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ
ԵՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ Գ. ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒ

1925 թվականից սկսած՝ զբաղվելով պատկերամարտության ուսումնասիրությամբ եւ հրատարակելով երկու հոդված⁶ այդ թեմայով՝ 1929 թ. նա լույս է ընծայում իր ամենակարեւոր աշխատանքներից մեկը՝ «Բյուզանդական պատկերամարտության պատմության հետազոտություն» («Studien zur Geschichte des byzantinischen Bilderstreites») վերնագրով աշխատությունը, իսկ հետո՝ եւս մի քանի հոդված:

Ռուսերեն հրատարակած առաջին երկու հոդվածները նախօրոք կարծես թե ազդարարում են այն հայեցակարգային դրույթները, որոնք առավել ընդգրկուն արծարծվել են գերմաներեն հետազոտության մեջ: Գլխավոր միտքը, որ նա զարգացնում է ռուսերեն հոդվածներից առաջինում, այն է, որ պատկերապաշտների եւ պատկերամարտների միջեւ ընթացած բանավեճերում առանցքային է եղել քրիստոսաբանական հարցը, որը քննարկման առարկա էր դարձել դեռեւս 754 թվականի Հիերեիայի եկեղեցաժողովից եւ նույնիսկ Լեոն Գ.-ի հրատարակած⁷ հրովարտակից էլ առաջ:

Ըստ Գ. Օստրոգորսկու՝ այն գլխավոր փաստարկը, որն օգտագործել են պատկերապաշտները դեռ պատկերամարտության դարաշրջանից առաջ, ինչպես նաեւ ողջ ընթացքում եւ մինչ նրա ավարտը, այն միտքն է, որ Քրիստոսին պատկերելը ծառայում է որպես երաշխիք նրա ճշմարիտ եւ իրական մարմնացման, իսկ սրբապատկերների պաշտամունքը նրա մարմնացման ոչ երեւութական հավատի երաշխիքն է⁸:

Գ. Օստրոգորսկու համոզմամբ՝ սրբապատկերների շուրջ ընթացած վեճի էությունն աստվածաբանական կողմը հասկանալու համար պետք է տեսնել սրբապատկերների եւ մարմնացման դոգմայի միջեւ եղած կապը, իսկ այդ ամենում՝ նաեւ քրիստոսաբանական խնդրի հետ անխախտ կապը: Հեղինակը քրիստոսաբանական հիմքով հերձվածների շարքում

⁶ Ску Г. А. Острогорский, Соединение вопроса в св. иконах с христологической догматикой в сочинениях православных апологетов раннего периода иконоборчества // Seminarium Kondakovianum. I. Praga, 1927, էջ 36—48. նույնի Գնոսեոլոգիկական օրոհար օրոհար օրոհար // Seminarium Kondakovianum. II. Praga, 1928, էջ 47—51:

⁷ Կայսեր հրապարակած էդիկտի տարեթվի վերաբերյալ անդրադարձը տե՛ս Les débuts de la Querelle des Images // Mélanges Charles Diehl: Etudes sur l'histoire et sur l'art de Byzance. T. I: Histoire. Paris, 1930, էջ 235—255:

⁸ Ску Г. А. Острогорский, Соединение вопроса в св. иконах..., էջ 35:

պատկերամարտությունը փորձում է տեսնել որպես վերջին եւ ավարտական օղակ⁹: Իր տեսակետն առավել փաստարկված կերպով հիմնավորելու համար Գ. Օստրոգորսկին վկայակոչում է պատկերամարտությանը վերաբերող համապատասխան հատվածը Գերմանոս պատրիարքի «Հերձվածների եւ ժողովների մասին»¹⁰ գրքից, ինչպես նաեւ նույն հեղինակի՝ Թովմա եպիսկոպոսին եւ Սինդոսի միտրոպոլիտին ուղղված նամականուց մեջբերումները: Ահա դրանցից մի քանիսը. «Սրբապատկերների վրա Տիրոջ կերպարի պատկերումը՝ մարմնական տեսքով, մերկացնում է հերձվածողների այն դատարկաբանությունը, որ Տերը միայն երեւութական եւ ոչ թե իրական կերպով է մարմնացել...»¹¹, «...մենք պատկերում ենք Նրա կերպարը եւ Նրա տեսքը՝ մարմին առած, այլ ոչ թե Նրա աստվածությունը, որն անհասանելի է եւ անտեսանելի: Մենք ցանկանում ենք ակնառու ներկայացնել հավատի առարկան եւ ցույց տալ, որ Նա ոչ թե երեւութական եւ անիրական կերպով է խառնվել մեր բնությանը, ինչպես որ որոշ հին հերձվածողներ սովորեցրել են: Նա իսկապես եւ ճշմարիտ կերպով եղել է կատարյալ մարդ՝ բացառությամբ մեր մեջ առկա սատանայական մեղքի»¹²:

Գ. Օստրոգորսկին, խոսելով եւ մեջբերումներ անելով Հովհաննես Դամասկացու աշխատանքներից, գրում է, որ վերջինիս՝ սրբապատկերներին վերաբերող գրություններում եւս կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ Քրիստոսին պատկերելը՝ մարդկային տեսքով, օրինականացնում է Նրա իրական մարմնացումը¹³:

⁹ Հեղինակի հետ համակարծիք հետազոտողների մասին տե՛ս J. MEYENDORFF, Christ in Eastern Christian Thought. Wash., 1969, էջ 135—136. W. Elliger, Zur Bilderfeindliche Bewegung des achten Jahrhunderts // Forschungen zur Kirchengeschichte und zur christlichen Kunst, Leipzig, 1931, էջ 50—56. TH. NIKOLAOU, Die Ikonen Verehrung als Beispiel ostkirchlicher Theologie und Frömmigkeit nach Johannes von Damaskos // Östkirchliche Studien, 1976, Bd. 25. էջ 157. B. BROCK, Der byzantinische Bilderstreit // Bildersturm: Die Zerstörung des Kunstwerkes / HRSG. VON M. WARNKE, München, 1973, էջ 32—33:

Այն հեղինակների մասին, որոնք Գ. Օստրոգորսկու հետ համակարծիք չեն, տե՛ս P. BROWN, A Dark-Age Crisis: Aspects of the Iconoclastic Controversy (The English: Historical Review, 1973, №346, էջ 3. S. BROCK, Iconoclasm and the Monophysites Iconoclasm: Papers given at the Ninth Symposium of Byzantine Studies. Birmingham, 1977, էջ 53—57:

¹⁰ Տե՛ս J.—P. MIGNE, Patrologiae cursus completus. Series graeca, t 98, col. 80 A, (Germanus, De haeresibus et synodis), Paris (Parisiis), 1865 (այսուհետեւ՝ PG):

¹¹ J.—P. MIGNE, PG, col. 173 B.

¹² J.—P. MIGNE, PG, col. 157 B. C.

¹³ Տե՛ս Г. А. ОСТРОГОРСКИЙ, Соединение вопроса в св. иконах..., էջ 40:

Հովհաննես Դամասկացին, խոսելով պատկերամարտության մասին եւ դիմելով Լեւոն Գ.-ին, այնտեղ տեսնում է նաեւ մանիքեական խորշանքը նյութի հանդեպ. «Մի՛ հայհոյիր նյութին,— դիմում է նա պատկերամարտ կայսերը,— այն քամահրելի չէ, քանի որ որեւէ բան արհամարհելի չէ, եթե այն Աստծուց է: Այդ ամենը մանիքեական մտածելակերպ է»¹⁴:

Շարունակելով վկայակոչումներն ի պաշտպանություն իր տեսակետի՝ Գ. Օստրոգորսկին մեջբերումներ է անում Գրիգոր Բ. պապի, Գրիգոր Կիպրացու եւ Հովհաննես Երուսաղեմացու աշխատանքների այն հատվածներից եւս, որտեղ խոսվում է Քրիստոսի մարմնացման եւ մարմնացյալ Քրիստոսի պատկերման մասին¹⁵:

Բերելով այս օրինակները՝ Գ. Օստրոգորսկին փորձում է ցույց տալ, որ մարդեղացման հարցը եւ քրիստոսաբանական փաստարկը պատկերապաշտ հեղինակներն օգտագործել են ի պաշտպանություն սրբապատկերի գոյության դեռեւս 754 թվականի եկեղեցաժողովից եւ նույնիսկ Լեւոն Գ. կայսեր պատկերամարտական քաղաքականության սկսվելուց էլ առաջ:

Եւ այս ամենից ելնելով՝ հեղինակը կարծում է, որ ճիշտ չեն Կառլ Շվարցլոզերի¹⁶ եւ Կառլ Կրումբախերի¹⁷ արտահայտած տեսակետները խնդրո առարկա հարցի շուրջ¹⁸: Իսկ այս հեղինակները կարծում էին, որ պատկերամարտների բերած քրիստոսաբանական փաստարկները սրբապատկերների պաշտամունքը մերժելու հարցում օգտագործել է դեռեւս կայսր Կոստանդին Ե.-ն (741—775 թթ.):

Գ. Օստրոգորսկին իր հոդվածում եզրահանգում է նրան, որ հայտնի պատկերապաշտ հեղինակները քրիստոսաբանական փաստարկը գրեթե առանց ընդհատումների օգտագործել են բյուզանդական մատենագրության մեջ արդեն է. դարավերջից մինչեւ պատկերամարտության պաշտոնական ավարտը (843 թ.):

Գ. Օստրոգորսկին իր հաջորդ՝ ռուսալեզու հոդվածում¹⁹ քննարկման առարկա է դարձնում բյուզանդական պատկերամարտության փրկիսո-

¹⁴ J.—P. MIGNE, PG, t 94, col. 1245 C.

¹⁵ Сѣу Г. А. Острогорский, Соединение вопроса в св. иконах..., էջ 43—46:

¹⁶ Сѣу К. SCGWARZLOSE, Der Bilderstreit. Ein Kampf der griechischen Kirche um ihre Eigenart und ihre Freiheit. Gotha 1890, էջ 115:

¹⁷ Сѣу К. KRUMBACHER, Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum Ende des oströmischen Reiches, 527—1453, München, 1897, էջ 68:

¹⁸ Сѣу Г. А. Острогорский, Соединение вопроса в св. иконах..., էջ 38, 42:

¹⁹ Сѣу Г. А. Острогорский, Гносеологические основы спора..., էջ 47—51:

փայական ընկալումը: Հստ հեղինակի՝ դավանական հարցերում հակամարտող կողմերին իրարից բաժանում էր մոտեցումների տարբերությունը՝ պայմանավորված յուրովի մտածողությամբ: Սրբապատկերների վերաբերյալ հակամարտող կողմերի մոտեցումները ծավալուն կերպով արտացոլված են պատկերապաշտ պատրիարք Նիկեփորի՝ Կոստանդին Ե. կայսեր հեղինակած պատկերամարտական գրություն²⁰ քննադատությանը նվիրված աշխատության մեջ, որն էլ քննարկման առարկա է դարձրել Գ. Օստրոգորսկին իր այս հոդվածում:

Եթե մինչ 754 թվականի եկեղեցաժողովը պատկերամարտները սրբապատկերների ուսմունքի դեմ իրենց հակաճառության մեջ մեկնակետ էին դարձրել պատկերների հինկտակարանային արգելքը եւ կռապաշտության մեղադրանքները²¹, ապա այս եկեղեցաժողովի ընթացքում

²⁰ Այս գրությունը չի պահպանվել, եւ նրա մասին մեր տեղեկությունները հիմնվում են պատրիարք Նիկեփորի՝ պատկերամարտների հայացքների քննադատությանը նվիրված գրություններում առկա տեղեկությունների վրա: Պատկերամարտների հայացքների քննադատությանը նվիրված այս գրությունները մասնագիտական գրականության մեջ հայտնի են Apologeticus (Apologeticus pro Sacris Imaginibus եւ Apologeticus Minor pro Sacris Imaginibus) եւ Antirrheticus (Antirrheticus I adversus Constantinum Copronymum, Antirrheticus II եւ Antirrheticus III) վերնագրով: Այս հակապատկերամարտական գրությունները, ըստ Պ. Ալեքսանդերի տեսակետի, միեւնույն աշխատանքի տարբեր մասերն են եւ «Apologeticus atque Antirrheticus» պայմանական անվամբ մինչ օրս ընդունելի են հետազոտողների մեծ մասի համար (տե՛ս Alexander P. J. The Patriarch Nicephorus of Constantinople. Ecclesiastical Policy and Image Worship in the Byzantine Empire. Oxf., 1958, էջ 167–173):

²¹ Պատկերամարտներն իրենց հակառակորդներին կռապաշտության մեջ մեղադրելիս մեջբերում էին հինկտակարանային հետեւյալ հատվածը. «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք, բաց յինէն: Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր, եւ որ ինչ յերկիր ի խոնարհ, եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի: Մի՛ երկիր պագանիցես նոցա եւ մի՛ պաշտեսցես զնոսա, զի ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեզս հարանց որդւոց յերիս եւ ի չորս ազգս ատելեաց Իմոց» (Ելից Ի. 4–5):

Պատկերների արգելքին վերաբերող հինկտակարանային փաստարկների մասին մեզ ծանոթ հոդվածներից տե՛ս KARL-HEINZ BERNHARDT, Das »Bilderverbot« im Alten Testament und im antiken Judentum, էջ 73–83 (in Der Byzantinische Bilderstreit: sozialökonomische Voraussetzungen, ideologische Grundlagen, geschichtliche Wirkungen / (herausgegeben von Johannes Irmscher)). G. STROHMAIER, Byzantinischer und jüdisch-islamischer Ikonoklasmus, էջ 83–91 (in Der Byzantinische Bilderstreit: sozialökonomische Voraussetzungen, ideologische Grundlagen, geschichtliche Wirkungen / (herausgegeben von Johannes Irmscher)) Leipzig, 1980. C. Dohmen, Das Bilderverbot. Seine Entstehung und seine Entwicklung im Alten Testament (BBB 62), Frankfurt a.M., 1987. M. BAUKS, «Bilderverbot», <https://www.bibelwissenschaft.de/wiblex/dasbibellexikon/lexikon/sachwort/anzeigen/details/bilderverbot-at/ch/29b22aa780fc263280c3e667680919e4/>, Л. В. Лутовицкий, Император — избавитель от идолов (представления о пределах власти византийского императора в иконоборческих спорах), в сборнике XXV конференция памяти В. Д. Королюка: Предания и мифы о происхождении власти эпохи Средневековья и раннего Нового времени, место издания Москва, тезисы, 2010, էջ 90–94:

սկսում են օգտագործել քրիստոսաբանական փաստարկներն ընդդեմ սրբապատկերների պաշտամունքի:

Գ. Օստրոգորսկին կարծում է, որ Ը.—Թ. դարերում դավանական առումով բաժանված բյուզանդական հասարակության երկու կողմերին՝ պատկերամարտներին եւ պատկերապաշտներին հասկանալու համար առավել կարեւոր է տեսնել յուրաքանչյուրի մոտեցման տարբերությունը: Եթե պատկերապաշտները, «εἰκόνα» (սրբապատկեր) ասելով, հասկանում էին մի բան, ապա բոլորովին այլ բան էին հասկանում պատկերամարտները: Գ. Օստրոգորսկին իր աշխատանքում փորձում է ցույց տալ, թե «εἰκόνα» ասելով՝ ինչ էին հասկանում պատկերամարտները՝ հանձին Կոստանդին կայսեր, եւ ինչ պատկերապաշտները՝ հանձին Նիկեփոր պատրիարքի, Հովհաննես Դամասկացու եւ Թեոդոր Ստուդիտեսի: Եթե համառոտ ներկայացնենք Կոստանդին կայսեր ընկալումը, ապա իսկական «εἰκόνα»-ն պետք է իր էությունմբ նույնանար այնտեղ պատկերված անձի հետ²²: Եւ ըստ նրա՝ մեկ բան է «εἰκόνα»-ն, եւ այլ բան՝ սրբապատկերում նկարվածը, քանի որ «εἰκόνα»-ն իր էությունմբ տարբերվում է նախատիպից, հակառակ դեպքում այն «սրբապատկեր» չէր լինի²³:

Կարծում ենք՝ պատկերամարտների եւ Կոստանդին Ե. կայսեր սրբապատկերների վերաբերյալ դիրքորոշման մասին տեղին է մեջբերել նաեւ հետեւյալ բնութագիրը. «Քրիստոսի պատկերներն ընդունելը, նրանց համոզմամբ, անհնարին էր, որովհետեւ ճշմարիտ պատկերը պետք է նույնանա նախատիպին, բայց եթե նույնացում չկա, ապա նկարը կամ պատկերը ճշմարիտ լինել չեն կարող: Դրանք, պատկերամարտների պնդմամբ, Տիրոջը վայել պատկերը չէին ներկայացնում, քանզի հնարավոր չէ պատկերել երկու բնությունները: Ավելին՝ երկու բնությունը պատկերելու փորձն իսկ հայհոյաբան հանդգնություն էր, որովհետեւ աստվածային բնությունն անտեսանելի է: Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունները ներկայացնելը կնշանակեր միացնել բնությունները, որոնք հիշեցնում էին միաբնակության վարդապետությունը՝ Քրիստոսի միայն աստվածային բնության ընդունումը՝ առանց մարդկային, որը, ըստ Եւտիքեսի, տարրալուծվել էր նրա Աստվածության մեջ: Իսկ ներկա-

²² S^{ku} J.—P. Migne, PG, t 100 col 225 A. (Oratio de exilio S Nicephori et translatione reliquiarum ejus -Antiretcs I ADV Costantinum Copr):

²³ S^{ku} J.—P. Migne, PG, t 99, col. 341 B:

յացնել միայն Քրիստոսի մարդկային բնությունը՝ զատելով այն աստվածայինից, նեստորականություն է հիշեցնում»²⁴:

Իր հոդվածում Գ. Օստրոգորսկին ավելի ընդարձակ կերպով է անդրադառնում պատկերապաշտ հեղինակների տեսակետներին: Ինչպես պատրիարք Նիկեփորը, այնպես էլ Հովհաննես Դամասկացին եւ Թեոդոր Ստուդիտեսը կարծում էին²⁵, որ «εἰκόνα»-ն, ունենալով նմանություն նախատիպի հետ, էականորեն տարբերվում է նրանից, քանզի եթե երկուսն իրարից չտարբերվեին, ապա «εἰκόνα»-ն հենց նախատիպը կլինեին: Նրանք կարծում էին, որ չէր կարելի նախատիպը եւ նրա պատկերը նույնացնել, քանզի մի բան է նախատիպը, եւ մի այլ բան՝ սրբապատկերը: Նիկեփոր պատրիարքը եւ պատկերապաշտության մյուս առաջնորդները, սխալ համարելով Կոստանդին կայսեր փաստարկները, գտնում էին, որ նրա հավաստիացումները թեմայից դուրս էին, որովհետեւ այլ բան չէին, քան քաղկեդոնական վարդապետության թյուրըմբռնում:

Ըստ բյուզանդական ուղղափառ պատկերապաշտների՝ յուրաքանչյուր խորհրդանիշ, բացի իր ֆենոմենալիստական²⁶ ձեւից, ուներ նաեւ իր նշանակությունը, այսինքն՝ նրա իսկական կեցությունն արմատավորված էր ոչ թե իր մեջ, այլ իրենից դուրս՝ անդրանցական աշխարհում, որն իմացության համար հասանելի է դառնում պատկեր-խորհրդանիշի միջոցով²⁷: Գ. Օստրոգորսկին, խոսելով այդ մասին, կարծում է, որ պատկերների պաշտամունքն արդարացնելու հարցում պատահականություն չէին Հովհաննես Դամասկացու կատարած մեջբերումները Դիոնիսիոս Արիոպագացու աշխատանքներից: Դրանցում մեծ տեղ է հատկացված մարդ-

²⁴ Գ. ՄԱՂԻԿՅԱՆ, Հովհան Դամասկացի եւ Թեոդորոս Ստուդիտ. սրբապատկերների աստվածաբանության համեմատություն, «Տարեգիրք», Աստվածաբանության ֆակուլտետ, 2017, էջ 109:

²⁵ SŁU J.—P. MIGNE, PG t 100 col. 277 A, 94 col. 1337 AB, 99 col. 341 B:

²⁶ Ֆենոմեն (հուն. φαινόμενον, φαίνεσθαι բառից, որը նշանակում է երեւալ, տեսանելի լինել, ինչպես նաեւ թվալ) — երեւույթ, առարկա, որը հասու է դառնում զգայական հայեցողությամբ: Եզրույթը հանդիպում է անտիկ փիլիսոփայության տարբեր հեղինակների երկերում եւ նշանակում փորձնական գիտելիքի առարկա (Новая философская энциклопедия, т. 4, Москва, 2010, էջ 174—175): «Ֆենոմեն» (հուն. phainomenon — երեւացող) հասկացությունը նշանակում է այնպիսի երեւույթ, որը մեզ հասու է դառնում զգայական փորձի միջոցով: Ֆենոմենն էականորեն տարբերվում է նոոմենից, որը դուրս է փորձի սահմաններից եւ մտահայեցողության առարկան է: Կանտը փորձել է «Ֆենոմեն» հասկացության միջոցով էությունը բաժանել երեւույթից՝ առաջինը համարելով անճանաչելի (ազնոստիցիզմ). տես Ի. Գ. ФРОЛОВ, Философский словарь, Москва, 2001, էջ 598:

²⁷ SŁU Г. А. Острогорский, Гносеологические основы спора..., էջ 51:

կային իմացության համար քրիստոնեական խորհրդանիշների նշանակության բացատրությանը, որոնց միջոցով հասանելի է դառնում զգայական ընկալմանը ոչ հասու անդրանցական աշխարհը²⁸:

Գ. Օստրոգորսկին, փորձելով տեսնել գաղափարական այն հիմքը, որի վրա իրենց փաստերն էին կառուցում հակամարտող կողմերը, կարծում է, որ Լ. եւ Թ. դարերի պատկերապաշտների մտածողության ակունքներում հեթանոսական եւ քրիստոնեական նորպլատոնականության միջոցով փոխանցված Պլատոնի ուսմունքն էր²⁹: Իսկ պատկերամարտներն իրենց մտածողությամբ հանդես էին գալիս որոշակի արեւելյան՝ մոգական բնույթի պատկերացումներով՝ չտեսնելով տարբերությունը Երրորդության Երկրորդ անձի եւ Նրա պատկերի միջեւ: Չնայած այն հանգամանքին, որ Գ. Օստրոգորսկին առավել մանրամասն խոսում է պատկերապաշտների մտածողական համակարգի փիլիսոփայական հիմքերի մասին եւ նույնիսկ ցույց է տալիս Հովհաննես Դամասկացու մտահայեցողական կապը Դիոնիսիոս Արիոպագացու ուսմունքի հետ, չի մանրամասնում եւ անդրադառնում իր հիշատակած այն մտքին, թե որն է պատկերամարտների կապն արեւելյան մոգական պատկերացումների հետ: Թերեւս այդ կապի մասին կարելի է ենթադրել՝ ելնելով հոգվածի վերնագրից՝ «Սրբապատկերների վերաբերյալ վեճի իմացաբանական հիմքերը» («Гносеологические основы спора о св. Иконах»), այսինքն՝ հաջորդական կապ տեսնելով պատկերամարտության եւ երեւութականության (դոկետիզմի), երեւութականությանից էլ՝ գնոստիկականության, իսկ ավելի հետ գնալով՝ գնոստիկականության եւ արեւելյան մոգական պատկերացումների միջեւ³⁰:

²⁸ Շոշափվող հարցի վերաբերյալ մանրամասն տես՝ Е. И. Мирошниченко, Византийская концепция образа: между неоплатонизмом и богословием каппадокийских отцов // Идеи и идеалы. №3 (5), 2010, Новосибирск, էջ 22–31, որտեղ խոսվում է ոչ միայն Դիոնիսիոս Արիոպագացու, այլեւ կապադովկյան սուրբ հայրերի բյուզանդական սրբապատկերի վրա ունեցած ազդեցության մասին:

²⁹ Բյուզանդիայում միջեւ Լ. դարը պլատոնական փիլիսոփայական ավանդույթի պահպանման, զարգացման եւ պատկերամարտության ժամանակ յուրովի վերաիմաստավորման մասին տես՝ В. А. БАРАНОВ, Философские предпосылки идеологии византийского иконоборчества, Новосибирск, 2010:

³⁰ Մեր այս տեսակետն արտահայտելու համար հիմք է եղել նաեւ մի հոգվածում արտահայտված կարծիքը գնոստիկականության եւ մոգության կապի մասին, տես՝ М. К. ТРОФИМОВА, Гностицизм. Пути и возможности его изучения // [Православный] Палестинский сборник. Выпуск 26 (89), Л. 1978, էջ 117:

Նախորդ հոգվածներում առաջ քաշած մտքերն իրենց համակողմանի զարգացումն են գտել Գ. Օստրոգորսկու՝ 1929 թ. հրատարակած աշխատությունում³¹: Այս գրքի առաջին գլխում, հիմք ընդունելով Նիկեիոսի պատրիարքի պահպանված աշխատությունն ընդդեմ պատկերամարտ Կոստանդին կայսեր գրության³², ինչպես նաև օգտագործելով «Նիկետա բժշկի վարքը» («Vita Nicetae Mediciensis»)³³ աշխատության հեղինակ Թեոսթերիկոսի վկայությունները կայսր Կոստանդին Ե.-ի գործունեության մասին՝ Գ. Օստրոգորսկին քննարկում է Կոպրոնիմի գրության ազդեցությունը համակարգված պատկերամարտության գաղափարական ձևավորման վրա 754 թ. առաջին պատկերամարտական եկեղեցաժողովի³⁴ ժամանակ: Այս գլխում բյուզանդագետը կրկին անդրադարձ է կատարում պատկերապաշտների այն մեղադրանքին, որ պատկերամարտները հակված էին դեպի երեւութականություն, իսկ ըստ նրանց՝ երեւութականությունն այն էր, որ պատկերամարտները փակել էին Քրիստոսի մարմնացման հարցը եւ շեշտադրում էին Քրիստոսի աստվածային բնությունը: Իսկ դա, ըստ հեղինակի, շարժում էր դեպի միաբնակությունը, երբ մարդկային բնությունը ներծծվում է աստվածային բնության մեջ³⁵: Ավելի առաջ գնալով եւ խոսելով կայսրության փոքրասիական եւ այլ մասերում եղած միաբնակության դերակատարության մասին³⁶՝ նա հետեւյալ եզրահանգումն է անում. «Բյուզանդական պատ-

³¹ S. G. OSTROGORSKY, Studien zur Geschichte des byzantinischen Bilderstreites, Breslau, 1929:

³² Հեղինակն իր այս աշխատության մեջ փորձել է տալ Կոստանդին կայսեր աշխատանքի վերակազմությունը Antirrheticus I եւ Antirrheticus II-ում (Patrologiae Graecae vol. 100: Nicephorus Patriarch of Constantinople, Antirrheticus adversus Constantinum Copronymum and Antirrheticus II, col. 0206—0375, Paris, 1865) առկա պատասխանների հիման վրա՝ վերակազմությանը տալով «Πεύσεις» («Հարցումներ») անվանումը: Գ. Օստրոգորսկին կարծում էր, որ Antirrheticus III-ը չէր կարող օգտագործվել վերակազմության համար, քանի որ այն նվիրված էր Նիկեիոսի պատրիարքի ժամանակակից պատկերամարտների փաստարկների ժխտմանը: Այս վերակազմությունն էլ լայն տարածում է գտել մասնագիտական գրականության մեջ:

³³ S. Vita Nicetae Mediciensis by Theosteriktos (Bibliotheca Hagiographica Graeca -1341) AA. SS Aprilis I XVIII—XXVII. BHG, Bruxellis, 1909:

³⁴ Այս ժողովի որոշումների մասին տե՛ս Die ikonoklastische Synode von Hiereia 754 (Text, Übersetzung und Kommentar ihres Horos) Hrsg. v. Torsten Krannich, Christoph Schubert u. Claudia Sode, Mit einem Beitr. zur Epistula ad Constantian des Eusebius v. Caesarea v. A. von Stockhausen, Tübingen, 2002:

³⁵ Հավանաբար հեղինակը նկատի ունի ծայրահեղ միաբնակությունը:

³⁶ Պատկերամարտության եւ միաբնակության մասին հետաքրքիր հոգված ունի Սեբաստիան Բոռլը, որն այն կարծիքն է հայտնում, որ միաբնակներն ամենեւին էլ արգելք չունեին սրբապատկերների պաշտամունքի վերաբերյալ, եւ հակառակ Գ. Օստրոգորսկու կարծիքի՝ սրբապատկերների շուրջ ծավալված բանավեճն ամենեւին էլ կապ չունեի

կերամարտության վրա միաբնակության միջոցով եւ արտաքին հանգամանքներով պայմանավորված ազդեցությունն առկա էր ամենաբարձր աստիճանով»³⁷:

Գրքի երկրորդ գլխում բյուզանդագետը, քննարկման առարկա դարձնելով պատրիարք Նիկեփորի՝ 815 թ. երկրորդ պատկերամարտական եկեղեցաժողովին նվիրված աշխատանքը³⁸, ուսումնասիրում է այդ շարժման զարգացման ընթացքը 787 թ. Նիկիայի Բ. եկեղեցաժողովից հետո: Երկրորդ պատկերամարտական եկեղեցաժողովի հրավիրման եւ պատկերամարտության վերսկսման պատճառը, ըստ հեղինակի, կայսրության ռազմական անհաջողություններն էին: Գ. Օստրոգորսկու համոզմամբ՝ պետք էր, որ Լեոն Ե. (813—820 թթ.) կայսրը, համեմատության մեջ դնելով պատկերամարտ եւ պատկերապաշտ կայսրերի կառավարման շրջանում գրանցված ռազմական արդյունքները, զար այն եզրահանգման, որ կայսրությունը ռազմական հաջողություններ էր արձանագրել հենց պատկերամարտ կայսրերի օրոք: Հեղինակը կարծում է նաեւ, որ պատկերամարտության վերականգման գործում անկասկած ոչ միայն կայսեր անձնական կարծիքն է որոշիչ եղել, այլ նաեւ բանակինը, որի գերակշիռ մասը պատկերամարտական գաղափարների կրողն էր եւ հավաքագրված էր փոքրասիական բանակաթեմերից, որոնք հանդիսանում էին պատկերամարտության մայր օջախները³⁹: Այս գլխի վերջին մասում ավելի ընդարձակ կերպով խոսելով արեւելյան ազդեցության մասին՝ Գ. Օստրոգորսկին կարծում է, որ պատկերապաշտության հաղթանակով արեւելյան մշակույթի ազդեցությունը հաղթահարվեց: Իսկ այդ ազդեցությունը, ըստ հեղինակի, կապ ունեն էր Լ. դարերի արաբական նվաճումների հետ, որոնք բյուզանդական կայսրությունում իրենց

քրիստոսաբանության հետ: Այս մասին տե՛ս S. BROCK, Iconoclasm and the Monophysites: in Iconoclasm. Papers given at the 9th Spring Symposium of Byzantine Studies, Edited by Anthony Bryer and Judith Herrin, Birmingham University 1977, էջ 53—57:

³⁷ G. OSTROGORSKY, Studien zur Geschichte..., S. 26.

³⁸ Հեղինակը նշում է, որ այդ աշխատանքն անտիպ է եւ պահպանվում է Փարիզում գտնվող երկու ձեռագիր տարբերակներով՝ 1. Codex Coislianus 93, ff. 1—158 (ԺԲ. դարի ձեռագիր), 2. Codex Graecus 1250, f. 173—332 (ԺԳ. դարի ձեռագիր): Ձեռագրերը պահվում են Փարիզի Bibliotheque Nationale-ում եւ գրացուցակում կրում են «Apologia fidei orthodoxae» վերնագիրը:

³⁹ Տե՛ս G. OSTROGORSKY, Studien zur Geschichte..., էջ 52: Պատկերամարտության քաղաքականության մեջ բանակի դերակատարության մասին տե՛ս W. KAEGI, The Byzantine Armies and Iconoclasm, «Byzantinoslavica» 27 (1966), էջ 48—70, Byzantine military unrest, 471—843: An interpretation, Amsterdam 1981, էջ 209—243:

արմատներն էին գցել եւ ծլարձակել էին պատկերամարտության տեսքով⁴⁰։ Բյուզանդագետի համոզմամբ՝ Թ. դարում Արաբական խալիֆայության մասնատմամբ տեղի ունեցավ Բյուզանդական կայսրության համար լուծում պահանջող առաջնահերթ խնդիրների տեղափոխում Արեւելքից դեպի Բալկաններ եւ առավել Արեւմուտք, ինչն էլ համընկնում է Բյուզանդական կայսրությունում արեւելյան ազդեցության եւ պատկերամարտության դիրքերի թուլացմանը։ Եւ ըստ Գ. Օստրոգորսկու՝ Բյուզանդական կայսրության հոգեւոր կողմնորոշումն այնպես էր ընթացել, որ այն վերջնականապես կանգնեց հունական (իսկ ավելի ստույգ՝ քրիստոնեական-հունական) մշակույթի հիմնաքարի վրա եւ զբաղեցրեց ինքնուրույն միջին դիրք Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ⁴¹։

Գ. Օստրոգորսկու աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է Ս. Եպիփանոս Կիպրացուն վերագրվող պատկերների պաշտամունքի դեմ գրությունների⁴² պատմաբանասիրական քննությանը։ Իսկ այդ գրություններն այն գլխավոր փաստարկներից են, որ հաճախ պատկերամարտներն օգտագործել են ընդդեմ պատկերապաշտների։ Ս. Եպիփանոսին վերագրվող գրությունները, որոնք օգտագործում էին պատկերամարտները, Նիկեիոյ պատրիարքը, զետեղելով մի աշխատության մեջ, քննադատության է ենթարկել հեղինակային պատկանելության հարցը։ Գ. Օստրոգորսկին, եւս քննության առնելով վերոհիշյալ նյութերը, ինչպես նաեւ քննադատելով Կառլ Հոլլի՝ Եպիփանոսի գրությունը

⁴⁰ Պատկերամարտության վրա իսլամական գործոնի դերակատարությունը հետազոտողների համար քննարկման առարկա է եղել եւ մնում է մինչ օրս։ Խնդրի ընդգրկումն լուսաբանումը տես մեզ ծանոթ հեղինակների հետեւյալ աշխատանքներում. G. E. VON GRUNEBaum, Byzantine Iconoclasm and the Influence of the Islamic Environment, History of Religions, Volume 2, Number 1 Summer, 1962, էջ 1–10. S. GERO, Byzantine Iconoclasm during the Reign of Leo III with Particular Attention to the Oriental Sources. Corpus Scriptorum Christianorum Orientalium. Sub. 41. Louvain, 1973, էջ 60–74, 193–198. O. GRABAR, Islam and Iconoclasm // Iconoclasm, Papers given at the Ninth Spring Symposium of Byzantine Studies, University of Birmingham, March 1975. Birmingham, 1977, էջ 45–52. P. CRONE, Islam, Judeo-Christianity and Byzantine Iconoclasm // Jerusalem Studies in Arabic and Islam 2 (1980), էջ 59–95. H. GRIFFITH SIDNEY, Images, Icons, and die Public Space in Early Islamic Times: Arab Christians and the Program to Claim the Land for Islam (2011) - In: Shaping the Middle East. Jews, Christians, and Muslims in an age of transition, էջ 197–210։

⁴¹ Տես G. OSTROGORSKY, Studien zur Geschichte..., էջ 60։

⁴² Ս. Եպիփանոսին է վերագրվում երեք գրություն, որոնք վերնագրվում են՝

1. Λόγος κατὰ τῶν ἐπιτηδεούντων ποιεῖν εἰκόνας,
2. Ἐπιστολὴ πρὸς Θεοδοσίον τὸν βασιλέα,
3. Διαθήκη πρὸς τοὺς πολίτας։

վերաբերող հետազոտությունը⁴³, գալիս է այն եզրահանգման, որ այդ գրությունները կարելի է թվագրել 754-ից հետո, եւ կազմել է պատկերամարտ անհայտ հեղինակ:

Այս գլխում եւս մեկ անգամ ընդգծվում է Գ. Օստրոգորսկու այն կարծիքը, որ կենտրոնական խնդիրը, որի շուրջ ընթանում է վեճը երկու հակամարտող կողմերի միջեւ, Քրիստոսի մարմնացման հարցն էր, եւ ով մերժում էր Քրիստոսի սրբապատկերը, նա դոկետ էր⁴⁴:

⁴³ Այս գրությունների հեղինակային պատկանելության հարցը, որը պատկերապաշտ հեղինակների քննարկման առարկան էր դեռեւս Ը.—Թ. դարերում, մեր ժամանակներում եւս իր վրա է սեւեռել հետազոտողների ուշագրությունը: Այս բնագրերի վրա մասնագետների ուշագրությունը հրավիրել է Կառլ Հոլլը, որը հավաքելով եւ հրատարակելով Սբ. Եպիփանոսին վերագրվող ընդդեմ պատկերների գրությունները (K. HOLL, Die Schriften des Epiphanius gegen die Bilderverehrung. Sitzungsber. d. Kgl. Preuß. Akad. d. Wiss. 1916, II, 828—868, abgedruckt in: Gesammelte Aufsätze zur Kirchengeschichte II, Tübingen, 1928, էջ 351—387)՝ բերում է փաստարկներ այն կարծիքի օգտին, որ գրությունների հեղինակը Սբ. Եպիփանոս Կիպրացին է: Հոլլի եզրակացություններն այս գրությունների վերաբերյալ լայն տարածում են գտնում հետազոտողներից շատերի շրջանում, եւ նրանք եւս կարծում են, որ գրությունների հեղինակը Եպիփանոս Կիպրացին է, այդ մասին տե՛ս H. KOCH, Die altchristliche Bilderfrage nach den literarischen Quellen. Göttingen, 1917, էջ 60—64. J. Wilpert, Drei unbekannten bilderfeindlichen Schriften des hl. Epiphanius (Historisches Jb. im Auftrag d. Görres-Gesellschaft) Münch., 1917, Bd. 38, էջ 532—535. W. ELLIGER, Die Stellung der alten Christen zu den Bildern in den ersten vier Jahrhunderten, Lpz., 1930, Bd. 1, էջ 53—57. B. HEMMERDINGER, Saint Epiphane Iconoclaste // StPatr, 1970, Vol. 10, էջ 118—120. Maraval P. Épiphanie, «docteur des iconoclastes» // Nicée II, 787—1987: Douze siècles d'images religieuses: Actes du colloque intern. Nicée II tenu au Collège de France, Paris / Ed. E. Boespflu, N. Lossky., 1987, էջ 51—62. H. G. THUMMEL, Die bilderfeindliche Schriften des Epiphanius von Salamis, Byzantinoslavica 47 (1986), էջ 169—189: Հոլլի գլխավոր ընդդիմախոսն էր Գ. Օստրոգորսկին, որի հետ համակարծիք էին մի քանի հետազոտողներ եւս: Այդ մասին տե՛ս J. MARTIN, Saint Épiphanie // Annales de philosophie chrétienne, 1907/1908, T. 155, էջ 113—150, 604—618. 1908, T. 156, էջ 32—49. Г. В. ФЛОРОВСКИЙ, Восточные отцы IV века, 1931, էջ 132—134. H. BARION, Kleine Mitteilungen // RQS, 1930, Bd. 28, էջ 82—90. I. M. BUGÁR, „Origenist Christology“ and Iconoclasm: The Case of Epiphanius of Salamis // Christus bei den Vätern: Forscher aus dem Osten und Westen Europas an den Quellen des gemeinsamen Glaubens / Ed. Y. de Andia, P. L. Hofrichter. Tyrolia-Wien, 2003, էջ 96—110. I. M. BUGÁR, What did Epiphanius write to Emperor Theodosius? // Scrinium 2. СПб., 2006, էջ 72—88. S. BIGHAM, Épiphanie de Salamine, docteur de l'iconoclasme? Déconstruction d'un mythe / Préface de Nicolas Ozoline, Médiaspaul, 2007, էջ 68—80, 173—175: Այս գրությունների հեղինակային հարցի շուրջ առկա երկու կարծիքներից բացի՝ գոյություն ունի նաեւ երրորդ տեսակետը, ըստ որի՝ հնարավոր չէ միանշանակ պնդել կամ մերժել, թե այդ գրությունների հեղինակը Եպիփանոս Կիպրացին է: Այս մասին տե՛ս E. KITZINGER, The Cult of Images in the Age before Iconoclasm, DOP, 1954, Vol. 8, էջ 92—93. R. TANDONNET, Épiphanie (saint) de Constantia (Salamine) en Cypre, DSAMDH, 1960, T. 4, Fasc. 1, Col. 861. J. MEYENDORFF, Le Christ dans la théologie byzantine, p., 1969, էջ 240—241. Ch. Murray, Art and the Early Church, JThSt, 1977, Vol. 28, №2, էջ 336—342. J. PELIKAN, La Tradition chrétienne: Histoire du développement de la doctrine. p., 1995, Vol. 2, էջ 110—111:

⁴⁴ Տե՛ս G. OSTROGORSKY, Studien zur Geschichte..., էջ 92:

**ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՍԱՎՐՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ Գ. ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒ**

Գ. Օստրոգորսկին, շարունակելով պատկերամարտության ուսումնասիրությունը, հետազոտական հաջորդ աշխատանքը նվիրում է պատկերամարտական քաղաքականության մեջ Իսավրյան հարստության դերակատարությանը⁴⁵: Հեղինակը խոսում է այն մասին, որ իր օրերում պատկերամարտությամբ զբաղվող որոշ հետազոտողներ (առանց մատնանշելու հետազոտողների անունները) կարծում են, որ Իսավրյան հարստության ներկայացուցիչներն ազատական մտածողությամբ օժտված բանապաշտներ (ռացիոնալիստներ) էին, որոնք նույնպիսի մոլեռանդությամբ էին պայքարում իրենց հավատի համար, ինչպես իրենց հակառակորդները: Ըստ բյուզանդագետի՝ աղբյուրագիտական առումով սնանկ են համարվում հետազոտողների այն պնդումները, թե Իսավրյան հարստության պատկերամարտական շարժումը պետք է դիտարկել հասարակական մեծածավալ բարեփոխումների շրջանակում: Այս հոգվածում հեղինակը մեկ անգամ եւս կրկնում է նախորդ աշխատանքներում առաջ քաշած կարծիքը, ըստ որի՝ պատկերամարտությունը երկու տարբեր աշխարհայացքների, կրոնական-փիլիսոփայական մտածողության եւ մշակութային հակամարտություն էր, որտեղ բացակայում էր հասարակական կամ քաղաքական մաքուր նպատակադրումը (բացառությամբ որոշ եկեղեցական-քաղաքական կողմերի)⁴⁶:

Հոգվածի հաջորդ մասում Գ. Օստրոգորսկին փորձում է ցույց տալ, որ ոչ մի լայնածավալ բարեփոխում էլ չի եղել ռազմական, դրամական, հարկային կամ առևտրային ոլորտներում, եւ միայն օրենսդիր ոլորտում էր, որ ուշադրության արժանի գործ էր կատարվել՝ «էկլոգա» անունն ստացած օրենքների ժողովածուի հրապարակմամբ: Եւ նույնիսկ «էկլոգա»-ն, ըստ բյուզանդագետի, ամրակայում էր հերակլիտյան թեմական բարեփոխման արդյունքում ձեւավորված ազատ գյուղացիության կարգավիճակը:

Հաջորդ կարեւոր դիտարկումը, որ անում է հեղինակը՝ հակառակվելով տարածված կարծիքին, այն պնդումն է, ըստ որի՝ պատկերամար-

⁴⁵ Shtu G. OSTROGORSKY, Über die vermeintliche Reformtätigkeit der Isaurier, «Byzantinische Zeitschrift», t. 30 (1929–1930), էջ 394–400:

⁴⁶ Անդ, էջ 395:

տուլթյունը պայքար է ոչ թե սրբապատկերների (Ikonomachie), այլ վանականության դեմ (Monachomachie): Բյուզանդագետը կարծում է, որ այդ պնդումները զուրկ են աղբյուրագիտական հիմքից եւ վանականների հանդեպ հալածանքներն սկսվել են պատկերամարտության առաջ գալուց հետո միայն, այն էլ՝ Ը. դարի երկրորդ կեսից սկսած⁴⁷:

1930 թվականին լույս է տեսնում բյուզանդագետի՝ Ֆրանսերեն եւսմեկ շատ կարեւոր հոդված⁴⁸, որտեղ քննարկվում են Լեւոն Գ. կայսեր սկսած պատկերամարտական քաղաքականության սկզբնական շրջանին վերաբերող իրադարձությունները: Պատկերամարտության ուսումնասիրության տեսանկյունից հոդվածի կարեւորությունն այն է, որ հեղինակը, կասկածի տակ դնելով մինչ այդ մասնագիտական միջավայրում տարածում գտած պաշտոնական պատկերամարտության սկիզբն ազդարարող Լեւոն Գ.-ի արձակած էդիկտի տարեթվի վերաբերյալ տեսակետը, փորձում է այն թվագրել՝ առաջարկելով այլ տարբերակ: Հոդվածում արծարծվող հաջորդ կարեւոր հարցը, որ եղել է եւ մինչ օրս մնում է պատկերամարտությամբ զբաղվող հետազոտողների ուշադրության կենտրոնում, այն է, թե ում պետք է համարել պատկերամարտության շարժման գլխավոր «մեղավորը» Բյուզանդական կայսրությունում:

Խոսելով պատկերամարտության ծագման մասին՝ Գ. Օստրոգորսկին, հիմք ընդունելով Գերմանոս պատրիարքի եւ փոքրասիական երկու եպիսկոպոսների՝ Կոստանդին Նակոլիացու եւ Թովմա Կլավդիոպոլցու

⁴⁷ Անդ, էջ 399: Գ. Օստրոգորսկին գտնում է, որ այս տեսակետն առաջինն արտահայտել է Իվան Անդրեեն իր «Герман и Тарасий, патриархи Константинопольские. Очерки их жизни и деятельности в связи с ходом иконоборческих смут» (Сергиев Посад: тип. Св.-Тр. Сергиевой лавры, 1907) աշխատանքում, իսկ այս տեսության տարածումը բյուզանդագետը կապում է Կ. Ն. Ուսպենսկու (К. Н. УСПЕНСКИЙ, Очерки по истории Византии: Ч. 1, Москва, 1917) եւ Ն. Յորգայի (N. JORGA, Académie roumaine. Bulletin de la Section historique, Bucarest, 1924) անունների հետ: Գ. Օստրոգորսկու նման մի շարք հայտնի բյուզանդագետներ եւս կարծում էին, որ Իսավրյան հարստության վարած պատկերամարտական քաղաքականությունն ամենեւին էլ ուղղված չէր հենց վանականության դեմ: Խնդիրը շոշափող հետազոտողների մասին տես S. GERO, Byzantine iconoclasm and Monachomachy. in: Journal of Ecclesiastical History XXVII (1977), էջ 241–248. P. SCHREINER, Der Byzantinischer Bilderstreit: kritische Analyse der zeitgenössischen Meinungen und das Urteil der Nachwelt bis heute, Bizancio, Roma e l'Italia nell'alto Medioevo (Settimane di studio del Centro Italiano di studi sull'alto Medioevo, 34). Spoleto, 1988, էջ 350–359. J. HALDON, Monastic Politics and Vested Interests in the Inter-Iconoclastic Years/Myths and Realities, in: Konzilien und kanonisches Recht in Spätantike und frühem Mittelalter (Band 2), Berlin/Boston, 2020, էջ 239–249 եւ ուրիշներ:

⁴⁸ SÉu G. OSTROGORSKY, Les débuts de la Querelle des Images // MÉLANGES CHARLES DIEHL: Etudes sur l'histoire et sur l'art de Byzance, T. I: Histoire. Paris, 1930, էջ 235–255:

միջեւ փոխանակված՝ պահպանված նամակագրությունը⁴⁹, կարծում է, որ քաղաքական իշխանությունը՝ հանձին Լեւոն Գ. կայսեր, կանգնեց Բյուզանդական կայսրությունում՝ հոգեւորականության շրջանում, թափ հավաքող պատկերամարտական շարժման կողքին: Գերմանոս պատրիարքն այս երկու եպիսկոպոսներից պատկերամարտական հերձվածի գլխավոր պատասխանատու էր համարում Կոստանդին Նակոլիացի եպիսկոպոսին: 787 թվականի եկեղեցաժողովում Տարասիոս պատրիարքն ու մյուս մասնակիցները պատկերամարտության առաջացման հարցում գլխավոր «մեղավոր» էին համարում Կոստանդին եպիսկոպոսին՝ առանց որեւէ հիշատակության Լեւոն Գ. կամ Կոստանդին Ե. կայսրերի մասին:

Ըստ Գ. Օստրոգորսկու՝ այս ամենի պատճառն այն էր, որ եկեղեցաժողովի մասնակիցները չէին ցանկանում հիշատակել ու բանադրանքի ենթարկել Կոստանդին Զ. (780–797 թթ.) կայսեր նախնիներին՝ իշխող Իսավրյան հարստությունից՝ փորձելով պատասխանատվության ողջ բեռը գցել Կոստանդին եպիսկոպոսի վրա:

Գ. Օստրոգորսկին այս հոգվածում նշում է, որ պատկերամարտական հերձվածի առաջացման պատասխանատվության հարցում այլ տեղեկություն է հաղորդում Թեոփանես Խոստովանողը, որը Լեւոն Գ. կայսրին էր համարում այդ հարցում գլխավոր «պատասխանատու»: Թեոփանես Խոստովանողը հիշատակում է, որ «աշխարհի արարչագործության 6217» թվականից սկսած՝ Լեւոն Գ. կայսրն սկսում է խոսել սրբապատկերների ոչնչացման մասին: Ըստ Գ. Օստրոգորսկու՝ հետազոտողների մեծ մասը կարծում է, որ այդ տարեթիվը համարժեք է 724–725-ին, եւ այդ հիշատակությունը վկայություն է կայսեր արձակած էդիկտի մասին: Սակայն Գ. Օստրոգորսկին, իր հոգվածում կատարելով տոմարագիտական հաշվարկներ, կարծում է, որ այդ տարեթիվը 726-ը պետք է լինի, եւ Թեոփանեսն ամենեւին էլ չի խոսում պատկերամարտական էդիկտի մասին: Հեղինակը կարծում է, որ պատրիարք Նիկեփորոսը եւս իր աշխատանքում խոսում է սրբապատկերների հարցում լոկ կայսեր քաղաքականության փոփոխության, այլ ոչ թե էդիկտի հրապարակման մասին:

⁴⁹ Այս նամակագրության եւ պատկերամարտության առաջացման գործում փոքրասիական եպիսկոպոսների դերակատարության մասն տես P. СРЕСК, Die Affäre um Konstantin von Nakoleia // Byzantinische Zeitschrift. 1995. Bd. 88, էջ 148–154, С. В. ЗАПЛАТНИКОВ, К вопросу о роли малоазийского епископата в распространении иконоборчества в Византии в начале V III века, Вестник ПСТГУ I: Богословие. Философия, 2013. Вып. 4 (48). էջ 30–39:

Բյուզանդագետը կարծիք է հայտնում, որ եղել է ոչ թե երկու, այլ կայսերական մեկ էդիկտ, որն արձակվել է 730 թվականին՝ այն բանից հետո, երբ պատկերամարտության հարցում ձախողվել են Լեոն կայսեր ջանքերը Գերմանոս պատրիարքին եւ Գրիգոր Բ. պապին համոզելու կանգնել իր կողքին:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ
ԱՐԵՒԵԼԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀՌՈՄԵԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԸՍՏ Գ. ՕՍՏՐՈԳՈՐՍԿԻՆ)

Սրբապատկերների թեմայով Գ. Օստրոգորսկու հաջորդ հետազոտությունը⁵⁰ այն մոտեցումների տարբերության մասին է, որոնք սրբապատկերների պաշտամունքի հարցի շուրջ եղել են քրիստոնեական Արեւմուտքում եւ Բյուզանդական կայսրությունում: Հոգվածի սկզբնամասում հեղինակը, խոսելով Արեւելահռոմեական եւ Արեւմտահռոմեական կայսրությունների կրոնական եւ մշակութային ընդհանուր հիմքի մասին, նշում է, որ պատմական տարբեր նախապայմաններում եւ միջավայրերում զարգացման տարբեր ուղիներով են ընթացել այս երկու կայսրությունները: Այդ պատմական զարգացման արդյունքն այն էր, որ տարբեր մտածելակերպ ու աշխարհայացք ունեցող այս երկու կենտրոնները միեւնույն երեւույթը եւ հատկապես կրոնական ու դոգմատիկ հարցերը տարբեր կերպ էին ընկալում եւ տարբեր մոտեցումներ էին ցուցաբերում: Եւ հատկապես հոգեւոր ոլորտում տեսակետների տարբերություններն էլ, ի վերջո, այս երկու կենտրոններին բերեցին առճակատման, ինչի հետեւանքով Հռոմում եւ Կոստանդնուպոլսում ձեւավորվեց ամեն մեկին բնորոշ հոգեւոր յուրահատկություն, որը բերեց երկու Եկեղեցիների վերջնական անջատման: Մոտեցումների տարբերությունը վերաբերում էր նաեւ սրբապատկերների պաշտամունքին: Թեեւ երկու կողմերն էլ դատապարտում էին պատկերամարտությունը, սակայն կարմի առանձնահատկություն սրբապատկերների հարցում, որով նրանք տարբերվում էին իրարից: Քննարկելով 787 թվականի տիեզերաժողովի որոշ մանրամասներն եւ հատկապես ժողովում ընթերցված Հաղրիանուս Ա. պապի նամակի բովանդակությունը՝ Գ. Օստրոգորսկին վեր է հանում

⁵⁰ S^{ku} G. OSTROGORSKY, Rom und Byzanz im Kampfe um die Bilderverehrung, SK, 6, 1933, էջ 73–88:

մոտեցումների այն տարբերությունները, որ առկա էին սրբապատկերների հարցում: Իսկ այդ տարբերությունները պայմանավորված էին նրանով, թե ինչ կարեւորություն էր ներկայացնում սրբապատկերների հարցը Կոստանդնուպոլսի եւ Հռոմի համար: Եթե Կ. Պոլսում սրբապատկերների հարցն իր նշանակությամբ բարձրացել էր դոգմատիկ մակարդակի, ապա Հռոմում, նմանատիպ կարեւորություն չունենալով⁵¹, առավելապես դիտվել էր իր ուսուցողական (դիդակտիկ) եւ գեղագիտական (էսթետիկ) նշանակությամբ: Հոգվածի վերջում Գ. Օստրոգորսկին ցույց է տալիս, որ այս տարբերություններով էլ պայմանավորված էր այն զարգացումը, որով ընթացել էր հոգեւոր պատկերազրույթունն Արեւմուտքում եւ Արեւելքում: Եթե սրբապատկերի միջոցով Բյուզանդիայում ցանկանում էին ապացուցել Քրիստոսի մարմնացման իրական լինելը, որ պետք է հնարավոր ճշգրտությամբ ցույց տրվեր նախատիպի հետ նմանությամբ, ապա Արեւմուտքում՝ ծիսական միջավայրում, սրբապատկերն ուներ լոկ ուսուցողական եւ գեղագիտական նշանակություն: Գ. Օստրոգորսկին, խոսելով իրեն հետաքրքրող երեւութի՝ արվեստի բնագավառում կիրառելիության մասին, կարծում է, որ այս ամենով է նաեւ պայմանավորված պատկերազրույթյան ավանդույթների անփոփոխությունն ուղղափառ աշխարհում, եւ դրան հակառակ՝ պատկերազրույթյան հարցում մեկ միասնական ավանդույթի բացակայությունն ու բազմազան մոտեցումը քրիստոնեական Արեւմուտքում⁵²:

⁵¹ Վ. Բրանդեսը եւս կարծում է, որ նույնիսկ մինչ Լ. դարի կեսերը սրբապատկերների հարցը պապականության եւ բյուզանդական կայսրության փոխհարաբերություններում չի ունեցել այն առաջնակարգ նշանակությունը, ինչպես նշում են հետազոտողներից շատերը: Դրա փոխարեն նրանց փոխհարաբերություններում առավել կարեւորություն է ներկայացրել, օրինակ, հարկային-ֆինանսական կամ թեմական վեճերի հարցը: Այս մասին տես WOLFRAM BRANDES, *Byzantinischer Bilderstreit, das Papsttum und die Pippinsche Schenkung Neue Forschungen zum Ost-West-Verhältnis im 8. Jahrhundert*, in: *Menschen, Bilder, Sprache, Dinge: Wege der Kommunikation zwischen Byzanz und dem Westen*. 2 vol. Byzanz zwischen Orient und Okzident 2, Mainz: Verlag des Römisch-Germanischen Zentralmuseums, 2018, էջ 63–79: Բացի Վ. Բրանդեսի հոդվածից՝ քրիստոնեական Արեւմուտքի եւ բյուզանդական Արեւելքի փոխհարաբերությունների տարբեր կողմերին նվիրված բազմաթիվ հետաքրքիր հոդվածները տես հետևյալ ժողովածու երկհատորյակում. F. DAIM, D. HEHER, C. RAPP, CH. GASTGEBER, *Menschen, Bilder, Sprache, Dinge: Wege der Kommunikation zwischen Byzanz und dem Westen*. 2 vols. Byzanz zwischen Orient und Okzident, 1/2. Mainz: Verlag des Römisch-Germanischen Zentralmuseums, 2018:

⁵² Տես G. OSTROGORSKY, *Rom und Byzanz...*, էջ 86–87:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանրացնելով Գ. Օստրոգորսկու մոտեցումները պատկերամարտության վերաբերյալ՝ կարելի է ընդգծել, որ ըստ նրա՝ սրբապատկերների հարցը քննարկման առարկա է եղել Բյուզանդիայում եւ քրիստոնեական աշխարհում դեռեւս Լեւոն Գ.-ի հրովարտակից էլ առաջ, եւ այն բյուզանդական ուղղափառ աստվածաբանները դիտել են որպէս երեւութականության դրսեւորում, իսկ սրբապատկերների միջոցով արտացոլվել է Քրիստոսի իրական մարմնացումը: Պատկերամարտության ավարտը նա դիտում էր արեւելյան ազդեցության հաղթահարման արդյունք եւ կրոնական հարցերում հունաքրիստոնեական հիմքի վրա յուրովի զարգացում, որը բավականին տարբերվում էր Արեւմուտքի կաթոլիկ աշխարհից, իսկ այդ զարգացման տրամագիծը, ըստ հեղինակի, դուրս գալով կրոնական շրջանակից՝ հասնում էր քաղաքակրթական մակարդակի:

Բյուզանդագետը, պատկերամարտությունը համարելով քրիստոսաբանական հիմքով կրոնա-փիլիսոփայական երկու տարբեր աշխարհայացք ունեցող կողմերի պայքար եւ մշակութային կողմնորոշման հարց, գրեթե առանց ուշադրության էր թողել Լեւոն Գ. կայսեր անձի գործոնը⁵³՝ պայմանավորված տվյալ դարաշրջանի քաղաքական իրադրությամբ:

⁵³ Պատկերամարտության եւ Լեւոն կայսեր մասին հետեւյալն է գրում Պ. Շրայները. «Պատկերամարտությունը շուրջ ոչ սոցիալական, ոչ էլ տնտեսական շարժառիթներ, այլ մի կայսեր անձնական համոզմունքի հետեւանքով է կազմակերպվել»: SÉNÉ P. SCHREINER, *Der Byzantinischer Bilderstreit: kritische Analyse der zeitgenössischen Meinungen und das Urteil der Nachwelt bis heute* // *Bizancio, Roma e l'Italia nell'alto Medioevo* (Settimane di studio del Centro Italiano di studi sull'alto Medioevo, 34). Spoleto, 1988, էջ 402: Իսկ հայտնի բյուզանդագետ Մ. վան էսբրուեկը կարծում է, որ Սահակ Չորրորդիցի կաթողիկոսի «Բացառություններն ընդգծեմ երկաթնակաց նետորակնացն» թղթում սրբապատկերների դեմ արտահայտած գաղափարներն են ազդել Լեւոն կայսեր աստվածաբանական պատկերացումների վրա: Սահակ Չորրորդիցու արտահայտած պատկերամարտական գաղափարների եւ բյուզանդական պատկերամարտության կապի մասին տես M. VAN ESBROECK, *Der armenische Ikonoklasmus* // *Oriens Christianus* 87 (2003) 144–153, *Le discours du Catholicos Sahak III en 691 et quelques documents arméniens annexes au Quinisexte* // *The Council in Trullo Revisited* / Ed. by G. Nedungatt, M. Featherstone (Roma, 1995) (Καρονικά, 6) 323–454, *La politique arménienne de Byzance de Justinien II à Léon III* // *Studi su l'Oriente Cristiano* 2.2 (1998), էջ 111–120: Ուսումնասիրողներ Վ. Մ. Լուրյեն եւ Վ. Ա. Բառանովը, հիմք ընդունելով Մ. վան էսբրուեկի վերոհիշյալ աշխատանքներում արձարծված տեսակետները պատկերամարտության վերաբերյալ, կարծում են, որ կապ կա Բյուզանդական կալստությունում առաջ եկած պատկերամարտության եւ է. դարի Հայաստանում արտահայտված պատկերամարտական դրսեւորումների միջեւ: Նրանք կարծում են, որ բյուզանդական պատկերամարտությունը շարունակում էր է. դարի բյուզանդական որոգիներականությունն ավանդույթները, եւ հետագա ուսումնասիրության առարկա պետք է լինի այն հարցը, թե ինչպես է Լեւոն Գ.-ի ժամանակաշրջանում տեղի ունեցել այդ

Սրբապատկերների պաշտամունքի հարցը, լինելով ինքնին աստվածաբանական բանավեճ, քննարկման առարկա էր եղել հոգեւոր միջավայրում պատկերամարտության սկսվելուց էլ դեռ մի քանի դար առաջ⁵⁴, եւ նույնիսկ պատկերամարտության հաղթանակից էլ հետո հարցի քննարկումը չդադարեց⁵⁵ ոչ միայն Բյուզանդիայում, այլեւ քրիստոնեական Արեւմուտքում եւս: Այս երեւույթի քաղաքական հնչեղությունն ձեռք բերելու փաստը կապված է զուտ լեւոն Գ. կայսեր գործունեության հետ: Այդ փաստը, որ Բյուզանդական կայսրությունում պատկերամարտության առաջացումը մեծապես կապված է լեւոն Գ. կայսեր անձի հետ, ինքնին անհերքելի է, եւ դա ընդունում է հետազոտողների մեծ մասը: Պարզելու համար, թե ինչու պատկերամարտությունն առաջ եկավ հենց այդ դարաշրջանում եւ արտահայտվեց հենց այն ձեւով, ինչպես որ եղել է Հ.—Թ. դարերում, եւ ինչքանով է այդ ամենը կապված լեւոն կայսեր անձի հետ, հարկ է կենտրոնանալ այն դրդապատճառների բազմակողմանի ուսումնասիրության ուղղությամբ, որոնք բերեցին կայսրին այդ որոշման կայացմանը:

ավանդույթների եւ Հայաստանից եկած պատկերամարտության հանդիպումը: Առավել մանրամասն տե՛ս В. М. ЛУРЬЕ, История византийской философии, СПб., 2006, էջ 526—529:

⁵⁴ Պաշտոնական պատկերամարտությունից առաջ եղած սրբապատկերների գոյության եւ սրբապատկերների պաշտամունքի մասին տե՛ս HANS FRHR. VON CAMPENHAUSEN, Die Bilderfrage als theologisches Problem der alten Kirche. Zeitschrift für Theologie und Kirche, Vol. 49, №1 (1952), էջ 33—60. J. KOLLWITZ, Das Christusbild des dritten Jahrhunderts, Münster, 1953. H. G. THÜMMEL. Die frühgeschichte der ostkirchlichen Bilderlehre: Texte und Untersuchungen zur Zeit vor dem Bilderstreit, Berlin, 1992. S. HAUSAMMANN, Alte Kirche, Band 4: Das Christusbekenntnis in Ost und West. Zur Geschichte und Theologie im 4./5. Jahrhundert. Chalkedon - Trullanum II. Germanenmission. Bilderstreit, Berlin, 2004:

⁵⁵ Պաշտոնական պատկերամարտության ավարտից հետո առաջ եկած պատկերամարտության մասին տե՛ս HANS FRHR. VON CAMPENHAUSEN, Zwingli und Luther zur Bilderfrage // Das Gottesbild im Abendland. Witten, 1959, էջ 139—172. J. KOLLWITZ, Bild und Bildertheologie im Mittelalter // Das Gottesbild im Abendland. Witten, 1959, էջ 109—138. D. FREEDBERG, The Structure of Byzantine and European Iconoclasm, 165—178 Papers given at the Ninth Spring Symposium of Byzantine Studies University of Birmingham, March 197. M. STIRM, Die Bilderfrage in der Reformation. Gütersloh, 1977. H. FELD, Der Ikonoklasmus des Westens. Leiden; N. Y., 1990. X. БЕЛЬТИНГ, Образ и культ: История образа до эпохи искусства. М., 2002. Л. В. ЛУХОВИЦКИЙ, Споры о святых иконах при Алексее I Комнине: полемические стратегии и выбор источников, «Византийский временник», т. 73 (98), Москва, 2014:

РЕЗЮМЕ

Георгий Острогорский является одним из самых авторитетных византистов, который оставил уникальный след в исследованиях истории Византийской империи. В своих трудах, среди множества вопросов, Острогорский проявлял огромный интерес к вопросам, связанным с иконами и процессами вокруг них. Ученый посвятил данным вопросам не один год исследовательского труда и его перу принадлежат ряд работ, посвященных этим вопросам. В нашей статье рассмотрены работы Острогорского на тему иконоборчества в Византийской империи, поскольку освящение этих работ византиниста познакомит армянских исследователей, занимающихся вопросами иконоборчества, со своеобразными подходами ученого, который внес немалый вклад в дело изучения иконоборчества в Византийской империи, что, в свою очередь, будет способствовать изучению проявлений иконоборчества в Средневековой Армении.

SUMMARY

George Ostrogorsky is one of the most notable Byzantine scholars, who left his unique mark in the study of the history of the Byzantine Empire, during which he paid more attention to many issues, including the events around icons. The scholar devoted years of research to these issues and authored several works dedicated to them. In this article, we will consider the works of G. Ostrogorsky on iconoclasm in the Byzantine Empire, since their study by the Byzantine scholar will introduce the Armenian researchers dealing with iconoclasm to the peculiar approaches of the scholar, who made a significant contribution to the study of iconoclasm in the Byzantine Empire. In turn, this will help to study the manifestations of iconoclasm in medieval Armenia.



ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ
ԵՊՀ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՀՈՒՐՁ (1920–1930-ԱԿԱՆ ԹԹ.)

Վարչուրամյակներ շարունակ հայկական գաղութները տարբեր երկրներում ձեւավորվել ու ամրապնդվել են Հայոց Եկեղեցու շուրջը, որի ջանքերի շնորհիվ է նաեւ տեղի հայությունը պահպանել իր ազգային դիմագիծը: Հայոց Եկեղեցին կարեւոր դերակատարում ունի նաեւ Սփյուռքում: Հայաստանյայց Եկեղեցու թեմերի ձեւավորումն ընթացել է տարբեր կերպ, ինչի վրա մեծապէս ազդել է հայ իրականությանը բնորոշ քաղաքական կազմակերպությունների ավանդական իրարամերժ դիրքորոշումը, դա առավել ակներեւ դարձավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով: Նման իրավիճակ էր նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ հայերի զանգվածային ներգաղթ սկսվեց դեռեւս ժԹ. դարավերջին: Հասնելով Նյու Յորք՝ հայերն այնուհետեւ բնակություն հաստատեցին երկրի արեւելյան նահանգների որոշ քաղաքներում, մասնավորապէս՝ Ուստրում, Նյու Յորքում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում եւ այլուր: Ուստրում 1898 թ. հիմնվեց Ամերիկահայոց առաջնորդական թեմը, որը հետագայում՝ 1923 թ., տեղափոխվեց Բոստոն, իսկ 1927-ին՝ Նյու Յորք: Դրան զուգահեռ՝ ստվարանում էր հայության թվաքանակն ԱՄՆ արեւմտյան նահանգներում՝ նախեւառաջ Կալիֆոռնիայում՝ ի հաշիվ թե՛ անմիջապէս Արեւմտյան ու Արեւելյան Հայաստանից ներգաղթողների, թե՛ երկրի արեւելքից այստեղ տեղափոխված հայերի: Ուստի եւ ժամանակի ընթացքում անհրաժեշտություն առաջացավ ԱՄՆ արեւմտյան շրջանում եւս հաստատելու առանձին, ինքնուրույն թեմ:

Կալիֆոռնիայի թեմի հիմնադրմանն ու պատմությանը մասնակիորեն անդրադարձել են տարբեր հեղինակներ, որոնց աշխատանքները հղվում են այս շարադրանքում: Սակայն խնդիրը կարիք ունի առավել համակողմանի ուսումնասիրության եւ հավելյալ մանրամասների լուսաբանման, ինչին եւ նվիրված է սույն հոդվածը:

Կալիֆոռնիայում առանձին առաջնորդություն հաստատելու հարցն առաջին անգամ բարձրացվում է 1917 թ. հունվարի 28-ին Ֆրեզնոյի պատգամավորական ժողովում: Նույն թվականի փետրվարի 11-ին ժողովն այդ մասին տեղեկագրում է ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Արսեն Ծ. վրդ. Վեհունուն՝ խնդրելով նրան տեղ հասցնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված պաշտոնագիրը. «Քալիֆորնիա նահանգի կամ առհասարակ Արեւմտեան նահանգներու մէջ ցրուած հայ գաղութին վիճակը ծանօթ է Ձեզի: Այս կողմերու հայք հետզհետէ տեղաւորուելու եւ շատանալու վրայ են, այնպէս որ անոնց կրօնական, կրթական, ազգային եւ այլ պէտքերն ալ նոյն համեմատութեամբ սկսած են շատնալ, որոնց խղճամիտ խնամածութիւնն ու հոգացողութիւնը կը պահանջեն անմիջական հսկողութիւն եւ կարգադրութիւն տեղւոյն վրայ: Այս պէտքերն ու պահանջները շատոնց զգալի ըրած էին առանձին առաջնորդութեան մը հաստատութիւնը Քալիֆորնիոյ մէջ, եւ վստահ ենք, որ Ձեր Գերապատուութիւնն ալ փորձառաբար գնահատած է այս կողմերու հայոց բացառիկ պայմանները, թէ որչա՛փ դժուար է 3500 մղոն հեռաւորութենէ մը ստանձնել անոնց առաջնորդելու պատասխանատուութիւնը: Քալիֆորնիոյ հայերը, նկատի առնելով իրաց վիճակը, իրենց ազգային եւ եկեղեցական ինքնուրոյնութեան պահպանութիւնը ապահովելու նախանձախնդրութեամբ, որոշեցին ի գործ դնել իրենց վաղեմի ծրագիրը՝ հաստատելով իրենց առաջնորդութիւնը ուղղակի Մայր Աթոռոյ իրաւասութեան ներքեւ...»¹:

Պատասխանն ստացվում է հաջորդ ամսի 3-ին. «Կրօնական ժողովն նկատի առաւ իր փետր. 19ի եւ մարտ 1ի երկու նիստերուն մէջ՝ Միացեալ Նահանգաց արեւմտեան հայ գաղթականութեան յատուկ անջատ առաջնորդութեան համար ձեր առ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ուղղեալ փետր. 11 թ. պաշտօնագիրը, եւ իր տեսութիւններուն հետ մէկ-տեղ յղեց Ն. Ս. Օծութեան...»²:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգով դրուելունն առավել հանգամանալից քննարկվում է 1918 թ. ապրիլի 7—8-ը Ուստրի պատգամավորական ժողովում: Ֆրեզնոյից ժամանած հատուկ պատգամավոր Վահան Քյուրքչյանն ընդարձակ զեկուցումով հիմնավորում է Կալիֆոռնիայի հայերի պահանջը եւ հավաստիացնում, որ նրանք բնավ նպատակ չունեն

¹ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, թ. 8, էջ 60—61: Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված պաշտոնագիրը տես անդ, 1918, թ. 6, էջ 41—43, 1918, թ. 7, էջ 50—52:

² «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, թ. 8, էջ 61:

ստեղծել հակառակորդ թեմ, այն պետք է լինի համարժեք եւ կանոնական հավասարության գործող կառույց: Ժողովը միաձայն ընդունում է նրա բերած փաստարկները՝ հարցի վերջնական տնօրինումը հանձնելով Վեհափառ Հայրապետին³:

Այդուհանդերձ՝ Կալիֆոռնիայում առանձին առաջնորդություն ստեղծելու խնդիրը դեռ երկար ժամանակ չհանգուցալուծվեց, քանի որ Հայաստանի հասարակական-քաղաքական անբարենպաստ պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը հազիվ թե պատեհ ժամանակ կամ առիթ ունենար դրանով լրջորեն զբաղվելու: Իսկ երբ 1920 թ. վերջին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգերը, Հայոց եկեղեցին արդեն ստիպված էր իր յուրաքանչյուր քայլը նախապես համաձայնեցնել Հայաստանի խորհրդային իշխանությունների հետ:

Հարցը կրկին արծարծվում է տարիներ անց՝ 1925 թ. սեպտեմբերին, երբ Կալիֆոռնիայի հայ հոգեւորականությունը մասնավոր գրությամբ խնդրում է Բոստոնի ժողովին ընթացք տալ իրենց վաղեմի խնդրանքին: Այդ տարիներին էր, որ Կալիֆոռնիայի հայ առաքելական համայնքում հետզհետե խորանում էր դժգոհությունն Ամերիկայի հայոց առաջնորդ Տիրայր արք. Հովհաննիսյանի կառավարման ձեւից: Այսպես՝ 1920-ական թթ. սկզբին Րիդլիի եւ Լոս Անջելեսի հայերը, չունենալով օծված եկեղեցիներ, պատարագում էին վեմ քարի վրա: 1924 թ. Տիրայր արքեպիսկոպոսը Բոստոնից հրահանգում է այս ծուխերին դադարեցնել վեմ քարի օգտագործումը, ինչը, բնականաբար, մեծ վրդովմունք է առաջացնում⁴: 1924 թ. «Ասպարէզում» հրատարակվում է Րիդլիի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգաբարձության խորհրդի նամակն ամերիկահայոց առաջնորդին: Նամակում հոգաբարձությունը մի շարք հարցադրումներ է ուղղում կենտրոնական վարչությանը մինչեւ եկեղեցու օծումը վեմ քարի կիրառության թույլատրելիության վերաբերյալ եւ պահանջում հիմնավոր բացատրություններ: Ավելին՝ առաջնորդն ու առաջնորդարանը մեղադրվում են երկդիմի հրահանգների եւ «բռնապետության» մեջ⁵: Սեփական առաջնորդու-

³ Այս հարցին անդրադարձը տե՛ս «Ատենագրություն Ամերիկայի հայոց երեսփոխանական ժողովույ. գումարեալ ի Բոստոն», ա. հ., 6–7 սեպտեմբերի, 1925, էջ 22–23 (այսուհետե՝ «Ատենագրություն...»). նաեւ՝ Օ. MINASSIAN, A History of the Armenian Holy Apostolic Orthodox Church in the United States (1888–1944), Monterey, 2010, էջ 222–223:

⁴ Տե՛ս G. KOOSHIAN, JR., The Armenian Immigrant Community of California: 1880–1935. A dissertation, Los Angeles, 2002, էջ 271–272:

⁵ Մանրամասն տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնո, 1924, թ. 1102, էջ 1:

թյուն հիմնելու պահանջն օրեցօր ավելի էր սաստկանում: Սակայն Բոստոնի թեմական պատգամավորական ժողովում Կալիֆոռնիայի անջատ թեմի վերաբերյալ որեւէ նոր տեղեկություն չի հնչում. «Ժողովը.... սկզբունքով ընդունեց Քալիֆորնիոյ թեմին պահանջը՝ սպասելով Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի վերջնական կարգադրութեանը, իսկ մինչեւ այն Քալիֆորնիա ենթարկուած կը մնայ Կեդրոնին՝ ըստ Սահմանադրութեան»⁶:

Եւ ահա 1927 թ. Կալիֆոռնիայի պատգամավորական ժողովը որոշում է գործել ինքնուրույնաբար. սեպտեմբերի 6-ին ընտրում է Կալիֆոռնիայի առաջնորդ եւ այդ մասին տեղեկացնում Մայր Աթոռին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցի (1911—1930 թթ.) նոյեմբերի 28-ի կոնդակով հիմնադրվում է Կալիֆոռնիայի (արեւմտյան) թեմը. «....Ընդունելով երեսփոխանական ժողովի յայտարար-գրութիւնը՝ իրազեկ եղանք, թէ երեսփոխանական ժողովը Կալիֆորնիոյ հայոց առաջնորդ ընտրած է Մայր Աթոռիս միաբան Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոսը եւ կը խնդրէ մեզմէ հաստատել զայն: Համամիտ ըլլալով այդ ընտրութեան՝ մենք այս հայրապետական կոնդակով կը հաստատենք եւ կը յայտարարենք առանձին վիճակ Կալիֆորնիոյ հայոց թեմը եւ նոր թեմի առաջնորդական պաշտօնին մէջ կը հաստատենք երեսփոխանական ժողովիդ ընտրածը՝ մեր հոգեծին որդին Տ. Գարեգին եպիսկոպոս խաչատրեանը» (կոնդակում առաջնորդի ազգանունը միշտ գրվում է խաչատրեան.— Հ. Ե.)⁷:

1928 թ. մայիսի 26-ին Ֆրեզնո է ժամանում Կալիֆոռնիայի հայոց թեմի անդրանիկ առաջնորդը՝ Գարեգին եպս. խաչատուրյանը (մինչ այդ՝ 1921—1928 թթ.՝ Տրապիզոնի թեմի առաջնորդ): Սա պատմական պահ էր Կալիֆոռնիայի հայությունից համար: Առաջնորդին դիմավորելու էին գնացել հարյուրավոր հայեր՝ մեծահասակ թեմանուկ՝ եկեղեցական այրերի գլխավորությամբ⁸: Հաջորդ օրը Գարեգին եպիսկոպոսը մատուցում է առաջին պատարագը հոծ բազմությամբ լի Ս. Երրորդություն եկեղեցում, որը դարձել էր առաջնորդանիստ:

Կալիֆոռնիայի թեմի ստեղծումը կանխատեսելի եւ սպասելի էր: Դրա պատճառները համոզիչ կերպով ներկայացվել էին դեռեւս 1917 թ. հուն-

⁶ «Ատենագրութիւն....», էջ 21—22:

⁷ «Հայրապետական կոնդակ Վեհ. Տ. Տ. Գեորգ Ե. Ս. Կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ երկու խօսք Գալիֆորնիոյ անդրանիկ առաջնորդ Տ. Գարեգին եպիսկոպոսին Տրապիզոնի», ա. տ., ա. հ., 1928, էջ 14—15:

⁸ Այս իրադարձության պատկերավոր նկարագրությունները տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1928, թ. 1304, էջ 1. նաեւ «Մշակ», Ֆրէզնօ, 1928, թ. 246—247, էջ 1, 4:

վարին Ֆրեզնոյում կայացած ժողովի վերոհիշյալ խնդրագրում: Իսկ հետագա տարիներին փաստարկները՝ հոգուտ անկախ թեմի հիմնադրման, միայն ավելացել էին: Կարելոր է նկատել, սակայն, որ նույն այդ տարիներին որոշ հեղինակներ Կալիֆոռնիայի թեմի հիմնումը բացատրում էին հայ քաղաքական կազմակերպությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) եւ Ռամկավար ազատական (ՌԱԿ) կուսակցությունների միջեւ ընթացող պայքարով՝ տեղի հայության մեջ գերիշխող դիրք ապահովելու նպատակով: Այսպես՝ ՀՅԴ պաշտոնաթերթ «Ասպարէզը», որ մշտապես անդրադառնում էր այդ խնդրին, իր՝ դեռեւս 1925 թ. համարներից մեկում գրում էր, որ առաջնորդական հարցը զուտ պատրվակ էր ռուսահայ (եւ ուրեմն, ըստ հեղինակի, Դաշնակցության համակիր) Տիրայր արքեպիսկոպոսի դեմ դժգոհություն հայտնելու. «...եթէ վաղը առաջնորդը փոխուի, Քալիֆորնիոյ առաջնորդութեան հարցը կը մեռնի, ինչպէս մեռաւ ութը տարի առաջ, երբ կարծեցեալ Դաշնակցական Արսէն վ. Վեհունին փոխուեցաւ...»⁹:

Տարիներ անց նման տեսակետ է հայտնում նաեւ Ա. Պարտիզյանն իր մեծածավալ «Հայ Եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները» գրքում: Ըստ նրա՝ 1927-ի պատգամավորական ժողովի որոշումն ուղղված էր Տիրայր արքեպիսկոպոսի դեմ, իսկ որոշման միակ հիմքը նրա դիրքերը տկարացնելն էր: Եւ եթե Տիրայր արքեպիսկոպոսը հրաժարական տված լիներ 1927-ին, այլ ոչ թե 1928-ին, Կալիֆոռնիայի առաջնորդություն չէր ստեղծվի, քանի որ սույն ժողովի նույն ռամկավար պատգամավորները հաջորդ առաջնորդի՝ Ղեւոնդ արք. Դուրյանի (հայտնի էր իր էջմիածնամետ հայացքներով) աթոռակալման շրջանում մտորում էին Կալիֆոռնիայի թեմը կրկին միացնել Արեւելյան թեմին¹⁰:

Ի հակադրություն այս տեսակետների՝ «Փարոսում» կարդում ենք. «Քալիֆորնիոյ մէջ առաջնորդարանի հաստատութիւնը աշխարհագրական եւ տեղական պայմաններէ ծնած է, եւ ազգային ու եկեղեցական զարգացման կարիքի մը արդիւնքն է: Այս ձեռնարկը ո՛չ Նիւ Եորքի առաջնորդարանին եւ ո՛չ ալ առաջնորդին անձին դէմ բողոք է, այլ գաղութային տեղական պէտքերու հետեւանք»¹¹:

⁹ «Ասպարէզ», Ֆրէզնո, 1925, թ. 1159, էջ 1—3:

¹⁰ Տե՛ս Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆ, Հայ Եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները, Պոսթըն, 1936, էջ 275:

¹¹ «Փարոս», Ֆրէզնո, 1928, թ. 4, էջ 76:

Քաղաքական կազմակերպությունների՝ Հայոց Եկեղեցին իրենց հսկողության տակ առնելու պայքարը, որն առավել պետք է սաստկանար հետագա տարիներին, հղի էր անդառնալի հետեւանքներով: Նման իրավիճակում Կալիֆոռնիայի հայությունը մեծ սպասելիքներ ուներ թեմի նորընտիր առաջնորդ Գարեգին եպս. Խաչատուրյանից: Տեղական «Մշակ» շաբաթաթերթը, օրինակ, հուլյս է հայտնում, որ Գարեգին եպիսկոպոսը կկարողանա տասնամյակներով կարգուկանոնը կորցրած, Եկեղեցուց հեռացած, կուսակցական վեճերի ու պայքարի բույն դարձած հայ գաղութը համախմբել Հայոց Եկեղեցու շուրջը¹²:

1928 թ. հոկտեմբերին Գարեգին եպս. Խաչատուրյանը Կալիֆոռնիայի հայոց նորընտիր պատգամավորական ժողովին է ներկայացնում իր տեսլականն առաջնորդարանի գործունեության վերաբերյալ, որի հիմնական դրույթները 1929—1932 թթ. պատգամավորական ժողովներում ամրագրվում են որպես օրակարգային հարցեր:

Կալիֆոռնիայի առաջնորդի առաջին կարեւոր քայլը տեղի հայության մարդահամարն էր: 1928 թ. նա հանձնարարում է կենտրոնական վարչությանը պատրաստել վիճակացույց-հարցարաններ, որոնք ուղարկվում են ծխական բոլոր համայնքներին: Ընդ որում՝ այդ հարցարանների նպատակը ոչ միայն մարդահամարն էր, այլ նաեւ հայության հասարակական-տնտեսական ու կրթական պայմանները որոշելը: Օրինակ՝ տվյալ համայնքի բնակչության քանի՞ տոկոսն է Հայ Եկեղեցու անդամ, արդյո՞ք գործում են կիրականօրյա եւ ազգային մեկօրյա դպրոցներ (ԱՄՆ-ում հայկական ամենօրյա դպրոցներ հիմնադրվել են միայն 1960-ական թթ. կեսերից.— Հ. Ե.), եթե այո, ապա որքա՞ն է դրանց աշակերտության թիվը, ովքե՞ր են ուսուցիչները, ի՞նչ մեթոդներով ու դասագրքերով են դասավանդում, ինչպիսի՞ որբախնամ կամ եկեղեցասիրաց միություններ ունեն եկեղեցիները, որքա՞ն են տվյալ եկեղեցու տարեկան բյուջեն ու պարտքերը, ի՞նչ թվով մկրտություններ, թաղումներ, պսակադրություններ եւ ամուսնալուծություններ են կատարվել եւ այլն¹³: Սակայն ոչ բոլոր համայնքներն են արձագանքում այս նախաձեռնությանը, եւ հարցարանների միայն մի մասն է վերադարձվում: Գարեգին եպիսկոպոսը վհատություն մը է խոստովանում, որ ձեռնարկի

¹² Տե՛ս «Մշակ», Ֆրեզնո, 1928, թ. 246—247, էջ 2:

¹³ Շնորհակալություն ենք հայտնում ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդարանի արխիվի պատասխանատու Նորայր Պողոսյանին՝ հարցարանի պատճենը մեզ տրամադրելու համար:

ձախողման պատճառով առաջնորդարանը չունի մարդահամարի ամբողջական պատկեր¹⁴:

Մեկ այլ հրատապ խնդիր էր ամերիկյան միջավայրում երիտասարդ սերնդի եւ Եկեղեցու կապի ամրապնդումը: Եկեղեցում փորձեր են արվում գրաբարի փոխարեն առավել լայնորեն կիրառել աշխարհաբարը, որպեսզի պատարագի մատուցումը կամ աստվածաշնչյան ընթերցումները հասկանալի դառնան երիտասարդության եւ ընդհանրապես հասարակ ժողովրդի համար: Ուստի հարկավոր էր վերացնել լեզվական անջրպետը եւ նոր սերնդի հետ խոսել նրան հասկանալի լեզվով: Սրան զուգահեռ՝ զարկ է տրվում անգլերենի կիրառմանը՝ իրականացվում են թարգմանչական տարբեր ձեռնարկներ, ինչպես օրինակ՝ պատարագամատուցի թարգմանությունն ու հրատարակումը, որոշ ժամերգությունների թարգմանությունը եւ այլն (Տեղեկագիր, էջ 14, 18—19):

Նոր հիմքերի վրա է դրվում եկեղեցական մամուլը: Ֆրեզնոյի Ս. Երրորդություն եկեղեցու Արանց եկեղեցասիրաց միության «Փարոս» ամսօրյա հանդեսը (հրատարակվում էր 1927 թվականից) սկսում է հրատարակվել առաջնորդի հովանավորությամբ: 1929 թ. Գարեգին եպիսկոպոսի առաջարկով այն վերանվանվում է «Փարոս Հայաստանեայց»՝ ընդգծելու համար նրա նպատակը՝ ծառայել Հայ Եկեղեցուն: Գարեգին եպիսկոպոսը գրում է. «Առաջնորդարանս՝ յանձին իր առաջնորդին, ինքն ալ ըրած է եւ կ'ընէ բարոյական եւ նիւթական ամէն հնարաւոր զոհողութիւն՝ վառ պահելու համար ճրագը կրօնական-ազգային ամսօրեայ այդ համեստ հանդէսին՝ ՓԱՐՈՍ-ին՝ դառնալով անոր ջերմ հովանաւորողը»: Շուտով առաջնորդը հղանում է նաեւ «Փարոս Հայաստանեայցում» անգլերեն բաժին ստեղծելու գաղափարը: Հարկ է նկատել, որ հատկապես այդ տարիներին, երբ Հայ Եկեղեցին իր առաջնորդարանով դեռ նոր էր թեւակոխում բարեկարգությունների փուլը, անգլերեն բաժնի ստեղծումը թեւեւ անհրաժեշտ, բայցեւ համարձակ քայլ էր: Տեղական լեզվով բաժինը կոչված էր հարաճուն թվով անգլիախոս հայ երիտասարդների շրջանում սեր եւ հետաքրքրություն արթնացնելու ազգային-կրոնական, մշակութային արժեքների հանդեպ: Արդեն 1930 թ. երեսփոխանական ժողովի

¹⁴ Տե՛ս ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՏՐԱՊԵՋՈՆԻ, Տեղեկագիր կամ հրապարակային համարատուրիւն առաջնորդական քառամեայ պաշտօնավարութեան. 1928 յունիս 1—30 յունիս 1932, Օքլէնդ, 1932, էջ 55—56 (այս սկզբնաղբյուրից հետագա հղումները կտրվեն փակագծերում՝ նշելով միայն՝ Տեղեկագիր եւ համապատասխան էջերը):

օրակարգային հարցերից մեկը «Փարոսը» առաջնորդարանի պաշտոնաթերթ դարձնելն էր: Վերջինս պարտավորվում էր ավելի հարստացնել ու բովանդակալից դարձնել այն, ինչպես նաև կատարելագործել անգլերեն բաժինը (Տեղեկագիր, էջ 43–44, 69–70):

Այս առնչությամբ հարկ է նշել, որ որոշ հայ մատենագետներ իրենց կազմած ցանկերում նշում են «Շողակաթ» անունով կրոնական ամսաթերթ, որն իբրեւ հրատարակվել է 1928–1935 թթ. Ֆրեզնոյում՝ Գարեգին եպս. Խաչատուրյանի խմբագրմամբ¹⁵: Սա, ինչ խոսք, շփոթմունք է, որի ապացույցն է հենց Գարեգին եպիսկոպոսի վկայությունն այն մասին, թե «Փարոս Հայաստանեայցը» 1930-ական թթ. սկզբներին կրոնական-ազգային միակ ամսաթերթն էր ԱՄՆ-ում (Տեղեկագիր, էջ 44): Բացի այդ՝ հայ պարբերական մամուլի ավելի վաղ շրջանի մատենագիտական ցանկերում¹⁶ եւս որեւէ հիշատակություն Ֆրեզնոյում հրատարակվող «Շողակաթի» մասին չկա: Գարեգին եպիսկոպոսն իսկապես հիմնադրել ու երկար տարիներ խմբագրել է այդ անվանումով կրոնական ամսաթերթ, սակայն դա եղել է 1952–1961 թթ. Ստամբուլում, երբ նա արդեն Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր:

Կալիֆոռնիայի առաջնորդարանի ուշադրության կենտրոնում մշտապես եղել է ազգային դպրոցը: Գարեգին եպիսկոպոսի՝ 1929 թ. տեղեկագրի երկրորդ կարեւորագույն կետը վերաբերում էր հենց դպրոցներին. «Բոլոր թեմերում¹⁷ մէջ ընդհանրապէս եւ կարեւոր կեդրոններու մէջ գլխաւորաբար հիմնել գոնէ եռօրեայ կամ երկօրեայ հայ-համազգային վարժարաններ՝ ուսուցանելու համար հայ լեզուն, պատմութիւնն ու գրականութիւնը»¹⁸: Նա խիստ կարեւորում էր ուսուցիչների բանիմացությունն ու գրագիտությունը, որ պաշտոնի կոչվեն ոչ միայն մայրենիին, այլ նաև հայոց պատմությանը, գրականությանն ու մշակույթին տիրա-

¹⁵ Տէն Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967). համահավաք ցանկ, Երեւան, 1970, էջ 415. Մ. ԲԱՔԼՈՅԵԱՆ, Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցանկ (1794–1980), Երեւան, 1986, էջ 177:

¹⁶ Տէն Գ. ԼԵՒՈՆՅԱՆ, Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչեւ մեր օրերը (1794–1934), Երեւան, 1934. նաև՝ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայ պարբերական մամուլի բերլիոգրաֆիա, հտ. 2 (1900–1956), Երեւան, 1957:

¹⁷ Այդ տարիներին ծխական համայնքները կոչվել են թեմեր (տե՛ս «Սահմանադրութիւն Գալիֆոռնիոյ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ», Ս. էջմիածին, ա. հ., 1932. այսուհետեւ՝ «Սահմանադրութիւն...»):

¹⁸ «Միամեայ տեղեկագիր եւ անդրադարձումներ Գալիֆոռնիոյ նորակազմ առաջնորդութեան 1928 Մայիս 26–12 Մայիս 1929», Ֆրէզնօ, 1929, էջ 27–28:

պետող ուսուցիչներ: Ընդ որում՝ ազգային դպրոց հիմնելու գործում Գարեգին եպիսկոպոսը չէր ճանաչում հարանվանական որեւէ խտրություն: Դրա վառ օրինակն է այն, որ 1930 թ. նրա թելանդրանքով Լոս Անջելեսի տարբեր հայաշատ բնակավայրերում բացվեցին վարժարան-սրահներ: 1931-ին այս ծրագիրը համակարգելու եւ զարգացնելու նպատակով ստեղծվեց համագաղութային կրթական հանձնախումբ՝ կազմված տեղի Հայ Առաքելական, Ավետարանական եւ Մոլոկանական եկեղեցիների անդամներից: Չարլզ Մահաքյանի տվյալներով՝ հիմնվել էր այդպիսի 7–8 դպրոց¹⁹: Դրանք, սակայն, գոյատեւում են ընդամենը երկու տարի: Ժամանակակից Սիրական Գալոյանը պատճառաբանում է, որ Լոս Անջելեսի հայությունը բավականին ցրված էր ապրում, եւ դժվար էր այդ հեռավորության վրա համագաղութային մարմնի կայուն գործունեություն ապահովելը²⁰: Սակայն ինքը՝ Գարեգին եպիսկոպոսը, բոլորովին այլ կերպ է մեկնաբանում խնդիրը. «....Մեր եկեղեցին ի վիճակի չեղաւ կատարելու իր նիւթական յանձնառութիւնը՝ բարոյալքումի մատնելով գործող Մարմինը: Մեղադրանքի բաժին մ'ունի, անշուշտ, մեր ժողովուրդն ալ, շնորհիւ իր անտարբերութեան չկարենալով զնահատել կարեւորութիւնը այս համեստ ձեռնարկին՝ նիւթական ու բարոյական բացառիկ զոհողութիւններով»: Առաջնորդի խոսքով՝ շիտակ չէր ի սկզբանե հավաքված 200 հայ փոքրիկներին զրկել մայրենին սովորելու եւ հայեցի ոգին ըմբռնելու հնարավորությունից (Տեղեկագիր, էջ 28):

Առաջնորդարանի՝ իբրեւ առանձին կառույցի կայացման ճանապարհին նշանակալի քայլ էր սեփական Սահմանադրություն մշակելը: Այսպես՝ 1930 թվականին Կալիֆոռնիայի երեսփոխանական ժողովի որոշմամբ գործածության մեջ էր դրվել Ամերիկահայոց ազգային սահմանադրությունը, որը 1929-ին ԱՄՆ արեւելյան թեմին էր ուղարկել Գեւորգ Ե. կաթողիկոսը: Սակայն շուտով նույն ժողովը, հիմք ընդունելով սույն սահմանադրության գլխավոր սկզբունքները եւ կատարելով որոշակի փոփոխություններ ու խմբագրումներ, կազմում է Կալիֆոռնիայի թեմին հատուկ նոր սահմանադրություն, որի օրինակը 1932 թ. ապրիլի 6-ին Գարեգին եպս. Խաչատուրյանը հղում է Ս. Էջմիածնի գերագույն

¹⁹ SĒU CH. MAHAKIAN, History of the Armenians in California. a thesis. University of California, California 1935, էջ 69:

²⁰ SĒU S. KALOIAN, The Immigration of Armenians of Shirag to America (Շիրակի հայերի գաղթը դէպի Ամերիկա), Los Angeles, 1950, էջ 95:

հոգեւոր խորհրդին: Խորհուրդը արտոնում է դրա ժամանակավոր գործադրությունը՝ վերջնական հաստատումը վերապահելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին²¹:

Պետք է ասել, սակայն, որ Գարեգին եպիսկոպոսի ծրագրերն ու ջանքերը ծխական համայնքներում հենց սկզբից շարժանացան մեծ աջակցության: 1929 թ. «Ասպարէզը» մեղադրում էր Կալիֆոռնիայի եկեղեցական համայնքներին, հոգաբարձություններին ու եկեղեցական պաշտոնյաներին անտարբերության եւ անլուրջ վերաբերմունքի մեջ²²: Որոշ համայնքներ թերանում, երբեմն նույնիսկ հրաժարվում էին առաջնորդարանին վճարել օրենքով սահմանված տուրք (տարեկան 1–1.50 դոլար յուրաքանչյուր տնից)՝ էապես խոչընդոտելով վերջինիս աշխատանքները: Այդ ամենի հետեւանքով Կալիֆոռնիայի առաջնորդարանը հայտնվեց նյութական անմխիթար վիճակում: Առաջնորդարանի եւ անձամբ առաջնորդի գործունեության հանդեպ այդ վերաբերմունքն իրականում ուներ առավելապես քաղաքական շարժառիթներ, որոնք թաքցվում էին տնտեսական ճգնաժամի դժվարությունների քողի տակ:

Արդեն 1931 թ. նոյեմբերին Գարեգին եպիսկոպոսը Կալիֆոռնիայի ժողովին ստիպված էր խոստովանել, որ առաջնորդարանի պարտքերը կապել են իր ձեռքերը. «Խորապէս կը ցաւինք, որ աւելին ընելու անկարող եղած ենք՝ հակառակ մեր բոլորն բաղձանքին,— եւ աւելացնում,— անհրաժեշտ է առաջնորդարանը ազատել նիւթական այս անբաղձալի վիճակէն»: Առաջնորդարանի բյուջեի քննարկումը բոլորն վիճաբանությունների առիթ է դառնում ժողովում: Լոս Անջելեսի ու Ֆրեզնոյի որոշ պատգամավորներ պնդում էին, թե ի վիճակի չեն վճարելու իրենց պարտքերը: Դաշնակցական մամուլը համոզված էր, որ առաջնորդարանի նկատմամբ «ժլատությունը» պայմանավորված չէր տնտեսական գործոնով, քանի որ նույն Ֆրեզնոյի եւ Լոս Անջելեսի պարտապան եկեղեցիները բավականին շուայլ էին, օրինակ, իրենց հովիվներին վարձատրելիս²³: Ի դեպ, առաջնորդն ինքը լուրջ դժգոհություններ ուներ Լոս Անջելեսի համայնքից, որը չէր ենթարկվում ընդհանուր կարգուկանոնին. «Այս զանցառութիւնը, որուն պատասխանատուութիւնը հաճելի չէ մեզ մատնանշել, մէծապէս կը խանգարէ առաջնորդարանիս ելմտական հաւասարակշռութիւնը» (Տեղեկագիր, էջ 26):

²¹ Տե՛ս «Սահմանադրութիւն....», էջ 1–2:

²² Մանրամասն տես «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1929, թ. 1355, էջ 2:

²³ Տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1931, թ. 1485, էջ 1:

Մ. Ֆերահյանը, խոսելով Գարեգին եպիսկոպոսի հանդեպ նման «ըմբոստություն» մասին, գրում է, որ երբ ՌԱԿ-ի կողմից առնվազն հովանավորվող «Վարդանանց ասպետներ» կազմակերպության²⁴ թեկնածուն՝ Ֆրեզնոյի հովիվ Վարդան Ժ. վրդ. Գասպարյանը, չընտրվեց Կալիֆոռնիայի առաջնորդ, սկսվեց պայքար ոչ «ասպետական» Գարեգին եպիսկոպոսի դեմ, այնպես, ինչպես տարիներ առաջ Լոս Անջելեսի հայ Բողոքական Եկեղեցու (անունը չի նշվում.— Հ. Ե.) հովիվին սկսեցին հալածել եւ, ի վերջո, հեռացրին պաշտոնից՝ ԱՄՆ արեւելքից բերելով «ասպետական» հովիվի։ Ըստ նրա՝ «ասպետականները» Ֆրեզնոյի եւ Լոս Անջելեսի Հայ Առաքելական ու Բողոքական Եկեղեցիների հոգաբարձուներ եւ հովիվներ էին²⁵։

1930-ական թթ. սկզբին տեղի են ունենում իրադարձություններ, որոնք էապես ազդում են դեպքերի հետագա ընթացքի վրա։ Այսպես՝ 1930 թ. Արեւելյան թեմի կենտրոնական վարչությունը, նկատի առնելով տնտեսական ճգնաժամի պատճառած վնասները, Կալիֆոռնիայի առաջնորդարանին առաջարկում է վերամիավորել երկու թեմերը՝ Գարեգին սրբազանի առաջնորդության ներքո՝ պահելով դրանց անկախ վարչակազմը²⁶։ Նույն թվականի հունիսի 8-ին Կալիֆոռնիայի ժողովը քննարկում է այդ հարցը։ Գարեգին եպիսկոպոսը հայտնում է հետեւյալ դիրքորոշումը. «Ներկայ պայմաններով անջատ առաջնորդութիւն մը Գալիֆոռնիոյ մէջ պիտի չպսակէ երբեք այն ակնկալութիւնը, որով ստեղծուած է այս առաջնորդութիւնը... Ահա թէ ինչո՞ւ ես եկած եմ, հակառակ իմ կամքիս, այն եզրակացութեան թէ՛ տուեալ պայմաններով եւ միջոցներով մէկ կարող առաջնորդ կրնայ կառավարել երկու առաջնորդութիւններն ալ...» (Տեղեկագիր, էջ 66)։

Ներկա պայմաններ ասելով՝ առաջնորդը նկատի ուներ նախեւառաջ տնտեսական ճգնաժամը եւ այն կացությունը, որում հայտնվել էր Կալի-

²⁴ Քնարիկ Ավագյանն այս կազմակերպության մասին գրում է հետեւյալը։ 1916 թ. ազգային որոշ գործիչներ ԱՄՆ-ում հիմնել էին մասոնական Հայկական օթյակը, որը 1923—1924 թթ. Ռամկավար ազատական կուսակցության ջանքերով վերակազմվեց «Վարդանանց ասպետների եղբայրության»։ Այն մասնաճյուղեր ունեւ Միացյալ Նահանգների գրեթե բոլոր հայաշատ շրջաններում (տե՛ս Ք. ԱՎԱԳՅԱՆ, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչեւ 1924 թ.), Երեւան, 2000, էջ 109)։

²⁵ Տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնո, 1932, թ. 1535, էջ 1։ Կալիֆոռնիայում այս կազմակերպության գործունեության անդրադարձել է նաեւ Զ. Քուշյան կրտսերը (տե՛ս G. KOOSHIAN, JR., նշ. աշխ., էջ 417)։

²⁶ Տե՛ս G. KOOSHIAN, JR., նշ. աշխ., էջ 411։

Ֆոռնիայի առաջնորդարանն իր պարտքերով: Այսպես՝ Գարեգին եպիսկոպոսն սկզբունքորեն կողմ էր թեմերի վերամիավորմանը եւ համաձայն էր ստանձնել երկու առաջնորդարանների կառավարման գործը:

Վերամիավորման հարցը դեռ չէր լուծվել, երբ 1930 թ. սեպտեմբերի 19-ին՝ Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի մահվանից հետո, Գարեգին եպիսկոպոսը ԱՄՆ հոգեւորականների պատվիրակության կազմում ուղեւորվում է Նյու Յորք, որպեսզի այնտեղից մեկնի Ս. էջմիածին՝ մասնակցելու նոր կաթողիկոսի ընտրությանը: Սակայն ընտրությունն անակնկալ հետաձգվում է²⁷, եւ նա երկու ամիս մնում է ԱՄՆ արեւելքում, որտեղ Տիրայր սրբազանի հրաժարականից հետո քառասային եւ անկարգապահ վիճակ էր ստեղծվել ծխական համայնքներում: Արեւելյան թեմի կենտրոնական վարչության խնդրանքով նա այցելում է տեղի հայ համայնքներ (Տեղեկագիր, էջ 45)²⁸:

Սա, ինչ խոսք, ինքնին թե՛ ոգեւորիչ եւ թե՛ գայթակղիչ էր Գարեգին եպիսկոպոսի համար՝ նկատի առնելով թեմերի միավորման առաջարկությունը: Սակայն 1931 թ. փետրվարի 1-ին Նյու Յորքում տեղի ունեցած Արեւելյան առաջնորդության պատգամավորական ժողովը փոխում է դրությունը: Կենտրոնական վարչության առաջարկը՝ միացնելու երկու թեմերը, չի ստանում համապատասխան աջակցություն: Դրա փոխարեն անցկացվում է Արեւելյան թեմի առաջնորդի ընտրություն, որի եռանուն ցանկում էին արմաշական երեք օծակից եպիսկոպոսներ՝ Գարեգին Խաչատուրյան, Նրվանդ Փերդահչյան (Բուլղարիայի առաջնորդական փոխանորդ) եւ Ղեւոնդ Դուրյան: Ժողովը ձայների ճնշող մեծամասնությամբ (37) առաջնորդ է ընտրում Մանչեստերի հովիվ Ղեւոնդ Դուրյանին՝ Ռամկավար ազատական կուսակցության թեկնածուին²⁹: Այս առիթով Գարեգին եպիսկոպոսը գրում է. «Արեւելեան առաջնորդութեան երեսփ. ժողովը կը թուի թէ նկատի չառաւ իր գործադիր մարմնոյն կողմէ սեղանի վրայ դրուած առաջարկը. ընտրեց իր առաջնորդը ու որ եւ է եղանակով հաղորդակից չըրաւ առաջնորդարանս հոն իսկ ստեղծուած հարցի նկատմամբ ժողովական գործառնութեանց, առաջադրութեանց եւ յանձնառութեանց» (Տեղեկագիր, էջ 67):

²⁷ Հաջորդ ընտրությունը տեղի է ունենում 1932 թ. նոյեմբերի 12-ին: Կաթողիկոս է ընտրվում Խորեն Ա. Մուրադբեկյանը: Այս ընտրությանը, սակայն, Կալիֆոռնիայից պատվիրակներ չեն գնում՝ տնտեսական ճգնաժամի պատճառաբանությամբ:

²⁸ Տես նաեւ «Նոր օր», Ֆրէզնո, 1930, թ. 37, էջ 4:

²⁹ Այս հարցի մասին որոշ կցկտուր տեղեկություններ տւն Զ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Ա. գիրք (1910–1930), Նիւ Եորք, 1995, էջ 281–282. Ա. ՊԱՐՏԻՋԵԱՆ, նշ. աշխ., էջ 180:

Ընդամենը կարճ ժամանակ անց, երբ Կալիֆոռնիայի որոշ բարձրաստիճան հոգեւորականներ արդեն անթաքույց անհնազանդություն էին ցուցաբերում Գարեգին եպիսկոպոսի հանդեպ, նա առաջարկում է Ղեւոնդ Դուրյանին համագործակցություն երկու թեմերի միջեւ: Բայց առաջարկն անտեսվում է: Արեւելյան թեմի առաջնորդն անգամ չի անդրադառնում դրան. «Կը ցաւինք արձանագրել հոս թէ նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ եպիսկ. Դուրեան, որուն կրկնաժ Ենք մեր գործակցութեան պատրաստակամութիւնը, ի վիճակի չէ եղած դեռ անդրադառնալու այդ հարցին» (Տեղեկագիր, էջ 53): Փաստորեն՝ հենց սկզբից Արեւելյան թեմի առաջնորդը որդեգրում է անտարբեր վերաբերմունք իբր դաշնակցական Գարեգին եպիսկոպոսի նկատմամբ եւ հետագայում էլ հրաժարվում է համագործակցել:

1932 թ. հունիսին լրանում է Գարեգին եպս. Խաչատուրյանի պաշտոնակալման ժամանակը: Համաձայն Սահմանադրության՝ առաջնորդ ընտրվում էր չորս տարով՝ վերընտրության իրավունքով³⁰: Այդպես՝ նույն թվականի սեպտեմբերի 25-ին գումարվում է պատգամավորական ժողով՝ ընտրելու առաջնորդ եւ նոր կենտրոնական վարչություն: Գարեգին եպիսկոպոսի վերընտրությանը հատկապես դեմ էին Լոս Անջելեսի պատգամավորները (նաեւ մեկը՝ Թուլարիից), որոնք առաջնորդ ընտրելու փոխարեն օրակարգ են մտցնում առաջնորդ պահել-չպահելու հարցը՝ ի հեճուկս ատենադպիրի այն բողոքների, թե՝ «....այդպիսի հարց չունինք սեղանի վրայ, հարցը առաջնորդական ընտրութիւնն է»: Ընդ որում՝ դա անում են նախագահի՝ Գարեգին եպիսկոպոսի բացակայությամբ, որը քվեարկության պահին պարտավոր էր հեռանալ նիստից՝ ըստ կանոնի: Կարեւոր է նշել, որ մինչ այդ գումարվել էին ծխական համայնքների անդամական ժողովներ, որոնց մեծ մասի որոշումն էր՝ պահել առաջնորդաբանը ներկա առաջնորդով: Սակայն գաղտնի քվեարկության ժամանակ դրությունն անսպասելի փոխվում է: Տասներկու կողմ, տասը դեմ ձայներով ժողովը որոշում է երկու տարով ընտրել տեղապահ³¹:

Կալիֆոռնիայի հոգեւոր առաջնորդն իր հերթին հակասահմանադրական եւ չեղյալ է համարում ժողովը, քանի որ նախ՝ ժողովի ընթացքում օրակարգի հարցերը նախագահի բացակայությամբ փոխելն օրինական

³⁰ Տե՛ս «Սահմանադրութիւն», էջ 9:

³¹ Տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնո, 1932, թ. 1530, էջ 2. «Նոր օր», Ֆրէզնո, 1932, թ. 112, էջ 3:

չէր, եւ երկրորդ՝ համայնքն անդամական ժողովներով արդեն որոշել էր պահել առաջնորդին, եւ պատգամավորները իրավասու չէին համայնքի կամքին հակառակ գնալու. «Առաջնորդարանը կը շարունակէ իր կանոնաւոր ընթացքն ըստ առաջնոյն,— հայտարարում է նա,— մինչեւ ցնոր տնօրինութիւն: Այս կարգադրութիւնը հաղորդուած է Ս. Էջմիածին, Ընդհ. Հայոց Հայրապետութեան գերագոյն իշխանութեան»³²:

Վերոհիշյալ ժողովը հուզումների ու երկպառակության մեծ ալիք է բարձրացնում Կալիֆոռնիայի հայ գաղութում: Այն բաժանվում է Գարեգին եպիսկոպոսի աջակիցների՝ դաշնակցականների, եւ հակառակորդների՝ ռամկավարների: Դաշնակցական մամուլը պնդում էր, որ սա նախապես ծրագրված դավադրություն էր, եւ ժողովի քվեարկության արդյունքը բնավ չէր արտահայտում գաղութի կամքը: Դաշնակցությունը բազմաթիվ հրապարակումներով դատապարտում է Լոս Անջելեսի պատգամավորների վարքը եւ անվերապահ աջակցություն հայտնում առաջնորդին: Մյուս կողմից՝ ռամկավարական մամուլը կարծում էր, որ պատգամավորական ժողովը գործել է օրենքի սահմաններում, եւ որեւէ ապօրինություն չի կատարվել: «Նոր օրը» առաջնորդի դիրքորոշումը հետագայում որակեց որպես Ազգային սահմանադրության ոգու, երեսփոխանական ժողովի իրավասության եւ Վեհափառ Հայրապետի հեղինակության դեմ առաջին ըմբոստ քայլ³³:

Ծխական բոլոր այն համայնքները, որոնք հաստատապես ցանկանում էին առաջնորդի պաշտոնում տեսնել Գարեգին եպս. Խաչատուրյանին, այդ ընթացքում տարբեր բողոքագրերով ու գրություններով արտահայտում են իրենց դժգոհությունը:

Ստեղծված անկառավարելի վիճակին լուծում տալու համար թե՛ Գարեգին եպիսկոպոսը եւ թե՛ նրա դեմ գործող պատգամավորները հարցը հանձնում են Ս. Էջմիածնի տնօրինությանը: Մինչ կստացվեր Գերագույն հոգեւոր խորհրդի պատասխանը՝ 1933 թ. փետրվարի 19-ին Գարեգին եպիսկոպոսի աջակից տասնմեկ պատգամավորները գումարում են նոր ժողով՝ վերընտրելով նրան: Նույն թվականի սեպտեմբերին Կալիֆոռնիայի թեմն ստանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությանը Գերագույն հոգեւոր խորհրդի հրամանագիրը, որում մասնավորապես

³² Հայտարարությունն ամբողջությամբ տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնո, 1932, թ. 1531, էջ 3. «Մշակ», Ֆրէզնո, 1932, թ. 701, էջ 4. «Նոր օր», Ֆրէզնո, 1932, թ. 114, էջ 3:

³³ Տե՛ս «Նոր օր», Ֆրէզնո, 1935, թ. 246, էջ 2:

ասվում էր. «Գերագույն հոգեւոր խորհուրդը, լսելով Կալիֆորնիայի հայոց թեմի վերջին երկու երեսփոխանական ժողովների մասին ընդարձակ եւ մանրակրկիտ զեկուցում (1932 թ. սեպտեմբերի 24–25-ի եւ 1933 թ. փետրուարի 19-ի) եւ նկատի առնելով նոցա սահմանադրական շեղումներն ու մանաւանդ վերջինի ոչ օրինական բնույթը.... որոշեց — Ա. Չեղեալ համարել յիշատակուած երկու երեսփոխանական ժողովների որոշումները.... Գ. Քուէարկել եւ որոշել Կալիֆորնիայի թեմը ժամանակաւորապէս տեղապահով կամ առաջնորդով կառավարելու հարցը»³⁴։ Հրամանագրի վերջում Գերագույն հոգեւոր խորհուրդը հատուկ ընդգծում էր՝ թեեւ անդամական ժողովներն իրենց ներկայացուցիչներին տրված հայտարարութիւնների իրավատերերն են, այնուամենայնիւ նոր պարագաների ու լուսաբանութիւնների առկայութեան դեպքում պատգամավորներն իրավունք ունեն իրենց խղճի թելադրութեամբ ազատ գործելու, հատկապէս եթե հարցը վերաբերում է Եկեղեցու շահերին։

Հստ ամենայնի՝ խորհուրդը նշանակութիւն չէր տալիս ծխական համայնքների պաշտոնական գրութիւններին եւ ավելին՝ հակված էր նրան, որ Գարեգին եպիսկոպոսն այլեւս չզբաղեցնի առաջնորդի պաշտոնը։ Այդ առնչութեամբ «Նոր օրը» գրում է՝ Կալիֆորնիայի ծխական համայնքների մեծ մասն ըմբոստութեան դրոշ է պարզել Վեհափառ Հայրապետի դեմ, որի հրամանը որեւէ արժեք չունի նրանց համար³⁵։

Վերջապէս 1933 թ. սեպտեմբերի 5-ին Գարեգին եպիսկոպոսը հայտարարում է, թե ինքը դադարում է զբաղեցնել առաջնորդական աթոռը եւ պարզաբանում, որ այդ քայլին դիմում է՝ «առանց օրինական քննարկութեան մտնելու» հարցի շուրջ. «Կը յայտարարեմ Գալիֆորնիոյ մեր սիրելի ժողովուրդին, թէ՛ այլ եւս դադարած եմ առաջնորդական պաշտօնէս՝ շարունակելով իմ զուտ հոգեւորականի պարտականութիւններու կիրառութիւնը, եւ կը խնդրեմ, որ ամեն ոք պաղարինով եւ հնազանդութեամբ ընդունի վերին իշխանութեան այս յանձնարարութիւնը՝ սպասելով առաջնորդական հարցի լուծման....»³⁶։

³⁴ «Ասպարէզ», Ֆրէզնո, 1933, թ. 1580, էջ 2. տե՛ս «Նոր օր», Ֆրէզնո, 1933, թ. 160, էջ 1։ Միաժամանակ խորհուրդը նամակով հորդորում էր Կալիֆորնիայի պատգամավորական ժողովի ատենապետին գործել համերաշխ եւ չպառակտել համայնքը՝ հաշվի առնելով, որ թեմի խռովյալ վիճակը հետեւանք է պատգամավորական ժողովի եւ առաջնորդի միջեւ ծագած փոխադարձ անհամաձայնութեան։

³⁵ Տե՛ս «Նոր օր», Ֆրէզնո, 1933, թ. 163, էջ 2։

³⁶ «Ասպարէզ», Ֆրէզնո, 1933, թ. 1579, էջ 2։

Այդպիսով՝ Ս. Էջմիածնի հոգեւոր խորհրդի հրահանգով 1933 թ. նոյեմբերի 26-ին տեղի է ունենում Կալիֆոռնիայի կրոնական ժողովի բացառիկ նիստը: Այն գումարվում է Ֆրեզնոյի Ս. Երրորդություն եկեղեցում՝ ինը թեմերի քսաներեք պատգամավորների մասնակցությամբ: Ժամանակավոր կազմված կենտրոնական վարչությունը չորս ամիս ժամկետով տեղապահ է ընտրում Ֆրեզնոյի նոր հովիվ Գեղամ վրդ. Քասիմյանին (Վարդան Ժ. վրդ. Գասպարյանը ներքաղաքական պատճառներով հրաժարական էր տվել)³⁷: Նորընտիր կենտրոնական վարչությունը պետք է համալրեր պատգամավորների կազմը եւ պատրաստեր Կալիֆոռնիայի առաջնորդի նոր ընտրություն: Չմտնելով այս վարչության անհամերաշխ գործունեության, կուսակցական հերթական բախումների մանրամասնությունների մեջ՝ ասենք միայն, որ ի վերջո՝ 1934 թ. մայիսի 5—6-ը, վարչությունը կազմակերպում է Կալիֆոռնիայի պատգամավորական արտակարգ ժողով, որն արժանանում է նախորդների ճակատագրին: Բանն այն է, որ պատգամավորների կազմը բավականին խնդրահարույց էր: Ժողովի՝ Լոս Անջելեսի, Ֆաուլերի եւ Թուլերիի համայնքները ձայնագրկելու որոշումն առաջ է բերում որոշ պատգամավորների անհամաձայնությունը, որոնք լքում են նիստը՝ տապալելով այն: Բացի այդ՝ ընտրության հարցը եւս կնճռոտ էր: Կենտրոնական վարչությունը չէր կարողացել տրամադրել թեկնածուների եռանուն ցանկ: Գարեգին եպիսկոպոսը փափագելի չէր համարել ցանկում ընդգրկվելը, սակայն նամակով հայտնել էր, որ եթե ժողովը, ընդառաջելով ժողովրդի կամքին, վերընտրի իրեն, ապա նա ամենայն պատրաստակամությամբ կստանձնի առաջնորդի պարտականությունները: Նրա աջակից պատգամավորները, քննարկելով, որ եթե անգամ կատարեն վերընտրություն, կաթողիկոսը կարող է եւ չհաստատել այդ որոշումը, ինչը ծանր հարված կլինի առաջնորդի հեղինակությանը, ի վերջո, վճռում են կրկին հետաձգել ընտրությունը:

Արդյունքում Ս. Էջմիածնի հոգեւոր խորհուրդը, Կալիֆոռնիայի թեմի ժամանակավոր Սահմանադրության համաձայն, անվավեր է համարում երկու նիստերն էլ՝ հրահանգելով հայրապետահաստատ առաջնորդական տեղապահին շարունակել կառավարել թեմը եւս երկու տարի, մինչեւ որ կրթերը խաղաղվեն, եւ տնտեսական վիճակը պարզվի³⁸: Սակայն տեղա-

³⁷ Տե՛ս «Մշակ», Ֆրեզնո, 1933, թ. 820—821, էջ 3. «Ասպարէզ», Ֆրեզնո, 1933, թ. 1591, էջ 2:

³⁸ Տե՛ս «Նոր օր», Ֆրեզնո, 1934, թ. 194, էջ 1—2, 1934, թ. 198, էջ 1:

պահ Գեղամ վրդ. Քասիմյանը հրաժարական է տալիս: Ամիսներ անց կաթողիկոսը հեռագրով «արձակում» է նրան պաշտոնից՝ կենտրոնական վարչությունը հանձնարարելով «զգուշաւորութեամբ» ընտրել նոր տեղապահ, որը կատարյալ հնազանդություն կցուցաբերի վերին հրամաններին: Այդպես՝ 1935 թ. մայիսի 1-ին Կալիֆոռնիայի թեմի առաջնորդական տեղապահ է ընտրվում Ֆաուլերի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հովիվ Եղիազար քհն. Աշճյանը³⁹:

Բոլոր այս իրադարձություններից, թվում է, հստակ է, որ նրանց հիմքում երկու կուսակցությունների ձգտումն էր՝ ամեն կերպ իշխելու Եկեղեցու վրա: Ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրը պնդում էր, թե ինքն է միայն հեռու Եկեղեցին քաղաքականացնելուց եւ մեղադրում էր դրանում իր քաղաքական ընդդիմախոսներին: Իրականում, սակայն, պատկերն այլ էր: Պատահական չէ, որ նույնիսկ կուսակցական մամուլում հարց էր դրվում՝ «Ինչ միջոց կարելի է գործածել ազատելու համար Հայաստանեայց Եկեղեցին կուսակցական կռուադաշտ մ'ըլլալէ», քանի որ՝ «...կուսակցական ոյժեր են, որ կը ղեկավարեն Հայ Եկեղեցւոյ կեանքը եւ ոչ թե եկեղեցական ոյժեր»⁴⁰: Եւ Գարեգին սրբազանը, ըստ էության, հայտնվեց այդ պայքարի խաչմերուկում: Դրա ապացույցներից է, օրինակ, կուսակցական մամուլը: Այսպես, օրինակ, մինչեւ 1932 թվականը ռամկավարական «Նոր օրում» չես գտնի որեւէ հրապարակում, որը դեմ էր Գարեգին եպիսկոպոսին: Այնինչ, 1932 թ. հետո սկսում են զուտ քաղաքական գնահատականներ տրվել առաջնորդի գործողություններին, կառավարմանը եւ խիստ անհարգալից արտահայտվել նրա հասցեին:

Մեր ձեռքի տակ եղած որեւէ աղբյուրում հստակ ու միանշանակ տեղեկություն Գարեգին եպիսկոպոսի դաշնակցական լինելու մասին չկա, սակայն Ա. Պարտիզյանի վկայությամբ՝ դեռ Կալիֆոռնիա չհասած՝ նրա մասին շուրջներ էին պտտվում, թե իբր դաշնակցական է՝ շահարկելով այն իրողությունը, որ երբեւէ աշխատակցել էր «Ազատամարտին»: Հեղինակի խոսքով՝ քաղաքական հարցերում նրա «կատարյալ չեզոք» դիրքը իր դեմ էր տրամադրել որոշ եկեղեցականների, որոնք նախկին ավանդույթով սովոր էին ղեկավարել Հայ Եկեղեցին եւ եկեղեցական գործերը⁴¹: Նման իրավիճակում Գարեգին եպիսկոպոսին սկսեց աջակցել

³⁹ Մանրամասն տե՛ս «Նոր օր», Ֆրէզնո, 1935, թ. 246, էջ 1, 2, 1935, թ. 269, էջ 1:

⁴⁰ «Ասպարէզ», Ֆրէզնո, 1934, թ. 1639, էջ 1:

⁴¹ Տե՛ս Ա. ՊԱՐՏԻԶԵՅԱՆ, նշ. աշխ., էջ 277–278:

ՀՅԴ-ն: Միեւնույն ժամանակ մտորումների առիթ էր տալիս նրա մասնակցությունը 1931 թ. Արեւելյան թեմի առաջնորդի ընտրությանը՝ որպէս, ըստ որոշ հեղինակների, Դաշնակցության թեկնածու⁴²: Հատկապէս որ թեկնածուներից մեկը՝ Ղեւոնդ արք. Դուրյանը, վայելում էր Ս. Էջմիածնի վստահությունն ու աջակցությունը եւ պատահական չէր հայտնվել այդ ցանկում, ուստի Գարեգին եպիսկոպոսը պետք է որ գիտակցեր՝ իր այդ քայլը մտահոգություն եւ կասկածներ կառաջացնի Ս. Էջմիածնում:

Հստ ամենայնի՝ ռամկավար գործիչներն ու նրանց համակրող հոգեւորականներն օգտագործում էին այս եւ նման այլ հանգամանքներ Կալիֆոռնիայի հոգեւոր առաջնորդի դեմ՝ Ս. Էջմիածնում նրան ներկայացնելով որպէս դաշնակցական, որ նույնն է՝ հակառակորդ, ինչն էլ հանգեցրեց նրան, որ Մայր Աթոռը, ի վերջո, երես թեքեց իր իսկ «հոգեծին որդուց»⁴³:

Բայց դա դեռ ամենը չէր: Ռամկավարների անհանդուրժողական վերաբերմունքը Գարեգին եպիսկոպոսի հանդեպ հատկապէս սրվեց Արեւելյան թեմի առաջնորդ Ղեւոնդ արք. Դուրյանի սպանությունից հետո: Ինչպէս հայտնի է, 1933 թ. դեկտեմբերի 24-ին դաշնակցական մի խումբ երիտասարդներ Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցում պատարագի ժամանակ դաշունահարում են Ղեւոնդ արք. Դուրյանին: Այդ սպանությունը խռովության մեծ ալիք է բարձրացնում ամերիկահայ գաղութներում: ԱՄՆ տարբեր շրջաններում ՌԱԿ կենտրոնական վարչության կողմից կազմակերպվում են բողոքի ցույցեր Դաշնակցության դեմ, տեղի են ունենում արշունալի դեպքեր: Երկար դատավարություններից հետո ինն ամբաստանյալ մեղավոր է ճանաչվում եւ դատապարտվում ազատազրկման⁴⁴: Դաշնակցությունը, ինչպէս եւ սպասելի էր, ի սկզբանե չի ընդունում կուսակցությանն ուղղված մեղադրանքը եւ փորձում է զերծ պահել իրեն այդ հանցագործությունից⁴⁵:

Այդ օրերին «Նոր օրում» սկսում են տպագրվել բազմաթիվ հոդվածներ, որոնք բացահայտորեն մեղադրում էին Կալիֆոռնիայի նախկին

⁴² Տէս Զ. ԱրժՈՒՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Բ. գիրք (1930–1955), Նիւ Եորք, 1997, էջ 59:

⁴³ 1935 թ. Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանը նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ եւ մեկնում Հարավային Ֆրանսիա: 1938-ին նշանակվում է Արգենտինայի առաջնորդ, իսկ 1950-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք:

⁴⁴ Մանրամասն տես «Ասպարէզ», Ֆրէզնո, 1934, թ. 1624, էջ 1. «Նոր օր», Ֆրէզնո, 1934, թ. 204, էջ 1:

⁴⁵ Տէս «Ասպարէզ», Ֆրէզնո, 1934, թ. 1601, էջ 4, 1934, թ. 1602, էջ 1–2 եւ 4, 1934, թ. 1596, էջ 1 եւ այլն:

առաջնորդին Ղեւոնդ արք. Դուրյանի հանդեպ թշնամանքի մեջ: Թերթը գրում է, որ Գարեգին եպիսկոպոսի ու դաշնակցականների համար աններելի էր Ղեւոնդ արք. Դուրյանի էջմիածնամետ լինելը, եւ որ Կալիֆոռնիայի առաջնորդը որեւէ բան չձեռնարկեց, երբ դաշնակցական մամուլը հարձակումներ էր գործում նրա վրա (խոսքը հայտնի դրոշմարտի՝ մասնավորապէս Չիկագոյի միջազգային ցուցահանդեսին հաջորդած դեպքերի մասին է, երբ Ղեւոնդ արք. Դուրյանը պահանջել էր վայր դնել Հայաստանի Հանրապետության խորհրդանիշ եռագույնը, ինչից հետո ՀՅԴ բոլոր պարբերականները վարկաբեկիչ արշավ սկսեցին նրա դեմ եւ փորձեցին գործնական քայլերով պաշտոնանկ անել նրան)⁴⁶: Գարեգին եպիսկոպոսը, կարդում ենք «Նոր օրում», մի կողմից հորդորում էր ժողովրդին եկեղեցիները հեռու պահել քաղաքականությունից, մյուս կողմից՝ թույլատրում էր Դաշնակցության գործունեությունը Եկեղեցում՝ այն կուսակցության, որը ցանկանում էր ղեկավարել Եկեղեցին, որպեսզի գոնե այդպէս արդարացնի իր գոյությունը⁴⁷:

Ղեւոնդ արք. Դուրյանի սպանության եւ դրան հաջորդած դեպքերի հետեւանքով Սիւլուսթի որոշ հայ եկեղեցիներում ուժեղացան անջատողական տրամադրությունները: Այսպէս՝ երբ 1937 թ. փետրվարին հայրապետական պատվիրակ Գարեգին արք. Հովսեփյանը ժամանեց Ֆրեզնո՝ հանդարտեցնելու պառակտման տանող կուսակցական կրքերը եւ վերականգնելու Գերագույն հոգեւոր խորհրդի բարձրագույն դիրքը, որոշ հոգեւորականներ, եկեղեցու հովիվ Գեղամ վրդ. Քասիմյանի գլխավորությամբ, նրա առաջ փակեցին եկեղեցու դռները եւ հրաժարվեցին բանակցել: 1940 թ. Ս. Երրորդություն եկեղեցու ծխականների մի մասը, անհամաձայն լինելով եկեղեցու ղեկավարության՝ Ս. էջմիածնի հանդեպ ժխտողական վարքագծին, հիմնեցին մի նոր՝ Ս. Պողոս անունով եկեղեցի, որը եւ հետագայում՝ 1943 թ., դարձավ Կալիֆոռնիայի թեմի առաջնորդանիստը:

Ս. էջմիածնից անջատվելու գործընթացն արագացավ սառը պատերազմի տարիներին⁴⁸, երբ մասնավորապէս Ֆրեզնոյի եւ Լոս Անջելեսի

⁴⁶ Տէս Կ. ԴԱՆԼԱՔՅԱՆ, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921—1940), գիրք առաջին, Երեւան, 1999, էջ 235—240. նաեւ՝ «Ասպարէզ», Ֆրեզնո, 1933, թ. 1579, էջ 1, 1933, թ. 1580, էջ 1:

⁴⁷ Տէս «Նոր օր», Ֆրեզնո, 1934, թ. 179, էջ 4:

⁴⁸ Տէս Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երեւան, 2005, էջ 436—437:

Եկեղեցիներն անցան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանը: Բայց դա, ինչպես ասում են, մեկ այլ պատմություն է:

РЕЗЮМЕ

Основание епархий Армянской Апостольской Церкви в странах, где проживала армянская диаспора, происходило по-разному. Большое влияние на это оказывало характерное для армянской действительности жесткое противостояние политических организаций, которое еще более усилилось с установлением в Армении советской власти.


В статье на основе неиспользованных ранее источников рассматривается начальный период истории епархии в Калифорнии, в контексте стремления партий «Дашнакцутюн» и «Рамкавар Азатакан» к контролю над церковью — важнейшему институту армянских общин.

SUMMARY

In the Armenian Diaspora, the establishment of dioceses of the Armenian Apostolic Church in different countries occurred in different ways. This was greatly influenced by the harsh opposition of political organizations, typical of the Armenian reality, which intensified with the establishment of the Soviet rule in Armenia.

The article examines the early history of the diocese in California, based on previously unused sources, in the context of the aspiration of the Armenian political organizations — Armenian Revolutionary Federation and Democratic Liberal Party — to control the church, the most important institute in the Armenian Communities.





ԼԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱԽ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԱԼՆ ԺԳ.–ԺԹ. ԴԴ. ՅԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչյան բնագրերից, դրանց վերաբերող մեկնություններից, քարոզներից, տոնապատճառներից, հայսմավուրքներից, վարքաբանություններից եւ վկայաբանություններից, պարականոն գրվածքներից եւ ժողովրդական բանավոր զրույցներից զատ՝ սրբերի եւ նրանց պաշտամունքի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել նաեւ պատկերագրությունից: Թեեւ պատկերագրությունը հիմնականում արտահայտում է գրավոր եւ բանավոր պատումի բովանդակությունը, այդուամենայնիվ դրսեւորում է նաեւ ինքնուրույն մոտեցում, հատկապես երբ որեւէ գաղափար առավել հարմար է արտահայտել ոչ թե խոսքով, այլ պատկերային խորհրդանշանների օգնությամբ:

Այս հոդվածում մենք կփորձենք ներկայացնել Ս. Ստեփանոս Նախավկային վերաբերող պատկերագրական որոշ դիտարկումներ՝ հիմնված որմնանկարչության, մանրանկարչության եւ քանդակի վրա, եւ կհամեմատենք դրանք եղած գրավոր եւ բանավոր պատումների հետ՝ պարզելու, թե որքանով է բանահյուսությունն ազդել պատկերագրության վրա, եւ ինչպես են փոխառնչվում տարբեր արտահայտչամիջոցներ կիրառող կերպարվեստի ճյուղերը՝ միեւնույն կերպարի կամ թեմայի պատկերման դեպքում:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԱԿԱ

Ս. Ստեփանոս Նախավկան (Πρωτομάρτυρας Στέφανος, St. Stephen the Protomartyr, Стефан Первомученик) Հնդհանրական Եկեղեցու սրբերից է,

բոլոր մարտիրոսներից անդրանիկը, Քրիստոսի համար նահատակված առաջին նախասարկավագը: Ստեփանոս անունը հունարենից թարգմանվում է «պսակ»¹:

Ստեփանոսի մասին խոսվում է «Գործք առաքելոց»-ի 6–7-րդ գլուխներում. «Ստեփանոս, այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն» (Գործք, Զ. 8): Նա ոչ միայն օգնում էր կարիքավորներին եւ նեղյալներին, այլեւ Սուրբ Հոգուց ներշնչված՝ քարոզում էր Աստծու խոսքը եւ հրաշքներ գործում Նրա անունով: Հրեաներն ու քահանաները կեղծ մեղադրանքներ են առաջադրում սրբին եւ քարկոծելով սպանում են:

Ս. Ստեփանոսին նվիրված են (ըստ «Յայսմաւուրք»-ների) հիշատակության մի քանի օրեր՝ դեկտեմբերի 26, սեպտեմբերի 15, հունվարի 7 եւ օգոստոսի 2: Դեկտեմբերի 26-ը սուրբ եւ փառավոր նախավկայի պատվին նշվող «մեծահանդէս տօնն» է: Սեպտեմբերի 15-ին տոնվում է Ս. Ստեփանոսի նշխարների տեղափոխումը Երուսաղեմից Կ. Պոլիս՝ «գյուտ նշխարաց Ս. Ստեփանոս Նախավկայի»: Հունվարի 7-ին տոնվում է Ս. Հովհաննէս Մկրտչի, ամենասուրբ Աստվածածնի եւ Ս. Ստեփանոս Նախավկայի հիշատակը: Օգոստոսի 2-ին տոնվում է «Վերադարձումն նշխարաց Ս. Ստեփանոս Նախավկային Քրիստոսի»²:

Շարակնոցում Ս. Ստեփանոսի տոների ժամանակ կատարվող երգասացության կանոնի հեղինակը Ս. Հովհան Օձնեցի հայրապետն է, ինչը նշանակում է, որ Ը. դ. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին արդեն իսկ ուներ Ս. Ստեփանոսին նվիրված զարգացած ծիսակարգ³:

Զ. դարից սկսած հայտնի են Ս. Ստեփանոս Նախավկայի պատկերները: Վաղ միջնադարում Ս. Ստեփանոսի կերպարը գրեթե պարտադիր էր տաճարային նկարչության (որմնանկարչության) մեջ, ավելի ուշ այն հայտնվում է սրբապատկերներում եւ մանրանկարազարդ առարկաների վրա⁴:

¹ Տէն Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, Երեւան, 1948, հտ. Դ., էջ 600:

² Ս. Ստեփանոս Նախավկայի հիշատակի օրերի մասին մանրամասն տե՛ս Լ. ԱԽԵՏԻՍԵԱՆ, Ստեփանոս Նախավկայի կերպարը հայ միջնադարեան գրականութեան եւ բանահիւսութեան մէջ, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԼԸ., էջ 131–134:

³ Տէն «Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց», Ս. էջմիածին, 1861, էջ 83–88:

⁴ Տէն А. Н. Овчинников, Символика христианского искусства, Москва, 1999, էջ 372–374: Հեղինակը բերում է բազմաթիվ օրինակներ՝ Զ. դարից սկսած:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՔԱՐԿՈՄԾԱՆ ՏԵՍԱՐԱՆԸ

Դեռեւս Հայ Եկեղեցու վարդապետ Վրթանես Քերթովը (Զ.—Է. դդ.) իր «Յաղագս պատկերամարտաց» երկում, քրիստոնեական եկեղեցիներում նկարվող պատկերները թվարկելով, նշում է նաեւ Ս. Ստեփանոս Նախավկային. «....տեսանեմք նկարեալ զսուրբ Գրիգոր եւ աստուածահաճոյ շարշարանք իւր եւ սուրբ առաքինութիւնք, եւ զՍտեփանոս Նախավկայ ի մէջ քարկոծչացն, զերանելի եւ զփառաւոր կոյսն սուրբ զԳայիանէ եւ զՀռիփսիմէ հանդերձ ամենայն ընկերօքն եւ յաղթող նահատակօքն....»⁵:

Ըստ այս տվյալի՝ քրիստոնեությունից հետո վաղ շրջանի որմնանկարներում պատկերվում էր Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանը, թեպետ մեզ ոչ մի պատկեր չի հասել: Այդ տեսարանի՝ մեզ հասած ամենահին պատկերը Դադիվանքի հյուսիսային պատի որմնանկարն է, որ թվագրվում է 1297-ով: Այդ պատկերը բաժանված է երկու մասի՝ երկինք եւ երկիր: Ստորին հատվածում՝ ձախ կողմում, պատկերված է քարկոծող ամբոխը՝ բաղկացած վեց հոգուց, որոնց դիմաց կանգնած է գլխաբաց Ս. Ստեփանոսը՝ իր բնորոշիչներով. աջ ձեռքին՝ բուրվառ, ձախ ձեռքին՝ սկիհ, իսկ վերելի մասում Քրիստոս (կերպարը պահպանվել է հատվածաբար) մեկնել է ձեռքը դեպի չորս հրեշտակները՝ ասելով. «Տեսէ՞ք զհող//եղէն բնութիւն[ւն] վա//սն իմ շարշարե....//մնով»⁶:

Այս տեսարանը պետք է որ հաշորդեր «Գործք առաքելոց»-ի այն հատվածին, երբ Ստեփանոսը, հալածանքների ենթարկվելով, Սուրբ Հոգով լցված, նայում է երկինք. «....եւ ետես զփառս Աստուծոյ եւ զՅիսուս զի կայր ընդ աշմէ Աստուծոյ, եւ ասէ. Ահա տեսանեմ՝ զերկինս բացեալ, եւ զՈրդի մարդոյ զի կայ ընդ աշմէ Աստուծոյ», որից հետո նրան քաղաքից դուրս են հանում եւ քարկոծում (Գործք, է. 55–57):

Պատկերի վերին հատվածը եւ խոսքերը գրեթե բառացիորեն կրկնում են Ս. Ներսես Շնորհալի հայրապետի տաղերից մեկի տողերը.

Նըստեալն յառնէր ցուցանել
Վերին հրեղինաց դասուցն.
— Տեսէ՛ք զհողեղէն բնութիւնն
Վասն իմ շարշարեալ նըմանն⁷:

⁵ Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 11:

⁶ Կ. ՄԱԹԵՆՈՍՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԶԱՐՅԱՆ, Ք. ԼԱՄՈՒՐԵ, Դադիվանք. վերծանված հրաշալիք, Երևան, 2018, էջ 46–49:

⁷ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, Երևան, 1987, էջ 240:

Այսպես Հիսուս շեշտում է Իր համար նահատակվող առաջին վկայի հոգեւոր սխրանքը, որը, զոհ գնալով հանուն Քրիստոսի, առաջինն ընդունեց հաղթության պսակը:

Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծման մյուս հին պատկերը թվագրվում է 1622-ով եւ գտնվում է Տրապիզոնի հայոց Ս. Ամենափրկիչ վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի արեւմտյան հատվածի երեք գոտիներից միջինում: Այստեղ Ս. Ստեփանոսը պատկերված է ստորին աջ անկյունում՝ անմորուս երիտասարդի տեսքով՝ գլխաբաց, ծնկաշոք եւ բոկոտն: Ձեռքերն աղաչական տեսքով պարզված են առաջ, իսկ հայացքն ուղղված է դեպի վերին աջ անկյունում պատկերված Քրիստոս, Որը հետեւում է տեսարանին: Տեսարանի կենտրոնական մասում պատկերված է քարկոծող վեց երիտասարդ: Նրանցից ներքե պատկերված է միջին տարիքի մորուքով մի մարդ՝ Սողոսը՝ ապագա Պողոս առաքյալը, որ, ըստ «Գործք առաքելոց»-ի, եղել է Ս. Ստեփանոսի քարկոծման ականատեսն ու մասնակիցը (տե՛ս Գործք, է. 54—59)⁸:

Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցու (Ժէ.—ԺԸ. դդ. կառուցված եւ պատկերազարդված) հարավարեւմտյան մույթի հյուսիսային երեսին՝ վերին հատվածում, պատկերված է Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանը. Ս. Ստեփանոսն անմորուս երիտասարդի տեսքով է, նրանից ձախ երեք քարկոծողներն են⁹:

1793-ով է թվագրվում Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանի որմնանկարը, որի հեղինակն է Աստվածատուր Աստապատցին, եւ որն ունի հետեւյալ արձանագրությունը. «Սբ Ստեփանոսի քարգործումն»¹⁰:

Այստեղ՝ Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանում, քարկոծողները (յոթ հոգի) Ստեփանոսին (նա պատկերված է վեղարով) առել են շրջանի մեջ, նրանցից ոմանք մորուքավոր են, ոմանք՝ անմորուս: Հետաքրքիր է տեսարանի վերին՝ երկնային հատվածը: Այստեղ պատկերված են Ման-

⁸ Տե՛ս Ա.Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Տրապիզոնի հայոց Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարները, Հայկական որմնանկարչություն, կազմ. եւ խմբ. Կ. Մաթեոսյանը, Երեւան, 2019, էջ 139:

⁹ Տե՛ս Ա.Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցին, ԼՀԳ, 2018, թ. 3, էջ 271—272. տե՛ս նաեւ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Դաշտային ազգագրական նյութ, Վայոց ձոր, Ջերմուկ—Գնդեվազ, 2020:

¹⁰ Տե՛ս Ա.Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017—2019 թթ. ուսումնասիրման եւ վերականգնման աշխատանքները, «Հուշարձան» տարեգիրք, ԺԵ., Երեւան, 2020, էջ 9, 19:

կանը գրկած Ս. Աստվածածինն ու նրա կողքերին՝ մեկական հրեշտակ: Հնարավոր է՝ «Ս. Աստվածածինը Մանկան հետ» պատկերը խորհրդանշում է Եկեղեցին:

Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարան, այս անգամ բարձրաքանդակի տեսքով, հայտնի է նաեւ Դարաշամբի Ս. Ստեփանոս վանքի (Մաղարդավանքի) արեւելյան ճակատին: Ճակատի կենտրոնում խաչաքանդակ-շրջանակն է, որի մեջ գծված է արեւելյան խորանի խաչաձեւ լուսամուտը: Լուսամուտի շուրջ պատկերված են արծիվ՝ որսը ճիրաններում, երկու ձուկ, օձ եւ առյուծ: Խաչաքանդակ-շրջանակի վերելում քանդակված է Սբ. Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանը: Կենտրոնում ծնկաչոք, աջ ձեռքում բուրվառը բռնած Ստեփանոս Նախավկան է, որը քարկոծվում է երկու կողմից: Տեսարանի վերին ձախ անկյունում Սբ. Երրորդության պատկերն է՝ խաչը ձեռքին Քրիստոսը, աղավնու տեսքով Սուրբ Հոգին եւ Հայր Աստված, Որը ձախ ձեռքում պահում է երկրագունդը, իսկ աջով օրհնում նահատակվողին: Վերին աջ անկյունում Ստեփանոս Նախավկային նահատակության պսակը հանձնող հրեշտակն է¹¹:

Մանրանկարներում Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանը հազվագյուտ է հանդիպում: Մեզ հայտնի այդպիսի մանրանկարը նույնպես բաժանված է երկու մասի՝ երկնային եւ երկրային: Երկրային մասում պատկերված է ծնկաչոք անմորուս երիտասարդ Ս. Ստեփանոսը, որին երկու կողմից քարկոծում են վեց հոգի: Ձախ ծայրում պատկերված է մի բերդ, որի մեջ՝ տեսարանը դիտող Թագավորն ու Թագուհին: Նրանցից աջ՝ դեպի քարկոծողները՝ սայլի վրա՝ բարձին, նստած է մի մորուքավոր կերպար, հավանաբար Սավուղը՝ ապագա Պողոս առաքյալը: Վերին՝ երկնային հատվածում պատկերված է քառակերպյան աթոռի վրա նստած Քրիստոս՝ շրջապատված հրեշտակներով եւ սերովբեներով: Քրիստոսից դեպի Ս. Ստեփանոսն է իջնում աղավնակերպ Սուրբ Հոգին: Մանրանկարի երկու մասերը բաժանված են վառ կապույտով, որը նաեւ ներքեւի տեսարանի երկինքն է: Կենտրոնական՝ հորիզոնական կապույտ շերտի վրա պատկերված են արեւն ու լուսինը, ինչպես Խաչելության տեսարաններում: Ամբողջ նկարն իր կառուցվածքով խաչային է, կարծես այդպես ծաղկողը շեշտել է Ս. Ստեփանոսի նահատակությունը որպես Քրիստոսի նահատակության համանմանություն:

¹¹ Տե՛ս Ա. ՀԱՆՆԱՋԱՐՅԱՆ, Արտագի երեք վանքերը, Երեւան, 2012, էջ 267, 272, 368:

Կարող ենք փաստել, որ թեև քարկոծման տեսարանն ունի նույն բովանդակությունն ու պատկերագրական ընդհանուր մոտեցումը, այդուամենայնիվ առկա են պատկերագրական մանրամասների տարբերություններ (օրինակ՝ մի դեպքում նա պատկերվում է գլխաբաց, մյուս դեպքում՝ վեղարով):

Այդ տարբերությունները հատկապես առկա են տեսարանի վերին՝ երկնային հատվածում՝ կախված այն բանից, թե պատկերողն ինչ խորհրդաբանական մոտեցումներ էր ցուցաբերում եւ ինչ էր ցանկանում արտահայտել:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՆ ՈՐՊԵՍ ԲԱՐԵՆՈՍ

Ս. Ստեփանոս Նախավկան հայ ժողովրդի սիրված սրբերից, հայկական քրիստոնեական ազգային բարեխոսներից մեկն է: Բանն այն է, որ քրիստոնեության մեջ կա ընդհանրական երկու բարեխոս սուրբ՝ Ս. Աստվածածինն ու Ս. Հովհաննես Մկրտիչը: Սակայն տեղական եկեղեցիներն ունեն նաեւ ազգային բարեխոս սրբեր, ինչպես, օրինակ, Ռուս Ուղղափառ եկեղեցու ազգային բարեխոս սուրբն է Նիկողայոս Աքանչեւագործը¹²: Ահա նման ազգային սրբեր են հայոց մեջ Ս. Գրիգոր Լուսավորիչն ու Ս. Ստեփանոս Նախավկան:

Ս. Ստեփանոսը՝ որպես բարեխոս, հայտնի է արդեն Ս. Հովհան Օձնեցի կաթողիկոսի՝ նրան նվիրված տոների ժամանակ կատարվող երգասացության կանոնից.

Որ ընտրեցար ի կոչումն առաքելական փարոզութանցն՝
արժանատու լինելով, Սուրբ Ստեփանոս,
բարեխօսեա՛ առ Քրիստոս վասն անձանց մերոց:
Որ խընդրեցեր զքողութիւն ի վերայ քոյ
Քարածիգ ժողովոյն սո՛ւրբ Ստեփաննոս.
Եւ այժմ վասըն քո ուխտաւորացս աղաչեա՛
Ջընդ աջմէ Հօր նըստեալն:
Որ արժանի եղեր զմարտիրոսականն առնուլ պըսակ
նախդ ի վըկայս
առ Պըսակիչն սըրբոց եւ վասըն մեր բարեխօսեա՛¹³:

¹² Տէ՛ս Ա. Н. Овчинников, նշ. աշխ., էջ 338:

¹³ «Շարական հոգեւոր երգոց...», էջ 83–84:

Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսը նույնպես շեշտում է Ս. Ստեփանոսի բարեխոս լինելը.

....Սուրբը Ստեփանոս պսակ
 Եւ նախամարտիկ վրկայ,
 Վասըն տամողացըս Բո
 Լէ՛ր միշտ բարեխաւս առ Տէր¹⁴....

....Ստեփանո՛ս, պըսակ շնորհաց զեզ պըսակողին,
 Լէ՛ր միշտ բարեխաւս զմեզ կեցուցանել¹⁵....

....Ամէնաւրհնեալ կուսի Մարիամու Աստուածածնի՝
 Մեծին ի ծնունդս կանանց,
 Նախահրաւէր այսմ շնորհի Մկրտչին Յովհաննու,
 Նախնոյն վկայից եւ սարկաւագաց՝ սրբոյն Ստեփանոսի,
 Առաքելովք եւ մարգարէիք,
 Մարտիրոսաւք եւ ճգնաւորաւք,
 Եւ համաւրէն սովաւ ամեղովք արդարոցն
 Եւ որ այսր ամմամբ զմեզ Լուսաւորչի՝ սրբոյն Գրիգորի¹⁶:

Հմայիլներում գետեղված աղոթքների մեջ Ս. Ստեփանոս Նախավկան նույնպես նշվում է որպես բարեխոս.

Ի Բէն հայցեմք արտասուագին,
 Նախավրկայ Տեառն արարչին,
 Սուրբ Ստեփաննոս բացող երկնին,
 Տեսող զՅիսուս յաջմէ Ծնողին.

Լէ՛ր բարեխօս արեամբ Բոյին,
 Տալ մեզ հանգիստ ի յանկողնին,
 Արթուն լինել յառաւօտին,
 Բարեբանել զլոյս անմին¹⁷:

Հնարավոր է, որ Ս. Ստեփանոսի՝ ազգային բարեխոս սուրբ լինելու հանգամանքը կարելի է բացատրել նաեւ՝ հիմնվելով ժողովրդական պատումների վրա:

¹⁴ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, նշ. աշխ., էջ 241:

¹⁵ Անդ, էջ 243:

¹⁶ Անդ, էջ 327—328:

¹⁷ F. FEYDIT, Amulettes de l'Arménie chrétienne, Venise-St. Lazare, 1986, p. 192.

Ժողովրդական պատումների համաձայն՝ նա ծնվել է քարից՝ Ծաղկազարդին՝ Քրիստոսի Երուսաղեմ մուտքի ժամանակ: Քարից ծնված Ստեփանոսն առաջին մարտիրոսն է, որ քարից, քարկոծումից մահացավ. քարից ծնվեց եւ քարից մեռավ¹⁸: Ըստ մի պատումի, որ գրանցել է Վահան վրդ. Տեր-Մինասյանը, Թադեոս առաքյալն է դրդում մի այրի կնոջ քարը փաթաթել լաթերով եւ որպես երեխա ներկայացնել այն, որպեսզի կարողանա մոտենալ Քրիստոսին: Այդ քարը երեխա է դառնում եւ աղաղակում է, փառք է տալիս Տիրոջը: Վերջում Քրիստոսն նայում է Թադեոսին՝ «որն այդ քար-երեխայի հեղինակն ու հայրն էր, եւ ասում է. «Թադէ, այդ քարէ ծնած չոճուխը քարէ պիտի մեռնի, քարկոծ պիտի ըլլայ, եւ քո ժողովուրդը քարէ ծնած ժողովուրդ թո՛ղ ըլլայ, քարի պէս հաստատուն իր հաւատքին մէջ»»¹⁹:

Քանի որ Թադեոս առաքյալը Բարդուղիմեոս առաքյալի հետ Հայաստանում քրիստոնեություն տարածողն էր, ապա նրա ժողովուրդը հայերն էին, որոնք, ըստ Քրիստոսի խոսքերի, ծնվել էին քարից եւ քարի պես հաստատուն էին իրենց հավատքում: Այսինքն՝ ստացվում է, որ ըստ ավանդության՝ Ս. Ստեփանոսը խորհրդաբանական առումով հայերի նախահայրն էր: Այստեղից էլ, մեր կարծիքով, նրա ազգային բարեխոս լինելն է առաջ գալիս, ինչպես Ս. Գրիգոր Լուսավորչի դեպքում, որը նույնպես խորհրդաբանական առումով կարող է ընկալվել որպես քրիստոնյա հայերի հավատի նախահայրը:

Ս. Ստեփանոս Նախավկան՝ որպես բարեխոս, հանդես է գալիս հայկական կերպարվեստի տարբեր ճյուղերում՝ քանդակ, որմնանկար, մանրանկար:

1265 թ., Սմբատ Օրբելյանի հանձնարարությամբ, Սիրանես ճարտարպետը վերանորոգում է Արատեսի վանքի գլխավոր եկեղեցին եւ կառուցում է մի գավիթ, որի ճակատակալ քարի վրա՝ կենտրոնում, մի պատկեր է քանդակում, որն այժմ չկա (կործանվել է 1915 թ. հետո): Քանդակին պատկերված են եղել՝ կենտրոնում Ս. Աստվածածինը Մանկան հետ, կողքերին՝ մեկական անձ, իսկ ձախ մասում եւս մեկ գլուխ՝ ձվածիր շրջանակի (մեղալիոնի) մեջ: Ստ. Մնացականյանը կարծում է, որ այստեղ պատկերված են Ս. Աստվածածինը Մանկան հետ եւ կոտորոները (պատվիրատուները)՝ Սմբատ Օրբելյանը, իր կինը եւ իր որդեգրած

¹⁸ Պատումների համահավաքը տե՛ս Լ. ԱԻԵՏԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 136–139:

¹⁹ ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Անգիր դպրութիւն եւ հին սովորութիւններ, Կ. Պոլիս, 1894, էջ 163–164:

եղբորորդին՝ Տարսալիճի զավակը: Ըստ Մնացականյանի՝ Օրբելյանի որդին (միայն գլուխը) պատկերված է ձվածրում, իսկ ձախ կերպարը կինն է, քանի որ ունի կանացի հագուստ (անհասկանալի է մնում, թե ինչից է Մնացականյանը ենթադրում, որ ձախ կերպարի հագին կանացի զգեստ է)²⁰: Հավանաբար հեղինակի ժամանակ պատկերաքանդակի պահպանվածության աստիճանը նրան հնարավորություն էր տալիս նման եզրահանգման համար:

Այս քանդակին բավական մոտ է Հաղարծնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու՝ ներկայումս բեմի վրա գտնվող քանդակը, որին նույնպես պատկերված են Ս. Աստվածածինը Մանկան հետ եւ նրանց կողքերին՝ մեկական կերպար: Աջակողմյան կերպարի ոտքերի մոտ պահպանվել է արձանագրությունը՝ ՅՈՎ (Հովհաննես, ինչի հիման վրա՝ Մնացականյանը գտնում է Հովհաննես վարդապետ անունով պատմական անձ եւ սրա հիմքով թվագրում է քանդակը՝ 1233—1256): Այս քանդակի դեպքում եւս Մնացականյանը կարծում է, որ Ս. Աստվածածնի եւ Մանկան հետ պատկերված են պատվիրատուները²¹:

Այս երկու բարձրաքանդակներն էլ Ստ. Մնացականյանը դիտարկում է միեւնույն համաբնագրում՝ հաշվի առնելով դրանց ընդհանուր հորինվածքն ու կերպարների դասավորությունը²²:

Սակայն մենք կարծում ենք, որ այստեղ պատկերված են ոչ թե պատվիրատուները, այլ բարեխոսները, այն է՝ Ս. Հովհաննես Մկրտիչը եւ Ս. Ստեփանոս Նախավկան, իսկ Արատեսի վանքի դեպքում ձվածրի մեջ պատկերված է պահապան հրեշտակը՝ Միքայելը: Ինչպես արդեն նշել ենք, բացի Ս. Աստվածածնից եւ Ս. Հովհաննես Մկրտչից, որպես բարեխոսներ հայտնի են նաեւ Ս. Ստեփանոս Նախավկան ու Ս. Գրիգոր Լուսավորիչը, եւ, մեր կարծիքով, քանի որ այստեղ Ս. Աստվածածինն արդեն պատկերված է Մանկան՝ Քրիստոսի հետ (որպես եկեղեցու խորհրդանշան), ապա բարեխոսությունն առավել ծանրակշիռ դարձնելու համար հանդես են գալիս նաեւ Ս. Հովհաննեսն ու Ս. Ստեփանոսը:

²⁰ Տե՛ս ՍՏ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երեւան, 1976, էջ 132—135, քանդակի պատկերը՝ նկ. 55:

²¹ Տե՛ս անդ, էջ 127—129:

²² Տե՛ս անդ, էջ 135: Նշենք, որ հետեւելով Ստ. Մնացականյանին՝ այս երկու բարձրաքանդակների մասին նույնը գրում է նաեւ Քնարիկ Ավետիսյանը. տե՛ս Ք. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում, Երեւան, 2015, էջ 45—47:

Որպես հիմնավորում մեր այս ենթադրությունը՝ կարող ենք բերել 1475 թ. Վայոց ձորի՝ Բոլորաբերդի անապատում գրված եւ պատկերազարդված Ավետարանի (ՄՄ ձեռ. Հ^մ 2634, ծաղկող՝ Աբրահամ րաբունապետ) Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի կիսախորանը: Կիսախորանի վերելի մասում պատկերված են Ս. Աստվածածինն ու Մանուկը (Ստնտու պատկերագրական տիպ), որոնց երկու կողքերին՝ մեկական հրեշտակ՝ հավանաբար Միքայելն ու Գաբրիելը, իսկ ներքելի հատվածում՝ դեմքով դեպի նրանց ուղղված՝ ձախ կողմում՝ Ս. Հովհաննես Մկրտիչը, աջում՝ Ս. Ստեփանոս Նախավկան: Երկու սրբերն էլ պատկերված են որպես անմորուս մանուկներ. Ս. Հովհաննեսը՝ մերկ մարմնի վրա քուրքով, իսկ Ս. Ստեփանոսը՝ իրեն բնորոշ սարկավագի զգեստով եւ բուրվառով:

Նույն հորինվածքը հայտնի է նաեւ որմնանկարչությունից: Այսպես՝ Երեւանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու արեւմտյան մուտքի բարավորի որմնանկարի ստորին հատվածի վրա պատկերված են՝ կենտրոնում Ս. Աստվածածինը Մանկան հետ, իսկ աջ եւ ձախ կողմերում՝ Ս. Ստեփանոսը եւ Ս. Հովհաննես Մկրտիչը: Երկուսն էլ անմորուս մանուկների տեսքով են, ինչպես վերը նշված մանրանկարում²³:

Թեեւ Աշխեն Ենոքյանը համարում է, որ աջ կողմի կերպարը Ս. Լավրենտիոսն է, մենք կարծում ենք, որ պատկերված է Ս. Հովհաննեսը: Եթե Ս. Ստեփանոսը պատկերված է եպիսկոպոսական հանդերձներով, բուրվառով եւ խաչակիր տիրազնդով, առավել հանդիսավոր տեսքով, այսինքն՝ իրեն բնորոշ պատկերագրությամբ, ապա մյուս կերպարն ամենեւին չի կարող լինել Ս. Լավրենտիոսը (հայկական պատկերագրության մեջ մեզ հայտնի չեն Ս. Լավրենտիոսի պատկերներ): Աջակողմյան կերպարի պատկերումը բավականին տարբերվում է Ս. Ստեփանոսից, ի տարբերություն նրա՝ այս մեկը ոտաբոբիկ է, պատկերված է ավելի «զգզգված» տեսքով եւ չունի հանդիսավորություն, ինչն ավելի բնորոշ է անապատականին, ինչպիսին Ս. Հովհաննեսն էր: Այսպիսով՝ այս պատկերը մենք նույնպես դիտարկում ենք որպես բարեխոսություն:

Բարեխոսության եզակի մի պատկեր ունի հռչակավոր ծաղկող Հակոբ Զուղայեցին: Մանրանկարում պատկերված են Հիսուս Քրիստոսին ծնկաչոք աղոթող եւ բարեխոսող Ս. Հովհաննես Մկրտիչն ու Ս. Գրիգոր

²³ Տե՛ս Ա. ԵՆՈՔՅԱՆ, Երեւանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարը, Հայկական որմնանկարչություն, նշ. աշխ., էջ 228–230, պատկերը՝ նկ. 1:

Լուսավորիչը, նրանց կողքին կանգնած է ստինքաբաց Ս. Աստվածածինը, իսկ Ս. Աստվածածնի թիկունքում պատկերված է Ս. Ստեփանոս Նախավկան²⁴: Այսինքն՝ այստեղ պատկերված են հայկական քրիստոնեական սուրբ բարեխոսները:

Հստ Աս. Մնացականյանի՝ Ս. Աստվածածինն իր ստինքները բացել է եւ ուղղել է դեպի Որդին՝ շեշտելով իր կաթով Նրան կերակրելու հանգամանքը՝ որպես ամենագորեղ միջոց՝ իր բարեխոսությունն անսալու համար: Այս գաղափարը զուգորդվում է «Սասնա ծռեր» էպոսից հայտնի այն դրվագի հետ, որտեղ Իսմիլ Խաթունը նույն կերպ՝ բաց ստինքներով, վկայակոչելով Դավթին սնած իր կաթը, Սասունցի Դավթից խնդրում է չզարկել Մարա Մելիքին²⁵:

Մնացականյանը նույնպես Ս. Գրիգոր Լուսավորչին եւ Ս. Ստեփանոս Նախավկային դիտարկում է որպես տեղական ազգային բարեխոս սրբերի, սակայն Ս. Ստեփանոսին համարում է այդպիսին միայն այն պատճառով, որ մանրանկարը պատկանում է Հակոբ Զուղայեցու վրձինին, իսկ նկարչի հայրենիքում մեծ հռչակ էր վայելում Ս. Ստեփանոսի վանքը՝ Մղարդավանքը²⁶: Սակայն, ինչպես տեսանք վերելում, Ս. Ստեփանոսը բարեխոս սուրբ է արդեն Ս. Հովհան Օձնեցի կաթողիկոսի շրջանից սկսած:

ԺԸ. դ. նկարիչները նույնպես պատկերել են բարեխոսության թեման Ս. Ստեփանոս Նախավկայի մասնակցությամբ: Այսպես՝ մի նկարում պատկերված է Ս. Աստվածածինը Մանկան հետ, շուրջը՝ Ս. Հովհաննես Մկրտիչը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Ստեփանոս Նախավկան եւ Ս. Գրիգոր Նարեկացին²⁷: Մյուսում պատկերված է Ս. Աստվածածինը Մանկան հետ, նրա կողքերին՝ Ս. Հովհաննես Մկրտիչն ու Ս. Ստեփանոս Նախավկան²⁸: Երկու աշխատանքներն էլ պատկանում են անհայտ նկարիչների վրձինին:

Բարեխոսության թեմայի պատկերման մեջ ծաղկողները կերպարների բավականին ազատ ներմուծումներ կարող էին անել: Մեր դիտարկած

²⁴ Տե՛ս «Ավետարան», 1610 թ., ծաղկող՝ Հակոբ Զուղայեցի, ձեռ. 7639. տե՛ս նաեւ Ի. ДРАМПЯН, Акоп Джугаеци, Ереван, 2008, նկ. 64:

²⁵ Տե՛ս ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Բարեխոսության քրիստոնեական թեման հայ մանրանկարչության մեջ, «Հայկական արվեստ», թ. 1., Երեւան, 1974, էջ 83–84:

²⁶ Տե՛ս անդ, էջ 85:

²⁷ Տե՛ս Ք. ԱՎԵՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., նկ. 73:

²⁸ Անդ, նկ. 71:

բոլոր բարեխոսություններում դիմում են Ս. Աստվածածին Մանկան հետ, ինչի պատճառով նա չի պատկերվում բարեխոսների շարքում: Եւ միայն մեկի դեպքում է (Հակոբ Զուղայեցու մանրանկարում) բարեխոսությունն ուղղված Քրիստոսին, եւ այստեղ Ս. Աստվածածինն արդեն բարեխոսների շարքում է: Կարող ենք ենթադրել, որ եթե «Ս. Աստվածածինը Մանկան հետ» պատկերը խորհրդանշում է Եկեղեցուն, ապա նրանց բարեխոսելը նշանակում է բարեխոսություն Քրիստոսի եւ Եկեղեցու առջեւ, այդ իսկ պատճառով բարեխոսների շարքում հանդես են գալիս Ս. Ստեփանոս Նախավկան, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Գրիգոր Նարեկացին՝ որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ազգային բարեխոս սրբեր:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Վերը դիտարկված երկու թեմաներից զատ՝ Ս. Ստեփանոս Նախավկան պատկերվում է նաեւ առանձին դիմապատկերով: Այս տիպն առավել բնորոշ է հմայիլներին, որտեղ գրեթե միշտ կան այդ սրբին ուղղված աղոթքներ: Ս. Ստեփանոսի առանձին դիմապատկերներ հանդիպում են նաեւ որմնանկարներում:

Կարելի է ենթադրել, որ պահպանված վաղմիջնադարյան կոթողների վրա պատկերված սրբերի շարքում կան նաեւ Ս. Ստեփանոս Նախավկայի դիմապատկերներ: Սակայն քանի որ այդ շրջանում նրան պատկերելու որեւէ կանոն դեռեւս մշակված չէր, հայտնի չեն այդ սրբի բնորոշիչները, իսկ պատկերներն էլ երբեմն խիստ վնասված են, նույնականացումը միանգամայն թեական կլիներ, ուստի եւ խուսափում ենք դրանք ներկայացնելուց:

Մեզ հայտնի Ս. Ստեփանոս Նախավկայի ամենահին դիմապատկերն իր ժամանակին եղել է Գնդեվանքի տաճարում (նկարիչ՝ Եղիշե, 939 թ.): Լ. Դուռնովոյի հաղորդման համաձայն՝ հարավային խորանի մուտքի վերելում պահպանվել էին մեծ ծաղիկներով զարդարված տարօրինակ զգեստով կերպարի որմնանկարչական մնացորդներ: Կերպարի ուսին պահպանվել էր նաեւ ուրարը, ինչը Դուռնովոյին ենթադրել է տվել, որ սա կարող էր լինել Ս. Ստեփանոս Նախավկայի առաջին հայտնի պատկերներից մեկը²⁹:

²⁹ ՏՃՍ Լ. Ա. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 148:

Ս. Ստեփանոս Նախավկայի դիմապատկերները հիմնականում տարածված են ուշմիջնադարյան եւ նոր ժամանակների հմայիլներում: Սրբին պատկերելու միտում է նկատվում գլխավորապես ԺՀ. դ.: Դիմապատկերներում Ս. Ստեփանոսն առավել հաճախ ներկայացվում է սարկավագի տեսքով: Նրա ձեռքում արմավենու ճյուղ, Ավետարան, եկեղեցու նմուշ, բուրվառ ու խնկաման են լինում:

Հմայիլներից մեկում Ստեփանոսը պատկերված է ամբողջ հասակով, լուսապսակով շրջապատված, աջ ձեռքում կրում է խնկաման, իսկ ձախ ձեռքում՝ եկեղեցի³⁰: Նման մի նկար, որտեղ Ս. Ստեփանոսը պատկերված է կիսանդրի՝ շրջանի մեջ վերցված, կա նաեւ 1702 թ. Զմյուռնիայում եւ 1743 թ. Վանում գրված հմայիլներում³¹:

Սակայն երբեմն հանդիպում են պատկերներ, որտեղ Ս. Ստեփանոսը պատկերված է հանդիսավոր եւ եպիսկոպոսական տեսքով: Այսպես՝ Ս. Ստեփանոսի նման մի գեղեցիկ դիմապատկեր նկարված է 1844 թ. Մարտունիում գրված Ուրբաթագրքում, որը ժողովուրդն անվանում է Ամենափրկիչ Ավետարան: Այստեղ Ս. Ստեփանոսը պատկերված է կարմիր զգեստով, ձախ ուսին դեղին ուրարով, դեղին բուրվառով, եպիսկոպոսական վեղարով եւ լուսապսակով անմորուս երիտասարդի տեսքով³²:

Ս. Ստեփանոսի ԺՀ. դ. ստեղծված առանձին դիմապատկերներ են պահպանվել նաեւ Կոտինայի հախճապակե սալիկների վրա³³: Այդ դիմապատկերներն իրենց ոճով եւ ձևավորումով մոտ են հմայիլներում եղածներին: Մի դեպքում (Սերի թանգարան, 1718–19 թ.) սուրբը սարկավագի հանդերձներով է, մյուս դեպքում (Նրուսաղեմի Ս. Հակոբ վանք, 1719 թ.)՝ եպիսկոպոսական: Նրկու դեպքում էլ Ս. Ստեփանոսը հանդես է գալիս անմորուս երիտասարդի տեսքով, մի ձեռքին՝ եկեղեցու նմուշ, մյուսին՝ բուրվառ:

³⁰ Տե՛ս F. FEYDIT, նշ. աշխ., էջ 53, նկ. 46:

³¹ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) արխիվ, Տան Սուրբ ձեռագրեր (SUՁ) 29, SUՁ 18:

³² ՀԱԻ արխիվ, SUՁ 32:

³³ L. SOUSTIEL, Kütahya-Jérusalem. Pérégrinations de trois carreaux arméniens. “Review de la société des amis du musée national de céramique de Sevres”. 18, 2009, p. 61, fig. 3; JOHN CARSWELL, C.J.F.DOWSETT, Kutahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of St. James, Jerusalem, Oxford, 1972, vol. I, plate 9, B. 25.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական քրիստոնեություն մեջ արդեն վեցերորդ դարից հայտնի էին Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանի պատկերները, ինչի մասին վկայում է վարդապետ Վրթանես Քերթոզը (Զ.—Է. դդ.): Սակայն այդ տեսարանի հնագույն պատկերը՝ Դադիվանքում պահպանված որմնանկարը, մեզ է հասել 1297-ից:

Ս. Ստեփանոս Նախավկան, ինչպես Ս. Գրիգոր Լուսավորիչը, ընկալվել է որպես հայկական ազգային բարեխոս, որ հաճախ պատկերվում է Ս. Աստվածածնի եւ Մանկան, Ս. Հովհաննես Մկրտչի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի հետ:

Եթե «Ս. Աստվածածինը Մանկան հետ» պատկերը խորհրդանշում է Եկեղեցուն, ապա նրան բարեխոսելը նշանակում է բարեխոսություն Քրիստոսի եւ Եկեղեցու առջեւ: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ազգային բարեխոս սրբեր են Ս. Ստեփանոս Նախավկան, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Գրիգոր Նարեկացին:

Քարկոծման տեսարանն ունի նույն բովանդակությունն ու պատկերազրական ընդհանուր մոտեցումը, այդուամենայնիվ առկա են պատկերազրական մանրամասների տարբերություններ (օրինակ՝ մի դեպքում սուրբը պատկերվում է գլխաբաց, մյուս դեպքում՝ վեղարով): Տարբերությունները հատկապես առկա են տեսարանի վերին՝ երկնային հատվածում, որտեղ կարող է լինել Քրիստոս կամ Ս. Աստվածածինը:

Ս. Ստեփանոսի քարկոծման տեսարանը հայտնի է որմնանկարներից եւ քանդակներից, սակայն հազվագյուտ է մանրանկարներում: Նրան բարեխոսության թեմայով խմբապատկերում ներկայացնելը հայտնի է կերպարվեստի բոլոր ճյուղերից՝ քանդակ, որմնանկար, մանրանկար եւ գեղանկար-սրբապատկեր: Առանձին դիմապատկերը հիմնականում հայտնի է հմայիլներում զետեղված մանրանկարներից եւ Կուտինայի հախճապակե սալիկներից:

Ս. Ստեփանոսի պատկերազրությունը սերտորեն առնչվում է նրա մասին հայտնի գրավոր եւ բանավոր աղբյուրներին՝ սկսած Նոր Կտակարանից:

РЕЗЮМЕ

Св. Первомученик Стефан является одним из самых почитаемых святыми заступников в армянской традиции наряду со Св. Георгием Просветителем. Образ Св. Стефана в армянской традиции имеет три тематических круга: избивание камнями, святой в деисусной композиции (заступник) и одиночный портрет с атрибутами.

Согласно ранним письменным источникам (начиная с VI в.), его образ, в частности избивание камнями, изображался в армянских храмах. Но самая древняя роспись, датируемая 1297 годом и дошедшая до нашего времени, — это изображение избивания камнями, которое сохранилось в монастыре Дадиванк. Этот мотив, известный из фресок и рельефов, редко встречается в миниатюрах.

Св. Стефан как святой заступник известен уже с VIII века в канонах литургических песнопений. В иконографии этот образ святого распространен как во фресках и миниатюрах, так и в рельефах, и даже в сравнительно поздних живописных работах. Главной особенностью иконографии Деисиса («заступничества») является то, что Св. Стефан в основном изображен вместе со Св. Иоанном Крестителем — святые заступаются за смертных перед Св. Богородицей с Младенцем (Христос Эммануиль).

Одиночный портрет в основном встречается в хмаилах (магических свитках) 18—19-го вв., где святой изображен с своими атрибутами: одежда протоиерея (иногда епископа), кадило, ладанница и прочее. Тот же образ известен из кютахских изразцов монастыря Св. Иакова в Иерусалиме.

Армянская иконография Св. Стефана соотносится с известными письменными и устными источниками о житии святого, начиная с Нового Завета.

SUMMARY

In the Armenian tradition, St. Stephen the Protomartyr, along with St. Gregory the Illuminator, is one of the most venerated intercessor saints. In the Armenian tradition, the image of St. Stephen has three thematic circles: the stoning, the saint in the Deesis composition and the solitary portrait with attributes.

According to the earliest written sources (from the 6th century onwards), his image, in particular the stoning, was frequently depicted in Armenian monasteries. But



1. Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի արխիվ, ՏՍՁ (Տան սուրբ
ձեռագրեր) ֆոնդ, Հմայիլ, ՏՍՁ 32-18 [https://
iae-archive.am/arm/scripture/38/32/SUՁ-
հմր-32-Ամենափրկիչ-Ավետարան](https://iae-archive.am/arm/scripture/38/32/SUՁ-հմր-32-Ամենափրկիչ-Ավետարան)



2. Մատթեոսի Ավետարանի անվանաբերը:
Ավետարան 1475 թ., Բոլորաբերդ անապատ (ՄՄ 2634):



3. Կուտիմայի հախնապակե սալիկ,
1718—1719 թթ., Սևրի քանդաւան, Laure Soustiel, Kütahya-Jérusalem. Pérégrinations de trois carreaux arméniens. «Review de la société des amis du musée national de céramique de Sevres». 18, 2009, p. 61, fig. 3




4. Դրվագներ Մադարդավանի սբ. Ստեփանոս եկեղեցու արտաին հարդարանից, սբ. Ստեփանոսի փարկոծումը (լուս.՝ հարս. դր. Արմեն Հախնազարյանի), ԱՐՄԵՆ ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ, Արտագի երեմ վանքերը, Երևան, 2012, էջ 272:

the oldest wall-painting, dating back to 1297, which has survived to our days, is the depiction of stoning preserved in Dadivank. This motif, known from frescoes and reliefs, is rarely seen in miniatures.

St. Stephan, as an intercessor saint, has been known since the 8th century in the canons of liturgical chants. In iconography, this image of the saint is common in both frescoes and miniatures, as well as in reliefs and even in relatively late pictorial works. The main feature of the iconography of Deesis (“intercession”) is that St. Stephen is mainly depicted together with St. John the Baptist. Both saints intercede on behalf of mortals before the Holy Mother of God with the Child (Christ Emmanuel).

Single portraits are mainly found in hmayils (magical scrolls) of the 18th and 19th centuries, where the saint is depicted with all his attributes: garments of a proto-deacon (sometimes of a bishop), censer, thurible, etc. The same manner of iconography is known from Kütahya pictorial tiles of St. James Church in Jerusalem.

The Armenian iconography of St. Stephen correlates with the known written and oral sources on the life of the saint, beginning with the New Testament.



ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

**ԳԵՐՄԱՆԱ-ՎԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՅԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1973–1989 ԹԹ.**

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Գերմանիայում բնակվում էին փոքրաթիվ հայեր: Ռազմագերիները, որոնք տեղավորված էին հիմնականում Շտուտգարտում, հետպատերազմյան առաջին տարիներին լքել էին երկիրը՝ տեղափոխվելով գերազանցապես ԱՄՆ: Այնուամենայնիվ, 1960-ական թթ. սկզբին իրավիճակը փոխվեց: Աստիճանաբար աճում էր Մերձավոր Արևելքից, մասնավորապես Լիբանանից, Իրանից եւ Թուրքիայից հայ ուսանողների ներհոսքը: Ավելանում էր նաեւ աշխատանքի նպատակով Թուրքիայից ներգաղթող ծպտյալ հայերի թիվը¹: Վերջիններս Գերմանիայում վերադառնում էին իրենց հայկական արմատներին եւ կրոնին՝ քրիստոնեությանը, որի հետեւանքով Թուրքական իշխանությունների կողմից դիտվում էին որպես դավաճաններ եւ զրկվում հետադարձի հնարավորությունից: Այդպիսիք դիմում էին գերմանական իշխանություններին՝ ապաստանի իրավունք ստանալու նպատակով: Հաճախ չէին հաջողում, որովհետեւ հայկականությանը վերադարձած Թուրքիայի այդ քաղաքացիները նախանշված որեւէ ձեւաչափի մեջ չէին տեղավորվում²:

Նշված ժամանակաշրջանում, Գերմանիայում հայերի թվի ստվաթացմանը զուգընթաց, քայլեր էին ձեռնարկվում նրանց օգնելու համար, ուղիներ էին փնտրվում գերմանա-հայկական՝ պատերազմի հետեւան-

¹ Տե՛ս R. KANTIAN, Phoenix aus der Asche. Von der Neugründung 1972 bis heute, in: R. KANTIAN (Hg.), 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft (1914–2014): erinnern. gedenken. gestalten, Düsseldorf, 2014, էջ 193:

1960-ական թթ. Գերմանիայում հայերի թիվն աճելով հասել էր 5000–7000-ի: Նրանցից միայն 5000-ը Թուրքիայից աշխատանքի նպատակով ժամանած ծպտյալ հայերն էին (տե՛ս F. HEYER, Zur Wiederbegründung der Deutsch-Armenischen Gesellschaft, in: P. HAUPTMANN (Hg.), Kirche im Osten. Studien zur osteuropäischen Kirchengeschichte und Kirchenkunde, Bd. 21/22, Göttingen, 1979, էջ 322):

² Տե՛ս է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հոենոսի եւ Արաքսի միջեւ: 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ, թարգմ. Լ. Բերքյան-Աբրահամյան, Երեւան, 2016, էջ 9:

քով ընդհատված կապերը վերակենդանացնելու եւ զարգացնելու ուղղությամբ: Նախաձեռնողի դերում էին հայ ուսանողները: Հենց նրանց շրջապատում հասունացավ դր. Յոհաննես Լեփսիուսի միջնորդությամբ 1914 թ. Բեռլինում հիմնադրված եւ Երկրորդ աշխարհամարտից հետո իր գործունեությունը դադարեցրած Գերմանա-հայկական ընկերության (այսուհետեւ՝ ԳՀԸ) վերաբացման գաղափարը: Այդ ուղղությամբ առանձնապես մեծ եւ երախտաշատ աշխատանք կատարեց Արա Բերքյանը³, որը 1957 թ. ժամանել էր Գերմանիա՝ Մյունխենի համալսարանում ուսումը շարունակելու համար⁴:

Շփումների ընթացքում նկատելով՝ որքան քիչ էր գերմանական հասարակությունն իրազեկված հայերի եւ նրանց մեծագույն ողբերգության՝ Մեծ եղեռնի մասին, 1960-ական թթ. սկզբին հայ ուսանող ընկերների աջակցությամբ Ա. Բերքյանը հիմնադրեց ուսանողական երկու միություն Մյունխենում եւ Ախընում, ձեռնամուխ եղավ հայաստանյան թեմայով բանախոսությունների ու ելույթների կազմակերպմանը⁵: Իսկ 1965 թ., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առիթով, երեք ուսանող ընկերների հետ նա կազմակերպեց նամակ-գործողություն, որի նպատակն էր գերմանական մամուլին եւ տեղացիներին իրազեկել 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարված ողբերգական իրադարձությունների մասին: Օգտվել էին Մալնցի համալսարանի պրոֆ. Անտոն Հիլքմանի տասն էջանոց հոդվածից, որը տպագրվել էր Քյոլնի „Begegnung“ ամսագրում: Այդ հոդվածը, որտեղ սուր քննադատվում էին թուրքերի վայրագությունները, եւ առաջնակարգ կարեւորություն էր տրվում ապահով մեծ Հայաստանի ստեղծմանը, ուղարկվեց շուրջ 300 թերթի խմբագրություն, հրատարակչություն եւ նշանավոր անձանց: Այսուհանդերձ, այդ հոդվածին արձագանքը թույլ էր. շատերը լռե-

³ Ա. Բերքյանը (Արա Յան Բիլեզիկյան) ծնվել է 1934 թ. ապրիլի 20-ին Բեյրութում: Նախ ճարտարապետություն եւ ինժեներություն է ուսանել տեղի ամերիկյան համալսարանում, ապա 1957 թ. Գերմանիայում հաստատվելուց հետո՝ Մյունխենի եւ Ախընի տեխնիկական համալսարաններում: 1969 թ. ընդունել է գերմանական քաղաքացիություն: 1976 թ. Դարմշտադտի տեխնիկական համալսարանում պաշտպանել է «Միջնադարյան Հայաստանի ամրաշինությունը» խորագրով թեզը՝ ստանալով ճարտարապետության եւ ճարտարագիտության դոկտորի գիտական աստիճան: Մահացել է 1994 թ. փետրվարի 5-ին Վիսբադենում (տե՛ս F. HEYER, Dr.- Ing. Ara Jean Berkian, „Armenisch-Deutsche Korrespondenz“ (այսուհետեւ՝ ADK), 1994, März, №83, էջ 47–48:

⁴ Տե՛ս է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հոհենոսի եւ Արաքսի միջեւ, էջ 201:

⁵ Տե՛ս անդ, էջ 202:

ցին, իսկ ոմանց անդրադարձները զուսպ էին: Այլ էր հոգեւորականների, առանձնապես Գերմանիայի Ավետարանական եկեղեցու արձագանքը⁶: Գրեթե բոլորն Ա. Հիլքմանի հոգվածին պատասխանեցին ջերմ հարգանքով: Օրինակ՝ Բեռլինի ավետարանական եկեղեցու եպիսկոպոս Օտտո Դիրեկտուսը գրել էր. «Ես միանում եմ... Ձեր հույսին, որ այդ սարսափելի անարդարության քաղաքացունքը գալու է՝ ազատելու դժբախտ հայ ժողովրդին»⁷:

Ինչեւէ, նկատի առնելով ուսանողական միությունների միջոցով Գերմանիայում հայերի մասին իրազեկ հասարակական կարծիքի ձևավորման եւ գերմանա-հայկական կապերը խթանելու գործում մեծ հաջողության չհասնելու հեռանկարը՝ Ա. Բերքյանը շարունակ խորհում էր ԳՀԸ-ի վերաբացման մասին:

«Հետպատերազմյան շրջանում Գերմանա-հայկական ընկերության բացակայությունը,— գրել է նա 1981 թ.,— ես միշտ համարել եմ թերություն: Ես ինձ հարց էի տալիս՝ ինչո՞ւ Գերմանա-հունական, Գերմանա-թուրքական եւ նման ուրիշ միություններ գոյություն ունեն, բայց Գերմանա-հայկական ընկերություն գոյություն չունի: Ուսանողների խմբերը, հայրենակցական եւ մշակութային միությունները, իմ կարծիքով, դրան չէին փոխարինում, քանի որ այս դեպքում խոսքը վերաբերում է երկու ժողովուրդների փոխըմբռնման խորացման, այսինքն՝ պետք է ստեղծվեր «խառը» տիպի միություն, որտեղ պետք է հնարավոր լիներ գերմանացիների ու հայերի կարծիքների փոխանակությունը»⁸:

Համակիրներ գտնելու եւ ԳՀԸ-ի վերաբացման գաղափարն իրականություն դարձնելու ուղղությամբ Ա. Բերքյանի ձեռնարկած առաջին քայլերը, ցավոք, անպտուղ էին:

Շատերն անտարբերությամբ էին արձագանքում, երբեմն՝ որոշակի հակակրանքով: Սակայն նա վճռական էր տրամադրված, եւ սկզբնական անհաջողությունները չէին կարող նրան ստիպել հրաժարվելու իր մտադրությունից⁹:

⁶ Տե՛ս անդ, էջ 202–203:

⁷ Տե՛ս անդ, էջ 203:

⁸ Տե՛ս А. J. BERKIAN, Ein Jubiläum. Fünf Jahre Deutsch-Armenische Gesellschaft als eingetragener Verein — 1000 Jahre deutsch-armenische Freundschaft, ADK, 1981, Januar, №31, էջ 4:

⁹ Տե՛ս անդ:

1965 թ. Ա. Բերքյանը մտերմացավ պրոֆ. Ա. Հիլքմանի հետ, որի հոգվածը, ինչպես հընթացս ներկայացրել ենք, օգտագործել էր հասարակության իրազեկման համար: Երկուսով հաճախ էին խոսում Հայկական հարցի մասին եւ որպես կարեւոր խնդիր՝ քննարկում էին ԳՀԸ-ի վերաբացման հարցը: Կարծիքների մի աննշան տարբերություն կար. Ա. Հիլքմանը խորհում էր համաշխարհային «Պրո Արմենիա»-ի մասին, մինչդեռ Ա. Բերքյանի ամբողջ գործունեությունը ծավալվում էր զուտ ԳՀԸ-ի սահմաններում¹⁰:

Պրոֆ. Հիլքմանն Ա. Բերքյանին կարեւոր խորհուրդներ տվեց՝ այդ թվում առաջարկելով կապ հաստատել Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) նախկին պետական քարտուղար դր. Հանս Գլոբկեի հետ, որի անվանը նա պատահաբար հանդիպել էր Մխիթարյանների հրատարակած մի գրքի առաջաբանում: Հետեւելով նրա խորհրդին՝ 1965 թ. վերջին Բերքյանը նամակագրական կապ հաստատեց դր. Հ. Գլոբկեի հետ, իսկ 1966–1967 թթ. հաճախակի այցելում էր նրան Բոննում:

«Նա,— գրում է Ա. Բերքյանը դր. Գլոբկեի մասին,— մեծ հետաքրքրություն էր տածում Հայկական հարցի նկատմամբ: Այդ հետաքրքրությունն ի հայտ էր եկել Թեհլերյանի դատավարության ընթացքում (1921 թ. — Հ. Ս.), երբ նա դեռ իրավաբանականի ուսանող էր»¹¹:

ԳՀԸ-ի վերաբացման առիթով Ա. Բերքյանը դր. Գլոբկեից ստացավ խորհուրդներ իրավաբանական եւ կազմակերպական հարցերում, բայց ոչ ավելին, քանի որ նա պետական ծառայության մեջ չէր եւ ի վիճակի չէր ավելին օգնելու¹²:

Դր. Գլոբկեից գատ՝ Ա. Բերքյանը հանդիպումներ ունեցավ նաեւ մի քանի ուրիշ գործիչների հետ, բայց նրանցից ոչ մեկը, դր. Արմեն Հախնազարյանից¹³ բացի, հետաքրքրություն հանդես չբերեց ԳՀԸ-ի վերաբացման նախաձեռնության նկատմամբ: Բեռլինի Ազատ համալսարանի դոցենտ դր. Պետրոս Ֆրունչյանը, որը երկար տարիներ նույն ընկերության

¹⁰ Տէս Է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հռենոսի եւ Արաքսի միջեւ, էջ 204:

¹¹ Տէս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 4:

¹² Տէս Է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հռենոսի եւ Արաքսի միջեւ, էջ 204:

¹³ Դր. Ա. Հախնազարյանը 1972 թ. Ախընում հիմնադրեց հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող ընկերություն (Research in Armenian Architecture — RAA), որը նպատակ ուներ փրկել Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հուշարձանները գոնե թղթի վրա (տես անդ, էջ 208):

գանձապահն էր, ապա նաեւ՝ քարտուղարը, այդտեղ միայն խնդիրներ տեսավ: Անտարբերություն ցուցաբերեցին նույնիսկ ԳՀԸ-ի վերջին նախագահ դր. Պ. Ռոհրբախի երկու որդիները¹⁴:

Նշված գործիչներն առանձնացնում էին երկու կարեւոր խնդիր, որոնց լուծման պարագայում միայն ԳՀԸ-ի վերաբացման հարցն էր կրկնվում: Գործնական հիմքերի վրա: Նախ եւ առաջ խոսքը վերաբացվող ընկերություն համար համապատասխան ղեկավար գտնելու, ապա նաեւ անհրաժեշտ նյութական միջոցների հայթայթման մասին էր¹⁵:

Դժվարություններից չհուսահատվելով եւ շարունակելով նախաձեռնողական աշխատանքները՝ 1971 թ. փետրվարին Ա. Բերքյանը հաղորդակցություն մեջ մտավ Մայնի Ֆրանկֆուրտի էկոմենիկ կենտրոնի ղեկավարի հետ՝ նրան խնդրելով իրեն ծանոթացնել մի գործչի հետ, որը պատրաստ կլիներ ստանձնել վերաբացվող ԳՀԸ-ի ղեկավարությունը¹⁶: Առաջարկվեց հանդիպել Հայդելբերգի համալսարանի պրոֆ. Ֆրիդրիխ Հայերի հետ¹⁷: Վերջինս 1971 թ. ապրիլին խոստացավ գործուն մասնակցություն ունենալ ընկերության վերաբացման աշխատանքներին¹⁸:

Ըստ Ա. Բերքյանի՝ պրոֆ. Ֆ. Հայերը բազմաթիվ առումներով համապատասխանում էր ԳՀԸ-ի ղեկավարի պաշտոնին: Որպես ավետարանական աստվածաբան՝ նա կարող էր շարունակել իր նախորդների՝ Յոհ. Լեփսիուսի եւ Պ. Ռոհրբախի ավանդույթները: Նա նաեւ եթովպական եկեղեցու համակարգողն էր եւ իր ուղեւորության ընթացքում ամուր կապեր էր հաստատել Երուսաղեմի հայկական Ս. Հակոբյանց վանքի եւ Լիբանանում Գիլիկիայի կաթողիկոսի հետ: Իր հաշտվողական բնավորությամբ նա կամենում էր ի մի բերել տարբեր հոսանքները¹⁹:

Ինչեւէ, ձեռնամուխ լինելով ԳՀԸ-ի վերաբացման ուղղությամբ գործնական քայլերի իրականացմանը՝ Ա. Բերքյանն ու Ֆ. Հայերը միասին մշակեցին եւ պատրաստեցին ընկերության կանոնադրությունը, քննարկեցին նիստերի հրավիրման եւ հասարակության իրազեկման աշխատանքների կազմակերպման հարցերը եւ այլն:

¹⁴ Տե՛ս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 5:

¹⁵ Տե՛ս անդ:

¹⁶ Տե՛ս անդ:

¹⁷ Տե՛ս անդ:

¹⁸ Տե՛ս անդ:

¹⁹ Տե՛ս է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հոգնոսի եւ Արաքսի միջեւ, էջ 205:

Այդուհանդերձ, տեղի ունեցավ մի միջադեպ, որը դրդեց պրոֆ. Ֆ. Հայերին մի պահ հրաժարվել ծավալվող աշխատանքներին մասնակցությունից: Խոսքը վերաբերում է Քյոլնում երկու անհայտ անձանց կազմակերպած գործողությանը, որը նպատակ էր հետապնդում խափանել ԳՀԸ-ի վերաբացումը: Նրանք նամակների եւ հեռախոսային զանգերի միջոցով տարածում էին անհեթեթ տեղեկություններ, օրինակ՝ «հայերն իրականում ոչ թե ժողովուրդ են, այլ կրոնական փոքրամասնություն, ուստի ԳՀԸ-ի վերահիմնադրման գաղափարը չի կարող իրականություն դառնալ»²⁰:

Մեկ այլ դեպքում նշվում էր, թե հայերը մշտապես «երկպառակությունների» մեջ են, եւ ի հավաստումն դրա՝ մատնանշվում էին Հայ Եկեղեցու հայրերի փոխհարաբերությունները²¹:

Այս նենգամիտ գործողությունները շատ արագ բացահայտվեցին, եւ գերմանացիների ու հայերի նախաձեռնությամբ 1971 թ. հուլիսի 10-ին Մայնի Ֆրանկֆուրտի Դոմինիկյանների վանքում հրավիրվեց նախապատրաստական ժողով, որին հաջորդեցին մի քանի նիստեր եւ ժողովներ Մայնցի համալսարանի ուսանողական հանրակացարանում՝ Նյումանհաուզում²²:

Ի վերջո, 1972 թ. մարտի 5-ին Մայնցում հրավիրված ժողովում հաստատվեց ԳՀԸ-ի՝ ամիսներ առաջ մշակած կանոնադրությունը, եւ ընտրվեց գերմանացի ու հայ անդամներից բաղկացած վարչություն, որով ազդարարվեց ընկերության վերաբացման մասին²³: 1975 թ. օգոստոսի 4-ին (ըստ Ա. Բերքյանի՝ նոյեմբերի 25-ին²⁴) այն նաեւ գրանցվեց Մայնցի միությունների ցանկում²⁵:

«Հիշում եմ,— ԳՀԸ-ի վերաբացման առիթով գրում էր դր. Ա. Բերքյանը 1981 թ.,— ես իսկապես շատ գոհ էի: Այդ կազմակերպությանը միշտ նայել եմ պատմական տեսանկյունից եւ, ընդհանուր առմամբ, այն անփոխարինելի եմ համարում գերմանա-հայկական բարեկամության համար»²⁶:

²⁰ Տե՛ս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 5:

²¹ Տե՛ս անդ:

²² Տե՛ս է. ՄԵՅԵՐ, Ա. Յ. ԲԵՐՔՅԱՆ, Հռենոսի եւ Արաքսի միջեւ, էջ 205:

²³ Տե՛ս F. HEYER, Zur Wiederbegründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 322:

²⁴ Տե՛ս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 5:

²⁵ Տե՛ս F. HEYER, Zur Wiederbegründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 322:

²⁶ Տե՛ս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 6:

Վերաբացված կազմակերպության առաջին նախագահը պրոֆ. Ֆ. Հայերն²⁷ էր (նրան փոխարինեց պրոֆ. Պետեր Հաուպտմանը²⁸ (1982—1988 թթ.), իսկ վերջինիս՝ պրոֆ. Պետեր-Ֆրանկ Ռյոսեկերը²⁹ (1988—1991 թթ.), փոխնախագահը՝ դր. Ա. Հախնազարյանը³⁰, գանձապահը՝

²⁷ Ֆ. Հայերը ծնվել է 1908 թ. հունվարի 24-ին Դարմշտադտում: Սովորել է ավետարանական աստվածաբանություն թյուրինգենում, Գիսենում եւ Գյոթինգենում: 1931 թ. ծառայության է անցել Հարավային Ավստրիայի էռնստերուն ամրոցում՝ դառնալով Հենրիխ ԼԹ. որդիների քարոզիչն ու դաստիարակը: 1932 թ. բանասեր Օտտո Լուշնաթի հետ քայլարշավ է կազմակերպել Հարավարեւելյան Եւրոպայում եւ վերադարձից հետո Բրաունշվեյգում գրադեցրել ծխական քահանայի պաշտոնը: 1934 թ. դարձել է Շլեսվիգի Ս. Միքայելիս եկեղեցու հոգեւոր հովիվ: 1938 թ. Գյոթինգենի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում ստացել է աստվածաբանության դոկտորի գիտական կոչում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Ուկրաինայում որպէս ռազմական ոստիկանության սպա: Պատերազմի ավարտին փախել է Գերմանիա եւ 1945 թ. գարնանը Շլեսվիգում վերսկսել իր հովվական գործունեությունը: 1947 թ. կարճ ժամանակով ձերբակալվել է: Նրան մեղադրում էին պատերազմական հանցագործությունների մասնակցելու մեջ: Այնուամենայնիվ, դատ տեղի չի ունեցել: 1951 թ. Կիելի համալսարանում պաշտպանել է «Ուկրաինայի ուղղափառ եկեղեցին 1917—45 թթ.» թեզը՝ ստանալով պրոֆեսորի գիտական կոչում: Շլեսվիգում հիմնադրել է Ավետարանական ակադեմիա (որը հետագայում տեղափոխվեց Բադ Սեգեբերգ), որի լիակատար ղեկավարությունն ստանձնել է 1954 թ.: Կիելից հետո՝ 1964 թ., դարձել է Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր: Այստեղ նա դասավանդել է մինչ խոր ծերություն՝ մինչ 90 տարին լրանալը: Պրոֆ. Ֆ. Հայերը մահացել է 2005 թ. ապրիլի 10-ին Շլեսվիգում:

²⁸ Պ. Հաուպտմանը ծնվել է 1928 թ. Սաքսոնիայի Խեմինիտց (Կարլ-Մաքս-Շտադտ) քաղաքում: Սովորել է ավետարանական աստվածաբանություն Բեռլինում, Ռոստոկում եւ Մյունսթերում: 1958 թ. դարձել է Մյունսթերի համալսարանի «Արեւելյան եկեղեցիների ինստիտուտ»-ի գիտաշխատող: 1968 թ. նույն համալսարանում ստացել է աստվածաբանության դոկտորի, իսկ 1971 թ.՝ պրոֆեսորի գիտատական կոչում: 1965 թ. սկսել է հետաքրքրվել Հայկական հարցով: Երկու անգամ՝ 1973 թ. եւ 1975 թ., ժամանել է Հայաստան (տե՛ս P. HAUPTMANN, Grusswort des neuen Vorsitzenden, ADK, 1982, August, №38, էջ 3):

1976 թ. ստանձնել է Մյունսթերի համալսարանի «Արեւելյան եկեղեցիների ինստիտուտ»-ի ղեկավարի պարտականությունները: Այդ պաշտոնում մնացել է մինչեւ 1996 թ. ապրիլի 1-ը: Այդ ընթացքում նա հետեւողականորեն շարունակում էր «Եկեղեցին Արեւելքում» („Kirche im Osten“) տարեգրքի հրատարակության աշխատանքները: 1988 թ. հրատարակեց «Ուղղափառ եկեղեցին Ռուսաստանում: Նրա պատմության փաստաթղթերը (860—1980 թթ.)» ժողովածուն:

Պրոֆ. Պ. Հաուպտմանը մահացել է 2016 թ. մայիսի 23-ին Ռյուրբուրգում:

²⁹ Պ.—Ֆ. Ռյոսեկերը ծնվել է 1937 թ. մայիսի 22-ին Ֆրանկֆուրտում (Օդեր): Սովորել է կենսաբանություն եւ քիմիա Ֆրայբուրգում, որտեղ 1967 թ. ստացել է դոկտորի գիտական աստիճան: 1980—2000 թթ. եղել է Վյուրցբուրգի համալսարանի կենդանաբանության պրոֆեսոր: Մահացել է 2020 թ. մայիսի 3-ին:

³⁰ Տե՛ս P. RÖSELER, Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft, 75 Jahre, in: „Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft“, Mainz, 1989, էջ 94:

Ա. Բերքյանը³¹։ Ցավոք, հայտնի չէ ընկերության առաջին քարտուղարի անունը³²։

ԳՀԸ-ն, ըստ իր կանոնադրության 2-րդ կետի, հետապնդելու էր հետևյալ նպատակները՝

- նպաստել հայ եւ գերմանացի ժողովուրդների փոխըմբռնման մթնոլորտի խորացմանը,
- աջակցել Հայ Առաքելական եւ Գերմանական Եկեղեցիների միջեւ էկումենիկ հարաբերությունների ձեւավորմանը,
- գիտության, արվեստի եւ քաղաքականության ոլորտի ներկայացուցիչներին հաղորդակից դարձնել հայկական մշակույթին՝ իր ամբողջ բազմազանությամբ,
- օգնել գերմանաբնակ հայերին գտնելու ճանապարհ հայկական ավանդույթների պահպանման եւ գերմանական միջավայրին հարմարվելու միջեւ³³։

Այդ նպատակների իրականացման համար կարեւորագույն խնդիրներ էին կազմակերպության պաշտոնական պարբերականի հրատարակությունը, հայերեն գործերի գերմաներեն թարգմանությունը եւ հակառակը, հայ արվեստի գործերի ներկայացմանն օժանդակելը, հայկական հուշարձանների վերականգնմանն աջակցելը եւ պարբերաբար ժողովներ ի հրավիրումը³⁴։

³¹ Տէս F. HEYER, Dr.- Ing. Ara Jean Berkian, էջ 48։

³² 1978 թ. մայիսի 20-ին ԳՀԸ-ի տարեկան ընդհանուր ժողովում ընտրվեց նոր վարչություն՝ պրոֆ. Ֆ. Հայեր (նախագահ), Սեդա Մանգելսեն-Մուրադյան (փոխնախագահ), որն Ա. Մուրադյանի դուստրն էր (տես Հռենոսի եւ Արաքսի միջեւ, էջ 206), դր. Ա. Բերքյան (գանձապահ), Կարլ Յունգ (քարտուղար)։ Տէս K. JUNG, Mitglieder-Versammlung // ADK, 1978, № 21, էջ 2։ 1982 թ. մայիսի 9-ին ընտրվեցին՝ պրոֆ. Պետեր Հաուպտման (նախագահ), դր. Ա. Բերքյան (փոխնախագահ), Գրիգոր Փուրթյան (գանձապահ), որին 1983 թ. փոխարինեց Եղիշե Միքայել Դավիթյանը (տես K. JUNG, Mitgliederversammlung, ADK, 1984, September, №45, էջ 3), Կարլ Յունգ (քարտուղար, տես S.—M. MOURADIAN, Mitglieder-Versammlung, ADK, 1982, Mai, №36/37, էջ 3), որին կարճ ժամանակ անց փոխարինեց Վոլֆգանգ Ռիկմանը, իսկ 1986 թ.՝ Կարլ-Հանց Քաուլիխը (տես K.—H. KAULICH, Mitgliederversammlung, ADK, 1986, September, №52/53, էջ 3)։ Թեեւ Ֆ. Հայերը եւ Ս. Մանգելսեն-Մուրադյանը 1982 թ. ընտրությանը չէին առաջադրել իրենց թեկնածությունը եւ, հետեւաբար, չընդգրկվեցին նոր վարչության կազմում, բայց շարունակեցին գործուն մասնակցությունը՝ որպես ԳՀԸ-ի անդամ։ Վերջապես 1988 թ. մայիսի 8-ին ընտրվեց նոր վարչություն՝ պրոֆ. Պ.—Ֆ. Ռյոսելեր (նախագահ), դր. Ա. Բերքյան (փոխնախագահ), Ե. Մ. Դավիթյան (գանձապահ), դր. Քրիստոֆ Հեգեր (քարտուղար, տես CH. HEGER, Mitgliederversammlung, ADK, 1988, Juni, №60, էջ 4)։

³³ Տէս P. RÖSELER, նշ. հոդ., էջ 94—95։

³⁴ Տէս F. HEYER, Zur Wiederbegründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 322։

Վերաբացումից հետո ԳՀԸ-ն իր ամբողջ ներուժն ի սպաս դրեց վերոնշված նպատակների իրագործմանը: Այսպես՝ 1973 թ. պրոֆ. Ֆ. Հայերը ֆինանսական սուղ միջոցներով ձեռնամուխ եղավ “Armenisch-Deutsche Korrespondenz” (այսուհետեւ՝ ADK, «Գերմանա-հայկական թղթակցություն») եռամսյա պարբերականի հրատարակությունը: Պարբերականի գլխավոր խմբագրի պարտականությունները նախ ստանձնեց պրոֆ. Պ. Հաուպտմանը, իսկ այնուհետեւ՝ Ա. Բերքյանը: Հետագայում՝ 1978–1982 թթ, ADK-ն խմբագրում էր Ս. Մանգելսեն-Մուրադյանը: 1982 թ. պարբերականի խմբագրությունը վերստին ստանձնեց դր. Ա. Բերքյանը³⁵ այդ պաշտոնում մինչեւ 1989 թ.³⁶:

ADK-ն նախ տպագրվում էր A4, իսկ 1974 թ. հոկտեմբերից (պրակ 14)՝ A5 ձևաչափով: Պարբերականի անդրանիկ համարը բաղկացած էր 7 էջից եւ պարունակում էր 2 հոդված: Ժամանակի ընթացքում դրա ծավալներն ընդլայնվեցին՝ մինչեւ 1989 թ. հասցվելով 30–50 էջի³⁷, արդիականացվեց արտաքին ձեւավորումը (1991 թ. դեկտեմբերից (պրակ 74) ADK-ն ուներ պատկերազարդ կազմ): Բացի այդ՝ ներգրվեցին թեմատիկ բաժիններ՝ պարբերականի բովանդակությունն ավելի հստակ կառուցելու համար: 1997 թ. խմբագրությունը հրաժարվեց տպագրության A5 ձևաչափից եւս, քանի որ այն այլեւս չէր կիրառվում ժամանակակից հրատարակությունների համար: Այդ տարվա 1-ին համարը (պրակ 95) տպագրվեց 21x27 սմ չափսերով: Նշված չափսերով եւ բովանդակության թեմատիկ առանձնացմամբ ADK-ն լույս է տեսնում մինչեւ այսօր: Ներկայումս այն ունի ժամանակակից ձեւավորում, տպագրական ու բովանդակային բարձր որակ եւ Հայաստանի թեմայով իր տեսակի միակն է գերմանալեզու միջավայրում: Պարբերականը ծառայում է որպես աղբյուր գիտական ուսումնասիրությունների համար: Այն ստանում են ոչ միայն ԳՀԸ-ի անդամներն ու բաժանորդները, այլեւ Բունդեսթագի պատգամավորները, Եւրախորհրդարանի որոշ անդամներ, եւրոպական մի շարք երկրների արտգործնախարարներ, ինչպես նաեւ հասարակական կյանքի ականավոր ներկայացուցիչներից շատերը³⁸:

³⁵ Տե՛ս անդ:

³⁶ Տե՛ս F. HEYER, Dr.- Ing. Ara Jean Berkian, էջ 48:

³⁷ Տե՛ս P. RÖSELER, նշ. հոդ., էջ 96:

³⁸ Տե՛ս R. KANTIAN, նշ. հոդ., էջ 194–196:

Մինչեւ 1987 թ.՝ Արցախյան շարժման սկզբնավորումը, ADK-ն բացարձակապես չէր անդրադառնում Հայաստանի քաղաքական ընթացիկ իրադարձություններին։ Այն իր ընթերցողին էր ներկայացնում դրվագներ հայ ժողովրդի պատմության տարբեր պարբերաշրջաններից, լուսաբանում էր հայ հերոսների կյանքն ու գործը, ներկայացնում էր ուշագրավ հետազոտություններ պատմության հոլովույթում ձեւավորված գերմանա-հայկական փոխառնչությունների վերաբերյալ։ Այս առումով, թերեւս, առանձնակի հիշատակության է արժանի դր. էննո Մեյերի «Գերմանա-հայկական կապեր»³⁹ խորագրով հոդվածը, որը տպագրվել է պարբերականի 1981 թ. 34-րդ համարում։ Այդ հոդվածը, որը հեղինակի համար ծառայել է որպես զեկուցման նյութ ԳՀԼ-ի՝ նույն տարվա հուլիսի 12-ին Քրյոֆելբախում կայացած նիստում, լուսաբանելով գերմանա-հայկական պատմական, մշակութային, գիտակրթական, հասարակական-քաղաքական կապերը, այդ համաբնագրում ներկայացվում է երկու ժողովուրդների հարաբերությունների խորացման ու ամրապնդման գործում ԳՀԼ-ի բերած ներդրումը եւ եզրափակվում հեղինակի հետեւյալ տողերով. «Ժողովուրդներ, որ ԳԴՀ-ն գտնվում է խորհրդային ազդեցության ոլորտում, հանգեցրել է գերմանա-հայկական նոր, օրինակ՝ Հալլեի եւ Երեւանի համալսարանների միջեւ կապերի հաստատմանը։ԳԴՀ-ի ուսանողները հնարավորություն ունեն սովորելու Երեւանում, առանձնապես՝ մաթեմատիկա եւ ֆիզիկա։ Այս առիթով մի հայ գիտնականից ես լսեցի հետեւյալը. «Մենք նախկինում վերցնում էինք, այսօր տալիս ենք (նկատի ունի գիտելիք.— Հ. Ս.)»։ Գերմանա-հայկական ընկերության նպատակը պետք է լինի աշխատել այնպես, որ ինչպես հայերը, այնպես էլ գերմանացիները կարողանան թե՛ վերցնել, թե՛ տալ»⁴⁰։

ADK-ն նաեւ էջեր էր հատկացնում հայ ժողովրդի ինքնության պատվար Հայ Առաքելական Եկեղեցուն։ Այն լուսաբանում էր հայերի՝ որպես քրիստոնյա առաջին ժողովրդի եկեղեցական տոներն ու ծեսերը, մանրամասներ էր ներկայացնում հայ հոգեւոր հայրերի կենսագրությունից, հավուր պատշաճի արժեւորում էր Եկեղեցու անուրանալի դերը հայ գրի ու գրականության, արվեստի ու գիտության, կրթության զարգացման,

³⁹ Տե՛ս E. MEYER, Deutsch-Armenische Beziehungen, ADK, 1981, Oktober, №34, էջ 14—21։

⁴⁰ Տե՛ս անդ, էջ 21։

հայությունն բարոյական դաստիարակության, պետականության բացակայության պայմաններում՝ հանրային կյանքի կազմակերպման հարցերում, իրազեկում էր տալիս նրա՝ եւրոպական Եկեղեցիների հետ ունեցած առնչությունների մասին, հանգամանորեն լուսաբանում էր Գերմանահայոց թեմի գործունեությունը: Զուգահեռաբար պարբերականն իր ընթերցողին ծանոթացնում էր հայ գրականության գոհարներին, արվեստի տարբեր ճյուղերում հայ ժողովրդի ունեցած նվաճումներին, նրա ճարտարապետական ժառանգությանը, նույնիսկ՝ հայկական խոհանոցին ու հայերի մարզական հաջողություններին, քննարկում էր դրանց համապատասխան գրականությունը:

Այսուհանդերձ, ADK-ի հրապարակախոսության առանցքը Հայոց ցեղասպանությունն էր: Վկայակոչելով այդ զարհուրելի ողբերգությունը՝ այն փաստագրում էր Թուրքիայում եւ մյուս երկրներում ապրող հայերի ընթացիկ դրության վերաբերյալ տեղեկությունները եւ ուշադրություն հրավիրում մարդու իրավունքների խախտումների վրա: ԳՀՀ-ն ջանում էր այդ կերպ ազդել Գերմանիայի պետական-քաղաքական գործիչների դիրքորոշման վրա եւ հասնել այն բանին, որ նրանք ուշադրություն դարձնեն հայերին եւ աջակցեն թե՛ հայրենիքում, թե՛ հյուրընկալող երկրում նրանց համար իրավահավասար հարաբերությունների ստեղծմանը: Այդ առումով ընկերությունն առանձնապես ուշադրություն էր դարձնում գերմանաբնակ այն հայերին, որոնք ժամանել էին Թուրքիայից:

Ի լրումն ADK-ի հրապարակումների՝ ԳՀՀ-ի անդամներն ուշագրավ հետազոտություններ էին զետեղում գիտական նյութերի ժողովածուներում, տպագրվում էին միջազգային մամուլի էջերում: Օրինակ՝ ամերիկյան հեղինակավոր “Letter from Germany” պարբերականի 1977 թ. օգոստոսի 6-ի համարում հրատարակվեց դր. Մուզդանի հոդվածը, որը ներկայացնում էր ընկերության գործելաոճը⁴¹:

ԳՀՀ-ի հրապարակախոսական գործունեությունը հատկանշվում էր նաեւ գրքերի հրատարակությամբ ու վերահրատարակությամբ: 1980-ական թթ. այն հրապարակ հանեց «Հայ ժողովրդի մահուղին»⁴², «Իմ նախնիների պատմությունը»⁴³, «Հայերը, Minority Rights Group-ի №32 տե-

⁴¹ Տե՛ս „Nachrichten“, ADK, 1977, September, №18, էջ 32:

⁴² Տե՛ս J. LEPSIUS, Der Todesgang des armenischen Volkes. Nachdruck, Heidelberg, 1980:

⁴³ Տե՛ս „Geschichte meiner Vorfahren“, Mainz, 1982:

ղեկագրի գերմանական հրատարակություն»⁴⁴, «Հռենոսի եւ Արաքսի միջեւ, 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ»⁴⁵, «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին»⁴⁶ գրքերը:

Գրավոր հրապարակումներից զատ՝ իր նպատակների իրագործման համար ԳՀԸ-ն հանդես էր գալիս բազմապիսի ու բազմաձև նախաձեռնություններով, որոնց շարքում առանձնակի տեղ էին զբաղեցնում մշակութային ծրագրով միջոցառումները (հուշ-երեկոներ, շարժական ցուցահանդեսներ, համերգներ եւ այլն): Այս առումով, թերեւս, հիշատակության է արժանի 1976 թ. հունվարի 18-ին Մայնի Ֆրանկֆուրտում կազմակերպված «Հայկական Կիլիկիայի» հուշ-երեկոն⁴⁷, որը մի կողմից՝ գերմանաբնակ հայերի պատմական հիշողությունը թարմացնելու, մյուս կողմից՝ գերմանացի հյուրերին հայ ժողովրդի պատմությանը հաղորդակից դարձնելու հնարավորություն էր:

Հայ կերպարվեստի վարպետները միշտ չէ, որ հնարավորություն էին ունենում Գերմանիայում ներկայացնելու իրենց ստեղծագործությունները, քանի որ նկարների տեղափոխությունը կապված էր առաջին հերթին նյութական դժվարությունների հետ: Այս առումով գերմանաբնակ հայերի եւ գերմանացի արվեստագետների համար եզակի իրադարձություն էր 1978 թ. ապրիլի 2-ին Հայդելբերգի Մեյքոնով պատկերասրահում «Ֆրանսահայ 6 նկարիչ» խորագրի ներքո բացված ցուցահանդես-վաճառքը, որը մայիսին տեղափոխվեց Մայնցի Դոռնհյոֆեր պատկերասրահ: Ցուցահանդեսն ուներ ներկայացուցչական պատկառելի կազմ, որտեղ, ի թիվս այլոց, ընդգրկված էր արվեստի խոշորագույն վարպետ Գառզուն (Գառնիկ Զուլումյան): Ներկայացված էր շուրջ 80 գծանկար (գրաֆիկական նկար): Ուշագրավ է, որ ԳՀԸ-ն՝ որպես միջոցառման կազմակերպիչ, առիթն օգտագործեց եւ երկու քաղաքներում՝ Հայդելբերգում եւ Մայնցում, զուգահեռաբար իրականացրեց լրացուցիչ միջոցառումներ՝ այցելուներին ներկայացնելով ընկերության առջեւ դրված խնդիրները, ինչպես նաեւ ընթերցումների ու տեսասահիկների (սլայդ) միջոցով նրանց ծանոթացնելով հայերի ընթացիկ

⁴⁴ S՛ku D. LANG, CH. WALKER, Die Armenier, Deutsche Ausgabe des Berichts №32 der Minority Rights Group, London, Oldenburg, 1985:

⁴⁵ S՛ku E. MEYER, A. J. BERKIAN, Zwischen Rhein und Arax. 900 Jahre deutsch-armenische Beziehungen, Oldenburg, 1988:

⁴⁶ S՛ku J. LEPSIUS, Bericht zur Lage der Armenier in der Türkei. Nachdruck, 1989:

⁴⁷ S՛ku A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 6:

դրությունը: Այդ գործում առանձնապես մեծ ներդրում ունեցավ պրոֆ. Ֆ. Հայերը⁴⁸:

Խորապես դրվատելի իրադարձություն էր նաեւ ԳՀԸ-ի նախաձեռնությամբ 1982 թ. հոկտեմբերին հայկական մշակույթի կարեւոր բաղադրիչներից մեկի՝ ավանդական տարազի ցուցադրությունը գերմանական 5 խոշոր քաղաքներում⁴⁹: Մայնի Ֆրանկֆուրտում միջոցառումն անցկացվեց յուրահատուկ շքեղությամբ: Այցելուները հնարավորություն ունեցան վայելելու Երուսաղեմից հյուրընկալված հայ երգիչ Դավիթ Սամուելյանի հայերեն կատարումները՝ դաշնոնի (ձեռնադաշնակ՝ ակորդեոն) նվագակցությամբ⁵⁰:

ԳՀԸ-ի գործունեության օրակարգում էր նաեւ գիտաժողովների, դասախոսությունների, քննարկումների կազմակերպումը: Դրանք գրեթե առանց բացառության վերաբերում էին Հայոց ցեղասպանությանը եւ հարակից խնդիրներին: Ա. Բերքյանը՝ ԳՀԸ-ի՝ որպես գրանցված կազմակերպության 5-ամյա հոբելյանին նվիրված իր մի հոգևածում մեծ հաջողություն է համարում առանձնապես Թուրքիոյի ակադեմիայում հրավիրված գիտաժողովը⁵¹, որտեղ զեկուցումներով հանդես եկան բազմաթիվ ականավոր արեւելագետներ, այդ թվում՝ Համբուրգի համալսարանի պրոֆ. Բերթոլդ Շփուլերը: Իր խոսքում նա հիշատակեց Ալֆրեդ Մուրադյանին, որն իրեն օգնել էր ԳՀԸ-ի վերաբացման աշխատանքներում եւ մեջբերեց այդ երեկոյի ընթացքում ասված նրա հետեւյալ միտքը. «Դուք փայլում եք: Ձեր ցանկությունները կատարվել են: Այժմ Գերմանա-հայկական ընկերությունը ճանաչում է վայելում հասարակության մեջ»⁵²:

Նշենք, որ ԳՀԸ-ն նաեւ համագործակցում էր գերմանական ռադիոյի հետ՝ ռադիոհաղորդումների միջոցով հրապարակային հնչեղություն հաղորդելով Հայոց ցեղասպանության պատմությանը⁵³:

Հայապահպան գործունեության բնագավառում եւ գերմանա-հայկական կապերի ամրապնդման ուղղությամբ ծավալվող աշխատանքներում

⁴⁸ Տե՛ս S.—M. MOURADIAN, Kunst Bericht, ADK, 1978, Juni, №21, էջ 3—4:

⁴⁹ Տե՛ս A. J. BERKIAN, Liebe Leser, 1982, September, №39, էջ 1:

⁵⁰ Տե՛ս A. J. BERKIAN, Unsere große Trachtenschau, ADK, 1983, März, №40, էջ 4:

⁵¹ Գիտաժողովի հրավիրման տարին եւ օրը չենք հիշատակում համապատասխան աղբյուրի բացակայության պատճառով:

⁵² Տե՛ս A. J. BERKIAN, Ein Jubiläum, էջ 6:

⁵³ Տե՛ս „Mitgliederversammlung der Deutsch-Armenischen Gesellschaft am 19. Juni 1977 in Kirche und Gemeindesaal Heilig-Geist in Hanau“, ADK, 1977, №17, էջ 19:

ԳՀԸ-ի առաջնահերթություններից էր *Խորհրդային Հայաստանի հետ փոխադարձ կապը*: Այդ շրջանակում այն կազմակերպում էր զբոսաշրջային ուղեւորություններ *Խորհրդային Հայաստան*: Առաջին այդպիսի ուղեւորությունը ձեռնարկեց պրոֆ. Ֆ. Հայերը 1979 թ. օգոստոսին: Դրան մասնակցում էին ինչպես ԳՀԸ-ի անդամներն ու գերմանահայ համայնքի ներկայացուցիչները, այնպես էլ Վիեննայի Ավստրո-հայկական ընկերության անդամները⁵⁴:

Պարբերական դարձած այդ ուղեւորություններից զատ՝ ԳՀԸ-ն լայնորեն աջակցում էր ԳԴՀ-ի եւ Խորհրդային Հայաստանի միջեւ գիտական կապերի զարգացմանն ու ընդլայնմանը: Հատկանշական է, որ նույն տարում՝ 1979 թ., նրա հրավերով Արեւմտյան Բեռլին էր ժամանել Հալլեի համալսարանից դր. Հերման Գոլցը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենսագրության մասին համարձակագրի հեղինակը: Ընկերության ղեկավարությունը հույս ուներ, որ նա կկարողանար ի մի բերել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենսագրության համալսարանի մի մասը եւ Հալլեում հիմք կդնեք Լեփսիուսի արխիվին, որը կնպաստեր ԳԴՀ-ում հայագիտական ուսումնասիրությունների ավանդույթի վերականգնմանն ու հետաքրքրություն կստեղծեր Հայաստանի նկատմամբ⁵⁵: Ի դեպ, դր. Հ. Գոլցը, որը զբաղվում էր հայոց նորագույն շրջանի պատմության ուսումնասիրությամբ, սերտ կապեր ուներ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտնականների հետ, հաճախակի տպագրվում էր էջմիածնի, Անթիլիասի եւ Վիեննայի Մխիթարյանների հանդեսներում⁵⁶: 1980 թ. սեպտեմբերի 7-ին նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենսագրության համալսարանից հեռացվեց Մայր Աթոռ Սուրբ էջմիածին՝ Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ին⁵⁷: Այդ օրը՝ Մայր տաճարում սուրբ պատարագից հետո, Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ նվիրված դր. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիշատակին: Գերմանիա վերադարձից հետո՝ 1980 թ. նոյեմբերի

⁵⁴ Տե՛ս S.—M. MOURADIAN, Mitglieder-Versammlung, ADK, 1980, Juli, №29, էջ 3:

⁵⁵ Հ. Գոլցը հաջողությամբ իրականացրել է իր հանձնառությունը: Նա Հալլե-Վիտենբերգի համալսարանում հիմք է դրել Լեփսիուսի արխիվին, որը պարունակում է մի քանի հազար փաստաթուղթ: Նույն համալսարանում ստեղծել է հայագիտական աշխատասենյակ, հավաքել է Հայաստանի պատմությանը, Հայկական հարցին վերաբերող մեծ գրադարան: 1986 թ. կազմակերպել է Յ. Լեփսիուսի հիշատակին նվիրված միջազգային գիտաժողով, որի նյութերը հրատարակվել են առանձին ժողովածուով:

⁵⁶ Տե՛ս „Wissenschaft. Lepsius-Archiv“, ADK, 1981, Juni, №33, էջ 7:

⁵⁷ Տե՛ս F. HEYER, Besuche. Veronika Lepsius in Etschmiadzin-Seine Heiligkeit Katolikos Vazgen I. in der Bundesrepublik, էջ 5:

19-ին, Վ. Լեփսիուսը Հայոց Հայրապետին հղած նամակում երախտագիտություն եւ շնորհակալություն էր հայտնում իր հոր նկատմամբ ցուցաբերված ազնիվ եւ քրիստոնեական վերաբերմունքի համար⁵⁸։ Իսկ դր. Հ. Գոլթցը իր ճամփորդական տպավորություններն ամփոփեց «Յոհաննես Լեփսիուսի հետքերով» խորագիրը կրող հոդվածում, որը զետեղվեց ADK-ի 1981 թ. 33-րդ համարում։

1981 թ. մայիսի 6-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայից Գերմանիա՝ նախ Մյունխեն, ապա Մայնի Ֆրանկֆուրտ այցելեց Վազգեն Ա.-ն։ Մյունխենում նրան դիմավորեցին կարդինալ Ռատցինգերը եւ բավարական լյութերական եպիսկոպոս Հանսելմանը, իսկ Մայնի Ֆրանկֆուրտում՝ ԳՂԼ-ի անդամներն էրլանգենից՝ պրոֆ. Ֆաիրի ֆոն Լիրենֆելդը եւ դր. Ֆելմին։ Հետո տեղի Քրիստոսակիրխեում Հայոց Հայրապետին ընդունեց Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու խորհուրդը։ Այդ հանդիպմանը որպես ԳՂԼ-ի նախագահ մասնակցում էր նաեւ պրոֆ. Ֆ. Հայերը։ 1981 թ. ADK-ում տպագրված «Այցելություններ» խորագրով հոդվածում նա, լուսաբանելով այդ այցի մանրամասները, նշում էր, որ Հայոց Հայրապետի հետ զրույցում ինքն առաջարկել է վերականգնել Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ աստվածաբան ուսանողների փոխանակման ավանդույթը։ «Ուսանողների այդպիսի փոխանակումը հիմքեր է ստեղծում մեր եկեղեցիների եւ ժողովուրդների ապագա սերունդների փոխադարձ սիրո համար»⁵⁹,— գրում էր նա։

Մայիսի 7-ին Վազգեն Ա.-ն այցելեց Հանաու եւ տեղի Մարիենկիրխեում մասնակցեց սուրբ պատարագի արարողությանը, որին, ի շարս այլոց, ներկա էր դր. Ա. Բերքյանը։ Նա առիթն օգտագործեց եւ անձամբ ծանոթացավ Հայոց Հայրապետի հետ՝ ապագայում կապը պահելու եւ զարգացնելու հեռանկարով⁶⁰։

Անդրադառնալով ԳՂԼ-ի դրամական միջոցներին՝ նշենք, որ այն պետական հովանավորություն չէր ստանում, այլ իր գործունեության, այդ թվում՝ ADK-ի հրատարակության ծախսերը, հոգում էր անդամավճարներից գոյացող եկամուտներից (միակ բացառությունը 1978 թ. Հայդելբեր-

⁵⁸ Տե՛ս «Դոկտ. Հովհաննես Լեփսիուսի դուստր Վերոնիկա Լեփսիուսի նամակը Հայոց Հայրապետին», «Էջմիածին», 1980, ԺԱ., էջ 25–27։

⁵⁹ Տե՛ս F. HEYER, Besuche. Veronika Lepsius in Etschmiadzin-Seine Heiligkeit Katolikos Vazgen I. in der Bundesrepublik, ADK, 1981, Juni, №33, էջ 6։

⁶⁰ Տե՛ս անդ։

գի եւ Մայնցի ցուցահանդեսներն էին, որոնց կազմակերպմանը նյութապես աջակցել էր Բադեն Վիտենբերգի մշակույթի նախարարությունը⁶¹։ Ըստ Ֆ. Հայերի՝ 1978 թ. ընկերությունն ուներ 45 անդամ։ Եւս 4 անդամ մինչեւ այդ մահացել էր։ Ավելի լայն էր նրա պաշտոնական օրգանի բաժանորդների շրջանակը՝ մոտ 100 հոգի⁶²։ Անդամավճարի սկզբնական չափը մեզ հայտնի չէ։ Գիտենք միայն, որ 1978 թ. ԳՀԼ-ի վարչության որոշմամբ հաջորդ տարվանից այն կազմելու էր տարեկան 30 մարկ (ուսանողներն ու թոշակառուները վճարելու էին 20 մարկ)։ 1979 թ. որոշվեց խնդրել պարբերականի այն բաժանորդներին, որոնք ընկերության անդամ չէին, նվիրաբերություններ կատարել⁶³։

Նշված քայլերը, այսուամենայնիվ, բավարար արդյունք չտվեցին. ստացվող եկամուտները չէին բավարարում ԳՀԼ-ի նյութական կարիքները։ Հատկանշական է, որ 1984 թ. մայիսի 20-ի (այդ տարում ԳՀԼ-ն ուներ 69 անդամ) ընկերության ընդհանուր ժողովում որոշվեց բարձրացնել անդամավճարը։ 1985 թ. այն կազմելու էր տարեկան 50 մարկ (ուսանողներն ու թոշակառուները վճարելու էին 30 մարկ)։ Իսկ ADK-ի այն բաժանորդները, որոնք ընկերության անդամ չէին, վճարելու էին 12 մարկ⁶⁴։ Նաեւ քայլեր ձեռնարկվեցին ընկերության անդամների թվաքանակի ընդլայնման ուղղությամբ։ 1987 թ. (այդ տարում ԳՀԼ-ն ուներ 80 անդամ) Կ. Հ. Քաուլիխը կոչով դիմեց ընկերության բոլոր բարեկամներին՝ խնդրելով նոր անդամներ հավաքագրել⁶⁵։

Ձեռնարկված քայլերի շնորհիվ ԳՀԼ-ի դրամական դրությունը 1980-ական թթ. վերջին սկսեց աստիճանաբար կայունանալ։ 1989 թ. ընկերությունն ուներ 88 անդամ, սեպտեմբերի 12-ի դրությամբ գանձարանում կար 3955 մարկ⁶⁶։

Զմոռանաք, որ 1989 թ. հոբելյանական տարի էր ԳՀԼ-ի համար։ Լրանում էր կազմակերպության հիմնադրման 75-ամյակը։ Այդ առիթով սեպտեմբերի 23-ին Բրաունշվայգի Ֆրանցիսկուսգալում տեղի ունեցավ մեծ

⁶¹ S^{ku} K. H. JUNG, Mitgliederversammlung, ADK, 1984, September, №45, էջ 3։

⁶² S^{ku} F. HEYER, Zur Wiederbegründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 322։

⁶³ S^{ku} S.—M. MOURADIAN, Mitglieder-Versammlung, ADK, 1980, Juli, №29, էջ 3։

⁶⁴ S^{ku} K. H. JUNG, Mitgliederversammlung, ADK, 1984, September, №45, էջ 3։

⁶⁵ S^{ku} K.—H. KAULICH, Kurznachrichten. Mitteilung unseres Schriftführers, ADK, 1987, September, №57, էջ 7։

⁶⁶ S^{ku} CH. HEGER, Niederschrift der Mitgliederversammlung der Deutsch-Armenischen Gesellschaft e. V, Mainz am 24.09.1989 in Braunschweig, ADK, 1989, Dezember, №66, էջ 13—14։

միջոցառում: Այնտեղ ողջույնի խոսքով հանդես եկավ ընկերության նախագահ Կրոֆ. Պ.—Ֆ. Ռյոսելերը: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցում էին ԳՀԸ-ին՝ չմոռանալով այդ շարքում հիշատակել Ավստրո-հայկական մշակութային ընկերության անունը⁶⁷:

Բացման խոսքից հետո Պ.—Ֆ. Ռյոսելերը հանդես եկավ ԳՀԸ-ի պատմությունը ներկայացնող գեկուցմամբ եւ այդ առիթով հատուկ անդրադարձավ Ա. Բերքյանի եւ Ֆ. Հայերի գործունեությանը: «Գերմանա-հայկական ընկերությունը,— նշեց նա,— անվերջ պարտական է պարոն դր. Բերքյանին եւ պարոն Կրոֆ. Հայերին: Նրանք ոչ միայն քաջություն են ունեցել վերահիմնադրելու ընկերությունը, այլեւ մշտաջան աշխատել են, որ այն հետզհետե ձեռք բերի ավելի մեծ նշանակություն: Ամենից առաջ նրանց հաջողվել է տիրապետել տնտեսական ծանր իրավիճակներին եւ համաձայնեցնել տարբերվող կարծիքները: Ուստի այսօր Գերմանա-հայկական ընկերությունը կրկին հեղինակություն է եւ ամենուրեք ընդունված գրուցընկեր: Այդ պատճառով Գերմանա-հայկական ընկերությունը որոշել է պարոն դր. Բերքյանին եւ պարոն Կրոֆ. Հայերին պատվավոր անդամակցություն շնորհել»⁶⁸:

Ա. Բերքյանը շնորհակալությամբ ընդունեց այդ պատիվը եւ իր խոսքում համառոտ անդրադարձ կատարեց գերմանա-հայկական բարեկամությանը, ԳՀԸ-ի պատմությանը, Գերմանիայում հետզհետե թուրքերի թվաքանակի աճին եւ հայերի դրությունը⁶⁹:

Պրոֆ. Ֆ. Հայերն արտերկրում գտնվելու պատճառով ներկա չէր միջոցառմանը: Ուստի նա գրավոր շնորհակալություն հայտնեց իր ղեկավարությանը՝ իրեն ԳՀԸ-ի պատվավոր անդամ ճանաչելու համար⁷⁰:

Միջոցառմանը գեկուցումներով հանդես եկան նաեւ Կրոֆ. Հ. Գուլցը («Յոհաննես Լեփսիուս, հայկական բարեփոխումներն Օսմանյան կայսրությունում եւ Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը»), Կրոֆ. Պ.—Ֆ. Ռյոսելերը («Գերմանա-հայկական ընկերության պատմությունը»), Կրոֆ. Պ. Հաուպտմանը («Հայոց եկեղեցու պատմությունը՝ որպես հատուկ դեպք»), Խաչիկ Ղազարյանը (Գազեր, «Հայերի սուրբ պա-

⁶⁷ S՛h CH. HEGER, Festveranstaltung zum 75-jährigen Jubiläum der Deutsch-Armenischen Gesellschaft, ADK, 1989, September, №65, էջ 2:

⁶⁸ Անդ:

⁶⁹ S՛h անդ, էջ 3—7:

⁷⁰ S՛h F. HEYER, Dank für Empfang der Ehrenmitgliedschaft, ADK, 1989, Dezember, №66, էջ 12—13:

տարագր»)⁷¹։ Քանի որ դր. Արմեն Հախնազարյանը Հայաստանում էր եւ ներկա չէր հոբեյանական տոնակատարությանը, «Հայկական վանական համալիրներն Իրանում եւ դրանց նշանակությունը» վերնագրով զեկուցումը նրա փոխարեն ընթերցեց կինը⁷²։

Ընթերցված բոլոր զեկուցումներն ամփոփվեցին մեկ ժողովածուում, որը հրատարակվեց «75-ամյա Գերմանա-հայկական ընկերություն» խորագրի ներքո (տե՛ս 30-րդ հղումը)։

Հոբեյանական միջոցառման երաժշտական մասում ջութակի կատարումներով հանդես եկավ Վոլֆգանգ Մերթենսը։ Վերջում նա կատարեց Ալեն Ռիդուտի՝ խաղաղասիրության փառաբանմանը նվիրված «Ֆերդինանդ ցուլը» պիեսից փոքրիկ մի հատված, որով էլ ավարտվեց միջոցառման պաշտոնական մասը։ Դրանից անմիջապես հետո կազմակերպված ընդունելությունը ներկաների համար լավ առիթ էր միմյանց ճանաչելու, գրույցի եւ գաղափարների փոխանակման համար⁷³։

Այսպիսով՝ 1960-ական թթ. մի կողմից՝ Գերմանիայում հայերի թվի ստվարացումը, մյուս կողմից՝ գերմանական հասարակության անտեղյակությունը հայերի ու Հայոց ցեղասպանության մասին ուսման նպատակով Մյունխեն ժամանած Ա. Բերքյանի համար առիթ դարձան նախաձեռնելու պատերազմից հետո իր գործունեությունը դադարեցրած ԳՀԼ-ի վերաբացումը, կազմակերպություն, որը մեծ ներդրում է ունեցել հայ ժողովրդի ձայնը Գերմանիայի կառավարությանն ու միջազգային ատյաններին հասցնելու, արտերկրում հայության իրավունքները պաշտպանելու եւ գերմանա-հայկական մշակութային, հասարակական-քաղաքական կապերը զարգացնելու գործում։ Մի քանի տարի տեւած հետեւողական աշխատանքը 1972 թ. ունեցավ հաջող ավարտ։ Վերաբացված ընկերությունը, գործունեության բնագավառում ուղենիշ ունենալով իր ռահվիրա Յոհ. Լեփսիուսի օրինակը, ամբողջ ներուժն ի սպաս դրեց սկզբից եւեթ իր առջեւ դրված նպատակների իրագործմանը։

⁷¹ Տե՛ս „75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Programm der Festveranstaltung“, ADK, 1989, №64, Juni, էջ 3։

⁷² Տե՛ս CH. HEGER, Festveranstaltung zum 75-jährigen Jubiläum der Deutsch-Armenischen Gesellschaft, ADK, 1989, September, №65, էջ 2։


⁷³ Տե՛ս անդ, էջ 7։


РЕЗЮМЕ

В статье представлена история воссоздания Немецко-армянского общества, распавшейся после окончания Второй мировой войны, деятельность первых двух десятилетий, направленная на сохранение армянской идентичности, развитие германо-армянских культурных связей, защиту прав и интересов криптоармян, приехавших в Германию на заработки.

SUMMARY

The article presents the history of the re-establishment of the German-Armenian society, which collapsed after World War II, its activities of the first two decades, aimed at preserving the Armenian identity, developing German-Armenian cultural ties, protecting the rights and interests of crypto-Armenians, who went to Germany to earn money.





ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու,

Հայաստանի պատմության թանգարան

«ՍԱՍՈՒՆՅԻ ՂԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՀԱՐԱՄՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Ուաշին համաշխարհային պատերազմից հետո ռազմական վերլուծաբաններն սկսեցին զարգացնել այն տեսությունը, որ ապագա պատերազմներում վճռական դեր են խաղալու տանկային զորքերը: Քանզի հենց հրասայլերի կիրառմամբ էին իրականացվելու հակառակորդի աստիճանական-սանդղաձեւ (echeloned) պաշտպանական գծերը («Մաժինոյի գիծը»՝ Ֆրանսիայում, «Մաններհայմի գիծը»՝ Ֆինլանդիայում, «Մոլոտովի գիծը»՝ ԽՍՀՄ-ում): Այս նոր տեսության հիմնադիրը դարձավ բրիտանական բանակի գեներալ-մայոր եւ նշանավոր ռազմական տեսաբան Զոն Ֆուլլերը՝ իր «Տանկերը Մեծ պատերազմում. 1914—1918 թթ.» հայտնի աշխատությամբ¹:

Կարճ ժամանակ անց այս նոր տեսությունը զարգացավ Ֆրանսիայում (բրիգադի գեներալ Շառլ դը Գոլ), Գերմանիայում (գեներալ-գնդապետ Հայնց Գուդերիան), ԽՍՀՄ-ում (Խորհրդային Միության մարշալ Միխայիլ Տուխաչևսկի):

Այս նոր զարգացող տեսությունը գործնականում իրեն արդարացրեց երկրորդ համաշխարհային պատերազմում (1939—1945 թթ.) եւ մասնավորապես դրա գլխավոր փուլ հանդիսացող Խորհրդային ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմում (1941—1945 թթ.): Այս պատերազմում իրենց ուրույն խոսքն ասացին Կարմիր բանակի տանկային զորամիավորումներն ու տանկային շարասյուները, որոնցից մեկը Ս. Էջմիածնի ջանքերով ստեղծված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունն էր:

¹ Տես J. FULLER, Tanks in the Great War: 1914—1918, New York, 1920. տես նաեւ նույնի ուսերեն թարգմանությունը՝ Д. Ж. Фуллер, Танки в Великой войне. 1914—1918 гг., пер. с англ., под ред. Новицкого, Москва, 1923:

Հայրենական մեծ պատերազմի ողջ ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին եռանդուն մասնակցություն ունեցավ հայրենիքի պաշտպանության գործին:

Մասնավորապես առաջին օրերին՝ 1941 թ. հուլիսի 5-ին, Ս. Էջմիածնի գերագույն հոգեւոր խորհուրդը (ստորագրությամբ խորհրդի նախագահ Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Զորեքչյանի², խորհրդի անդամներ Արսեն արք. Ղլտչյանի, բժիշկ Հայկ Եղիազարյանի, իրավաբան Պետրոս Հովհաննիսյանի) հանդես եկավ կոչով:

Այն հորդորում էր ողջ հայությանը սատար կանգնել վտանգի ենթարկված հայրենիքին, իսկ թեմերին՝ «Պատարագ մատուցանել, յետ Պատարագի մաղթանք կատարել քաջամարտիկ Կարմիր բանակի յաղթութեան համար եւ գրովթեանս իմաստով յորդորական խօսք արտասանել»³:

Պատերազմի ամենավճռական ժամանակահատվածում՝ 1942 թ. վերջ—1943 թ. սկիզբ, Ռուս Ուղղափառ Եկեղեցին նախաձեռնում է «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյան կառուցումը: Պատրիարքական տեղապահ Միտրոպոլիտ Սերգին⁴ 1942 թ. դեկտեմբերի 30-ին դիմում է հոգեւորականներին ու հավատացյալներին՝ կոչ անելով միջոցներ հավաքել այդ նպատակով, իսկ արդեն 1943 թ. հունվարի 5-ին ստանում է ԽՍՀՄ ղեկա-

² Գեւորգ Զորեքչյան (1869—1954 թթ.): Ծնվել է 1869 թ. նոյեմբերի 2-ին Նոր Նախիչեւանում: 1879 թ. ընդունվել է 1889 թ. ավարտել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանը: Սովորել է Լայպցիգի կոնսերվատորիայում: Ստացել է վարդապետական չորս աստիճանները: Եղել է Մեծ եղեռնից փրկված «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահ (1916 թ.): 1916 թ. նշանակվել է Սինոդի անդամ, իսկ 1917 թ. նրան շնորհվել է եպիսկոպոսի աստիճան: 1922—1927 թթ. եղել է Վիրահայոց թեմի առաջնորդ: 1927 թ. ընտրվել է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ: Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանի եղբորական մահից (1938 թվականի ապրիլի 6-ին) անմիջապես հետո՝ 1938 թ. ապրիլի 10-ից, ստանձնել է Հայ Եկեղեցու գործերի ղեկավարումը: 1941 թ. ապրիլին Ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է կաթողիկոսական տեղապահ: 1945 թ. հունիսի 19—22-ը Մայր Աթոռում հրավիրված Ազգային-եկեղեցական ժողովը նրան ընտրում է Ամենայն հայոց կաթողիկոս, եւ նա գահակալում է Գեւորգ Զ. անունով (1945—1954 թթ.): Մահացել է 1954 թ. մայիսի 9-ին Էջմիածնում: Նրա մասին մանրամասն տես «Հայ եկեղեցու հանրագիտարան. Ամենայն Հայոց կաթողիկոսները», պրակ Ա., պատասխանատու խմբագիր՝ Պետրոս Հովհաննիսյան, Ս. Էջմիածին, 2008, էջ 43—45:

³ Կոչը տես «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1938—1955 թթ.)», «Գեւորգ Զ. Զորեքչեան՝ կաթողիկոս Ամենայն Հայոց», գր. Զ., կազմեց Սանդրո Բեհրուզեանը, Երեւան, 1999, էջ 123—124:

⁴ Սերգի (Իվան Նիկողաեւիչ Ստրագորոդսկի, 1867—1944 թթ.): 1937 թ. հունվարի 1-ից վարել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատրիարքական տեղապահի պաշտոնը, իսկ 1943 թ. սեպտեմբերի 12-ին ընտրվել է Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք:

վար Իոսիֆ Ստալինի շնորհակալական հեռագիրը⁵։ Կարճ ժամանակ անց Ի. Ստալինի հրահանգով ԽՍՀՄ պետբանկում բացվում է հաշվեհամար՝ դրամական փոխանցումներ եւ նվիրատվություններ կատարելու նպատակով։

Արդեն 1943 թ. հունվարին Գեորգ արք. Չորեքչյանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման հիմնադրամի համար ԽՍՀՄ պետական բանկում հատուկ հաշիվ բացելու խնդրանքով դիմեց Ի. Ստալինին, ինչին ի պատասխան՝ նույն թվականի հունվարի 26-ին վերջինս հեռագրում է. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գ. արքեպիսկոպոս Չորեքչյանին, խնդրում եմ իմ ողջունը եւ կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու էջմիածնի կաթողիկոսությանի հոգեւորականությունը, որ միջոցներ է մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար։ ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բանալու համար ցուցում է տրված։ Ի. Ստալին⁶»

Մինչ այդ՝ դեռեւս 1942 թ. վերջին, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը հայրենիքի պաշտպանության կարիքների համար նվիրաբերել էր պատմական եւ հնագիտական արժեք չներկայացնող արծաթեղեն եւ պղնձեղեն⁷։ Արդեն 1943 թ. հունվարին Ամենայն Հայոց կաթողիկոսությունը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու հիմնադրամին է հանձնում 800 000 խորհրդային ռուբլի արժողությամբ ոսկուց ու ադամանդից պատրաստված թանկարժեք իրեր եւ զարդեր, 1000 բրիտանական ֆունտ սթերլինգ եւ 50 000 խորհրդային ռուբլի գումար։ Նշված փոխանցումներն ընդունելու նպատակով 1943 թ. հունվարի 25-ին կազմվում է հանձնման ընդունման փաստաթուղթ (ակտ), որի տակ իրենց ստորագրությունն են դնում ԽՍՀՄ պետբանկի հայկական հանրապետական գրասենյակի կառավարիչ Ս. Բատուրինը, նույն բանկի քաղաքային վարչության գլխավոր հաշվապահ Ա. Մարգարյանը, գլխավոր գանձապահին առընթեր ավագ տեսուչ Ի. Տիվչելը, «Յուվիլերտորգ»-ի ներկայացուցիչ Ն. Կոչոյանը, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գեորգ արք. Չորեքչյանը⁸։

⁵ Ску М. Свирин, Стальной кулак Сталина. История Советского танка 1943—1955, Москва, 2006, էջ 190։

⁶ Ա. ՏԵՐԶԱՆՅԱՆ, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939—1945 թթ.), Երեւան, 2010, էջ 40։

⁷ Տէն Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 454, ց. 1, գ. 147, թ. 2։

⁸ Փաստաթուղթը տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)». Сборник документов и материалов. Сост.: В. А. Мурадян и др.; Редкол.: А. О. Арутюнян (отв. ред.) и др. Ереван, 1975, էջ 713։

1943 թ. փետրվարի 21-ին Գեորգ արք. Զորեքչյանը հանդես եկավ նոր կոշով⁹, որը լայն արձագանք գտավ սփյուռքահայություն շրջանում: Արդյունքում՝ առաջադեմ կազմակերպությունների նախաձեռնությամբ 1943 թ. մարտի 7-ին Նյու Յորքում տեղի ունեցավ հայկական գաղութի ներկայացուցիչների հանրահավաք, որտեղ ընտրվեց «Սասունցի Դավիթ» հիմնադրամի համար միջոցներ հանգանակող կոմիտե¹⁰: Հանգանակության իրենց մասնակցությունը բերեցին նաև Հարավային Ամերիկայի, Իրանի, Կիպրոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի, Եգիպտոսի եւ այլ երկրների հայերը: 1943 թ. մայիսի 4-ին Կալիֆոռնիայի հայոց թեմական առաջնորդ Մամբրե եպիսկոպոս Գալֆայանի¹¹ նախագահությամբ հրապարակվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամի Կալիֆոռնիայի գործադիր մարմնի կոչը. «Ուրախ ենք յայտարարելու, որ Միացեալ Նահանգաց մէջ սկսած է արդէն համազգային հանգանակութիւն մը: Գալիֆորնիոյ Հայոց առաջնորդարանն ալ՝ անսալով էջմիածնի կաթողիկոսարանի հրահանգներուն՝ ձեռնարկած է հանգանակութեան՝ Գալիֆորնիոյ վիճակին մէջ, գործակցութեամբ հայ կազմակերպութիւններու»¹²:

1943 թ. օգոստոսի 15-ին ԽՍՀՄ տանկային արդյունաբերության ժողովրդական կոմիսար Վյաչեսլավ Մալիշեւին¹³ ուղղված գրությամբ Գ. արք. Զորեքչյանը հայտնում է, որ էջմիածնի գերագույն հոգեւոր

⁹ Կոչը տե՛ս «Վաւերագրեր», էջ 178—179:

¹⁰ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, Երեւան, 1984, էջ 204:

¹¹ Մամբրե Գալֆայան (1893—1961): Ծնվել է 1893 թ. փետրվարին Զմյուռնիայում: 1920 թ. ընդունվել է Երուսաղեմի Սուրբ Հակոբ վանքի Ժառանգավորաց վարժարանը: Երուսաղեմի եղիշե պատրիարք Դուրյանը 1923 թ. ձեռնադրում է նրան կուսակրոն քահանա: 1927 թ. ստանում է վարդապետության աստիճան, իսկ 1932 թ.՝ ծայրագույն վարդապետության աստիճան: 1933—1939 թթ. եղել է ԱՄՆ հայոց արեւելյան թեմի տեղապահ: 1935 թ. Խորեն Ա. կաթողիկոսը Մամբրե վարդապետին ձեռնադրում է եպիսկոպոս եւ արժանանում «Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանի: Ավելի ուշ ձեռնադրվում է արքեպիսկոպոս: 1942—1946 թթ. եղել է Կալիֆոռնիայի հայոց թեմական առաջնորդ: 1954—1958 թթ. եղել է ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ: Մահացել է 1961 թ. հուլիսի 17-ին Մայամիում (Ֆլորիդա նահանգ, ԱՄՆ):

¹² Կոչը տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3578, թ. 6—7:

¹³ Վյաչեսլավ Ալեքսանդրովիչ Մալիշեւ (1902—1957 թթ.): Խորհրդային պետական գործիչ, ճարտարագետ-կերտող (engineer-constructor): Սոցիալիստական աշխատանքի հերոս (1944 թ.): Ինժեներատանկային զորքերի գեներալ-գնդապետ (1945 թ.): ԽՍՀՄ տանկային արդյունաբերության հիմնադիրներից մեկը եւ ԽՍՀՄ տանկային արդյունաբերության առաջին ժողովրդական կոմիսարը, որն այդ պաշտոնը վարել է 1941—1942 եւ 1943—1945 թվականներին:

խորհրդի որոշմամբ սկսվել են «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման աշխատանքները, եւ խնդրում է ընդունել ԽՍՀՄ պետական բանկի Երեւանյան բաժանմունքում բացված հաշվեհամարին փոխանցված 800 000 խորհրդային ռուբլի արժողությամբ պլատինից ու ադամանդներից թանկարժեք իրերն ու զարդերը եւ 1000 բրիտանական ֆունտ սթերլինգ, 40 000 ԱՄՆ դոլար, 120 000 իրանական ռիալ ու 75 000 խորհրդային ռուբլի գումարը¹⁴:

Արդեն 1943 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամին փոխանցված գումարի չափը հասնում է 120 800 ԱՄՆ դոլարի, 15 200 բրիտանական ֆունտ սթերլինգի եւ 1 187 145 իրանական ռիալի¹⁵: Հիմնադրամի համար միջոցների հավաքումը կազմակերպելու գործում զգալի մասնակցություն ունեցավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը, որը 1944 թ. սկզբին Գեւորգ արք. Զորեքչյանի հատուկ հանձնարարականով մեկնում է Մերձավոր Արեւելքի երկրներ, հանդիպումներ ու զրույցներ ունենում Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Երուսաղեմի հայ գաղթօջախների ղեկավարների հետ, ինչպես նաեւ հանդես գալիս զեկուցումներով¹⁶:

Արդյունքում՝ հավաքված դրամական միջոցներով հնարավոր է լինում ստանալ 21 S-34 տանկ, ինչը թույլ է տալիս կազմելու «Սասունցի Դավիթ» տանկային 1-ին շարասյունը¹⁷: Հատկանշական է, որ շարասյունը համալրվեց ոչ թե S-34 տանկի սկզբնական տարբերակով, որի թնդանոթի տրամաչափը 76 մմ էր, այլ տանկի ձեւափոխված տարբերակով, որի թնդանոթի տրամաչափն արդեն 85 մմ էր, եւ կոչվում էր S-34—85:

1943 թ. դեկտեմբերի 4-ին Կարմիր բանակի զրահատանկային եւ մոտոհրաձգային զորքերի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Բիրյուկովին¹⁸ եւ ԽՍՀՄ պաշտպանու-

¹⁴ Գրությունը տե՛ս ՀԱՍ, ֆ. 409, ց. 1, գ. 5856, թ. 8 եւ շրջ.:

¹⁵ Տե՛ս «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», էջ 714:

¹⁶ Տե՛ս Մ. ՍԱՀԱԿՅԱՆ, Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Երեւան, 1981, էջ 94:

¹⁷ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204:

¹⁸ Նիկոլայ Իվանովիչ Բիրյուկով (1901—1974 թթ.): Խորհրդային ռազմական գործիչ: Կարմիր բանակի քաղաշխատող, կոմիսար: 1941 թ. օգոստոսից եղել է Կարմիր բանակի մեքենագրահատանկային վարչության ռազմական խորհրդի, իսկ 1943 թվականից՝ Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի ռազմական խորհրդի անդամ:

թյան ժողովմատին ուղղված հեռագրում Գեուրգ արք. Չորեքչյանը նշում էր. «Խնդրում եմ ճշգրիտ հայտնել, թե երբ ուղարկեմ ներկայացուցչին՝ Սասունցի Դավթի անվան [տանկային] շարասյունը զորամասին հանձնելիս ներկա լինելու համար»¹⁹:

1944 թ. սկզբին շարասյան համար արտադրված տանկերն արդեն պատրաստ էին: Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի հրամանատարի տեղակալ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Բորիս Կորոբեկովի²⁰ Գեուրգ արք. Չորեքչյանին ուղղված հեռագրում ասված էր. «1944 թ. հունվարի 29-ին հանդիսավոր պայմաններում N տանկային զորամասին հանձնվեց «Սասունցի Դավթի» անվան տանկային շարասյունը, որը կառուցված է Ձեր նախաձեռնությամբ՝ Սովետական Միության եւ արտասահմանի հայ հոգեւորականության եւ հավատացյալների միջոցներով: Ընդունելով տանկային շարասյունը՝ սպաները «Սասունցի Դավթի» տանկերի վրա երգվեցին անխնայաբար ջախջախել գերմանական զավթիչներին: Տանկային շարասյունը շարժվեց դեպի Ֆրոնտ»²¹: Հատկանշական է, որ տանկերի վրա հայերեն գլխատառերով գրված էր «Սասունցի Դավթի»²²:

Հետաքրքրական է, որ գրեթե այդ նույն ժամանակահատվածում, մի փոքր տարբերությամբ, շարք մտավ նաեւ «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյունը: Վերջինս, որ նույնպես համալրված էր Տ-34—85 տանկերով, 1944 թ. մարտի 8-ին Տուլայի մարզի Գորելկի գյուղի մոտ հանձնվեց 38-րդ առանձին տանկային գնդին²³:

Ինչ վերաբերում է «Սասունցի Դավթի» տանկային շարասյանը, ապա այն հանձնվեց 119-րդ ինժեներատանկային Ելնյան գնդին: Վերջինիս հրամանատարը փոխգնդապետ Անատոլի Վոյնովսկին²⁴ էր, որն ազգու-

1942 թ. դեկտեմբերի 6-ին արժանացել է տանկային զորքերի գեներալ-լեյտենանտի, իսկ 1944 թ. ապրիլի 24-ին՝ տանկային զորքերի գեներալ-գնդապետի կոչման:

¹⁹ Հեռագիրը տե՛ս «Վաւերագրեր», էջ 202:

²⁰ Բորիս Միխայիլովիչ Կորոբեկով (1900—1971 թթ.): Խորհրդային ռազմական գործիչ: 1942 թվականից զբաղեցրել է Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի հրամանատարի տեղակալի պաշտոնը: 1943 թ. հունվարի 1-ին արժանացել է տանկային զորքերի գեներալ-լեյտենանտի, իսկ 1944 թ. ապրիլի 24-ին՝ տանկային զորքերի գեներալ-գնդապետի կոչման:

²¹ Հեռագիրը տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1944, Ա., էջ 14:

²² Տէս Մ. ՍԱՀԱԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 95:

²³ Տէս Մ. СВИРИН, նշ. աշխ., էջ 190—191:

²⁴ Անատոլի Ֆրոլովիչ Վոյնովսկի (1906/7—1984 թթ.): Խորհրդային ռազմական գործիչ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին փոխգնդապետի կոչումով զբաղեցրել է

թյամբ ռուս էր²⁵։ Գոնդը մոտ 3 ամիս հաջող մարտեր մղեց 2-րդ Ուկրաինական ռազմաճակատում²⁶։ Մասնավորապես մարտ—մայիս ամիսներին գնդի կազմում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը հարձակողական գործողություններ ծավալեց Պերվոմայսկի, այնուհետև Ցասսիի (Ռումինիա) ուղղությամբ²⁷։

ՀեՍՀ ժողովում խորհին կից Հայ-լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանին ուղղված հեռագրում փոխգնդապետ Անատոլի Վոյնովսկին նշում էր, որ 10 օրում ««Սասունցի Դավիթ» տանկային շարասյունն անցել է 200 կմ՝ ազատագրելով հարյուրավոր բնակավայրեր, ոչնչացրել հակառակորդի 16 տանկ եւ ինքնագնաց հրանոթ, տարբեր տրամաչափի 20 քարշակվող հրանոթ, 60 գնդացիր, 210 ավտոմեքենա՝ զորքերով եւ բեռներով, հակառակորդի ավելի քան 2700 զինվորի ու սպայի»²⁸։

Այս նույն ժամանակահատվածում գործնական քայլեր էին կատարվում «Սասունցի Դավիթ» 2-րդ տանկային շարասյան կազմավորման ուղղությամբ։ 1944 թ. փետրվարի 9-ին Բեյրութից «Խորհրդային Հայաստանի բարեկամների ընկերության» նախագահ Հրանտ Դեւեջյանը եւ քարտուղար Եփրեմ Իլեգյանը Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդին (կառավարությանն) ուղղված գրությամբ հայտնում են, որ տանկային 2-րդ շարասյան կառուցման համար Հալեպում հավաքել են 24 400, իսկ Բեյրութում՝ 8000 ոսկի²⁹։

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գ. Արք. Զորեքչյանը 1944 թ. հունիսի 2-ին Ի. Ստալինին ուղարկած հեռագրում հայտնում է. «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյուն կառուցելու համար հավաքված «գումարն այսօր 40 000 ամերիկեան (ԱՄՆ.— Հ. Ն.) դոլարից եւ 10 000 անգլիական (բրիտանական.— Հ. Ն.) ֆունտ սթերլինգից անց-

տանկային տարբեր ստորաբաժանումների հրամանատարի պաշտոնը։ Պատերազմից հետո արժանացել է գնդապետի կոչման։

²⁵ Տէս Ա. ՄԱՅԱՅԱՆՅԱՆ, Միասնական շարքերում, Երեւան, 1975, էջ 465։

²⁶ Տէս Ե. ԽԱԼԵՅԱՆ, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941—1945 թթ.), Երեւան, 1975, էջ 250։

²⁷ Տէս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204։

²⁸ ԳՆԴԱՊԵՏ ԿՈՂՈՍՈՎ, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմի մարտիկները Հայրենական մեծ պատերազմում ցույց են տալիս արիության, խիզախության եւ հերոսության պանծալի օրինակ, «էջմիածին», 1944, ապրիլ—մայիս, էջ 13։

²⁹ Գրությունը տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», էջ 715—716։

նում է.... Թեհրանի հայութիւնից ստացել ենք հեռագրական հաղորդագրութիւն, որով յայտնում են, թէ յօգուտ տանկային շարասեան կառուցման համար հանգանակուած դրամը հասել է 1 745 000 ռիալի»³⁰: Արդեն 1944 թ. հունիսի 7-ին ստացվում է Ի. Ստալինի՝ Գեւորգ արք. Չորեքչանին ուղղված պատասխան հեռագիրը, որտեղ գրված էր. «Խնդրում եմ հաղորդել արտասահմանի հաւատացեալ Հայութեան, որոնք դրամական միջոցներ են ներմուծել Դաւիթ Սասունցու անուան տանկային երկրորդ շարասեան կառուցման համար՝ իմ ողջոյնը եւ Կարմիր բանակի շնորհակալութիւնը»³¹:

Մի քանի օր անց՝ 1944 թ. հունիսի 12-ին, Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի հայկական թեմի առաջնորդ Գարեգին արք. Հովսեփյանը³² Գեւորգ արք. Չորեքչանին ուղղված գրությամբ հայտնում է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամին 40 000 դոլար փոխանցելու մասին³³:

Ընդհանուր առմամբ՝ հանգանակության ամբողջ ընթացքում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամին փոխանցված գումարը կազմեց 39 683 բրիտանական ֆունտ սթերլինգ, 841001 ԱՄՆ դոլար, 5 438 945 իրանական ռիալ, 1 598 412 խորհրդային ռուբլի, 7400 ռսկի եւ թանկարժեք այլ իրեր³⁴:

³⁰ Հեռագիրը տես «Վաւերագրեր», էջ 220:

³¹ Հեռագիրը տես անդ, էջ 222:

³² Գարեգին Հովսեփյան (1867—1952): Ծնվել է 1867 թ. դեկտեմբերի 17-ին Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Մաղափուզ (Չարդախուլ) գյուղում: 1882 թ. ընդունվել է 1889 թ. ավարտել է էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը՝ ձեռնադրվելով կուսակրոն սարկավագ: Սովորել է Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում: 1897 թ. ստացել է փրիսոփայության դոկտորի աստիճան, նույն տարվա սեպտեմբերից դասախոսել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 1898 թ. ձեռնադրվել է վարդապետ: Տարբեր տարիներին եղել է ճեմարանի տեսուչ: 1905—1908 թթ. եւ 1915—1919 թթ. խմբագրել է Ս. էջմիածնի «Արարատ» ամսագիրը: 1917 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցը նրան ձեռնադրել է եպիսկոպոս: 1918 թ. մայիսին մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին: Եղել է 1919 թ. մայիսին Ալեքսանդրապոլում (Գյումրի) հիմնված Հայաստանի համալսարանի առաջին դասախոսներից: 1921 թ. մայիսին նշանակվել է էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեգիայի անդամ: 1927—1934 թթ. եղել է Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի, Ղրիմի ու Նոր Նախիջևանի, իսկ 1938—1943 թթ.՝ Ամերիկայի թեմի առաջնորդը: 1943—1952 թթ. Գարեգին Ա. անունով գահակալել է որպէս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Վախճանվել է 1952 թ. հունիսի 21-ին Անթրիապոլում (Լիբանան):

³³ Գրությունը տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», էջ 724:

³⁴ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար կատարված հանգանակությունների մասին թվային աղյուսակները, որտեղ ըստ տարեթվերի

1944 թ. գարնան վերջին Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի հրամանատար, զրահատանկային զորքերի մարշալ Յակով Ֆյոդորենկոն³⁵ եւ Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-գնդապետ Նիկոլայ Բիրյուկովը Գ. Արք. Չորեքչանին ուղղված հեռագրում գրում են. «Հայտնում ենք Ձեզ, որ արտասահմանի հայ հավատացյալների միջոցներով «Սասունցի Դավիթ» 2-րդ տանկային շարասյունը կառուցված եւ հանձնված է տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ <Իվան> Կիրիչենկոյի³⁶ գվարդիական տանկային զորամիավորմանը: Տանկերի մի մասը համալրել են փոխգնդապետ <Անատոլի> Վոյնովսկու տանկային զորամասը, որտեղ գտնվում են «Սասունցի Դավիթ» 1-ին տանկային շարասյան տանկերը»³⁷:

1944 թ. մայիսին փոխգնդապետ Անատոլի Վոյնովսկու հրամանատարությամբ գործող 119-րդ ինժեներատանկային Ելնյան գնդին հանձնված «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը բաղկացած էր 22 Տ-34—85 տանկից³⁸: Արդեն 1944 թ. մայիսի 26-ին, ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի³⁹ հրամանով, գունդը վերակազմավորվում է 119-րդ առանձին ինժեներատանկային Ելնյան գնդի եւ հանձնվում բանակի գեներալ (հետագայում Խորհրդային Միության մարշալ) Հովհաննես Բաղրամյանի հրամանատարությամբ մարտնչող 1-ին Մերձբալթյան ռազմաճակատին⁴⁰: Վերջինս 1944 թ. ամռանը ներգրավվում է «Բելոռու-

ներկայացված են Ս. Էջմիածնի եւ աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքների հանգանակած դրամական միջոցները, տես Ա. ՏԵՐԶԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 61—64:

³⁵ Յակով Նիկոլաևիչ Ֆյոդորենկո (1896—1947 թթ.): Խորհրդային ռազմական գործիչ: 1941 թ. հուլիսին նշանակվել է Կարմիր բանակի զրահատանկային եւ մեքենայացված զորքերի հրամանատար, միաժամանակ 1942 թ. դեկտեմբերից մինչեւ 1943 թ. մայիսի 20-ը զբաղեցրել է ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի տեղակալի պաշտոնը: 1944 թ. փետրվարի 21-ին արժանացել է զրահատանկային զորքերի մարշալի կոչման:

³⁶ Իվան Ֆյոդորովիչ Կիրիչենկո (1902—1981 թթ.): Խորհրդային ռազմական գործիչ: Խորհրդային Միության հերոս (1945 թ.): 1943 թ. հունիսի 7-ին արժանացել է տանկային զորքերի գեներալ-մայորի, իսկ 1944 թ. տանկային զորքերի գեներալ-լեյտենանտի կոչման:

³⁷ Հեռագիրը տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», էջ 728:

³⁸ Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204:

³⁹ ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի պաշտոնը 1941 թ. հուլիսի 19-ից մինչեւ 1946 թ. փետրվարի 25-ն զբաղեցնում էր Իոսիֆ Ստալինը:

⁴⁰ Տես Ե. ԽԱԼԵՅԱՆ, նշ. աշխ., էջ 250:

սական» հարձակողական ռազմագործողությանը («Բագրատիոն» ռազմագործողություն, 1944 թ. հունիսի 23 — օգոստոսի 29)⁴¹:

«Բագրատիոն» ռազմագործողության ժամանակ Առանձին ելնյան 119-րդ ինժեներատանկային գունդը մարտնչում է 51-րդ գվարդիական հրաձգային (նախկին Հայկական 76-րդ հրաձգային) դիվիզիայի⁴² առաջապահում⁴³: 1944 թ. հունիս—օգոստոս ամիսներին 6-րդ գվարդիական եւ 5-րդ գվարդիական տանկային բանակների տանկային ստորաբաժանումների հետ միասին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը մասնակցում է Վիտեբսկի ու Պոլոցկի ազատագրմանը, Շյաուլայի շրջանում հակառակորդի խոր էշելոնացված պաշտպանություն ճեղքմանը, մարտական գործողություններ ծավալում Պանեւեժիսի շրջանում⁴⁴:

Մասնավորապես հունիսի 23-ին Առանձին ելնյան 119-րդ ինժեներատանկային գունդը ճեղքում է Վիտեբսկից հյուսիս-արեւմուտք ընկած՝ թշնամու պաշտպանական գիծը⁴⁵: Դրան նպաստում է այն, որ գնդի հարվածային ուժի՝ «Սասունցի Դավիթ» շարասյան տանկերը հարմարեցված էին հակառակորդի ականապատ դաշտերը ոչնչացնելու համար: 1-ին

⁴¹ Ռազմագործողությունն անվանվել է ի պատիվ Բորոդինոյի ճակատամարտի հերոս, ցարական բանակի հետեւագործի գեներալ իշխան Պյոտր Բագրատիոնի անունով: Ռազմագործողության շնորհիվ ջախջախվեց գերմանական բանակի (Վերմախտի) «Կենտրոն» բանակախումբը եւ ազատագրվեցին Բելոռուսիան, Լեհաստանի արեւելյան հատվածը եւ Մերձբալթիկայի մի մասը: Ռազմագործողության մասին մանրամասն տե՛ս «Советская военная энциклопедия», т. 1, Москва, 1976, էջ 431—434:

⁴² Առանձին կովկասյան բանակի հրամանատարի 1922 թ. սեպտեմբերի 5-ի №1389 հրամանով ստեղծվում է Հայկական հրաձգային դիվիզիան (հրամանը տե՛ս «76-я армянская стрелковая краснознаменная им. К. Е. Ворошилова — 51-я гвардейская Витебская ордена Ленина дивизия 1920—1945 гг.»: Сборник документов и материалов/ Сост.: А. О. Арутюнян (Руковод. авт. кол. и ред.) и др., Ереван, 1976, էջ 26) ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության 1935 թ. դեկտեմբերի 2-ի որոշմամբ եւ դրանից բխող ԽՍՀՄ պաշտպանության ժողովմատի 1935 թ. դեկտեմբերի 4-ի №65 հրամանով Հայկական հրաձգային դիվիզիան վերանվանվում է Կ. Ե. Վորոշիլովի անվան, իսկ նույն թվականի Անդրկովկասի ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի հրամանով՝ Կ. Ե. Վորոշիլովի անվան Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի (տե՛ս անդ, էջ 103—104): ԽՍՀՄ պաշտպանության ժողովմատի 1936 թ. մայիսի 21-ի №972 հրամանով այն վերանվանվում է 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի (տե՛ս անդ, էջ 8): ԽՍՀՄ պաշտպանության ժողովմատի 1942 թ. նոյեմբերի 23-ի №375 հրամանով 76-րդ հրաձգային դիվիզիան վերակազմավորվում է 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի (հրամանը տե՛ս անդ, էջ 174):

⁴³ Տե՛ս Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1944—1945 թթ.), Երեւան, 2002, էջ 51:

⁴⁴ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204:

⁴⁵ Տե՛ս Ե. ԽԱԼԵՑԱՆ, նշ. աշխ., էջ 250:

Մերձբալթյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ վարչության տեղեկագրում նշված էր. «Բելոռուսիայի Պոլոցկ քաղաքի ազատագրման մարտերում 3 օրում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմը ոչնչացրեց հակառակորդի 19 թնդանոթ, 29 գնդացիր, 13 ականանետ, 2 նռնականետ, 14 ԴՁՕՏ, հակառակորդի ավելի քան 450 զինվորի ու սպայի, պայթեցրեց հակառակորդի 70 հակատանկային ական»⁴⁶։

Պոլոցկ քաղաքի ազատագրման համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հունիսի 23-ի հրամանագրով Առանձին ելնյան 119-րդ ինժեներատանկային գունդը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով⁴⁷։

Բելոռուսիայի ազատագրումից հետո «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը մասնակցում է Մերձբալթիկայի ազատագրմանն ու Արեւելյան Պրուսիայում գերմանական խմբավորման ջախջախման ռազմագործողությանը։ Շարասյունը, մարտերով Վիտեբսկից հասնելով Բալթիկ ծով, ոչնչացրեց 3000 գերմանական զինվորի ու սպայի, 22 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 105 թնդանոթ, 72 ականանետ, 188 գնդացիր, 74 ԴՁՕՏ, 16 ավտոմեքենա, 3 պահեստ, պայթեցրեց 250 հակատանկային ական, որպես ռազմավար առգրավեց թշնամու 3 տանկ, 47 թնդանոթ ու ականանետ, 30 գնդացիր եւ գերի վերցրեց 120 զինվորի ու սպայի⁴⁸։

1945 թ. Առանձին ելնյան 119-րդ ինժեներատանկային գունդը, որի կազմում փառահեղ մարտական ճանապարհ անցավ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, արժանացավ գվարդիական կոչման եւ վերանվանվեց 135-րդ կարմրագրոշ առանձին տանկային գունդ⁴⁹։ Գնդի տանկիստներից 200 հոգի պարգևատրվում է տարբեր շքանշաններով ու մեդալներով⁵⁰։ Պարգևատրվածների թվում էին նաեւ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմերում մարտնչած զինվորականները, այդ թվում՝ հայազգի մարտիկները. Սարգիս Նահապետյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով, իսկ Միխայիլ Ստեփանյանը՝ Խիզախության համար մեդալով⁵¹։

⁴⁶ Անդ, էջ 251։

⁴⁷ Տէս անդ։

⁴⁸ Տէս Մ. ՍԱՀԱԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 95։

⁴⁹ Տէս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204։

⁵⁰ Տէս Ե. ԽԱԼԵՅԱՆ, նշ. աշխ., էջ 251։

⁵¹ Տէս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 10, էջ 204։

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորումը ոգեշնչեց իրանահայությունը՝ պատերազմի վերջնափուլում նախաձեռնելու մեկ այլ՝ «Գեներալ Հովհաննես Բաղրամյանի անվան տանկային շարասյան» ստեղծումը: Անգամ ստեղծվեց հանգանակիչ Կենտրոնական հանձնաժողով⁵², եւ հանգանակվեց հսկայական գումար⁵³, սակայն պատերազմի հաղթական ավարտով պայմանավորված՝ նախաձեռնությունը մնաց անավարտ:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ Հայրենական մեծ պատերազմում իրենց Վճռական խոսքն ասացին ու հաղթանակի գործում առանցքային դեր խաղացին Կարմիր բանակի տանկային զորամիավորումներն ու տանկային շարասյուները, այդ թվում՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները:

⁵² «Գեներալ Հովհաննես Բաղրամյանի անվան տանկային շարասյուն» կազմավորելու նպատակով Իրանում միջոցների հավաքագրումն իրականացնելու համար 1944 թ. սեպտեմբերին ընտրվում է Կենտրոնական հանձնաժողովը, որին իր մասնակցությունն է բերում Հայ Առաքելական Եկեղեցին: Կենտրոնական հանձնաժողովը, Եկեղեցու հետ համախորհուրդ, հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ, եւ Դաշնակցների հաղթանակի համար Թեհրանի Մայր եկեղեցում մատուցվում է հանդիսավոր Ս. Պատարագ (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1944, հուլիս—օգոստոս—սեպտեմբեր, էջ 17): Կենտրոնական հանձնաժողովի նախագահ է ընտրվում Ռոման Իսաեւը (Նսայանը): Կենտրոնական հանձնաժողովի ամբողջական կազմը տե՛ս անդ, էջ 18:

⁵³ 1944 թ. դեկտեմբերի 22-ին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Սերգեյ Քավտարաձեն Կարմիր բանակի Գլխավոր շտաբի պետի տեղակալ, բանակի գեներալ Ալեքսեյ Անտոնովին ուղղված հեռագրում հայտնում է. «Գեներալ Հովհաննես Բաղրամյանի անվան տանկային շարասյան հանգանակիչ հանձնաժողովը մինչ այս պահը հավաքել է 3,5 մլն ռիալ: Սույն թ. նոյեմբերի 9-ին Թեհրան քաղաքի հայերի անունից Իրանում ԽՍՀՄ դեսպանատան հյուպատոսական բաժնի վարիչ ընկեր Եմեյլանովին հանձնվեց սուր՝ որպես նվեր Բանակի գեներալ Հ. Ք. Բաղրամյանին» (տե՛ս «Маршал Баграмян», сборник документов и материалов, составители А. О. Арутюнян и др., отв. редакторы Г. А. Аветисян, А. А. Фелекян, Ереван, 1997, էջ 68): Այս նպատակով ընդհանուր առմամբ Իրանում հանգանակվեց 2 367 450 ռիալ գումար (տե՛ս Ա. ՀԱՎՈՅՅԱՆ, Իրանահայ համայնքը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939—1945), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2018, №126, էջ 297): 1945 թ. հունվարի 23-ին Եթովպիայի հայ համայնքի ներկայացուցիչները, նամակ ուղարկելով Ի. Ստալինին, հայտնում են, որ «Գեներալ Հ. Բաղրամյանի անվ. տանկային շարասյուն» կազմավորելու նպատակով համայնքն արդեն հավաքագրել է 20 000 արեւելաաֆրիկյան շիլլինգ գումար (տե՛ս «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», էջ 732):

РЕЗЮМЕ

Решающую роль в Великой Отечественной войне сыграли танковые войска, в том числе танковые колонны, осуществляющие прорыв эшелонированных оборонительных линий противника.

В 1943 г. в январе по инициативе местоблюстителя Католикоса Всех Армян архиепископа Геворга Чорекчяна началось формирование танковой колонны «Давид Сасунский». В январе 1944 г. усилиями Святого Эчмиадзина и Диаспоры колонна вошла в строй.


В марте-мае того же года вела успешные бои на 2-ом Украинском, а с июня на 1-ом Прибалтийском фронтах, участвовала в освободительных боях на территории Украины, Белоруссии и Прибалтики и внесла значительный вклад в победу в Великой Отечественной войне.


SUMMARY

During the Great Patriotic War, tank troops and tank columns played a decisive role, breaking through the echeloned defensive lines of the enemy.

In January 1943, on the initiative of Archbishop Gevork Chorekchian, the formation of the tank column “David of Sassoun” began. In January 1944, the tank column was put into service by the efforts of Holy Etchmiadzin and the Diaspora.

The tank column “David of Sassoun” fought successfully in the battles of the 2nd Ukrainian front in March-May months and in the battles of the 1st Baltic front since June. The tank column participated in the liberation battles in Ukraine, Belarus and the Baltic States, and made a significant contribution to the victory in the Great Patriotic War.





ԳՐԱԳՆԵՐ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Քուն Հայաստանում տպագրությունն սկզբնավորվել է հայ տպագրության հիմնադրումից ավելի քան երկու դար հետո, երբ Վաղարշապատում Սիմեոն Ա. Երեւանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ եւ ջանքերով 1771 թ. իր գործունեությունն է սկսում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը: Վերջինիս հիմնադրումը մայր հայրենիքի տարածքում բախտորոշ իրադարձություն էր պետություն չունեցող ժողովրդի համար, ինչը քաջ գիտակցում էին հոգեւոր եւ աշխարհիկ գործիչները: Սակայն որքան էլ բարձր էր այդ կարեւոր իրադարձության գիտակցումը, միեւնույնն է, մինչեւ ժԹ. դարի առաջին քառորդն Արեւելյան Հայաստանում այլ տպագրատուն, ցավոք, չէր գործում: Ավելին՝ անգամ Մայր Աթոռի տպարանի գործունեությունը, քաղաքական, հասարակական, տնտեսական եւ բարոյական տարբեր պատճառներով պայմանավորված, հատկապես ժԹ. դարի նշված ժամանակահատվածում գրեթե դադարում է: Դրա վառ վկայությունն են մասնակի այն տպագրությունները, որոնք հասել են մեզ¹:

ԺԹ. դարի առաջին քառորդում քաղաքական մի շարք իրադարձություններ (հատկապես Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը) նոր հնարավորություններ են ընձեռում հայ իրականության մեջ մշակութային դաշտի զարգացման համար: Կրթական համակարգի բարեփոխումները, դպրոցների քանակի ավելացումը, մշակութային տարբեր ոլորտների նկատմամբ հետաքրքրության դրսեւորումը դառնում են այն պարարտ հողը, որի հիման վրա զարգանում է տպագրության արվեստը: Վերազինվում է Մայր Աթոռի տպարանը՝ ընդլայնե-

¹ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՍՏ. ՊԵՏՈՅԱՆ, Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828–1920 թվականներին. հոդվածների ժողովածու, Երեւան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021, 238 էջ:

² «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությունների մատենագիտություն», կազմ.՝ Մ. Գրիգորյան, Ստ. Պետոյան, Գ. Գրիգորյան եւ ուրիշներ, Երեւան, 2021, էջ 81–85:

լով գործունեության ոլորտը, բացվում են նոր տպարաններ Շուշիում, Երեւանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Կարսում, Գորիսում: Տպագրական դաշտի աշխարհագրական ընդլայնումն ու կրթական, մշակութային, գիտական ոլորտների զարգացումն այն խթանիչ գործոններն էին, որոնց շնորհիվ Արեւելյան Հայաստանի տարածքում կայանում է տպագրական գործը:

Փաստելով հայ տպագրության կազմավորումն Արեւելյան Հայաստանի տարածքում եւ ընդգծելով դրա կարեւորությունը՝ միեւնույն ժամանակ պետք է նկատենք, որ հետագա տասնամյակներին, նաեւ այսօր պատմական այս իրողությունները համարժեք գնահատում չեն ստացել: Հայ տպագրության պատմությանը նվիրված վերլուծություններում առավել ներկայացվել եւ արժեւորվել է Արեւմտյան Հայաստանի կամ բուն հայկական տարածքներից դուրս զարգացող հայ տպագրարվեստը, մինչդեռ Արեւելյան Հայաստանի տպարանների գործունեությունը մնացել է ստվերում: Բացառություն է կազմում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը, որի գործունեությանն անդրադարձել են առավել հանգամանալի: Արեւելյան Հայաստանի տարածքում առկա մնացած տպարանների մասին գրվել են մասնակի հոդվածներ, որոնցում արտացոլվել են դրանց առնչվող խնդիրներ եւ որոշակի հարցադրումներ:

Այս բացը լրացնելու մի փորձ է ներկայացվող ժողովածուն, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներ Համո Սուքիասյանի եւ Ստյոպա Պետոյանի երկարատեւ ու տքնաջան աշխատանքի արդյունքն է, որի շնորհիվ գիտական հանրությանը համապարփակ կերպով ներկայացվում է արեւելահայ գրատպության մի ընդգրկուն ժամանակահատվածը:

Ժողովածուի մեջ ներառված են հեղինակների՝ մեզ հետաքրքրող թեմայի շուրջ ինչպես գիտական տարբեր ամսագրերում տպագրված, այնպես եւ առաջին անգամ հրատարակվող հոդվածները, որոնց նախորդում է «Առաջաբան»-ը: Առանձին հոդվածները գրքում համակարգված են, ունեն ժամանակագրական եւ բովանդակային դասավորություն, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հայ գրատպության զարգացման ընթացքի մասին՝ սկսած 1828 թվականից մինչեւ 1920 թվականը, Շուշիի հայկական տպագրության սկզբնավորումից մինչեւ Հայաստանի Առաջին Հանրապետության կազմալուծումը:

Ժողովածուի ստեղծման նպատակն է մեկ ընդհանուր ձեռնարկում ներկայացնել տարիների հետազոտական աշխատանքը՝ գիտական եւ

մշակութային հանրությանն Արեւելյան Հայաստանի տպագրության պատմության առաջնային խնդիրներին հասու դարձնելու մղումով: Նշենք, որ ի սկզբանե հեղինակները նպատակ չեն հետապնդել անդրադառնալու նշված ժամանակահատվածում Արեւելյան Հայաստանի հայ տպագրության պատմական ողջ ընթացքին, քանի որ դա առավել մեծ հետազոտական շրջանակ ընդգրկող եւ երկարատեւ ժամանակ պահանջող խնդիր է: Սակայն սույն ժողովածուն առաջին քայլն է՝ հետազայում այս ուղղությամբ ուսումնասիրությունները շարունակելու համար:

Ժողովածուն ունի որոշակի ժամանակագրական ընդգրկվածություն, այն ուրվագծում է Արեւելյան Հայաստանում հայ տպագրության առջեւ ծառացած խնդիրները 1828–1920 թթ.: Ինչո՞ւ հատկապես այս ժամանակահատվածը: Բանն այն է, որ հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանը պատմական բավական բարդ շրջափուլի մեջ էր: Տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք ժողովրդին կանգնեցնում էին բոլորովին նոր իրողությունների առջեւ՝ ստիպելով վերանայել նախկինում ունեցած պատկերացումները, ընձեռելով ապրելու, ստեղծագործելու նոր հնարավորություններ: Հայ գրատպությունն Արեւելյան Հայաստանում ժԹ. դարի առաջին քառորդում դեռ կազմավորման փուլում էր: Ճիշտ է՝ նախորդ դարից Հայաստանում գործում էր Մայր Աթոռի տպարանը, սակայն միայն մեկ տպարանի գործունեությունը բավարար չէր այս տարածաշրջանում տպագրության արվեստը կայացած համարելու համար: Մինչդեռ Շուշիի տպագրատան կազմավորումը թույլ է տալիս ժամանակի հոգեւոր եւ գիտակ հանրությանը վերանայել սեփական պատկերացումներն այս ոլորտի նկատմամբ, գիտակցել տպագրության կայացման կարեւորությունն ու ընձեռած հնարավորությունները: Կարող ենք վստահ լսել, որ Շուշիի տպագրատան կազմավորումն Արեւելյան Հայաստանում տպագրական արվեստի կայացման կարեւորագույն նախադրյալներից մեկն էր. հետագայում՝ ժԹ. դարի երկրորդ կեսին, Երեւանում, Ալեքսանդրապոլում եւ մի շարք այլ վայրերում տպարանների ի հայտ գալը փաստում է վերը նշվածը:

Ուշագրավ են նաեւ հեղինակների՝ Ի. դարասկզբի տպագրությանն առնչվող հոդվածները, քանի որ իրար հաջորդող տարբեր իրադարձություններով պայմանավորված՝ այս շրջանում գործած տպարանների մասին շատ տվյալներ անհետացել են կամ մի տեւական շրջան անհասանելի էին հետազոտողներին: Հատկապես Առաջին հանրապետության

տարիներին քաղաքական կտրուկ փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել տարածաշրջանի տպարանների գործունեության եւ արտադրանքի վրա:

Ժողովածուում ներառված բոլոր հոդվածներն ունեն թեմատիկ ուղղվածություն՝ ներկայացնել հայ տպագրության խնդիրները հատկապես Արեւելյան Հայաստանում: Նշենք, որ հիշյալ թեմայով նախկին գրեթե բոլոր վերլուծություններում Արեւելյան Հայաստանի տպարանների գործունեությունը ներկայացվել է գրատպության պատմության ընդհանուր համատեքստում՝ ըստ համապատասխան ժամանակաշրջանի: Ավելին, անդրադարձները եղել են հպանցիկ՝ պատմական զարգացման ընդհանուր փուլերի հետ ձուլված: Սույն գրքում առանձնացված են հայ տպագրության խնդիրներն ու զարգացման միտումներն Արեւելյան Հայաստանում որոշակի ժամանակաշրջանում:

Հայ տպագրության պատմությունը միշտ պետք է դիտարկել փուլերով, քանի որ յուրաքանչյուր ժամանակահատված թելադրել է իր օրենքներն ու կանոնները: Ավելին՝ հայկական տպարանների գործունեությունը պետք է առանձնացնել նաեւ ըստ աշխարհագրական վայրերի, քանի որ տվյալ տպարանը պարտադիր կրել է այդ վայրին բնորոշ քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային գործոնների ազդեցությունը: Արեւելյան Հայաստանի տպարաններն այս առումով բացառություն չեն: Դրանք միայն տպագրություն իրականացնող օջախներ չէին, այլեւ տեղեկատվություն հավաքագրող, տարածող կենտրոններ, գտնվում էին հոգեւոր եւ քաղաքական իշխանությունների անմիջական հսկողության տակ: Նշանակում է՝ տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական, հասարակական, տնտեսական կամ մշակութային փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն էին ունենում տպարանների վրա: Այս առումով գրախոսվող ժողովածուն յուրահատուկ է, այստեղ ամբարված են բազմաթիվ նոր եւ փաստավորված տեղեկություններ Արեւելյան Հայաստանի տպագրական տարբեր վայրերի մասին:

Մեզ հայտնի հետազոտություններում եթե անգամ անդրադարձել են Արեւելյան Հայաստանի տպագրական վայրերին, ապա ավելի շատ ներկայացրել են այդ տպարանի արտադրանքը: Մինչդեռ տպարանի գործունեությունը, խնդիրները, առաջադրած նպատակն ու հետագա ճակատագիրը թիրախավորված ուսումնասիրության թեմա չեն դարձել: Հ. Սուքիասյանի եւ Ստ. Պետոյանի հետազոտական աշխատանքի շնորհիվ

գիտական հանրությանն են ներկայացվում տպագրական գործի զարգացումը, տպարանների պատմությունը՝ հիմնադրումից մինչև կազմավորում: Նրանց ուսումնասիրության շրջանակում հստակեցվում են մի շարք հարցեր՝ ինչպե՞ս են կազմավորվել տպարանները, ի՞նչ դժվարություններ են հաղթահարել, ի՞նչ նպատակ են հետապնդել, ինչպե՞ս են լուծել դրամական խնդիրները, ինչպիսի՞ գործառույթներ են իրականացրել, ինչպե՞ս են հաղթահարել գրաքննության դժվարությունները եւ այլն: Այս եւ նմանատիպ հարցադրումները խիստ կարեւոր են ցանկացած տպագրական հաստատության ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու համար: Կարող ենք փաստել, որ մեզ հայտնի շատ ուսումնասիրություններում նմանատիպ հարցադրումներն ուղղակի բացակայում էին, ինչի պատճառով որեւէ տպարանի մասին տեղեկատվությունը միշտ թերի էր մնում:

Հեղինակներն իրենց հոգւածներով, սույն ժողովածուով առաջադրում են հայ գրատպության ուսումնասիրության նոր մեթոդներ, նոր մոտեցումներ, այն է՝ տպարանի պատմությունը միշտ դիտարկել պատճառահետեւանքային կապերի հանգույցում, գտնել սկզբնաղբյուրները, դրանք ուսումնասիրել ժամանակի պատմական փաստերի թիրախում, ձուլել տվյալ տպարանի գործունեությանն առնչվող սկզբնաղբյուրներին եւ ստանալ արդյունքը՝ եզրակացությունը:

Ժողովածուի հեղինակները շրջանառության մեջ են դնում «մանր տպագրություններ» հասկացությունը: Յուրաքանչյուր տպարանի պատմություն ուսումնասիրելիս հետազոտողները՝ որպես տվյալ տպարանի արտադրանք, առանձնացրել են միայն գրքերը եւ պարբերականները՝ վերլուծություններն իրականացնելով այդ նյութերի շրջանակում: Սակայն ոչ միայն Արեւելյան Հայաստանում, այլեւ հայ գրատպության պատմության տարբեր շրջափուլերում տպարանները չպետք է դիտարկել միայն որպես տպագրական առարկայական, նպատակային գործունեություն ծավալող հաստատություններ: Շատ հաճախ նրանք կատարել են հրատարակչական պատվերներ՝ սպասարկելով իշխանություններին, տարբեր կառույցներին կամ անհատներին: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարիներին կառավարությունը հատուկ հրահանգ է իջեցրել, որ բոլոր տպարանները պետք է նախ տպագրեն իշխանություններին անհրաժեշտ նյութերը, հետո նոր՝ մնացած գրքերը: Նմանատիպ օրինակները բազմազան են: Պատահական չէ, որ մի շարք տպարաններին կից գործել են նաեւ գրատներ, գրախանութներ, որտեղ, ի թիվս

այլ ապրանքների, վաճառվել է նաեւ տվյալ տպարանի արտադրանքը: Այդ հրատարակչական պատվերների մեջ մեծ ծավալ են կազմել ազդագրերը, այցեքարտերը, հրավիրատոմսերը, բացիկները, կոչերը եւ այլն: Հրատարակչական գործառույթը կարեւորվել է նաեւ, քանի որ յուրաքանչյուր տպարան պետք է լուծեր անընդմեջ ծագող դրամական խնդիրները, ցանկացած տպարան պարտադիր շահույթ էր հետապնդում: Նմանատիպ գործունեությունն առավել ընդգծված էր ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին: Դրա վառ օրինակն է Գորիսի տպարանը, որի գործունեությունը մանրամասն ներկայացնում է Հ. Սուքիասյանը³: Ընդհանուր առմամբ հեղինակներն առանձնահատուկ մոտեցում են ցուցաբերում տպարանների հրատարակչական գործառույթի նկատմամբ՝ այդ համատեքստում առանձնացնելով մանր տպագրություններ՝ որպես տպարանի գործունեության կարեւորագույն եւ անքակտելի մի մաս: Երբեմն դրանք ավելի շատ տեղեկություններ են հաղորդում տվյալ տպագրական վայրի գործունեության մասին, քան պատմական փաստերը:

Որպես տպագրական գործի անմիջական մաս կամ շարունակություն՝ ժողովածուի մեջ անդրադարձ կա ժամանակի գրախանութների, գրադարան-ընթերցարանների գործունեությանը: Գրատներ են գործել Շուշիում, Գորիսում, Երեւանում, Ալեքսանդրապոլում, որոնք, բացի վաճառատեղիներ լինելուց, եղել են նաեւ մշակութային կենտրոններ, ուր հավաքվել են տեղի կրթված մարդիկ, մշակութային գործիչները՝ իրենց ծրագրերը քննարկելու համար: Գրեթե նույն գործառույթն են կատարել նաեւ գրադարան-ընթերցարանները: Փաստացի՝ այսօր շատ քիչ տեղեկություններ են պահպանվել այդ շրջանի գրադարանների գործունեության մասին՝ ինչպե՞ս են կազմավորվել, ի՞նչ գործառույթներ են կատարել, ինչպե՞ս են համալրվել: Ժողովածուում ուշագրավ անդրադարձ կա Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանի 1889–1900 թթ. գործունեությանը⁴: Նյութի հիմքում արխիվային փաստաթղթեր են, գրադարանի գործունեության հաշվետվությունները, որոնք լավագույն սկզբնաղբյուրն են՝ պատկերն

³ Հ. ՍՈՒԳԻԱՍՅԱՆ, Գորիսի «Սասուն» տպարանի գրահրատարակչական գործունեությունը (1909–1922 թթ.) «Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828–1920 թվականներին», Երեւան, 2021, էջ 204–209:

⁴ Ս. ՊԵՏՈՅԱՆ, Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը (1889–1900 թթ.), «Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828–1920 թվականներին», Երեւան, 2021, էջ 186–203:

ամբողջացնելու համար: Բացի թվային տվյալներից՝ առանձին հավելվածով ներկայացված են ընթերցարանից օգտվելու կանոնները, որոնցից շատերը կիրառելի են նաեւ ներկայումս:

Գրեթե բոլոր հոգվածներում առանձնահատուկ շեշտադրված է գրաքննության խնդիրը՝ որպես տպագրական գործի անբաժանելի մի մաս: Հոգեւոր կամ ցարական գրաքննության պահանջները պարբերաբար փոփոխվել են: Քանի որ ուսումնասիրությունն ընդգրկում է բավական ծավալուն մի ժամանակաշրջան, հեղինակները գրաքննության խնդիրներին, պահանջներին, առաջացրած դժվարություններին անդրադառնում են տվյալ նյութի եւ քննվող ժամանակահատվածի շրջանակում: Որպես օրինակ՝ առանձնացնենք Ստ. Պետոյանի՝ Շուշիի հայկական տպագրությունը ուսումնասիրող հոգվածները, որոնց մեջ, ի թիվս այլեւայլ հարցադրումների, հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Շուշիում տպագրված գրքերի գրաքննության խնդիրներին: Այս համատեքստում խիստ կարեւորվում է Ներսես Ե. Աշտարակեցու դերը, որը ժամանակի առաջադեմ հոգեւոր գործիչներից էր եւ 1822 թվականից զբաղեցնում էր Մայր Աթոռի հոգեւոր գործերի ծայրագույն կառավարչի պաշտոնը: Երբ, Նիկոլայ կայսեր՝ 1837 թ. հրամանի համաձայն, Այսրկովկասում իրականացվում է պաշտոնական գրաքննություն, նրան է վստահվում Շուշիում գրքերի տպագրության թույլտվության իրավունքը: Սակայն թույլտվություն տալու համար նա պարտադիր պետք է ծանոթանար գրքի բովանդակությանը: Ներսես Աշտարակեցու բացակայության շրջանում նրան փոխարինում էր Հարություն Ալամդարյանը, որը պարտադիր ներկայացնում էր գրքի բովանդակությունը⁵: Բերված օրինակը ԺԹ. դարի առաջին կեսի հոգեւոր գրաքննության խոսուն վկայություն է: Ավելացնենք նաեւ, որ Ներսես Աշտարակեցին խիստ կարեւորում էր դպրոցի, կրթության, մշակույթի, այդ թվում՝ նաեւ տպագրության առկայությունը հայկական միջավայրում եւ ազգի զարգացման գործում, իսկ նման մոտեցումը նպաստում էր հայ գրատպության կայացմանը:

⁵ Տե՛ս ՍՏ. ՊԵՏՈՅԱՆ, Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Այսրկովկասի հայկական գրատպությունը եւ Ներսես արքեպիսկոպոս Շահազիզյանը (Ներսես Ե. Աշտարակեցու ծննդյան 150-ամյակի առթիվ), «Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828–1920 թվականներին», Երեւան, 2021, էջ 11–13:

Գրաքննության խնդիրների տեղայնացումը, ըստ աշխարհագրական վայրերի եւ ժամանակահատվածի, ժողովածուի հեղինակներին հնարավորություն է տալիս դուրս գալու զուտ տպարանի պատմությունը ներկայացնելու նեղ սահմաններից՝ Արեւելյան Հայաստանի գրատպության եւ գրահրատարակչության պատմությունը դիտարկելով առավել մեծ շրջանակում: Արդյունքում պարզ է դառնում, թե ինչպես են արձագանքել ոլորտի պատասխանատուները գրաքննության պահանջներին, ինչպես է կազմակերպվել ողջ գործընթացը, ինչ դժվարություններ են եղել, եւ ինչ լուծումներ են գտել: Կարծում ենք՝ մասնակի հարցադրումների առումով հողվածագիրներն ունեն ձեռքբերումներ, միեւնոյն ժամանակ հուսով ենք, որ նրանք կշարունակեն որոնումներն ու հետազոտական աշխատանքներն այս ուղղությամբ՝ գրաքննության հետ կապված առավել լայնածավալ ուսումնասիրություն պատրաստելու համար: Այսօր հատկապես Արեւելյան Հայաստանի տպարանների արտադրանքի մասին մեր պատկերացումները թերի են, քանի որ գրաքննության խիստ պահանջների պատճառով հաճախ ոչնչացվել կամ բռնագրավվել են ամբողջ տպաքանակներ՝ պատմությանը թողնելով միայն տվյալ տպագրության մասին հիշատակումները⁶: Անհրաժեշտ է այս ուղղությամբ ծավալել որոնողական աշխատանքներ՝ մասնակի պահպանված օրինակները հայտնաբերելու համար:

Ժողովածուում ներառված հողվածներով առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում արխիվային փաստաթղթեր, վավերագրեր, հայերեն եւ օտարալեզու սկզբնաղբյուրներ, մատենագիտական նոր աղբյուրներ, որոնք նախկինում անհայտ էին գիտական հանրությանը: Այս առումով հեղինակները տքնաջան աշխատանք են կատարել, որի արդյունքը հղումներն են, ծանոթագրությունները, փաստերը: Նրանք ուսումնասիրել են Հայաստանի, Վրաստանի ազգային արխիվների, Մաշտոցի անվան Մատենադարանի, Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի, Հայաստանի ազգային գրադարանի եւ մի շարք այլ գիտական կառույցների պահույնները՝ հայտնաբերելով թեմա-

⁶ Ժողովածուի մեջ առանձնանում է Հ. Սուքիասյանի «Արգելված գրականությունը» Հայաստանի Հանրապետությունում (1918–1920 թթ.)» հողվածը, որտեղ նա մանրամասն ներկայացնում է այդ տարիներին իշխանական գաղափարախոսությանը հակասող տպագիր նյութերի նկատմամբ տարվող քաղաքականությունը: Դրանց շարքում մեծ ծավալ էին կազմում թուղցիկները: Խիստ հսկողության տակ էր նաեւ մամուլը: Տե՛ս «Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828–1920 թվականներին», Երեւան, 2021, էջ 220–231:

յին առնչվող եւ մինչ այժմ ստվերում մնացած փաստեր, որոնք խիստ կարեւոր տեղեկություններ են հաղորդում տպարանների պատմության «մութ» էջերի մասին: Ժողովածուն ունի գիտական արժեք (դա են վկայում առանձին փաստերն ու վերլուծությունները), սակայն հոգվածների մեջ ներառված եւ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող արխիվային վավերագրերը գրքին հաղորդում են նաեւ աղբյուրագիտական արժեք: Վստահ ենք՝ հետագայում ոլորտով հետաքրքրված շատ ուսումնասիրողներ կօգտվեն այս սկզբնաղբյուրներից՝ հարստացնելով արդեն առկա հետազոտական աշխատանքների շարքը:

Ժողովածուի մեջ ամբարված է մատենագիտական ահռելի մեծ նյութ: Հեղինակները հայտնաբերել են գրքեր եւ պարբերականներ, որոնք մինչ այս չէին ներառվել հայ գրքի եւ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում: Հատկապես Շուշիի, Գորիսի տպագիր ժառանգությունը, որն առ այսօր թերի էր, շնորհիվ այս ժողովածուի ամբողջացվել է: Բացի նոր անունների հայտնաբերումից՝ նրանք կատարել են բազմաթիվ մատենագիտական ճշգրտումներ՝ որոշակիացնելով այս կամ այն հրատարակության թվականը, վայրը, տպարանը եւ այլն: Որոշ անուններ հայտնաբերվել են արխիվային փաստաթղթերից, հիշատակվում են միայն սկզբնաղբյուրներում: Ցավոք, փաստացի օրինակները բացակայում են: Ժողովածուի մեջ ներառվել են հետեւյալ մատենագիտական ցանկերը՝ «1828—1832 թթ. Շուշիում տպագրված գրքերի ցանկ»՝ հայերեն եւ օտարալեզու⁷, «Հայաստանի Առաջին Հանրապետությունում տպագրված նորահայտ գրքեր»⁸: Գորիսի «Սասուն» տպարանի գրքերի ցանկը ներկայացված է ուսումնասիրության համատեքստում⁹:

Կարծում ենք՝ այս հետազոտական աշխատանքը հնարավորություն կտա հետագայում նոր տեսանկյունով մեկնաբանել պատմական իրադարձությունները: Սույն ժողովածուում հեղինակներն ամփոփ անդրադառնում են տվյալ ժամանակաշրջանի մի շարք խնդիրների, սակայն նրանցից յուրաքանչյուրը մի առանձին մեծածավալ ուսումնասիրության թեմա կարող է դառնալ: Ողջունելի կլինի, եթե նրանք նույնպիսի հետա-

⁷ Տե՛ս անդ, էջ 83—91:

⁸ Տե՛ս անդ, էջ 234—235:

⁹ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Գորիսի «Սասուն» տպարանի գրահրատարակչական գործունեությունը (1909—1922 թթ.), «Գրատպությունը Արեւելյան Հայաստանում 1828—1920 թվականներին», Երեւան, 2021, էջ 207—217:

զոտական աշխատանք իրականացնեն Արեւելյան Հայաստանի տպագրական այլ կենտրոնների ուղղությամբ: Այդ դեպքում պատկերն ավելի ամբողջական կդառնա: Արդյունքն ավելի տպավորիչ կլինի, եթե նույնպիսի խորություն վեր հանվեն ժամանակի գրավաճառ ցանցի խնդիրները, քանի որ գրքերի տպագրության քանակը կամ տպարանների գործունեությունն ինքնին պայմանավորված են եղել այդ ցանցի ճիշտ գործունեությամբ: Ցանկալի կլինի, եթե յուրաքանչյուր տպագրական օջախ ուսումնասիրելիս ամբողջացվի տվյալ տպարանի գրքերի եւ մամուլի մատենագիտական ցանկը: Այս դեպքում կհարստանա նաեւ հայ մատենագիտության պատմությունը: Այդ ցանկերը շատ ավելի արժեքավոր կլինեն, եթե նրանց մեջ ներառվեն նաեւ հայտնաբերված բոլոր մանր տպագրությունները: Մինչ այս մատենագիտական ցանկերում դրանք չեն ներառվել եւ չեն ուսումնասիրվել:


Այսօր, երբ հարեւան որոշ պետություններ փորձում են յուրացնել այլոց մշակութային արժեքները՝ ձուլելով դրանք իրենց մշակույթին, այս ոլորտի ուսումնասիրությունն ուղղակիորեն կհակադարձի այդ ժառանգությունը սեփականացնելու նրանց մղումներին:

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան»

մատենադարան



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю провозглашения Патриаршей делегации в странах Балтии	5
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю 800-летия монастыря Хоранашат	8

ОФИЦИАЛЬНОЕ

Заседание Верховного духовного совета	11
Заявление Верховного духовного совета	14

ПРОПОВЕДИ

Проповедь ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА , произнесенная в монастыре Святой Гаяне во время Святой Литургии в честь праздника Явления Креста Господня	16
Проповедь ИЕРОМОНАХА МИНАСА АХВЕРДЯНА , произнесенная в монастыре Святой Гаяне во время Святой Литургии в честь Второго Вербного Воскресенья	21

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ИУСТИН ФИЛОСОФ — Апология первая, представленная в пользу христиан Антонину Благочестивому	24
---	----

ГАБРИЕЛ НААПЕТЯН – Вопрос иконопочитания и иконоборчества в Византийской империи в работах Георгия Острогорского	44
АСМИК ЕСАЯН – Об основании и деятельности Калифорнийской епархии (1920–1930 гг.)	66

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ


ЛИАНА АВETИСЯН, КАРЕН ОГАННИСЯН – Иконографическое рассмотрение образа Св. Стефана Первомученика в армянском изобразительном искусстве XIII–XIX вв.	86
ГРАНУШ СААКЯН – Воссоздание и деятельность Немецко-армянского общества	102

СООБЩЕНИЯ

АЙК НАЗАРЯН – Формирование и боевой путь танковой колонны «Давид Сасунский»	124
---	-----

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

МАЯ ГРИГОРЯН – Эпизоды из истории книгопечатания Восточной Армении. .	134
--	-----



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the establishment of the Pontifical Legation in the Balkans.	5
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the 800 th anniversary of establishment of the Monastery of Khoranashat.	8

OFFICIAL

The meeting of the Supreme Spiritual Council	11
Statement of the Supreme Spiritual Council.	14

SERMONS

Sermon delivered by PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN during the Divine Liturgy celebrated on the feast of Apparition of the Holy Cross at St. Gayane Monastery	16
Sermon delivered by REV. FR. MINAS HAKHVERDYAN during the Divine Liturgy celebrated on the feast of the Second Palm Sunday at St. Gayane Monastery.	21

RELIGIOUS STUDIES

JUSTIN MARTYR – The First Apology addressed to Antoninus Pious in defense of Christians	24
GABRIEL NAHAPETYAN – The issue of iconoclasm and iconolatry in the Byzantine Empire in the works of George Ostrogorsky	44
HASMIK YESAYAN – On the establishment and activity of the Diocese of California (1920–1930s)	66

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


- LIANA AVETISYAN, KAREN HOVHANNISYAN** — St. Stephen Protomartyr
in the Armenian fine art of the 13th — 19th centuries. 86
- HRANUSH SAHAKYAN** — The re-establishment and activity
of the German-Armenian society from 1973 to 1989 102

ESSAYS

- HAYK NAZARYAN** — Formation of the tank column “David of Sassoun”
and its military path 121

LITERARY REVIEW

- MAYA GRIGORYAN** — Episodes from the history of typography
of Eastern Armenia 134



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ սրբատառ
կոնդակը Բաղկանեան երկրների Հայրապետական Պատուիրակության
հաստատման առթիվ 5

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
Խորանաշատի վանքի 800-ամեակի առիթով 8

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Կայացաւ Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողով 11

Գերագոյն հոգեւոր խորհրդի յայտարարութիւնը 14

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄԵԱՆԻ

քարոզը՝ խօսուած Ս. Խաչի երեւման տօնին Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 16

Տ. ՄԻՆԱՍ ԱԲԵՂԱՅ ՀԱՆՈՒԵՐԳԵԱՆԻ

քարոզը՝ խօսուած Երկրորդ
Ծաղկագարդին Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին 21

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՒՄՏԻՆՈՍ ՎԿԱՅ — Ա. Ջատագովութիւն՝ ներկայացուած

Անտոնիոս Բարեպաշտին՝ ի պաշտպանութիւն քրիստոնեաների 24

ԳԱՔՐԻԷԼ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ — Բիւզանդական պատկերամարտութեան

եւ պատկերապաշտութեան խնդիրը Գէորգի Օստրոգորսկու
աշխատանքներում 44

ՅԱՍՄԻԿ ԵՍԱՅԵԱՆ — Կալիֆոռնիայի թեմի հիմնադրման եւ գործունեության
հարցի շուրջ (1920–1930-ական թթ.) 66

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԻԱՆԱ ԱԲԵՏԻՍԵԱՆ, ԿԱՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Ս. Ստեփանոս
Նախավկան ԺԳ.–ԺԹ. դդ. հայկական կերպարուեստում 86


ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿԵԱՆ — Գերմանա-հայկական ընկերության
վերահիմնադրումն ու գործունեությունը 1973–1989 թթ. 102

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ — «Սասունցի Դաւիթ» տանկային շարասեան
կազմաւորումն ու մարտական ուղին 121

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՅՔԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ — Դրուագներ Արեւելեան Հայաստանի
տպագրության պատմությունից 134



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազեդեան, Գր. Ճեյլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէժ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատույթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում Հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով՝ <https://arar.sci.am/> կամ <https://www.flib.sci.am/journal/Ejmiadzin/Frame.html>:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քին. Պողոսյան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.06.2022 թ.



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱԳՐԱՆ